891.99.09
4-32

X 33

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ԴԵՄՔԵՐ ՅԵՎ ԴԵՊՔԵՐ

(ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ)

Պետական Հրատարակչություն
ՅԵՐԵՎԱՆ 1928

891.99.09
Կ-32

891.99.09
Կ-32
13 APR 2011

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ԴԵՄՔԵՐ յեվ ԴԵՊՔԵՐ

(ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ)

Պետական հրատարակչություն Յերեվան—1928

20 MAY 2013

63985

Գրատեսչվար 619 բ. Հ. 704 Տիրաժ 2000

Պետհրատի 2-րդ տպարան Յերեվանում—346

23710-59

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Այս գրքի մեջ զետեղված հոդվածները յեվ մատենագրական ակնարկները նվիրված են ռուսահայ գրականության չերեկվա դեմքերի յեվ դեպքերի սոցիալական եյության յեվ արժեքի գնահատությանը։

Այսօր եվ հայկական նացիոնալիզմի տեսաբանները հաճախ հենց այդ «հին դեպքերի» աղավաղված լուսաբանության միջոցով ճգնում են ամրացնել հայ բուրժուազիայի գաղափարախոսության քայքայված դիրքերը։

Յեվ ահա դրա համար եվ հարկավոր է անցյալի յեվ ներկա որերի գրագետներին ազատել ապադասակարգային զգեստներից յեվ նկարագրել այնպես, ինչպես վոր նրանք յեղել են իրապես։

Այլ խոսքով - անհրաժեշտ է շեշտել յեվ ցուցադրել այն կապը, վոր յեղել է նրանց յեվ սոցիալական վորոշ շերտերի միջեվ։

Այդ գործը պահանջում է, անշուշտ, նախապատրաստական վորոշ աշխատանք։

Անհրաժեշտ են նախնական փորձեր յեվ քննական ակնարկներ, վորպեսզի այդպիսով արդեն մարքսիստական լենինյան տեսակետի վրա կանգնած քննադատների կոլլեկտիվ համագործակցության միջոցով ստեղծվի սկզբնական մի ֆոնդամենտ հայ գրականության յեվ մշակույթի ապագա, ավելի լայն յեվ ամփոփ պատմության համար։ Առանց փորձնական դրվագների, առանց կարծիքների փոխանակության յեվ բաղխման դժվար է ստեղծել այդ հիմքը։

Այդ են յեղել այն մոտիվները, վոր թելադրել են ինձ հրատարակության հանձնել այս հատորը։

Յես ամենեվին նպատակ չեմ ունեցել տալ մի ամփոփ ուսումնասիրություն։ Իմ նպատակը է յեղել կանգ առնել միայն մի քանի հիմնական եջերի, հայ գրականության կարեվոր մի

քանի պրոբլեմների վրա, յեվ ընդհանուր ակնարկների միջոցով շեշտել նորից հայ նացիոնալիստական տրադիցիոն պատմագրության պաշտպանած տեսակետների վերաքննության անհրաժեշտությունը։

Հոդվածների մեծ մասը լույս ե տեսել իր ժամանակ Կովկասյան Մարքսիստական մամուլի եջերում 1910—1926-ին («Նոր խոսք», «Պայքար», «Խորհրդային Հայաստան»)։ Այստեղ նրանք բերվում են առանց հիմնական փոփոխումների, բայց մի քանի լրացումներով։ Մնացյալ հոդվածները լույս են տեսնում առաջին անգամ։ Դրանցից «Արեվելք յեվ Արեվմուտք» յեվ «Միքայել Նալբանդյան» հոդվածները իմ—Յերեվանում կարդացած դասախոսություններն են, վորոնք ժողովածուի մեջ զետեղվում են վերամշակված ձեվով։

Ա. Կ.

Յերեվան, 1928.
Փետրվար

ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌՈՒՍԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Ռուսահայ գրականության քննությունը հետաքրքրական և կարեվոր ե վոչ միայն «գրականագետների» համար—ինչպես՝ սովորաբար կարծվում ե—այլ նաև հասարակագետների, և առանձնապես նրանց համար, վորոնք ցանկանում են մոտենալ ռուսահայ հասարակական մտքի զարգացման օբյեկտիվ ճանաչողությանը։

Ռուսահայ գրագետները, ռուսահայ վիպագիրները, բանաստեղծները, հրապարակախոսները, և յեթե կուզեք, նույնիսկ ավելի յերկրորդական հեղինակները, թարգմանիչներն ու լրագրողները—յեղել են ինտելիգենտներ, վորոնք լավ թե վատ, կարողացել են այս կամ այն չափով արտացոլել իրենց «ժամանակի վոգին» և արտահայտել «հայ հասարակության» հասարակական ըղձանքներն ու տրամադրությունները։

Յեվ վորովհետև ինքը «ռուսահայ հասարակությունն» ել շերտավորված լինելով—բաղկացած ե յեղել զանազան հատվածներից և խմբակներից, դրա համար ել հայ գրագետները վերջին հաշվով արտահայտել են այս կամ այն սոցիալական խմբակցության իդեալները։

Ահա ինչու և մեզ մոտ հայ գրականության քննությունը ունի քաղաքական-հասարակական նշանակություն։

Այդ քննությանը մինչև այժմ մենք քիչ ուշադրություն ենք հատկացրել միմիայն նրա համար, վոր առորյա աշխատանքը մեզ հնարավորություն չի տվել կենտրոնացնել առանձին ուշադրություն ռուսահայ մտավորականության պատմության և հայ նացիոնալիզմի իդեոլոգիական կազմակերպման վրա։ Դրանից օգտվել են առաջին հերթին բանվոր դասակարգի թշնամիները և մեր հակառակորդները։ Իշխելով գրական ասպարեզում նրանք իրենց ձեռքն են առել իդեոլոգիական ֆրոնտի կարեվոր մի կողմը, և իրենց գրաքննական աշխատանքով ամրացրել են

միանգամայն սխալ և թյուր հասկացողություն հայ գրականության թե անցյալի և թե ներկայի մասին։

Ավելորդ կլիներ շեշտել, թե վորքան վնասակար նշանակություն է ունեցել մեր այդ անփութությունը։

Պետք չէ մոռանալ ամենևին այն, վոր մեր օրերի նոր գրականությունը շատ թույլ և անզոր է տակավին, վորպեսզի կարողանա մրցել անցյալի խոշոր դեմքերի հետ։

Քաղաքական սուր պայքարը, հեղափոխությունը, տնտեսական շինարարությունը, այդ բոլորը միասին առանձին ազդություն են տվել մեր աշխատանքներին և պայմանավորել են անհրաժեշտաբար մեր արվեստի և գրականության թուլությունը։ Վոչինչ վարկաբեկիչ բան չկա դրանում։

Մեծ և ահարկու իմպերիալիստական պատերազմի հարվածներն այնքան սոսկալի չեն յեղել, վոր պահանջ եյին դնում կենտրոնացնել ուշադրությունը յերկրի տնտեսական շինարարության ուղղությամբ։ Այլ կերպ չեր կարող լինել մի յերկրում, ուր տասնյակ հազարավոր գաղթականներ և վորբեր թափառում եյին անտուն և անապաստան դրության մեջ, ուր բացակայում եր վորևե արդյունաբերություն, ուր քանդված և ավերված եր ամեն ինչ, և միաժամանակ չորս կողմը տիրում եր համատարած աղքատություն։

Այսպիսի պայմաններում մտածել «արվեստի» մասին շատ դժվար եր, քանի վոր նախ քան այդ — անհրաժեշտ եր տարածել տարրական գիտելիքներ ժողովրդական մասսաների մեջ և ստեղծել քիչ շատե կայուն տնտեսական պատվանդան կուլտուրական շինարարության համար։ Հարկավոր եր լայնացնել դպրոցների ցանցը, քանդել հին աշխարհի վերջին մնացորդները, կառուցել նոր հասարակության ամուր շենքը։ Դրա համար էլ մեր օրերի գրականությունը նոր է միայն վոտքի կանգնում և ազատագրվում հասարակական վաղեմի իդեալների վարակիչ ազդեցություններից։

Սակայն նոր գրականության հենց այդ թուլությունն էլ արտոնյալ կացություն է ստեղծում հայ գրականության հին ներկայացուցիչների համար, արտոնյալ այն տեսակետից, վոր դարձնում է նրանց գրական շուկայի մենատեր և բացարձակ տիրակալ։

Շատ հեռուները չգնալու համար, բավական է միայն հետաքրքրվել, թե ինչ է կարդում այսօր մեր աշխատավորությու-

նը և ինչպես է վերաբերվում նա մեր գրականության զանազան ներկայացուցիչներին։

Ամենասիրված հեղինակները մնում են դարձյալ Րաֆֆին, Շիրվանզադեն, Պերճ Պռոշյանը, Մուրացանը, գուցե նաև Պատկանյանը...

Հայ գրականության հին վարպետները կարդացվում են հետաքրքրությամբ, և ավելի մեծ սիրով, վորովհետև այդ հեղինակները լինելով հմուտ վարպետներ լավագույն ձևով են մատուցանում ընթերցողին նյութը։

Դրանումն է վողջ խնդիրը։ Կարիք չկա այդ ծածկելու։ Դա փաստ է և իրողություն։ Յեվ դեռ յերկար կշարունակվի այդ, կըշարունակվի համենայն դեպս մինչև այն մոմենտը, յերբ այսօրվա գրականությունը կկարողանա ամրանալ և հակադրել անցյալի ներկայացուցիչներին հավասարազոր արվեստ և գրականություն։

Յեվ քանի վոր այդ այդպես է, հին վարպետների ազդեցությունը մեր օրերի յերիտասարդության վրա դառնում է ավելի ևս ակնհայտնի, և յեթե կուզեք — նույնիսկ վտանգավոր։

Հենց այդ հեղինակների «վարպետությունը» նպաստում է դրանց՝ պատկերների և յերգերի միջոցով խճողել յերիտասարդության գլուխները հին և խարխուլ իդեալներով, ազգայնական գաղափարներով, ծածկված ազգատյացության և թյուրքատյացության թույնով, ուրույն անհատապաշտության կամ հոռետեսության հույզերով։

Շնորհիվ դրան անցյալի ամեն մի պոետ, ամեն մի վիպագիր դառնում է կարծես նորից կենդանացած քաղաքագետ և հրապարակախոս, վորը ավելի հմուտ և հետաքրքրական ձևով օգնում է արդեն անհետացող ցնորքների և իդեալների կենդանացմանը և ժողովրդական-աշխատավորական շարքերի հասարակական-քաղաքական հետադարձ շարժմանը։

Այսպիսի պայմաններում անցյալի գրականության մարքսիստական քննությունը դառնում է անհրաժեշտ այն գործոնը, վոր ապահովում է նոր ընթերցողին վարակիչ բացիլների այնքան վնասակար ազդեցությունից։

Մարքսիստական մեթոդը այն բանալին է, վոր մերկացնում է արվեստի և գրականության սոցիալական աստառը, և ամեն մի հեղինակին դնում է իր պատմական վորոշ պերսպեկտիվի մեջ։

Մարքսիզմը, բացատրելով մշակույթի սերտ կապակցությունը հասարակական միջավայրի և դասակարգային վորոշ փոխհարաբերությունների հետ, մերկացնում է գրական զանազան հոսանքների և գրական տարբեր դեմքերի «հավերժ» բնույթը, և հենց դրանով էլ՝ փոխարեն ուժեղացնելու «հին արվեստի» իդեոլոգիական ազդեցությունը՝ ոգնում է ընթերցողին մոտենալ քննական աչքերով անցյալի կուռքերին...

Շնորհիվ դրան, անցյալի գրականությունը դառնում է այլևս վոչ թե «հնացած», «վնասակար» ու «վտանգավոր», այլ չափազանց հետաքրքրական և ուսանելի մոտակա անցյալի ճշգրիտ ճանաչողության համար, մոտակա անցյալի միամիտ ցնորքների և վորոնումների տարրական գնահատության համար:

Այնպես, ինչպես հեռավոր անցյալի նյութական կուլտուրայի մնացորդները, ավերակները, քարե դանակները, բրոնզյա կաթսաները կամ վորևէ այլ բեկորներ ոգնում են մեզ ըմբռնելու անցյալը, ճիշտ այդպես և հայ հեղինակների գործերը դառնում են խիստ կարևոր վավերագրեր ռուսահայ հասարակության տարբեր շրջանների ու խմբակցությունների ոբյեկտիվ ճանաչողության համար:

Շատ հեռուները չգնալու համար, բավական է միայն ասել, վոր մեր գյուղագիր-հեղինակներն այսոր ևս հնացած չեն, վորպես հայ գյուղի եվոլյուցիայի լուսանկարիչներ: Նրանց նկարները, նրանց կողմից արձանագրված փաստերն ու յերևույթները, յերբ շարվում են հայ գյուղի տնտեսական վերլուծության նվիրված անկատար և աննշան գրականության կողքին, վերջին հաշվով մատակարարում են խիստ կարևոր սոցիոլոգիական նյութ:

Նույնը անհրաժեշտ է ասել և «քաղաքային» հեղինակների մասին, կամ հայ նացիոնալիստ պոետների և վիպագիրների մասին:

Հաճախ այդ հեղինակները ներկայացնում են նույնիսկ ավելի կարևոր ու ճշգրիտ նյութեր, քան բուրժուական հրապարակախոսների «տեսական» անունը կրող հետազոտությունները: Յեվ հասկանալի յե ինչու: Տնտեսական հետազոտության մեջ—այսպես թե այնպես—նյութերի դասավորումը, քննությունը, լուսաբանությունը կատարվել է սուբյեկտիվ կերպով և միայն մի քանի աղբյուրների համեմատական քննության կամ նկարագրության հիման վրա:

Հակառակ դրան—վիպագիրը նկարագրում է իր շրջապատը. նկարագրում է, վորպես ականատես, վորպես միջավայրի վորոշ անդամ: Նրա **սուբյեկտիվիզմն էլ ունի իր արժեքը այն չափով, վորչափ նա արտացոլում է սոցիալական վորոշ խմբակցության մոտեցումը դեպի հասարակական այս կամ այն յերևույթները**: Նրա նկարագրությունը հենց դրա համար էլ դառնում է թե լուսանկար, և թե սոցիալական վավերագիր:

Ռուս նոր գրականության մեջ այդպես էր մասնավորապես Գլեբ Ուսպենսկին, վոր տալիս էր մի կողմից ռուս գյուղի և գյուղացիության հետաքրքրական նկարագրությունը, և ապա մյուս կողմից էլ, մոտեցման և քննության իր յեղանակով բնութագրում էր ռուս ժողովրդական-ինտելիգենտների առանձնահատուկ հոգեբանությունը:

Ճիշտ այդպես էր մեր գրականության մեջ—Մուրացանը, միմիայն առանձին, հայկական ուրույն կառուցվածքով և կովկասահայ առանձին պայմանների համաձայն:

Ռուս հեղինակ—Ուսպենսկին—«ժողովրդական» էր բառիս իսկական իմաստով: Նա տոգորված էր «առաջադեմ» իդեալներով և ուտոպիքական-սոցիալիստական գաղափարներով:

Գյուղագիր-Մուրացանը—«ժողովրդական» լինելով հանդերձ ռեակցիոն էր, կղերական և ազգայնական՝ վոտքից մինչև գլուխ: Նա «բարի հին անցյալի» յերկրպագու յեր, և վորպես այդպիսին կարողանում էր իր աշխարհայեցողության մեջ հաշտեցնել մանր բուրժուական իդեալները միջնադարյան-ավատական Հայաստանի մեծարման հետ:

Այսպես թե այնպես, այդ հանգամանքը ավելի քան վորոշ կերպով պարզում է հայ գյուղագիր-հեղինակների «սուբյեկտիվ» հայացքների առանձին վերլուծության անհրաժեշտությունը: Նույնը կարելի յե ասել և բոլոր մյուս հեղինակների մասին: Նրանց «սուբյեկտիվիզմը» պատահական յերևույթ չէ, այլ հասարակական խմբակցությունների, սոցիալական վորոշ ուժերի յուրաձև արտահայտություն:

Ահա ինչու հայ գրականության պատմությունն ինքնին հանդիսանում է հայ հասարակական մտքի զարգացման պատմություն: Դեռ ավելին ևս: Ռուսահայ գրականությունը՝ լինելով հայ հասարակական հոսանքների հայելին՝ կոնկրետ կերպով ծանոթացնում է մեզ հայ նացիոնալիզմի պատմական զարգացման և նացիոնալիստական իդեոլոգիայի կազմակերպման հետ:

Դրա համար էլ ռուսահայ գրականության մարքսիստական քննությունը տալ նշանակում է տալ հայ նացիոնալիզմի քննադատությունը։ Սխալվում են նրանք, վորոնք կարծում են, թե այդ քննությունը կարևոր է հետաքրքրական է միմիայն գրականագետների համար։ Սխալվում են, վորովհետև այնչափով, վորչափ հայ նացիոնալիստական իդեոլոգիան կենդանի չե տակավին, այդ կենդանությունը նա ստանում է ի միջի այլոց նաև շնորհիվ հենց այդ անցյալի գործիչների և հեղինակների ազդեցության։ Վոչ մեկ Վրացյանի հոդված, վոչ մեկ կիսագրագետ դաշնակցական «տեսաբանի» հոդված չի կարող այն ազդեցությունը թողնել, ինչ վոր թողնում են հայ գրականության հին վարպետները։

Յեվ յեթե այդ այդպես է, մենք պետք է կարողանանք այդ ազդեցության դեմ պայքարել վոչ թե անցյալի գրականության բացասման և վոչ էլ դատարկ ֆրազեոլոգիայի կամ փաստերի ժխտման յեղանակով, այլ ավելի խոր և հմուտ մեթոդներով։

Այդ մեթոդներից մեկն է — հայ գրականության ավելի անաչառ, ավելի օբյեկտիվ և մատերիալիստական քննությունը։

Պետք չե մոռանալ, վոր մեր օրերի ընթերցողը բավական «փորձված է», պատրաստված է այնքան խելացի, վոր կարող է ջոկել չարը վատից, կարող է նշմարել եյական կողմերը և նշավակել բացասական և մութ եջերը։

Յեթե այդ այդպես է, հենց նացիոնալիզմի քննության համար մենք պետք է հակառակ հայ հին լիբերալ պատմագրության, հանդես բերենք վոչ միայն «ամենահայտնի» հայ հեղինակներին, այլ և նրանց, վորոնք զուրկ չլինելով տաղանդից, փառավորությամբ մոռացության են մատնվել իրենց ժամանակակիցների կողմից։ Լիբերալ եստետների միակողմանի վերաբերմունքին մենք պետք է հակադրենք մարքսիստական սոցիոլոգիայի խոր և բարդ կշռաչափը։ Իսկ այդորինակ մոտեցումը պահանջում է մեզնից, վոր մենք հաշվի առնենք վոչ միայն հայ «առաջադեմ», «լիբերալ» և «հեղափոխական» գրագետներին, այլ նաև հայ «հետադեմ», «խավարամիտ» և «կղերական» վիպագիրներին և հրապարակախոսներին։ Լավ թե վատ, այդ վերջիններն էլ արտացոլել են սոցիալական վորոշ խմբակցության պահանջները և ձգտումները, և ռուսահայ հասարակական մտքի ավելի անաչառ ճանաչողության համար մենք պետք է հաշվի առնենք և այդ «մոռացված» հեղինակների գործունեյությունը։

Բարկոծել է «հետադեմներին» հայ լիբերալ-ազգայնական հրապարակախոսությունը։

Իսկ մեզ մարքսիստներիս համար — ըստ եյության յերկու հոսանքների ներկայացուցիչներն էլ թե պահպանողականները և թե առաջադեմները, հավասար չափով թշնամի և օտար հոսանքներ են և, իհարկե, պետք է քննվեն վորոշ պատմական պերսպեկտիվի պայմաններում։

Պրոլետարիատի համար յերկու հոսանքներն էլ հավասարաչափ պատմական ուժեր են, վորոնց նկատմամբ նա չի կարող ունենալ առանձին համակրանք։ Դեռ ավելին ես։ Այսպես կոչված «պահպանողականությունը» այնքան հեռու չե կանգնած մեր այսօրվա հասարակությունից, վոր նա չի կարող այն վտանգը ներկայացնել, ինչ վոր հնարավոր է սպասել ավելի նոր շրջանի ազգայնական լիբերալ հոսանքից։ Գուցե դրանով էլ բացատրվում է այն, վոր հաճախ մենք հայ պահպանողականների մոտ նշմարում ենք մի շարք խնդիրների նկատմամբ ավելի «անաչառ» մոտեցում, քան մեր լիբերալ հեղափոխականների մոտ։ Բավական է միայն հիշել այստեղ յերկու հոսանքների վերաբերմունքը դեպի ցարական կառավարության քաղաքականությունը «արևելյան խնդրի» նկատմամբ։ Այն ժամանակ, յերբ մեր լիբերալները միանգամայն անվերապահ կերպով մեծարման եյին յենթարկում ցարական կառավարության ամեն մի ձեռնարկություն, հայ պահպանողական բանակում լինում եյին մարդիկ, վորոնք թիպախ կերպով՝ ծառանալով ընդհանուր «հոսանքի» դեմ՝ կարողանում եյին ցուցադրել քիչ-շատ քննադատական վերաբերմունք դեպի ցարիզմի արևելյան քաղաքականությունը։ Նույնքան բնորոշ է նաև յերկու հոսանքների վերաբերմունքը դեպի կապիտալի նախնական կուտակման պրոցեսը, դեպի կապիտալիզմի կրողների գործունեյությունը։ Այն ժամանակ, յերբ հայ առաջադեմ հեղինակները, դարձյալ անվերապահ կերպով ջատագովում եյին կապիտալիզմի բոլոր «հերոսներին», և իդեալական գույն տալով կապիտալիստական զարգացման պրոցեսին վողջագուրում եյին հայ բուրժուազիայի հաղթական արշավը, հայ պահպանողականների միջից յելնում եյին մարդիկ, վորոնք կարողանում եյին նկատել կապիտալիզմի նեգատիվ կողմերը, արձանագրել կապիտալիզմի մռայլ կրողների գործելակերպի իսկական եյությունը, ցուցադրել «սոցիալական խնդրի» գոյության փաստը։ Դրա համար էլ ռուսահայ լիբերալները հրաժարվում եյին վորևե խոսք ասել հայ գյուղի տնտեսական քայքայման և հայ

գյուղացիության ծանր կացության մասին, իսկ հայ պահպանողական բանակին հարող հեղինակները շեշտում են այդ բոլորը և ցույց տալիս կապիտալիզմի զարգացման պրոցեսում առաջացող «պինջակավոր» նոր մարդկանց խակական դեմքը: Դրա համար էլ հայ բուրժուազիայի պատգամախոս Գրիգոր Արծրունու օրգանը փոչ մեկ տեղ չի հատկացրել հայ գյուղագիր հեղինակներին, իսկ հայ պահպանողական բանակը իր հովանավորության ներքո չէր առել Արշակ Ագապյանին, Մուրացանին, Պերճ Պռոշյանին, Ծուղուրյանին, և բոլոր այն հեղինակներին, փորոնք այս կամ այն չափով փորձ են արել մոտենալ հայ գյուղական իրականության ճանաչողությանը:

Ինչպես տեսնում ենք, յերկու դեպքում էլ պայքարող հոսանքները ցուցադրում են և «սուբյեկտիվ», և «տենդենցիոզ» մոտեցում:

Սակայն այսօր, յերբ մենք զինված ավելի հարուստ աղբյուրներով, ավելի ճշտված տեղեկություններով և փաստերով, քննում ենք անցյալի խակական դեմքերը և անցյալի ուղիները, ստիպված ենք լինում հաճախ արձանագրել, վոր «պահպանողականները» այնքան էլ «հիմար» և «ստախոս» չեն յեղել, և վոր նրանք հակառակ հայ լիբերալ պատմագիրների հավաստիացումներին—շատ անգամ ավելի «ճիշտ» և «անաչառ» կերպով են մոտեցել կովկասահայ իրականության նկարագրության և ճանաչողության գործին:

Այստեղից կարելի չե անել միայն մի յեզրակացություն:

Այդ այն է, վոր հայ հետադիմական բանակի գրուպպայական պայքարը լիբերալիզմի դեմ ինքը նպաստել է շեշտված յուրօրինակ մոտեցմանը դեպի վերոհիշյալ խնդիրները:

Հայ հոգևորականությունը մեր իրականության մեջ կատարել է իրապես ազնվականության դերը: Նա ինքը, լինելով կալվածատիրական վորոշ միավոր, կապված է յեղել միաժամանակ շատ սերտ կերպով արտասահմանյան խոշոր հայ վաճառականության հետ: Յեվ դրա համար էլ 19-րդ դարի թե առաջին և թե յերկրորդ շրջանում, գրեթե մինչև 90-ական թվականները նա մղել է միևնույն կռիվը կապիտալիստական բուրժուազիայի դեմ, ինչպես և ուրիշ յերկիրների ազնվական-կալվածատիրական տարրերը: Պայքարելով հայ բուրժուազիայի դեմ նա անհրաժեշտաբար նշավակման է յենթարկել կապիտալիզմը և հենց դրա համար էլ կարողացել է արձանագրել կապիտալիզմի բացասական ազդեցությունը կովկասահայ

գյուղական իրականության մեջ: Քայքայվող և տարրալուծվող գյուղական իրականության պատկերները նա ներկայացրել է առաջին հերթին «չեվրոպականության» հայ լիբերալ պաշտպաններին... Միևնույն կերպ է մոտեցել նա նաև հայ բուրժուական լիբերալիզմի քաղաքական իդեալներին:

Կովկասահայ լիբերալները մեծարել են ռուսական ցարիզմը, խարազանել են հին Թյուրքիայի կարգերը, և կոչ են արել «ազատագրել Թուրքահայերին» ռուսական զենքի միջոցով: Հայ պահպանողականները հակառակ դրան քննադատել են—իհարկե ժամանակի լեզվով—ցարիզմի քաղաքականությունը, շեշտել են Թյուրքիայի ավելի «համբերատար» վերաբերմունքը դեպի «ազգային արժեքները» և համեմատ դրան հաճախ ավելորդ են համարել միջամտությունը Թյուրքահայ գործերի մեջ:

Այդ հանգամանքն այնքան պարզ և ցայտուն է յեղել, վոր դրդել է ցարական կառավարությանը՝ հակառակ բոլոր տրադիցիաների՝ պաշտպանել և հովանավորել հայ լիբերալներին և հալածել պահպանողական բանակի ներկայացուցիչներին: Ուշագրավ է հենց այդ տեսակետից ցարական միապետության վերաբերմունքը մի կողմից դեպի Գրիգոր Արծրունին և մյուս կողմից—դեպի Աբգար Հովհաննիսյանը ու Սպանդար Սպանդարյանը:

Յես ընդհանուր կերպով եմ կանգ առնում մեզ հետաքրքրող խնդրի այդ կողմի վրա: Սակայն կարծում եմ, վոր այդ էլ բավական է ապացուցելու համար այն, վոր հայ գրականության մարքսիստական վերլուծությունը կարող է և պետք է պարզաբանե կովկասահայ յերկու հիմնական հոսանքների սերտ կապակցությունը սոցիալական յերկու ներհակ ուժերի հետ:

* * *

Սակայն դրանով չի կարելի բավականանալ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև ուրիշ, վոչ-պակաս չափով կարևոր մոմենտներ: Յեթե հայ գրագետները ներկայացրել են այս կամ այն խմբակցության տեսակետները և հարել են այս կամ այն բանակին, այդ դեռ չի նշակում, թե նրանք յեղել են միշտ հետևողական և միշտ բառացի հարազատությամբ արտահայտել են միմիայն սոցիալական մեկ վորոշ շերտի իդեոլոգիան:

Այդպիսի մոտեցումը, վորքան էլ առաջին նվագ չի յերևում այդ համոզիչ, կլիներ չափազանց սխեմատիկ և մեծագույն չափով կհակասեր խակական իրականությանը:

Ռուսահայ հասարակությունն այնքան էլ մեխանիքական ձևով չեր շերտավորված: Յեթե գլխավոր պայքարի մասնակիցները հարում եյին յերկու հիմնական բանակի, այդ դեռ չի նշանակում, թե միմիայն սոցիալական յերկու այդ ուժերն են գոյություն ունեցել կովկասահայ իրականության մեջ: Խնդիրը նրանումն ե, վոր բացի կղերական-հոգևորականությունից և կապիտալիստական բուրժուազիայից մեզ մոտ յեղել են սոցիալական ուրիշ շերտեր ել, վորոնք հարելով այս կամ այն հիմնական բանակին, հաճախ գրավել են ինքնուրույն դիրք և վարել են իրենց առանձին գործելակերպը, կամ էլ կանգնած են յեղել անմիջական պայքարի և բախումների կրկեսից շատ հեռու: Այսպիսի շերտեր եյին մեր իրականության մեջ, քաղաքային մանր բուրժուազիան, գյուղացիությունը...: Բանակով դրանք բավական զորավոր շերտեր եյին, և դրա համար էլ դրանց հետ հաշվի եյին նստում թե «առաջադեմ» և թե «կղերական» բանակի ղեկավարները: Քաղաքականությունից, առօրյա հասարակական խնդիրներից և յերկու բանակներից շատ և շատ հեռու եյին կանգնած հայ ժողովրդի այդ խոշոր շերտերը. բայց և այնպես իրենց գոյությամբ նրանք թողնում եյին վորոշ ազդեցություն հասարակական գործիչների վրա և այս կամ այն չափով թելադրում եյին նրանց արձագանքել մանր բուրժուական դեմոկրատիայի պահանջներին:

Ահա հենց դրա համար էլ հայ հեղինակներից շատերի մոտ տեսնում ենք բավական բարդ հոգեկան խառնվածք: Դրա համար էլ բավականանալ «կղերա-հետադիմական» կամ «բուրժուական» սխեմատիկ մակդիրներով մենք չենք կարող այնքան, վորքան հայ հեղինակների ստեղծագործության մեջ հաճախ արտացոլվում են վոչ միայն մեկ վորոշ, այլև յերկու կամ ավելի սոցիալական շերտերի ներհակ ապրումները և հոգեկան բախումները: Այսպիսի դեպքերում, հաճախ ինքը հայ հեղինակը, դեգերում է յերկու հակոտնյա դասակարգերի մեջ, մեկի բանակից անցնում է դեպի մյուսը. կամ էլ յուրօրինակ ձևով խառնում և ձուլում է ի մի յերկու ներհակ ուժերի իդեալները:

Ամենից լավ այդ թեզի ճշմարտությունը պարզում են վերը հիշված հայ գյուղագիր-բելետրիստները: Չի կարելի ասել, վոր այդ գյուղագիրները բոլորն էլ կապված են յեղել սկզբունքային կապերով հայ կղերականության հետ և իրենց պայքարը հայ գյուղի «ուժեղների» դեմ մղել են ղեկավարվելով հայ կղերական-հոգևորականության սոցիալ-քաղաքական պահանջներով: Դույզն և

այդ հեղինակներից վորևե մեկը մոտեցել ե այդպես, բայց չի կարելի միևնույնը ասել բոլորի մասին, վորովհետև իրենց յերկերում հայ գյուղագիրներից շատերը մերթ ընդ մերթ քննադատության են յենթարկել նաև կղերականության ներկայացուցիչներին: Բավական է միայն հիշել Պերճ Պռոշյանի «Հունոն»-ի մեջ բերված տողերը հայ հոգևորականության ղեկավարների մասին: Այդ տողերը բնագրի մեջ ավելի կտրուկ են յեղել, նույնիսկ այնքան կտրուկ, վոր թելադրել են ցարական միապետության գրաքննական մարմիններին դուրս ջնջել «Հունոն»-ի միջից. խարազանական մասը:

Ահա ինչու և ճիշտ կը լիներ ասել, վոր հայ գյուղագիր հեղինակներից շատերը հանդիսացել են ավելի շուտ հայ գյուղացիության վիպագիրներ և միմիայն մեկ վորոշ չափով են մոտեցել հայ պահպանողականության, այն չափով, վորչափ այդ հոսանքը նույնպես կռվի յեր յելել հայ «պինջակավոր»-ների, բուրժուազիայի, հայկական լիբերալների դեմ: Իր հերթին պահպանողականությունն էլ ամենևին հակառակ չլինելով գյուղագիրներից մի քանիսի ավելի վճռական տենդենցների հետ, մեծ ուրախությամբ տեղ եր տալիս դրանց, վորովհետև դրանով արդեն հարված եր հասցնում «արևմտականության» և «լիբերալականության»:

Նույնպիսի ներհակություններ և բարդ հյուսվածքներ նկատում ենք մենք և «յերրորդ դաս»-ի ստեղծած գեղեցիկ գրականության մեջ:

Այսպես օրինակ. Րաֆֆին մինչև վերջ յեղել է հայ «յերրորդ դաս»-ի ամենանշանավոր վիպագիրներից մեկը: Այդպես լինելով նա իր վեպերի և ուրիշ յերկերի մեջ արծարծել է լիովին կազմակերպվող և վոտքի կանգնող հայ բուրժուազիայի իդեալները: Բայց դրա հետ միասին միևնույն Րաֆֆին արձագանքել եր նաև քաղաքի և գյուղի ճնշված խավերի կյանքին, և ավելի քան մռայլ գույներով նկարագրելով նրանց կյանքը, կոչ է արել կենտրոնացնել հասարակական ուշադրությունն այդ ուղղությամբ ես: Այդպիսի բնույթ են կրում առանձնապես նրա «Սալբին», «Ոսկի Աքաղաղը», պարսկական և թիֆլիսյան պատմվածքները:

Միևնույնը կարելի յե նկատել նաև 90-ական թվականների մի քանի ուրիշ վիպագիրների մասին:

Բացատրվում է այդ ի միջի այլոց նաև նրանով, վոր 70—90-ական թվականներին հայ «յերրորդ դաս»-ի մտավորակա-

նությունն ապրում եր իր առաջին շրջանը։ Պայքար մղելով հոգևորականության տիրակալության դեմ նա ձգտում եր գրավել ժողովրդական լայն խավերի համակրանքը և աշխատավորության տնտեսական և կուլտուրական վերելքը կապել իր քննադատական արշավի հետ։

Դրանով էլ բացատրվում է այդ շրջանի նացիոնալիստական իդեոլոգիայի ավելի լայն և «ժողովրդական» ու «կուլտուրական», յեթե կարելի յե միայն այդպես ասել, բնույթը։

Ահա ինչու հայ հին գրականության քննադատության ընթացքում մենք պետք է կարողանանք նշմարել բացասական կողմերի հետ միասին նաև գրական նշանակություն ունեցող այն եջերը, վոր տալիս են անցյալի գրագետները։

Ահա ինչու հայկական կլասիկների նկատմամբ կարող է և պետք է մշակվի հեռանկատ մոտեցում։

Այդ կլասիկների բոլոր այն գործերը, վորոնք զերծ են նացիոնալիզմից և նվիրված են այս կամ այն չափով իրական կյանքի րեալիստական նկարագրությանը կարող են հրատարակության հանձնվել այժմ ևս։

Այնքան, վորքան ակնարկած կլասիկները տվել են կյանքի րեալիստական նկարագրություն—այդ չափով նրանք կրել են նաև վորոշ պրոգրեսիվ տարրեր։ Իրենց ժամանակի համար համենայն դեպս նրանք յեղել են առաջմղիչ ուժեր։ Յեվ միաժամանակ չեն կորցրել իրենց արժեքն այսօր ևս այն չափով, վորչափ այն բոլոր մութ յերևույթները, վոր նկարագրել են նրանք, նկատելի յե այս կամ այն չափով և՛ մեր օրերի իրականության մեջ։

* * *

Սակայն և այնպես, այդ րեալիստական գործերի հրատարակությունն ևս պետք է կատարվի միաժամանակ քննական վորոշ աշխատանքի հետ։

Դա անհրաժեշտ է թեկուզ հենց նրա համար, վորպեսզի փարատվի միանգամ ընդմիշտ չափազանց ընդհանրացած կարծիքը հայ կլասիկների «ապադասակարգային» և «համազգային» եյության մասին։ Յեթե կարևորագույն այդ աշխատանքը մենք կատարենք, այդ պարագային—անցյալի հայ գրականությունը կըդառնա չափազանց ուշագրավ վավերագիր՝ հայ հասարակության պատմական զարգացման և հասարակական մտքի եվոլյուցիայի ճանաչողության համար։

Չի կարելի ժխտել այն, վոր այդ գործը բավական բարդ և սիստեմատիկ աշխատանք է պահանջում։ Չի կարող նա մի անգամից կատարվել։ Կարծում եմ նաև, վոր դա ավելի շուտ կոլեկտիվ ուժերի, քան մեկ կամ յերկու անհատ քննադատների գործ է։

Բայց և այնպես, այդ գործն անհրաժեշտ գործ է, և նա պետք է ձեռնարկվի մեր կոլեկտիվ աշխատանքի միջոցով։

Հարկավոր է միայն ուժերի կենտրոնացում մի կողմից, և ապա վորոշ սիստեմ, ծրագիր, կանոնավոր ձևով մշակված նախագիծ։

Ամենահիմնական և առաջին հարցը կայանում է նրանում, թե ովքեր և վոր շրջանից սկսած պիտի մտնեն հայ գրականության պատմական այդ տեսության մեջ։

Ինձ թվում է, այդ հարցի պատասխանը կանխորոշվում է հենց այն գրությամբ, վոր մեր կողմից հայ գրականությունը քննվում է վորպես հայ հասարակական մտքի եվոլյուցիայի պատկեր։

Այդ տեսակետից մեկնելով մեր կոլեկտիվ աշխատանքի ժամանակ մենք պիտի ելնենք նրանից, թե յերբ է սկսել առաջանալ այսպես կոչված «վերածնական», «լուսավորչական» շարժումը ռուսահայ իրականության մեջ։ Հետևաբար 40—50-ական թվականները պիտի բռնեն մեր ուշադրությունն առաջին հերթին, վորպես ռուսահայ հասարակական մտքի կազմակերպման առաջին ետապը։

Դա այն շրջանն է, յերբ քաղաքներում ամփոփվող հայ առևտրական կապիտալը ստեղծում է իր առանձին մտավորականությունը, յերբ հանդես են գալիս վերածնական առաջին կարապետները, վորոնք կանգնած լինելով յերկու եպոխաների սահմանագծի վրա, մի կողմից պաշտպանում եյին «ազգի» հին սկզբունքները, իսկ մյուս կողմից էլ կոչ անում շարժվել առաջ ու «լուսավորել»։ Խաչատուր Աբովյանը—այդ շրջանի ամենաբնորոշ արտահայտիչն եր։ Ապա գալիս են արդեն «Հյուսիսափայլ»-ի գործիչները, վորոնց մոտ նկատում ենք ավելի վճռական քայլեր դեպի «յեվրոպականությունը» և ավելի վստահ շեշտ։

«Հյուսիսափայլ»ը ստեղծել է թե հրապարակախոսական և թե գեղարվեստական գրականություն։ Նա ունեցել է խոշոր ներկայացուցիչներին հանձինս Ստեփանոս Նազարյանցի, Միքայել Նալբանդյանի և Սմբատ Շահազիզի։ Դրանց կողքին շարվել

են ավելի յերկրորդական հեղինակներ և թարգմանիչներ։ Եպոխայի «վոգու» և հայ հասարակության—«չորրորդ դաս»-ի մտավորականության հայացքների լուսաբանության համար մենք պետք է թե ընդհանուր քննության յենթարկենք եպոխայի բոլոր գործիչներին, և թե միաժամանակ առանձին առանձին վերլուծենք ամեն մի հեղինակի գործը։

Յերկրորդ շրջանը—70—90-ական թվականների պերիոդն է—ավելի ճիշտ մինչև 90-ական թվականները։

Այս անգամ արդեն հանդես է գալիս «Մշակը», նաև այլ օրգանների հետ միասին։ Գրիգոր Արծրունի, Գամառ-Քաթիպա, Րաֆֆի, դրանք են շրջանի ամենացայտուն դեմքերը, վորոնց շուրջը դարձյալ շարվում են ավելի յերկրորդական դեմքեր։

70—90-ական թվականների հասարակական միտքն ավելի բարդ կառուցվածք ուներ։

Յեթե 50—60-ական թվականների առաջավոր մտավորականությունը իր դեմ ուներ միայն պահպանողական բանակի միանման և միատեսակ գործող Այվազովսկուն, Մսերյանցին և Չերքեզյանին, ապա 70—90-ական թվականների լիբերալ բանակը ստիպված էր պայքարել վոչ միայն «պահպանողականների» այլ նաև «կիսապահպանողականների», «համաձայնական կղերականների» դեմ։

«Նոր Դարի» և «Կռունկ»-ի կողքին գործում եյին այդ ժամանակ «Արձագանքը» և «Փորձը»։ Մարկոս Աղաբեկյանի և Աղանդարյանի կողքին գործում Արգար Հովհաննիսյանը իր համախոհներով։ Յեվ այդ բանակից յուրաքանչյուրն ուներ իր սեփական բելլետրիստներին, պոետներին և լրագրողներին։

90-ական թվականներից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը, այդ պրոցեսը զարգանալով հասնում է իր գագաթնակետին։

Հոգևորական-կղերական բանակը ջարդված և ջախջախված էր վերջնականապես արդեն Գրիգոր Արծրունու ժամանակ։

Ասպարեզի տիրակալն էր՝ մենատերը—«Մշակը», վորը իր շուրջն էր կենտրոնացրել գրեթե բոլոր առաջավոր հեղինակներին ու գործիչներին։

«Մշակի» շուրջն եյին աշխատում և հետագայի «Հորիզոնի» գործիչները—Գար. Խաժակը և Թոփչյանը իր բոլոր ընկերակիցներով։

Յեթե 80—90-ական թվականների հիմնական դեմքը—Արծրունին էր, հետագա շրջանից հանդես է գալիս Քրիստափոր Միքայելյանը իր ընկերակիցների հետ միասին։

Շատ բան չի գրել նա։ Հրապարակախոս չի յեղել նա։ Սակայն և այնպես իր խոսքով ու գործով բնորոշել է շրջանի հիմնական տենդենցները։ Դա հայ ռազմական նացիոնալիզմի, կազմակերպված բուրժուական իդեոլոգիայի շրջանն է։

Քրիստափոր Միքայելյանի շուրջն են խմբվում Զավարյան, Ավ. Ահարոնյան, Շանթ... Վողջ գրականությունը և արվեստն ընթանում է ռազմական նացիոնալիզմի գծած ուղիներով...

...Սակայն բուրժուական լիբերալիզմի կողքին ստեղծվում են նաև մանր-բուրժուական դեմոկրատիայի իդեոլոգիայի արտահայտիչներ, վորոնցից ամեն մեկը յուրակերպ ձևով, իր ընդունակությունների և անհատական կարողությունների համեմատ արտահայտում է իր վերաբերմունքը դեպի ժամանակի «այրող խնդիրները»։

Փոխանցման շրջանի այդ յերգիչներից մի քանիսը կանգնում են սահմանագծի վրա, և «անդեկ ու անառագաստ» անդադար յերերվում են վորոնելով «նոր ուղիներ» և իդեալներ։

Միևնույն ժամանակ հանդես են գալիս Կովկասյան իրականության մեջ Ստեփան Շահումյան, Սուրեն Սպանդարյան, Արշակ Զուրաբյան, Բոգդան Կնունյան...

Նոր հասարակական ուժի—բանվոր դասակարգի քննադատական կռիվը արտացոլվում է հրապարակախոս-քաղաքագետների գործունեության մեջ։ Դրանք են արտահայտում նոր վորոնումները և դրանք են գծում միջազգայնության այն ուղին, վորը շատ թույլ և անորոշ կերպով գտնում էր իր արձագանքը հայ գրականության մեջ։

Այդ շրջանը դառնում է «հայրերի» և «զավակների», «հնի» ու «նորի», նացիոնալիզմի և ինտերնացիոնալիզմի գաղափարական քաղաքական բախման եպոխան։

Հայ բուրժուազիայի մտավորականությունն, ասել էր ամեն ինչ։ Իր վրդովմունքով «հայրերի». վիպագիրը—Շիրվանզադեն իր «Կործանվածի» հերոս—Սահառունու բերանով կոչ էր անում հիշել «ազգի և հայրենիքի» պատգամները։

Բայց և այնպես, սառույցը շարժվել էր արդեն։ Ժողովրդական խորքերում սկսվել էր արդեն քննադատական շարժման պրոցեսը, վորը վաղ թե ուշ պիտի ստանար իր արտացոլումը և կյանքի, և՛ գրականության մեջ։

* * *

Այսպես կարելի յե նկարագծել հայ գրականության և հասարակական մտքի եվոլյուցիան։

Դա նախագիծ ե—հասարակ սխեմա, և չափազանց թռուցիկ մի կանվա, որի վրա և որի շուրջը կարող ե հյուսվել ամենից մանրամասն գծերով հայ գրականության տեսությունը։

Մի բան ե մնում միմիայն հիմնավորել և փաստական տվյալների ու քննական վերլուծության միջոցով պարզաբանել ավելի լայն մասսաների համար այդ պատմությունը։

Այդ գործը պետք ե կատարվի։ Պետք ե կատարվի ուժերի մոբիլիզացիայի և մարքսիստ-քննադատների կոլլեկտիվ աշխատանքի միջոցով, որքան կարելի յե արագ կերպով։ Պետք ե կատարվի, որովհետև հակառակ պարագային կշարունակի իշխել այն տենդենցիոզ սխեման, որը մինչև այժմ էլ տիրապետում ե մեր դպրոցներում, այն սխեման—որը հայ լիբերալ պատմագիրների միջոցով ֆալսիֆիկացիայի յե ենթարկել անցյալի պատմությունը։

Իսկ այդ ֆալսիֆիկացիային դիմադրելու համար միայն մի միջոց կա առայժմ։ Աստիճանաբար, քայլ առ քայլ և ամենակտրուկ կերպով մերկացնել ճշմարտությունը և պարզել գեթ հասարակ ակնարկների, առանձին եքսկուրսների ձևով անցյալի դեմքերի դերն ու նշանակությունը, նրանց կատարած գործի սոցիալական արժեքը, և հայ գրականության սերտ կապակցությունը դասակարգային ուժերի և փոխհարաբերությունների հետ։

Թիֆլիս 1927.

ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՄՈՒՏԻՆ

Գյուղը և գյուղացին, համարյա, բոլոր երկրներում և բոլոր ազգությունների մոտ էլ եղել են անցյալում բանաստեղծների և վիպագիրների համար խիստ նվիրական նյութեր, որոնք առանձին սիրով քննվել, նկարագրվել և երգվել են։ Գյուղացիական մոտիվներ և գաղափարներ պատահում ենք մենք թե ռոմանական և թե գերմանական ցեղերի հին գրականության մեջ։ Դեռ ավելին ևս։ Նույնիսկ նոր դարերի նախօրյակին, միջին դարերում մենք գտնում ենք գյուղական աշխարհի ջատագովություն, նույնիսկ հին հունական և հռոմեական հեղինակների մոտ մենք նկատում ենք հաճախ գյուղացիական որոշ մոտիվներ՝ գյուղի իդիլլիական նկարագրություն, գյուղական կյանքի գեղեցկացրած, իդեալականացրած պատկերներ...

Բայց չնայած այդ բոլորին, գյուղացիական աշխարհայացք—**գյուղացիական իդեոլոգիա բառիս իսկական իմաստով**—գյուղական մոտիվների ավելի որոշ, ավելի պարզ և հետևողական արտահայտությունը մենք նկատում ենք միայն մեր կապիտալիստական դարում։ Միայն այդ պատմաշրջանում ե ասպարեզ գալիս դեպի գյուղ ձգտող **որոշ հասարակական մի հոսանք**։ Հայտնվում են մի շարք գրողներ, երգիչներ, վիպասաններ, որոնք երգում են գյուղը, գյուղացու կենցաղը, հակադրում այդ բոլորը քաղաքների կուլտուրային և ապա անմիջապես հրավիրում հասարակությունը՝ դառնալ նորից դեպի գյուղական աշխարհ։

Արդեն 19-րդ դարի առաջին կիսամյակում բոլոր այն երկրներում, ուր ուժեղացել և բարգավաճել եր կապիտալիստական արդյունաբերությունը—ամփոփվում ե և որոշակի արտահայտվում թե հրապարակախոսության և թե գեղարվեստական գրականության մեջ նոր կապիտալիստական կարգերը խարազանող և վաղեմի գյուղական, նախակապիտալիստական աշխարհը երգող ինտելլիգենցիան։ Յեվ հասկանալի յե ինչու։

19-րդ դարը կապիտալի և մեծ քաղաքների դարաշրջանն ե։

Գյուղի երգիչները—քաղքենի, մանր սեփականատիրական տարրերի զավակներն են, այն տարրերի, որոնք մահանում են

ժամանակակից հասարակության մեջ կապիտալիզմի հարվածների տակ: Դա մի յերևույթ է, վոր նկատել և արձանագրել են նույնիսկ վոչ-սոցիալիստ պատմաբանները:

Խոշոր արդյունաբերությունը, կապիտալիզմը ճմլում է հասարակական այդ տարրերին և ապա նետում կամ դեպի պրոլետարների կամ էլ պրոլետարիատի շարքերը: Այդ շատ լավ զգում, գիտակցում են քաղքենի ինտելլիգենտները և, ինարկե, հենց այդ գիտակցությունը, իրերի ընթացքի այդ ճանաչողությունը պիտի ստիպեր նրանց բողոքել, կռվել ու պայքարել կապիտալիզմի դեմ: Յեվ այդպես էլ լինում է:

Սկսվում է «Նոր կարգերի», մեծ քաղաքների քննադատությունը: Բայց խարազանելով կապիտալիզմի վայրերի—մեծ քաղաքների խավար կողմերը, քաղաքի և ընդհանրապես ժամանակակից ընկերության սոցիալական կոնտրաստները, քաղքենի ինտելլիգենտը ցուցադրում է միաժամանակ և իդեալ՝ գյուղը, վորպես ավելի «գեղեցիկ», ավելի «դրական», յերանավետ մի աշխարհ:

Նա քննադատում է ժամանակակից շերտավորված հասարակությունը և ապա հակադրում դրան «միապաղաղ գյուղական համայնքը»—միամիտ, «յերջանիկ», «յեղբայրական կապերով» միացած ընկերությունը: Ցուցադրելով թշվառների, գործազուրկների, պոռնիկների, ավազակների բազմությունը «անիրավության քաղաքներում», այդ մտավորականը հրավիրում է բոլորին դեպի կանաչազարդ հովիտները, միշտ ուրախ և միշտ յերջանիկ գյուղական աշխարհը, ուր բացակայում են նրա կարծիքով ժամանակակից քաղաքի մռայլ կողմերը: «Անբավական լինելով ժամանակակից հասարակական կարգերից, նկատում է, իրավամբ, մի հրապարակախոս, դոքա հակադրում են այժմյան կապիտալիստական հասարակարգի խայտառակ մռայլ պատկերին, գյուղերի գեղեցկացրած, իդեալականացրած նկարը» (Լենին): Անշուշտ գյուղական աշխարհն այդքան դրախտային չէր, իսկ ժամանակակից քաղաքն այնքան մռայլ: Վոճրագործների և գործազուրկների հետ միաժամանակ ամփոփվում և կազմակերպվում էր ժամանակակից Բաբելոններում մի դասակարգ, վոր ձգտում էր միանգամայն վերացնել հին սեփականատիրական կարգերը և ստեղծել նոր իրավական աշխարհ: Այդ չեյին նկատել, կամ ավելի ճիշտ չեյին էլ կարող նկատել մանր բուրժուական ինտելլիգենտները շնորհիվ իրենց դասակարգային հայեցողության: Մանր-սեփականատիրական տարրերի համար այն անցյալը, ուր

ապահովված էր նրանց սեփականությունն անշուշտ պիտի լիներ ավելի գերազանց, ավելի պանծալի և սիրելի մի աշխարհ:

Քաղաքի այդ քննադատներին միանում են վերջին ժամանակ և այնպիսիները, վորոնք անմիջապես կախում չունեն մանր-սեփականատիրական տարրերից: Դրանք բողոքում են անկախ վորևէ տնտեսական ազդեցությունից, բողոքում են, վորովհետև համակված լինելով ինդիվիդուալիզմով հոգեբանորեն անկարող են լինում համակերպվել նոր հասարակական միջավայրին..:

Ժամանակակից մեծ քաղաքները յեռուն, կենդանի վայրեր են, վոր վերից դիտողին թվում է մի կատարյալ մրջնանոց. մարդիկ անդադար վազում են, սլանում զանազան կողմեր,—լըսվում է ավտոմոբիլի ազդանշանը, յերկաթուղու շոգեկառքի սուլոցը, տրամվայների զանգակը և մարդկանց ձայնը... Բազմահարկ, միմյանց կողքին սեղմված քարե ահագին տներ, հսկայական գործարաններ իրենց յերկար, մռայլ՝ ծխից սևացած ծխնելույզներով—այդ բոլորը ստեղծում է մի աններդաշնակ պատկեր, մի ժխոր, վոր մեծ քաղաքների միջավայրին անսովոր մարդուն առաջին պահուն շշմեցնում է...

Բարդ, նյարդային միջավայր է դա, վորին համակերպվելու համար հարկավոր էր ունենալ բավականաչափ ճկուն և նուրբ նյարդեր: Ահա հենց այդպիսի նուրբ, բարդ ներվեր չուներ հոգեբանորեն նախակապիտալիստական պարզ, պրիմիտիվ անցյալի հետ կապված ինտելլիգենտը: Նրա աղքատ և համեստ ներվերը, նրա պրիմիտիվ հոգեկան աշխարհը չեն համակերպվում ամենևին մեծ քաղաքների աղմկոտ միջավայրին..: Նրան հոգնեցնում ձանձրացնում է քաղաքի բարդ կյանքը և հաճախ նույնիսկ նրա հոգու մեջ ծագում է պահ մի ցանկություն հեռանալ այդ բոլորից, հեռանալ հեռու, միայնանալ...

Детский лепет мне несносен
Мне противен стук машин.
Я хочу под тенью сосен,
Быть один, всегда один..
(Соллогуб)

Յեվ միևնույն մոտիվը—անսահման ձգտում հեռանալ նյարդային քաղաքների միջավայրից և միայնանալ, մենք գտնում ենք համարյա բոլոր իմպրեսսիոնիստների մոտ: Սակայն մի եյական

տարբերությամբ։ Հաճախ դարձյալ այդ միևնույն իմպրեսսիոնիստների մոտ մենք տեսնում ենք դրական վերաբերմունք թե դեպի քաղաքի կուլտուրան և թե նաև մի առանձին սիրալիր վերաբերմունք դեպի գյուղական աշխարհը, վորպես մի անկյուն— ուր չկան ժամանակակից քաղաքի «անհամակրելի» կողմերը։

Յեվ ահա յեթե մենք միացնենք կապիտալիզմի և քաղաքի դեմ բողոքող այդ յերկու թեերը՝ այն ինտելլիգենտներին, վորոնց զայրացնում են քաղաքի սոցիալական կոնտրաստները և ապա նրանց, վորոնք տանել չեն կարող ընդհանրապես ժամանակակից քաղաքի մթնոլորտը, այն ինտելլիգենտներին, վորոնց զայրացնում են ժամանակակից կենցաղի «կոշտ», «կոպիտ», քաղաքի «վոչ-եսթետիքական» կողմերը—մեզ համար միանգամայն հասկանալի կլինի՝ ինչու մեր դարում այնքան հմայք ունեն գյուղի պատկերները, գյուղի իդիլլիական նկարները և առհասարակ գյուղական աշխարհի ջատագովությունը։ Անբավական այսորվա կյանքից, անբավական «կոպիտ», «կոշտ», շրջապատից, ժամանակակից մտավորականը ձգտում ե ավելի գեղեցիկ—այս կյանքին չնմանող մի կյանքի և ահա «իդեալական աշխարհի» վարդագույն ներկերով ել պարուրում ե և գյուղական աշխարհը*)։

Դրանով վորոշ չափով կարելի յե բացատրել և այն հանգամանքը, վոր նույնիսկ գյուղի բոլոր կոշտ, բոլոր բացասական կողմերը շատ լավ տեսնող, գիտակցող անհատներ դարձյալ միշտ տենչում են, յերազում գյուղը, դարձյալ հրավիրում են բոլորին գնալ գյուղը և գործել գյուղացիության մեջ։ Դարձյալ գյուղը դրանց բոլորի համար մնում ե Ավետյաց յերկիր, իսկ գյուղացին ամենասիրված սոցիալական ուժն ու հասարակական գաղափարը (Վլադիսլավ Ռեյմոնտ)։

Ժամանակակից քաղաքի քննադատների մեջ ամենից հետաքրքրական վիպասանները հենց դրանք են։ Սուբյեկտիվ են այդ գրողները. դա ճիշտ ե, բայց հենց խորունկ սերը դեպի գյու-

*) Յեվ վոչ միայն գյուղական աշխարհը։ Թե արևմտաեվրոպական և թե ժամանակակից ռուսական գրականության մեջ կարելի յե նկատել վորոշ ձգտում դեպի իդեալականացրած անցյալը։ Ժամանակակից քաղքենիության պոետները, վիպասանները և նկարիչները առանձին մի զգացումով են յերգում գեղեցկացրած միջնադարը, նախակապիտալիստական անցյալը, 17-րդ դարը... Մի քանիսը նրանցից ճիշտ ե, վորոշ իրոնիա յեն մտցնում իրենց յերկերի մեջ, և կարծես քննադատում են նույնիսկ այդ հին պատմաշրջանը, բայց դարձյալ նույնիսկ դրանց մոտ վորոշակի նկատելի յե առանձին մի սեր դեպի անցյալը (Վ. Բրյուսով, նկարիչ Ալեքսանդր Բենուա, Դոբուժինսկի)։

ղացիությունը դարձնում ե այդ վիպագիրներին—կյանքի ավելի ուշիմ հետազոտողներ, ավելի ուշադիր քննիչներ։ Ուշադրությամբ և առանձին սիրով դրանք դիտում են գյուղական կյանքի տարբեր կողմերը, պրպտում գյուղացիության իրական կենցաղը, քայլերը և չնայած բոլոր խավար կողմերին, դարձյալ յերգում են գյուղը և գյուղացուն։ Բոլոր այդ վիպագիրներն ահագին նյութ են մատակարարում գյուղացիական մտահայեցողության և հոգեբանության գնահատության համար։ Յեվ, հետևելով տարբեր հասարակական շրջաններում գործող տարբեր վիպագիրներին, մենք կարող ենք ծանոթանալ գյուղական իրականության և գյուղացիության հոգեբանության հետ նրա զարգացման տարբեր շրջաններում։

Այդ բոլորը հավասար չափով վերաբերվում ե և ռուսահայ գրողներին։ Տարբերությունը, յեթե այն կա—միայն նրանումն ե, վոր մեզ մոտ գեղարվեստական և հրապարակախոսական գրականությունը անհամեմատ ավելի աղքատ ե, և մյուս կողմից օբյեկտիվ իրականությունն ել տարբերվում ե այն չափով, վոր չափով տարբերվում են ռուսահայ գրական-հասարակական հոսանքները։ Այնուամենայնիվ, չնայած այդ հասկանալի տարբերության, այստեղ ել, ռուսահայ նորագույն գրականության մեջ մենք կնկատենք միևնույն բնորոշ յերևույթների և փաստերի արձանագրությունը, ինչ վոր արևմտաեվրոպական և ռուսական գրականությունների մեջ։

19-րդ դարի առաջին կեսում մենք կտեսնենք գյուղի համեմատաբար ավելի անդորր նկարագրություն առանց չափազանցրած իդեալիզացիայի և առանց դիտավորյալ հակադրության քաղաքին։

Յերրորդ կեսից, ավելի ճիշտ 70-ական թվականներից, սկսած մենք նկատում ենք կապիտալիզմի զարգացումը և քաղաքների սատիճանական ուժեղացումը Կովկասում։ Դրա հետ միասին ռուսահայ ինտելլիգենցիայի վորոշ խմբակներ սկսում են «վախենալ» ու ցավել, վոր «քայքայվում» ե գյուղական հասարակությունը։ Յեվ ահա հենց այդ ժամանակից—սկսվում ե մեզ մոտ լեփս յուրորինակ նարոդնիկական շարժում։ Ասպարեզ են գալիս հեղինակներ, վորոնք հրավիրում են բոլորին դեպի ավելի «լավ», «արդար» ու «մաքուր» գյուղը, ուր տիրում ե «հավասարություն» և «բարեկամություն»։ Գրվում են վեպեր, ուր նկարագրվում ե այդ յերջանիկ «Ավետյաց Յերկիրը»։

Բայց քաղաքներն ավելի և ավելի բարգավաճում են և երկաթե ճիրաններով քաշում դեպի իրենց սահմանները գյուղական թարմ ուժերը: Քայքայվում է, տարրալուծվում գյուղական հասարակությունը: Գյուղերում հայտնվում են ինչ որ «պինջակավոր», «կարտուզով» մարդիկ, որոնք հրամայում են, գոռում բոլորի վրա և շղթայում գյուղացիներին տնտեսական ամուր թելերով: Վաշխառուներ, գյուղի «մեծ»եր, հարուստներ, կոռքաներ—գյուղական նոր զարգացող բուրժուազիան է դա: Գյուղը դառնում է «խավար աշխարհ», որ հեծեծում են «թշվառները», «աղքատները»: Տիրում է ամենուրեք անօգնականություն և հուսահատ կացություն...:

Այդ արդեն չորրորդ շրջանն է, որ դեռ Պերճ Պռոշյանի վերջին գրվածքներում նկարագրվում էր մի փոքր մեղմ և ծածկված կերպով... Ժամանակակից ռուսահայ գրողների մոտ այդ նոր իրականությունը երևան է հանվում իր ամբողջ անպաճույճ մերկությամբ:

Իհարկե մեր այդ բնորոշումը մի փոքր կամայական է: Բայց թվում է, մոտենալով այդպես միայն, մենք կարող ենք ավելի հեշտ կերպով ըմբռնել հայ գրողների և հայ գյուղացիության կյանքի էվոլյուցիան: Միայն կապելով որոշ գրողներին հասարակական որոշ պայմանների հետ, թվում է մեզ, կարելի կլինի ըմբռնել և նրանց նկարագրված օբյեկտը, և վերջապես հենց իրենց գրողների սուբյեկտիվ աշխարհահայացքը: Միայն նկատի ունենալով հասարակական որոշ միջավայրն ու շրջապատը մենք կարող կլինենք հասկանալ, թե ինչու այնքան որոշ տարբերվում են Պռոշյանցի գյուղացիներն այժմյան գյուղացիներից, և ինչու մյուս կողմից այնքան տարբերվում են Պռոշյանցի առաջադրած միջոցները գյուղի և գյուղացիության «ցավերի» բժշկության համար այժմյան գրողների առաջարկած ռեցեպտներից:

19-րդ դարի առաջին կիսամյակին հայ հասարակությունը տնտեսական խիստ հետամնաց պայմաններում էր գտնվում:

Կապիտալիզմը դեռ ոտք չէր կոխել Անդրկովկասի սահմանները: Գործարաններ չկային, չկար և կապիտալիստական արդյունաբերական բուրժուազիա: Չկային վերջապես և խոշոր արդյունաբերական կենտրոններ—կապիտալիստական մեծ քաղաքներ: Գուցե դրա համար էլ բացակայում էր այդ ժամանակ և գյուղի պայքար քաղաքների հետ: Գյուղերին ոչ մի վտանգ չէր սպառնում այդ ժամանակ քաղաքների կողմից: Շատ թույլ

էին դեռ վերջինները գյուղի գոյությունը վտանգելու համար: Հենց այդ պատճառով էլ իհարկե, ժամանակակից գրականության մեջ մենք չենք նկատում քաղաքների քննադատություն: Ընդհակառակ, ամբողջ ժամանակակից գրականությունը խարազանում էր տիրող հին, ասիական պայմաններն ու կյանքը և ապա «միջնադարյան հին կենցաղից» հրավիրում էր գնալ դեպի «Եվրոպական քաղաքակրթությունը»:

Ռուսահայ վերածնության ամենախոշոր գործիչներն այդ շրջանում ոչ թե երգում և գովաբանում էին հին նահապետական կարգերը, այլ քննադատում էին «մոտ անցյալը» և հրավիրում բոլորին ընթանալ առաջ, դեպի նոր եվրոպական կարգեր, լուսավորություն... «Այսուհետև ոչինչ եգիպտական խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ չինական պարիսպ, որ պիտի փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բաբելոնյան գերությունից»: Այդ խոսքերով «Հյուսիսափայլ»ի հիմնական ձգտումները բնորոշելով, Ս. Նազարյանցը միաժամանակ որոշում է և իր հասարակական գործունեության իմաստը—«քանդել Չինական պարիսպը հայերի և Եվրոպայի մեջ»: Եվ «Հյուսիսափայլ»-ը ռուսահայերի աշխարհական-մարտական այդ առաջին օրգանը հաջողությամբ կատարում է այդ դերը: Եվրոպայից է նա սպասում լույսը, ճշմարտությունը, «ազատությունը խավարի բաբելոնյան գերությունից»: Ահա դրա համար էլ, «հայ ժողովրդի գիտակցությունը» բարձրացնելու նպատակով թարգմանվում էին եվրոպական մտածողները, վիպագիրները, լուսաբանվում հայ կյանքի երևույթները «լուսամիտ գաղափարների» տեսակետից և ապա ցույց տրվում այն «կուլտուրական Եվրոպայի» պատկերը, դեպի որը պիտի ձգտեր և հայ հասարակությունը ...:

Այդ բոլորն արվում էր այն ժամանակ, երբ թե Արևմտյան Եվրոպայում և թե Ռուսաստանում՝ առաջավոր մտավորականության շրջաններում – տիրում էր քննադատական վերաբերմունք դեպի «Եվրոպան»:

Պետք չէ մոռանալ, որ հենց այդ տարիներին Արևմտյան Եվրոպայում տիրում էր կապիտալիստական արդյունաբերությունը, որ արդեն բավականաչափ պարզել էր իր թե դրական և թե բացասական կողմերը:

Կապիտալիզմը նպաստել էր մեծ քաղաքների բարգավաճմանը, մանր սեփականության անկմանը, գյուղերի քայքայմանը: Ուժեղացել էր հոսանքը գյուղերից դեպի քաղաքները, ժողովուրդը թշվառանում էր, աղքատանում: Վորպես կապիտալիզմի զարգացման արդյունք ստեղծվել էր մի նոր հասարակական դասակարգ—պրոլետարիատ—ըմբոստ, միշտ անհանգիստ և միշտ բողոքող մի դասակարգ, վոր, կազմակերպվելով մեծ գործարաններում, ասպարեզ էր գալիս հասարակության մեջ, վորպես ուրույն սոցիալական մի ուժ իր առանձին դասակարգային աշխարհայացքով: Միաժամանակ պրոլետարիատի հետ քաղաքներում բազմացել էր վաճառագործների, թափառաշրջիկ պրոլետարատի, ռամիկների մի խառն զորք: Այդ բանակն ստեղծվել էր և ստեղծվում էր ավելի աղքատներից, ավելի թշվառներից և անօգնականներից՝ նրանցից, վորոնք պարտվել և հաղթվել էին կյանքի կռվում:

Հասարակական այդ շրջանում դեռ թույլ էր պրոլետարական իդեոլոգիան—տիրապետում էր քաղքենի տարրերի աշխարհայացքը: Իսկ այդ աշխարհահայացքը ժխտում էր միանգամայն նոր կարգերի—կապիտալիզմի վորևէ դրական արժեքը:

Քաղքենի ինտելիգենտները միանգամայն բացասաբար էին վերաբերվում դեպի «Նոր տնտեսական պայմանները», քննադատում էին և խարազանում նրա բոլոր կողմերը և ապա հառաչում բոլորին «քանի ուշ չէ» խուսափել այդ «սխալ ուղիից»—դառնալ գյուղական աշխարհը, ուր չկա կապիտալիզմ, պրոլետարիատ և գործազուրկների թշվառ բանակ, ուր տիրում է միշտ «ուրախ և անդորր» կյանք: Այդ հոսանքը բավական ուժեղ էր և Ռուսաստանում, ուր կապիտալիզմը համեմատաբար դեռ բավականաչափ թույլ էր: Մեր վայրենի, կոշտ և կոպիտ Ռուսաստանը ավելի լավ է, քան առաջադեմ, լուսավորված, բայց պրոլետարացած, «փտավոր» Յեվրոպան—ասում էին ռուսական ինտելիգենտները: (Միխայլով, Բակունին):

Այժմ տեսնենք ինչ է ասում «Հյուսիսափայլ»ը...

Դժվար է յերևակայել, վոր նա չգիտեր կամ չէր կարող նկատել այդ հոսանքների և ուղղությունների գոյությունը: Չի կարելի այդ յենթադրել մանավանդ այն պատճառով, վոր ինչպես չեշտեցինք, ռուսական ինտելիգենտական շրջաններում էլ տիրում էր բացասական-քննադատական վերաբերմունք դեպի կապիտալիզմը: Անուամենայնիվ չնայած այդ բոլորին և Ստ.

Նազարյանցի, և ընդհանրապես «Հյուսիսափայլ»ի բոլոր գործիչների համար «Յեվրոպան» մնում էր նույնպիսի «Ավետյաց» մի յերկիր—դրական, ցանկալի աշխարհ, վորպես և «Մոսկվի» հայ վաճառականի համար: «Մոսկվի» հայ վաճառականի տեսակետից էլ մոտենում էր Նազարյանցը ժամանակակից պրոբլեմներին:

«Ռուսահայ վերածնության» գործիչներին գրավում են վոչ միայն Յեվրոպայի դպրոցները, կրթությունը, այլ և տնտեսական հզորությունը, տնտեսական նոր, կենդանի գործարանային-արդյունաբերական կյանքը: Իր մի ուշագրավ հոդվածում «**Վաճառականության խորհուրդ**» մասին Ստեփանոս Նազարյանցը բոշակի ձգտում էր հայտնում՝ հիմնավորել կապիտալիստական «նոր կարգերը»: Բավական յերկար այդտեղ նա կանգ է առնում «վաճառականության» և «ֆաբրիկագործության» անհրաժեշտության վրա:

«Վաճառականությունը, ասում է Ստ. Նազարյանցը, է բնական հետևանք հառաջադեմ կրթության և ժողովրդի բազմանալուն մի աշխարհի մեջ, և այդպես հարկավոր է նա մի ազգի բարեկեցության համար, վոր հասած է կրթության վորոշ աստիճանի»* :

Հասարակության բոլոր մնացյալ տարրերը, ըստ Ստ. Նազարյանցի, չունեն այն խոշոր նշանակությունը, ինչ վոր վաճառականությունը. ահա դրա համար էլ այդ տարրերը պիտի ծառայող դերք բռնեն վաճառականության նկատմամբ—մանավորապես գյուղացիությունը չպիտի խոչընդոտե նրա զարգացմանը—«իր արդյունքների գների բարձրացնելովը»:

«Մի ազգի ֆիզիքական բարեկեցություն կախ. է **վաճառականության յեվ ֆաբրիկագործության հառաջադիմությունից** (կուրսիվը մերն է. Ա. Կ.) վորովհետև **գույքի կուտակություն** կրթյալ ընկերությունների մեջ վոչ թե միայն կարող է պաշտպանել սովի յերեսից, այլ և դա յէ այն հնարը, վոր կարող է բանալ աշխարհի իսկական ուղտաբուղխ աղբյուրը (եջ 233):

Այդպիսով Ստ. Նազարյանցը «ազգի բարեկեցությունը» կապում է «վաճառականության» և «ֆաբրիկագործության» հառաջադիմության հետ, ֆաբրիկագործության, վորի դեմ զինված է իր գործունեյության յերկրորդ շրջանում Մ. Նալբանդ-

*) «Հյուսիսափայլ»—1858, եջ 292.

դյանը։ Յեվ այդ «ֆաբրիկագործությունը» Ստեփաննոս Նազարյանցի համար դառնում է մի գերագույն իդեալ։ Նա նախատեսում է քննադատական առարկությունները և հանդիմանությունները, բայց դարձյալ գտնում է, որ ազգությունը կվերածնվի հետևելով Յեվրոպային։ Փույթ չէ, թե «կճնշվի» մանր սեփականությունը, փույթ չէ, թե «հարստության կուտակում» կառաջանա։ Կարևորն այն է, որ «ազգը զորանա»...

Այդ հոդվածը, ինչպես տեսնում ենք, շատ արժեքավոր է Ստ. Նազարյանցի սոցիալական աշխարհայացքի բնորոշման համար։ Դժբախտաբար նրա կենսագիրները, քննադատները ավելորդ են համարել կանգ առնել այդ հոդվածի քննության վրա։ Մի քանիսը թերևս այն պատճառով, որ Նազարյանցի խոսքերը դասակարգայնացնում են վերածնության հրապարակախոսի աշխարհայացքը, չափազանց հողեղեն բնույթ են տալիս նրա «ազգային բաղձանքներին» ու դավանանքին, — մյուսները գուցե նրա համար, որ հոդվածի տակ, փակագծի մեջ գրված է մի անգլիական օրգանի անունը։ Բայց վերջինները, եթե միայն այդ հանգամանքի պատճառով են անուշադիր թողել հոդվածը, մոռացել են մի շատ կարևոր հանգամանք։ Այդ այն է, որ **հոդվածին Ստ. Նազարյանցը չի կցել ոչ մի ծանոթություն կամ լրացուցիչ առարկություն։ Ավելին ևս։ Նա նույնիսկ իր ստորագրությունն է դրել հոդվածի վերջում։**

Մենք ունենք մի ուրիշ վկայություն ևս, որ այդ հոդվածում արծարծված մտքերը Ստ. Նազարյանցի տնտեսական credo-ն են արտահայտում։ Այդ՝ կոմս Էմմանուելի — Միքայել Նալբանդյանի վկայությունն է։ Իր «Հիշատակարանում» նա բերում է մի հետաքրքրական դիալոգ «Հյուսիսափայլ»-ի «հետադեմ» հակառակորդներից մեկի հետ, ուր վերջինը քննադատության է յենթարկում Ստ. Նազարյանցի՝ վաճառականության մասին արծարծած խոհերն ու հայացքները.

«Յես շատ խոր չեմ մտանում ուսումնական բաների մեջ, նկատում է նա, բայց ինչ որ վերաբերվում է վաճառականության և այն գործնական վաճառականության, չես առավել լավ գիտեմ, քան թե «Հյուսիսափայլ»-ի հրատարակողը։ Յես «Հյուսիսափայլ»-ի յերեք համարի մեջ մի հոդված տեսա վաճառականության մասին, թեև չեմ կարդացել (պետք չէ մոռանալ, որ Նալբանդյանի նպատակն է ծաղրել իր հակառակորդներին, Ա. Կ.) բայց գիտեմ, որ հիմար բան

պիտո է լինի, պատճառը չեմ կարծում, որ համաձայն լինի իմ վաճառական տեսության*)։

Միք. Նալբանդյանի նկարագրած խոսակիցն այնուհետև սկսում է քննադատել վաճառականությունը, համարում է նրանից վաստակը անարդար.

...«Դու կարծում ես, թե աշխարհի յերեսին հարստականք արդարությամբ ճարել են յուրյանց արծաթի կարողությունը, դիմում է նա իր հակառակորդին, ոչ, սխալվում ես, շատ անգամ արյունի գին է այն, շատ անգամ մեծամեծ զրկողությունների գին»...։

Յեվ ահա «Յերկրագործություն» հեղինակը հետևյալ պատասխանն է տալիս, որպես «Հյուսիսափայլ»-ի պրոպագանդիստ.

...«Միթե վաճառականություն ասացյալը դրականապես մի պիղծ բան է, որ անպատճառ պիտոյ է հիմնված լինել սատանայական կանոնների վերա. ոչ, ոչ. վաճառականությունը սուրբ բան է, պիտոյ է արդարությամբ և խղճմտանքով գործակատար լինել և այդ հանդիսում ինչ որ Աստված ստեղծել է, պիտոյ է արդարությամբ և խղճմտանքով գործակատար լինել և այդ պիտոյ է զգուշանալ չմեղանչել արդարության ընդդեմ և չպղծել մի գործի սրբությունը»**)։

Այդ դիալոգը մեզ համար հետաքրքրական և կարևոր է այն կողմից, որ ապացուցանում է մեր հիմնական միտքը։ Ոչ միայն ինքը Նազարյանը, ինչպես տեսնում ենք, այլ և Միքայել Նալբանդյանը (նրա գործունեության առաջին շրջանն է դա) պաշտպանում են անգլիական հանդեսից փոխադրված հոդվածի մեջ արծարծված մտքերը։ Իսկ հոդվածը հրավիրում էր «ազգությունը» դեպի նոր կարգերը — վաճառականության ավելի ինտենսիվ զարգացումը և «ֆաբրիկագործություն»... Հոդվածագիրը և նրա պաշտպանը, կարծես, ամենևին չեն ցանկանում նկատել «յեվրոպական քաղաքակրթության» մռայլ կողմերը, գյուղերի քայքայումը, հասարակության շերտավորումը, դասակարգային պայքարը... Ս. Նազարյանցը նախատեսում է նույնիսկ մանր սեփականության անկումը, բայց հաշտվում է դրա հետ, որովհետև բացառական

*) Միք. Նալբանդյան՝ Յերկեր, հատ. I. եջ 133։

**) Միք. Նալբանդյան՝ նույնտեղ եջ 135։

այդ կողմը նրա համեղմամբ ծածկվում է միանգամայն «փայլփկագործության» դրական կողմերով: «Ազգը կզորանա»... Այդպես կարող էին մտածել ռուսահայ հրապարակախոսության առաջին «վերածնիչները» միայն նրա համար, վոր նրանք ահագին նշանակություն էին տալիս վաճառականությանը՝ «ազգային կյանքում» և ահագին սպասելիքներ և ակնկալություններ էին կապում սոցիալական նոր ուժի հետ:

Թե ինչու էր այդպես — նրանց մտածումը, մենք հասկանում ենք, յերբ անցնում ենք այդ շրջանի «հայ հասարակության» սոցիալական կազմի վերլուծմանը:

«Հայ հասարակության» մեջ բոլոր տարրերը համարյա քնած և մեռած էին, բացի առևտրական բուրժուազիայից: Գյուղացիությունը միանգամայն նիրհում էր և ամենևին ցույց չէր տալիս հասարակական ձեռներեցության վոգի:

Քաղաքների արհեստավորությունը դարձյալ,—«ազգային կյանքում» աննշան դեր էր կատարում: Նրա պայքարն ուժեղների դեմ նկատելի չէր միայն Թիֆլիսում ու Նախիջևանում և կրում էր տեղական բնույթ և կոլորիտ:

Հոգևորականությունն էր մնում—վորը, ճիշտ է, մեռած չէր, քնած չէր, ինչպես վերոհիշյալ խմբակները. ապրում էր նա և յեռանդով գործում, բայց իր հոգեբանությամբ, իր մտածությամբ հասարակական այդ տարրը կապված էր անցյալի հետ: Նա նայում էր յետ՝ և վոչ առաջ: Հետադեմ, «ափական անցյալի» յերկրպագուն էր նա: Յեվ անշուշտ հայ առաջավոր ինտելիգենտը, վերածնության հրապարակախոսը, չէր կարող հաջողությամբ կռվել հոգևորականության դեմ, յեթե չունենար վորոշ հենարան, հասարակական մի պաշտպան ուժ:

Այդպիսին է հանդիսանում հայ առաջ շարժվող վաճառականությունը: Անդրկովկասում նա ավելի թույլ էր, քան Կովկասից դուրս: Նրա տնտեսական ոպերացիաները և ընդհանրապես գործունեության ասպարեզը լինում են ոտար յերկիրները: Յեվ հենց այդ յերկրներում էլ նա ամփոփվում է վորպես ուրույն մի ուժ, և ստեղծում իր առանձին գաղութները:

Հայ վաճառականական գաղութներ մենք տեսնում ենք Արևմտյան Յեվրոպայի խոշոր քաղաքներում, Յեգիպտոսում, Հնդկաստանում, Ռուսաստանի մեծ քաղաքներում, Լեհաստանում... Ահա հենց այդ կենտրոններում էլ մենք նկատում ենք մի առանձին կյանք և պատմական այն պերսպեկտիվի պայմաններում—հառաջդիմական հոսանք: Կարծես զգալով, վոր գիտությունն է նրանց զարգացման հիմնական և առաջին գործոնը հայ վաճառական տարրերը սկսում են աջակցություն ցույց տալ կրթության զարգացմանը: Առևտրական կապիտալի ներկայացուցիչները հիմնում են միջնակարգ դպրոցներ, կտակում մեծ գումարներ՝ բարեգործական-կրթական նպատակով...: Առաջին հայ պարբերական որգանը՝ «Ազդարար»ը հրատարակվում է վաճառականական այդպիսի մի գաղութի համար հեռավոր Հնդկաստանում: Վաճառականներից է լինում նաև հայ առաջին քաղաքական տրակտատի հեղինակը*): Հասարակական այդ խմբակցությունն էլ ոգնում է հայ վերածնության գործիչներին:—«Հյուսիսափայլ»ի բաժանորդների մեծ մասը վոչ թե Կովկասից էր, այլ Ռուսաստանի այն քաղաքներից, ուր կային հայ վաճառականական գաղութներ: Ստեփան-Ոսկանի «Արևելք»ի անմիջական հրատարակիչները լինում են վաճառականներ . . .**): Չնկատել այդ բոլորը, չտեսնել վաճառականության դերն ու նշանակությունը անկարող էին մեր գործիչները: Վորովհետև չնկատել այն, վոր «ազգային կյանքում» միակ կենսունակ, զարգացող, **առաջ ընթացող ուժը** վաճառականությունն էր—նշանակում էր չնկատել այն որերի հայ իրականության ամենաբնորոշ յերևույթը . . . Վերածնության գործիչները լինում են բավական հեռատես, նրանք վոչ միայն նկատում են այդ հոսանքը, այլ և համարձակ և կըտրուկ կերպով շեշտում են իրենց նկատածը:

Դարձյալ միևնույն Նալբանդյանն է լինում, վոր իր «Հիշատակարանի» մեջ կարծես դիտավորությամբ բերում է յերկու անհատների մի բանավեճ: Վիճողներից առաջինը «տգետ» է, և անդադար հարցեր է տալիս. իսկ մյուսը «գիտակից» և «զարգացած», վոր պատասխան է տալիս առաջինի հարցումներին: Առաջինը **շինական** է, իսկ յերկրորդը **վաճառական**: Այդ, իհարկե,

*) Տես՝ «Հայկական տպագրություն» հատ. II. եջ 478 և այլն: Այդ տրակտատը—վոր ապագա «ազատ Հայաստանի» պրոյեկտն էր ներկայացնում խիստ նշանակալից աշխատություն է այն տեսակետից, վոր պարզում է XVIII դարի հայ վաճառականության սոցիալական քաղաքական բաղձանքները: Հետաքրքրական կլիներ պարզաբանել Շահամիրյանցի հայացքների տարբերությունը 19-րդ դարի հայ «լուսավորիչների» արծարծած գաղափարախոսությունից:

**) Տես, Լեո. Ստ. Ոսկան. («Մուրճ» 1901 №№ 11—12). «Պարիզում ապրող վաճառական հայերից մի փոքրիկ ընկերություն էր կազմվել այդ գործն առաջ տանելու համար», (եջ 124 № 11): Ուշադրավ է Ոսկանի «Արևմուտք»ի հրատարակչական կազմը. տես № 12, եջ 148:

նորից գալիս է հիմնավորելու մեր ասածը։ Այդտեղից արդեն մի քայլ էր առաջ պիտի դնար «Հյուսիսափայլ»ը։ Եթե վաճառականությունը միակ առաջավոր ուժն է հայ իրականության մեջ, հուսատու «զարգացող» տարրը – հետևողականությունը պահանջում էր՝ պաշտպանել այդ խմբակցության գործը։ Եվ ահա Նալբանդյանի արդեն սկզբում բերված դիալոգը հետաքրքիր է հենց այդ տեսակետից։ Այդտեղ վերածնության տեսաբանը կարծես փորձում է եթիքական տեսակետից «արդարացնել» վաճառականության դերը և ապացուցել, որ նրա «վաստակը արդար է» . . .։ Խորապես հավատացած լինելով նրանում, որ հայերի «բարեկեցությունը» և բարորությունը կապված է առևտրական բուրժուազիայի զարգացման հետ, նա ձգտում է իր ընթերցողներին էլ համոզել դրանում։ Եվ, ի հարկե, այդպես խորհելով Վերածնության գործիչներն անհրաժեշտաբար պիտի ձգտեյին ոչ միայն դեպի եվրոպական «լուսավորությունը», այլ և դեպի «վաճառականության և ֆաբրիկագործության» զարգացումը, դեպի արևմտյան տնտեսական կարգերը։

Այդպես էյին մտածում ռուսահայ Վերածնության առաջին հրապարակախոսները։ Միանգամայն անորոշ վերաբերմունք ենք նկատում նրանց մոտ դեպի «գալիք օրերը» և կապիտալիստական զարգացման հեռանկարները։ Գյուղը և գյուղացին ամենևին չեն զբաղեցնում նրանց։

Տեսնենք այժմ—նկատելի՞ է միևնույնը «հայ գյուղացիության առաջին վիպասանի», Խաչատուր Աբովյանի մոտ։

Բագու, 1910

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

1.

Խաչատուր Աբովյանը սովորաբար համարվում է ռուսահայ գյուղացիության առաջին խոշորագույն վիպասանը։ Այդ կարծիքն իրավացի չէ միայն որոշ չափով։

Աբովյանի հիմնական աշխատությունը, «Վերք Հայաստանին» հիրավի տալիս է 19-րդ դարի առաջին տասնամյակների հայ գյուղի բավականաչափ հետաքրքրական և բնորոշ ուրվանկարը։ Ընդհանուր գծերով այդ վեպի մեջ բնորոշվում են գյուղական կյանքի բնահատուկ յերևույթները, գծվում են գյուղական աշխարհի եական կողմերը։ Առանձին վոգևորությամբ հեղինակը նկարագծում է գյուղական միջավայրի բարեմասնությունները և յերգում գյուղացիների զվարթ և յերջանիկ կյանքը։

Բայց միաժամանակ այդ բոլորի հետ Աբովյանը բավական հեռու չէ վորոշակի արտահայտված գյուղացիական իդեոլոգ լինելուց։ Նախ և առաջ նա չի տալիս գյուղացիության ապոլոգիան, գյուղացիության որպես ուրույն հասարակական մի խմբակցության ջատագովությունը։ Նրա մոտ մենք չենք նկատում չեմ գյուղի գիտավորյալ, կանխամտածված հակադրությունը քաղաքին։ Իր վեպը Աբովյանը գրել է ոչ թե քաղաքը, «ապրանքային տնտեսությունը» խարազանելու համար. և ոչ էլ հայ ինտելլիգենտներին գյուղի ծոցը հրավիրելու համար. պատմական այն անցյալում, յերբ գոյություն չուներ քաղաքների և գյուղի գզալի կոնտրաստ—այդպիսի տրամադրություն կամ գիտավորյալ մտադրություն անհրաժեշտաբար չեր կարող ծագել։

Իրապես Աբովյանի մոտ գյուղացիությունը նույնիսկ բացակայում է որպես կոնկրետ գծավորված խմբակ,—չկան ամենևին գյուղացիների իրական, քիչ շատ կենդանի պատկերները, չկան նրա մոտ ամենևին գյուղացիական տիպեր։ Այդ մենք ավելի քան պարզ կնկատենք, յեթե նույնիսկ ընդհանուր ակնարկ նետենք Աբովյանի վեպի վրա։ Դա իրապես հրապարակախոսական հայրենասիրական-ազգային մի վեպ է նվիրված ամբողջ «հայ ազգությանը»։ Հեղինակի վոգևորված խոսքերը և լիրիքական զեղումները ավելի վերաբերվում են ընդհանրապես իր «հայրե-

նիքին» և ազգակիցներին, այլ վոչ միայն առանձնապես գյուղացիությանը: Դրանով էլ բացատրվում է ի հարկե այն, վոր գյուղացին, վորպես ուրույն հասարակական տիպար իր անհատական բնահատուկ կողմերով համարյա ամենևին գծված չէ. միակ գործող և վորոշակի նկարված դեմքը՝ Աղասին, այդ «ազգասեր և հայրենասեր» ջիգիթը—ժամանակակից մի կիսաինտելլիգենտ է՝ Քանաքեռցի շինականի զգեստներով: Ինքը, Աբովյանը մի քանի անգամ շեշտում է, վոր «Վերք Հայաստանին» գրել է «մայրենի լեզվի և ազգասիրության» տարածմանը զարկ տալու համար. այլ խոսքով նա ձգտել է նպաստել «ազգի» «առաջադիմության» և ինքնամփոփմանը, վոր էր, ինչպես գիտենք, և «Հյուսիսափայլի» գործիչների գերագույն իդեալը... «Ով Թուր ունի, առաջ իմ գըլխիս խփի, իմ սիրտս խրի, ապա թե վոչ՝ քանի բերանումս լեզու կա, փորումս սիրտ, չես լեզապատառ ձեն կտամ. «էդ ում վրա եք Թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»*),

«Մենք, վոր իրար Թասիբ քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղից վեր կենա, մեզ տակովը չի կարող անել, ինչ Թե Ոսմանցին յա Պարսիկը**):

Տարբեր վարիացիաներով հիմնական այդ միտքը կրկնում է Աբովյանը իր ամբողջ գրքի մեջ: Այդ բոլորը, ի հարկե, բավականաչափ պարզ կերպով բնորոշում է այն տրամադրությունը, վորով համակված էր Աբովյանը իր վեպը գրելիս:

Այդպիսով «Վերք Հայաստանի» հեղինակը հանդիսանում է նույնպես ռուսահայ վերածնության գործիչներից մեկը: **Իր հասարակական ձգտումներով, հայացքներով նա կապված է «Հյուսիսափայլի» գործիչների հետ:** Յեվ յերբ ավելի մանրակրկիտ քննում ենք Աբովյանի գործունեյության ընդհանուր իմաստը, մենք պարզորոշ նկատում ենք, վոր նա կռվում է միևնույն բացասական յերևույթների դեմ, վորպես և Ստ. Նազարյանը, Միք. Նալբանդյանը:

Աբովյանը լավ գիտակցում է հայկական դպրոցի պակասավոր կողմերը. նա էլ վնասակար է համարում գրաբարի տիրակալությունը—թեև այդ բոլորի մասին չի գրում այնպիսի մոլեգին մարտակոչական հոդվածներ, վորպես «Հյուսիսափայլի» գործիչները: Աբովյանը նույնպես նրանց նման ձգտում է հայ կյանքի

*) Խաչ. Աբովյան՝ Յերկեր, եջ 11.

**) Նույն տեղ. եջ 94.

«յեվրոպականացման»—լուսավորությանը: «Արևմտաեվրոպական քաղաքակրթությունը» լինում է նրա գերագույն իդեալը: Յերբ իր վեպի մեջ Աբովյանը վողջունում է ռուսներին, նրանց, հաղթական արշավը—նա անում է այդ վոչ միայն նրա համար, վոր հանձին Ռուսիայի տեսնում է «ազատարար», հայերին հովանավորող մի ուժ—այլև նրա համար, վոր հանձին Ռուսիայի նա տեսնում է քաղաքակիրթ, **«արեվմտաեվրոպական լուսավորությունը»** կրող մի յերկիր: Յեվ ժամանակակիցները, թե հակառակորդները և թե մանավանդ համակրողները գիտակցում եյին Աբովյանի այդ սերտ կապը հասարակական մտավոր նոր շարժման հետ: Վորոշակի շեշտում են այդ հանգամանքը թե Ստ. Նազարյանցը, Նալբանդյանը, «Հյուսիսափայլ»-ի մնացյալ հետևողները, և թե հետագա ուսումնասիրողները-պատմաբանները:

...«**Աբովյան ու Նազարյանց, Նազարյանց ու Աբովյան—մեր աչքում համասեռ բաներ են,** ասում է ռուսահայ վերածնության հայտնի գործիչներից մեկը՝ Սմբատ Շահ-Ազիզը, յերկուսը եւ մկրտված մի իմացական ավազանում. յերկուսը եւ այլևայլ ճանապարհներով ծառայել են միևնույն հավիտենական ճշմարտության—նորը պիտո յե ծաղկի, հինը մեռմանա և տեղ տա...: Աբովյանը, այսպես ասենք, արդարև հրատարակեց առաջին պատերազմը, բայց Թնդանոթը չարձակած, մտավ գերեզման, հաղթության դաշտը տիրապետեց Նազարյանցը»...*): Ի հարկե այստեղ շատ բան ասված է ընդհանուր խոսքերով, բայց կարևորն այն է—վոր բացերև կերպով շեշտվում է Աբովյանի սերտ կապը Նազարյանցի աշխարհայացքի հետ: Դրան ավելացնենք նաև այն, վոր Յերևանում եւ Աբովյանը շարունակել է վարել «Նոր մտավորականության» իդեալների պրոպագանդը **):

*) Սմբատ Շահազիզ՝ «Հրապարակախոս Ձայն»: Մոսկվա. 1881 եջ 37.

**) Խաչ. Աբովյանը բավական ինքնուրույն կերպով էր առաջ տանում այդ պրոպագանդը: Հայտնի յե, վոր դրանից վորոշ չափով անբավական եյին ռուսական կառավարության տեղական ներկայացուցիչները: Խաչ. Աբովյանը Յերևանում, պետական դպրոցը վարելիս մեծ ուշադրություն էր հատկացնում տեղական լեզուներին: Նա առաջարկել էր, ի միջի այլոց, հայոց լեզվի դասավին իր զեկուցագրերը կազմել հայերեն և այդպես էլ ներկայացնել: Այդ բոլորն այնքան զայրացնում է իշխանության ներկայացուցիչներին, վոր 1846 Թվին նրան «հանդիմանություն» է արվում իշխանության կողմից, և ապա նույն այդ ժամանակ Աբովյանը ձերբակալվում է և բանտարկվում: Այս վերջին տեղեկությունը մենք քաղում ենք վերապահությամբ Ռոմանովսկու գրքից Յերևանի գիմնազիայի մասին: (Романовский.—Историческия Записка об Эриванской гимназии. Тифлис. 1890 г. եջ 64—65):

Այսպես ուրեմն, իր իդեոլոգիական բովանդակությամբ Աբովյանի գրական գործունեությունը — հարազատ արտացոլումն է նոր հասարակական այն ուժերի շարժման, վորի հետևողական ներկայացուցիչները, իդեոլոգները հանդիսացան Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը և 50-ական թվականների մյուս գործիչները: Բայց արտացոլելով իր գործունեության, իր ստեղծագործության մեջ «Նոր» սկզբունքները, արտահայտելով հայ յերիտասարդ բուրժուական ինտելլիգենցիայի հայացքները — Աբովյանը այնուամենայնիվ չկարողացավ հետևողականորեն արծարծել և պաշտպանել նոր, առաջավոր ինտելլիգենցիայի հասարակական ձգտումները: **Նրա աշխարհայացքի յեվ մանավանդ հոգեբանության մեջ ապրում են մինչեվ վերջ «հին» աշխարհայացքի բեկորներ, մնացորդներ:**

Աբովյանը համարյա ամենևին չի պայքարում հոգևորականության դեմ, նա շատ սերտ կապված է ազգային հին հիմնարկությունների հետ, այն ինչ «Հյուսիսափայլը» պահանջում եր վերափոխել այդ հիմնարկությունները, յենթարկել վորոշ եվոլյուցիայի — իսկ հոգևորականության տիրակալությունը տապալել: Այսուհետև հոգևորականությունը պիտի ծառայեր «ազգին»: . . . «Ազգը չէ հոգևորների համար, ուրեմն և վոչ կրոնական ժողովի համար, գրում է Նալբանդյանը Չամուռճյանի դեմ, — այդ գաղափարը թող հանեն միանգամ իրենց մտքից, այլ **հոգևորը յեվ կրոնական ժողովը յեղած են յեվ կան ազգի համար, յեվ նոցա հարցնողը, պահողը յեվ զարմացնողը ազգն է դարձյալ»** *):

Աբովյանը համարյա ամենևին չի պայքարում և «հին արժեքների» պաշտպանների, հրապարակախոսների դեմ: Նա նույնիսկ առանձին սեր է տածում դեպի ազգային հին, թեկուզ և հետամնաց, կոպիտ, վայրենի բարքերը և սովորությունները: Իր «Վերք Հայաստանի» մեջ նա շատ հաճախ առանձին վոգևորությամբ է նկարում և հին «հայոց թագավորությունը» իր բոլոր առանձնահատուկ կողմերով, ավատական իշխաններով, լուսավորչական պետերով և միշտ հաղթող զորավարներով: Վերջապես նրա թույլ, հազիվ նկատելի արտահայտված իրոնիան «Յեվրոպիո» հասցեյին, ցույց է տալիս, վոր նա այնքան էլ հետևողական և վճռական չեր իր դավանանքների, համոզումների մեջ:

*) Միք. Նալբանդյան.—«Յերկու տող». Փարիզ. 1861. եջ 19:

Յեվրոպական «լուսավորությունը» քաղաքակրթությունը Աբովյանը ջատագովում է, իսկ յեվրոպական «կյանքի» վերաբերյալ արտահայտվում անորոշ...: Կրոնական-յեկեղեցական կոնկրետ ներկայացուցիչներին նա քննադատում է, իսկ յեկեղեցական բոլոր հիմնարկությունները, իրենց հին էությամբ, պաշտում և լիովին հաշտվում հայ հոգևորականության տերապետող դիրքի հետ...:

Դա անշուշտ մի յերկվություն է, մի բնորոշ յերկվություն, վոր արտացոլվում է Աբովյանի բոլոր յերկերի մեջ: Այդ յերկվությունը նկատելի յե և Աբովյանի ժամանակակիցներից շատերի, մանավանդ նրանց մոտ, վորոնք համանման պայմաններում եյին գործում... Դա մի յերկվություն է, վոր կովկասահայ ուրույն միջավայրի, ուրույն, չափազանց հետամնաց և հուսահատեցուցիչ իրականության արդյունք է:

Հասարակական իրականությունն Անդրկովկասում բավականաչափ տարբերվում եր Ռուսաստանի մեծ քաղաքների իրականությունից: Կովկասը տակավին նախակապիտալիստական կյանքով եր ապրում, թեև նկատելի յեն և նոր պայմանների, նոր տնտեսական զարգացման սաղմերը: Բայց այդ պայմանները հազիվ նշմարելի եյին: Գոյություն ուներ առևտրական կապիտալ, բայց թույլ և խիստ աննշան: Յերկրի հասարակական քաղաքական պայմանները խոչընդոտում եյին առևտրական կապիտալիզմի զարգացմանը: Յեվ այդ բոլորը թելադրում եր հայ վաճառականներին տեղափոխել իրենց ոպերացիաները Ռուսաստան: Գործարանային արդյունաբերություն, ինարկե, գոյություն չուներ այդ պատմաշրջանում: Հետագայում միայն — 19-րդ դարի յերկրորդ կեսից, ավելի ճիշտ 80-ական թվականներից սկսած, ծավալվում է Կովկասում կապիտալիզմ և անհրաժեշտորեն ասպարեզ է գալիս և նրա կրող ույժը՝ յեռանդուն և գիտության կարոտ այն հասարակական տարրը, վորը յուրաքանչյուր հասարակության մեջ, իր գործունեության պատահական շրջանում հանդես է գալիս պարզ և վորոշակի լոզունգներով, քննադատում է «հին արժեքները», առաջադրում է «նոր սկզբունքներ» և ստեղծում նոր ինտելլիգենտների շարքեր...:

19-րդ դարի սկզբում հասարակական այդ նոր խմորումը գոյություն չուներ: Յեվ դրանով էլ բացատրվում է «Հյուսիսափայլի» յերկար, հարատև պայքարը «հին» հոսանքների, խմբակցությունների դեմ: Ահա ինչու առաջավոր ռուսահայ ինտելլիգեն-

ցիան սկզբում խմբվել և Հյուսիսային Ռուսաստանում, իսկ Նազարյանցի, Նալբանդյանի հակառակորդները ուժեղ էյին Կովկասում և իրենց գլխավոր ուժերն ամփոփել էյին այստեղ։ Ահա ինչու Ստ. Նազարյանցը, յերբ Ռուսաստանից ուղևորվում է Կովկաս, չի կարողանում տանել նոր միջավայրի «ատմոսֆերան», զգում է իրեն նոր իրականության մեջ «անհարմար»։ Նա չի գտնում այստեղ պատրաստ հասարակական այն հենարանը, վորի իրախուսանքը, աջակցությունը նա սպասում էր... Յեվ ահա այդպիսի իրականության մեջ գործում էր չափազանց դյուրազգաց Աբովյանը։ Այդ միջավայրն անհրաժեշտորեն պիտի թողներ իր վորոշ ազդեցությունը Աբովյանի վրա։ Այդպես էլ լինում է։ Աբովյանը կրում է իր վրա հասարակական հին էլեմենտների խոշորագույն ազդեցությունը.—և դա նկատելի յե վոչ միայն նրա ստեղծագործության, այլ և նույն իսկ անձնական կյանքի մեջ։ Նրա հոգու մեջ անդադար պայքարում են հին և նոր իդեալները։ Նա միշտ իրեն քննադատում է իր «համարձակ» մտքերի և քայլերի համար, վորովհետև այդորինակ տրամադրություն նրա մեջ ստեղծում են անհրաժեշտաբար նրա հին իդեալները։ Յերկար վարանումներից, յերկար տատանումներից հետո միայն նա ամուսնանում է «լուսավորչական» ծիսով մի գերմանուհու հետ։ Ճիշտ է ամուսնանալուց հետո նրա մեջ այլևս չեն ծնվում հին տատանումները կնոջ վերաբերմամբ, բայց դրա տեղ ավելի ևս զարգանում են հին կասկածները իր գործունեյության իսկական արժեքի մասին։ Նա այնքան էլ հավատացած չէ նրանում, վոր իր կատարած գործը գրական նշանակություն ունի և հաճախ կարծում է, վոր վնասակար դեր է կատարում միայն, հաճախ մտածում է, վոր հոգևորականությունը «ազգի» ավելի հետևողական և ավելի օգտակար սպասավորն է։ Յեվ ահա Աբովյանն այնքան տանջվում է ինքնախարազանումից, ինքնաքննադատությունից, վոր վճռում է մտնել «յեկեղեցու ծոցը», թողնել կնոջը, զավակներին, դառնալ կուսակրոն և այդպես ծառայել «հայրենիքին», „ազգին“։ Խորը մի վողբերգություն է դա, մի վողբերգություն, վոր պատմա-հոգեբանական ահագին արժեք ունի և պիտի առանձին և մանրակրկիտ քննվի ռուսահայ ինտելլիգենցիայի ապագա պատմաբանի կողմից։ Բնորոշ է չափազանց այդ տեսակետից այն ադերսագիրը, վոր Աբովյանը գրում է կաթողիկոսին...

«Սրբազանասուրբ Տէր, ում այլևս մերկապարանոց կացուցից զներքին սրտի խոյս՝ Քան Ձերում Վեհափառութեան, սկզբնական պատճառի իմս լուսաւորութեան և անմահ հոր Հայաստանեայց սուրբ յեկեղեցւոյ...**Մեծաւ ամուսնութիւն՝ վաղուց հրաժարեալ իմ զայնմանէ, ոչ վասն այնորիկ զի ոչ սիրեմ զընտանիս եվ զզավակունս, բայց լիցի**։ Կին իմ գերմանացի գոլով կարէ լինել զարդ ամենայն տան, իւրով բարեբարոյութեամբ և պարկեշտութեամբ, այլ այս **անբուժելի ցաւ սրտիս** որ և պատճառ լիցի մահուան իմում, խափանել և խանգարել ունի զամենայն զօրութիւն իմ, աշխարհ ամենայն մեռեալ է յաչս իմ։ Չիք իմ այլ կեանք, քան բարեբախտութիւն հայրենեաց։ Պահանջեսցէ ոչ զկեանս իմ ի պատարագ նմա՝ պատրաստ կամ և զայն ընծայել ի զոհ։ **Առարեք զիս ծիւղ ոտից ձեռոյ Վսեմափառագոյն Եպիսկոպոսապետ.** (կուրսիվը մերն է Ա. Կ.)։ Չեմ ես առաջին օրինակ միայն՝ որ ցանկայ թողուլ զտուն և զզաւակունս և բառնալ զխաչն Քրիստոսի, կամիմ, պատրաստ եմ հոգով և մարմնով ի խաչ ելանել ի սիրոյ առ հայրենիս»...*)։

Կաթողիկոսը չի ընդունել Խաչ. Աբովյանի այդ ադերսաթերթը, յերևի վախենալով չափազանց եքստազային այդ գործիչից։ Բայց Աբովյանը ավելի և ավելի հուսահատվում է և վերջում այնպես խորհրդավոր կերպով անհետանում է, վոր տեղիք է տալիս զանազան կասկածների և յենթադրությունների։ Ստ. Նազարյանցը ինկատի ունենալով նրա կյանքի վերջին տարին, չափազանց հուսահատ նամակները—յենթադրում է, վոր Աբովյանը ինքնասպանություն է գործել...« **Միտ դնելով նորա տրտում յեվ հուսակտուր յերգերին**, վոր մեր բարեկամներից մինը ուղարկել էր ինձ Թիֆլիզից, պիտո է յեզրակացնել, վոր Աբովյանը մի խավար բոպեյի մեջ մահու յե տվել իր անձը...**) Դա իհարկե և բավականաչափ ընդունելի չէ։ Այդ կարծիքը համենայն դեպս ավելի տրամաբանական է, քան Աբովյանի անհետանալու մասին հայտնած այլ կարծիքները***)։

---

*) Ստ. Տեր Ավետիքյանց՝ Աբովյանի կենս. եջ 40։

**) Ստ. Տեր. Ավետիքյանց՝ եջ. 42.

***) Աբովյանի մասին ամենամեծ «հետազոտությունը» գրել է քահանա Տեր-Կարապետյանը (Խաչատուր Աբովյան 2-րդ հրատարակ. 1911)։ Իր աշխատությունը մեծարգո քահանան անվանում է «ճեմարանական դ ի ս ե ր տ ա ց ի ա»։ Դա աշակերտական մի թերի անշնորհք աշխատություն է գրված հապճեպ, աբեղայական տարտամ բարոյախոսություններով համեմված։ Տեր Կարապետյանը յուրօրինակ սեր է տածում դեպի Աբովյանը, բայց նա այնքան «սիրալի», այնքան զգացված կերպով է նկարագրում նրան, վոր ստեղծվում մի ծիծաղելի

Աբովյանի շեշտված վորոշումը արդեն՝ դառնալ կուսակրոն բղխում եր իր հուսահատությունից, խորին այն հոռետեսությունից, վոր միանգամայն հեշտ կերպով կարող եր զարգանալ պատմա-հասարակական այն իրականության մեջ:

Աբովյանը չեր նկատում վոչ միայն իր գործունեյության հետևանքները, այլև չեր տեսնում այն կոնկրետ, իրական և հառաջընթաց հասարակական շերտը, խմբակը, վորը պիտի լիներ «նոր ինտելլիգենտների» թե հենարանը և թե կրողը: Յեվ նրա հոգեկան ճգնաժամը այդ կոնկրետ հողի վրա չեր զարգանում ե:

Ռուսական ինտելլիգենցիայի պատմության մեջ ևս մենք շատ հաճախ ենք պատահում նմանօրինակ բնորոշ հոգեկան կրիզիսների: Փայլուն, խոշոր մտքեր Յեվրոպայից դառնալով հայրենիք կամ մայրենի իրականության մեջ յուրացնելով նոր, ավելի առաջավոր աշխարհայացք—շատ հաճախ են նկատում այն մեծ վիհը, վոր ընկած ե իրենց գաղափարների և հին մտածողության ու աշխարհայացքի մեջ: Նրանք պարզորոշ նկատում են կոպտորեն մերկացրած մայրենի իրականության մռայլ եյությունը և զգում են, գիտակցում, վոր իրենց պայքարը կարող ե հաջող լինել միայն հասարակական վորոշ ուժերի աջակցությամբ: Բայց այդ ուժը, իրական հենարանը նրանք չեն գտնում—չեն գտնում, այլ խոսքով, պատրաստ, պարարտ հող իրենց գաղափարների տարածման համար: Յեվ ահա այդպիսի պայմաններում հուսահատությունը, հոռետեսական տրամադրությունը աստիճանաբար համակում ե նրանց—նախկին համոզմունքները սկսում են թվալ անարժեք և վնասակար: Հուսահատված, շատերը նրանցից ընկնում են սկեպտիցիզմի, միստիցիզմի գիրկը և ինքնախարազանումից հետո սկսում են ավելի ևս ուժգնորեն խա-

և մելոդրամատիկական հերոս: Բնորոշ ե այն, վոր մեր քահանան վոչինչ չի ասում նրանց մասին, վորոնք այլ կերպ են վերլուծում Աբովյանի դեմքը: Նա կանգ չի առնում նույնիսկ Ղազարյանցի, Նալբանդյանի, Շահազիզի ավելի բնորոշ կարծիքների վրա: Այդ բոլորի փոխարեն նա յերկրորդական հեքիաթային լուրեր ե պատմում այն մասին, վոր Աբովյանին թուրքերն են սպանել: «Յես, ասում ե այդ շատախոս ճեմարանականը, բարձրացա փողոցի մի ժայռի վրա և գիտեցի յեղեռնագործության դաժան (!!) վայրը» (եջ. 245): Պատվարժան քահանային մենք կարող եյինք խորհուրդ տալ այդ դժվար և վտանգավոր «ճանապարհորդության» փոխարեն ավելի աչալուրջ և ուշադիր կերպով ուսումնասիրել դոկումենտները: Այդ պարագայում նա գոնե չեր «հարստացնի» հայ գրականության շտեմարանը այդպիսի ինքնատիպ ստեղծագործությամբ վորպիսին ե նրա գիրքը:

րազանել իրենց նախկին հավատամքը: Մռայլ, հուսահատորեն նրանք հայտնում են այդ հրաժարիմքը իրենց առաջվա իդեալներից, և ջղայնացած, հիվանդ հոգով նվիրվում հին «Աստվածներին»: Աբովյանի մոտ մենք նկատում ենք միևնույնը: Յեվ դորա համար ել ի վերջո նա նույնքան հայ առաջավոր ինտելլիգենցիայի անդամն ե, վորքան և հետադիմական ինտելլիգենցիայի: Նա նույնքան մոտ ե «Հյուսիսափայլին», վորքան և «հին հոսանքներին»: Նա նույնիսկ կարծես ողակում ե հին և նոր իրականությունը, կապում նոր մտածողությունը հին հասարակական արժեքների հետ: Յեվ նրա այդ յերկակիությունը դարձնում ե նրան հարազատ հայ տիրող բոլոր խմբակցություններին: Դրանով ել անշուշտ բացատրվում ե այն, վոր հետագայում Աբովյանին հավասար ուշադրությամբ են վերաբերվում թե Գր. Արծրունին և թե Սպանդարյանը: Դրանով բացատրվում ե և այն, վոր այսոր Աբովյանին յերկրպագում են և «Մշակը», «Հորիզոնը» մի կողմից, և «Սուրհանդակ»ը ու «Հովիտ»ը մյուս կողմից: Այդ խմբակցություններից և հոսանքներից յուրաքանչյուրը յուրակերպ ե ըմբռնում Աբովյանին և յուրաքանչյուրը համարում ե նրան իրենը, վորովհետև այդպիսի ըմբռնման հնարավորությունը ստեղծում ե ինքը Աբովյանը իր յերկվությամբ:

Արդեն շեշտված բոլոր բնորոշ գծերը դրել են իրենց առանձին դրոշմը և «Վերք Հայաստանի»ի վրա: Այստեղ նա հանդիսանում ե հայ «ազգի», լուսավորության, քաղաքակրթության համար պայքարող, այստեղ նա ներկայանում ե և վորպես «հին արժեքների» քննադատ—բայց միաժամանակ և ջատագովը անցյալի: Աբովյանը հաճախ հանդիսանում ե չափազանց հետամնաց բարքերի, սովորությունների և հայացքների յերկրպագու: Նա սիրալիրորեն ե նկարում այնպիսի կոպիտ, կոշտ տեսարաններ, վորից կսարսափեր ավելի հետևողական մի «յեվրոպացի»: Նրա անբավականությունը «քաղաքացիներից» միևնույն բնորոշ յերկվության ցայտուն արտահայտությունն ե, նրա յերկրպագությունը հետամնաց գյուղին յուրօրինակ մի պարտք, վոր նա տալիս ե իր հին աշխարհայացքին, մտածողությանը:

Բայց Աբովյանի «Վերք Հայաստանին» վոչ միայն այդ կողմից ե հետաքրքիր և բնորոշ: Այդ վեպը բացի Աբովյանի կյանքի և մտածողության արտացոլումը լինելուց, ե նաև պատմական մի դոկումենտ, մի դոկումենտ, վոր այսոր մեր առաջ նկարագ-

ծում է 16-րդ դարի առաջին կիսամյակի հայ գյուղի ու գյուղացիության լուսանկարը: Պատկերն ավելի արժեքավոր և հետաքրքրական է դառնում մանավանդ նրա համար, որ գծվել է ժամանակակից անկեղծ, նրբազգաց և հիրավի ճշմարտախոս մի նկարչի կողմից: Գյուղացիության միջից ելած հեղինակը կարողացել է արձանագրել և արտացոլել այն բոլորը, որ ավելի բնորոշ և բնահատուկ է: Այդ նկարին կանցնենք մենք այժմ:

2.

«......Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու գոմեշները, փուրթ ու ձագը տակընկերին, գոմումը կապված, քյահլան ձին թավլումը, գութանը դռանը լծած, մառանը եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խըլթ-խըլթում է մառնոցին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմեցնում էր: Նորահարսերն ու փեսեն կամ մեկ ազիզ ղոնաղ՝ վոր գլուխը բարձին չէր դնում էս անմահական բարության մեջը, ենպես իմանում էր թե դրախտումն ա աչքը խփում, կամ բաց անում: Վորը չերկու, վորը չերեք բաղ ուներ, նոքար, հոտաղ դռանը հազիր ու տան ներսըն ու պուճախը դըմբում էր: Կարասներով կողակ, կճճներով պանիր ու ղավուրմա, աքաշներով սոխ, բոխ, ողորմակոթ, բըղդներումեջ ու կարագ, մոթալներով պանիր—ծով է, ինչ տուն»...: Յեվ այդպես էր չնայած վոր «Շատի հաքին տրեխ էր, գյուլբաչել չուներ, վոր վոտը ծածկեր, շատի չուխի վրա հարիր կարկատան կար»...:

Այդպես է նկարագրում ժամանակակից գյուղական հասարակության հարստությունը և տնտեսությունը Աբովյանը: Այդ և նման էջերը, վորոնք բոլորն էլ հաճախ հիշատակվել և հիշատակվում են մեր քննադատների կողմից, բացահայտ կերպով ցույց են տալիս, վոր Աբովյանի ժամանակ գյուղը ազատ է ներքին ներհակություններից, ազատ՝ մասյլ կապիտալիստական շըրջանին հատուկ կողմերից: Այստեղ ոպտիմիստական նկարագրությունը—և միայն հարազատ արտացոլումն նախակապիտալիստական իրականության:

Աբովյանի գյուղացին յերջանիկ է—յերջանիկ է չափազանց, վորովհետև նրա հարստությունն անսպառ է, ամբարները լիառատ: Վոչ մի կարիք նա չի զգում: Նա հնարավորություն ունի նույնիսկ շռայլ կյանք վարելու: Աբովյանի նկարած գյուղի մեջ չկա ամենևին շահագործում,—չկան «դժբախտներ» և բացակա-

յում են «հեծեծողները»: Գյուղը դեռ չի յենթարկվում նկատելի և կտրուկ շերտավորման: Յերջանիկ և չափազանց ներդաշնակ կյանքով է ապրում գյուղը—և նրա խաղաղ անդորրությունը շփոթում է միայն Յերևանի Սարդարը իր «ֆարրաշներով», բայց այդ արտաքին ճնշումն էլ ավելի ևս նպաստում է գյուղացիների համախմբմանը:

Թե ինչու յե այդպես գյուղը—ծանոթանում ենք հենց իր՝ Աբովյանի նկարագրությունից: Նա ընդհանուր ակնարկներով և նկատողություններով բնորոշում է հասարակական-տնտեսական այն պայմանները, վորոնք նպաստում էին գյուղացիների բարեկեցությանը և նահապետական համայնակենցաղին: «Մեկ փարի բան, նկատում է Աբովյանը, բաղարից տուն չէր գալիս, բացի հագնելու շորիցը, էն էլ կտավ, շապկացու, չուխացու, շատը հարսներն ու աղջիկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում..»*): Այդտեղ ինչպես տեսնում ենք—շեշտվում է փոխանակության թույլ, չափազանց աննշան զարգացումը և տնտեսության ինքնապարփակ, ինքնամփոփ էությունը: Այդպիսով ինքը Աբովյանը նկարում է այն գծերը, վորոնք հատուկ են բնական տնտեսության: Գյուղացիք իրենք են արտադրում իրենց համար անհրաժեշտ բոլոր պրոդուկտները և իրենք էլ հենց սպառում են: Նրանք կտրված են տնտեսապես արտաքին աշխարհից: Իրենց արտադրած բարիքները, գյուղական բերքերը, նրանք չեն արտահանում այն հասարակ պատճառով, վոր պահանջ չկա քաղաքներում: Շնորհիվ կովկասյան քաղաքների արհեստական հետամնացության չէր առեղծվել տակավին այն շուկան, վորը կարող էր կլանել գյուղական պրոդուկտները: Վերը շեշտեցինք, վոր գործարանային տնտեսություն այդ ժամանակ չկար—և քաղաքներում տիրապետում էր արհեստը: Այդպիսի պայմաններում գյուղի կապը քաղաքի հետ անհրաժեշտորեն պիտի լիներ թույլ—փոխանակությունը ևս պիտի լիներ աննկատելի, աննշան: Գյուղական բոլոր բերքերը, հարստությունները պիտի սպառվեյին, վորովհետև անհատական սպառողությունից հետո ևս միշտ մնում էր մի ահագին հարստություն: Աբովյանը, ինչպես արդեն տեսանք սկզբում, նկարում է հենց այդ բնորոշ պատկերը: Նրա գյուղացին մեծանում է, գործում է, զարգանում այդ բնորոշ տնտեսական իրականության մեջ և բնականաբար կրում

*) Խաչատուր Աբովյան, Յերկեր, էջ 33.

է իր վրա այդ իրականության ազդեցությունը։ Ստեղծվում են յուրօրինակ գյուղացիական հոգեբանության բարքեր և սովորություններ, բնորոշող հայացքներ, վորոնցից շատ հաճախ զուրկ է ժամանակակից գյուղի բնակիչը։

Գյուղացիք անտարբեր են դեպի հարստությունը, նրանք ուրախ են, զվարթ, ապրում են, ուտում, խմում,—նրանք չեն բզբզում իրենց վրա տնտեսական իրականության այն անողոք հարվածները, վոր զգում է ժամանակակից գյուղացին։ Աբովյանի գյուղացիների ամբարները լիառատ են միշտ և այդ արդեն հնարավորություն է տալիս նրանց ապրել «անհոգ», «անտըրտունջ»։

Աբովյանի գյուղացին կարեկցոտ է և հյուրասեր։ Նա շաբաթներով հյուրասիրում է «ղարիբներին» և ոգնում միաժամանակ այն գյուղացիներին, վորոնք «բաղ չունեն»։ «Տասը ղոնաղ վոր են սհաթը նրա դռանը վեր գալին, սաղ ամիս ուտեյին, խըմեյին, կոտրեյին, ջարդեյին, փչացնեյին, նրա տան խերն ու բարաքյաթը՝ հա կար, հա կար, իրանք թևերը կը քաշեյին, տուն կկանչեյին, վոր նրանց սուփրի համն առնի ու ենպես ճանփա ընկնի»...։ Զարգանում է և անհոգ մի փոխօգնություն, ուր արտահայտվում է հյուրասիրության հոգեբանական անհրաժեշտությունը։ Առանց հյուրասիրելու գյուղացին չեր կարող զվարթ ապրել. «Տարենը, վոր հաղար շուն, գել, թուրք, հայ, աղքատ, ղարիբ-ղուրբաթ հացս չուտեն, տանս չքնեն, գինիս չխմեն, իմ աչքը քո՞ւն կգա։ Գյոռս էլ վոր քանդեն, ձեն չեմ տալ»... Այդպիսով Աբովյանի գյուղի մեջ մենք նկատում ենք ճիշտ այն, ինչ վոր շեշտել և շեշտում են յեվրոպական ճանապարհորդները, հասարակագետները վայրենի ցեղերի մասին։ Այդ հասարակագետներից շատ շատերը ցուցադրել են և հյուրասիրության սերտ կապակցությունն այն տնտեսության հետ, վորը կազմում է վայրենի ցեղերի համայնակենցաղի իրական հիմքը։ Կովկասյան լեռնաբնակ ժողովուրդների մասին հիշատակել է այդ առանձնապես պրոֆ. Մ. Կովալեվսկին իր կովկասյան սովորության իրավունքին նվիրված աշխատությունների մեջ։ Բնական ինքնապարփակ տնտեսությունների մեջ պրոդուկտների, բերքերի կուտակման շնորհիվ անհրաժեշտորեն զարգանում են շռայլությունը, անհոգ և զվարթ կյանքը, կարեկցությունը դեպի «աղքատները», հյուրասիրությունը։ Այդպիսով կազմվում և աստիճանաբար ամրանում են հետագայում և «բարոյական» վորոշ նորմաներ, «գեղե-

ցիկ» բարքերը և սովորությունները ...։ Աբովյանի գյուղացին էլ օժտված է հենց այդ բնահատուկ գծերով։ Նրա հոգեբանությունը հարազատորեն արտացոլում է ժամանակակից միջավայրի բնորոշող կողմերը։ Նրա մեջ դեռ չի ծնվել այն մռայլ և տխուր հայեցակետը, վոր հետագա գյուղացիների մոտ մենք պատահում ենք։ Գյուղական հասարակությունը միամիտ, միապաղաղ մի ցանցված է տակավին։ Աբովյանի գյուղացիները կապված են միմյանց հետ «հարևանական» կապերով. նրանցից վոչ վոք չի նախանձում կամ ստում մյուսին։ Բոլորն էլ հարգում են, սիրում են միմյանց։ Ներդաշնակ մի մարմին է դա, վորովհետև գյուղական հասարակությունը միատարր մի միություն է,—նա չի ցնծթարկվել դեռ կտրուկ շերտավորման։ Գյուղում չեն ստեղծվել տակավին այն հակամարտ տարրերը ներհակ շահերով, վորոնք հետագայում այնքան վորոշակի նկատելի յեն։ Նույնիսկ այն «նոքարը» և «աղքատը», վորոնց Աբովյանը կողմնակի հիշում է իր վեպի մեջ — չեն կրում իրենց վրա կյանքի ծանր հարվածները շնորհիվ արդեն վերը գծված պայմանների։

Կտրված արտաքին աշխարհից, ամփոփված իր մեջ և ընդհանրապես անկախ արտաքին իրականությունից գյուղն ապրում է միանգամայն առանձնացած, մեկուսացած կյանքով։

Յեվ այդպես կտրված, առանձնացած—գյուղական հասարակությունը ավելի յեվս միացած, ամփոփված է զգում իրեն։ Գյուղը դառնում է իբրև մի մեծ ընտանիք, վորի բոլոր անդամները շաղկապված են միմյանց հետ ամենասերտ կերպով։ Բոլորը ծանոթ են, գիտեն միմյանց ինտիմ կյանքը։ Գյուղական հասարակությունն ապրում է ընդհանուր կյանքով։

Բայց միևնույն այդ մեկուսացումը, միևնույն այդ չեզոքացրած հասարակակենցաղը նպաստում է նաև հոգեբանական այլ գծերի զարգացմանը։ Շնորհիվ այն հանգամանքին, վոր գյուղացին բացի իր գյուղից և գյուղական կոնկրետ շրջապատից ուրիշ վոչինչ չգիտե—նրա մտահայեցողությունը չափազանց նեղ է և սահմանափակ։ Յեվ բնականաբար Աբովյանի նկարած գյուղացու մոտ բացակայում է ազգային այն գիտակցությունը, վորը վորոշ պատմաշրջանում հանդիսանում է պրոգրեսիվ յերևույթ, ցուցադրում է նեղ տեղային աշխարհայացքի եվոլյուցիան դեպի ավելի լայն հորիզոններ։ Իհարկե հենց դրա համար էլ Աբովյանի գյուղացիների մոտ թույլ են և ազգային պայքարի էլեմենտները. գյուղացիներն ամենևին չեն մտածում թոթափել պարսկական

լումը: «Սարդարի», պարսկական տիրապետության հետ նրանք բոլորն էլ հաշտվում են, վորպես բնաանհրաժեշտ մի յերևույթի հետ: Գիտենալով և ճանաչելով միայն իրենց, ունենալով լոկ տեղային, գյուղական նեղ աշխարհայացք—նրանք չեյին էլ կարող մտածել, թե կարելի յե կամ հնարավոր է հակադրել պարսիկների մեծ, ամփոփ և համեմատաբար կազմակերպված ուժին իրենց փոքրիկ գյուղը: Բայց մյուս կողմից պարզ է և այն, վոր այդ շինականները լռում են վոչ նրա համար, վոր բավական են պարսկական տիրապետությունից: Աբովյանի գյուղացիներն ատում են պարսիկներին, ատում խոր և ուժեղ, բայց իրենց ատելությունը նրանք միշտ ծածկում են, յերբեք չեն համարձակվում բացահայտել՝ նախատեսելով գալիք ճնշումները: Յեվ ահա, ինչպես գոյության կռվի մեջ կենդանիները մշակում են, ստեղծում համակերպման վորոշ ձևեր, վորոշ միջոցներ—այդպես էլ Աբովյանի գյուղացիներն իրենց թշնամու հալածանքներից, ճնշումից ազատվելու համար կեղծում են, խեղդում, ծածկում իրենց իսկական մտքերը և խոհերը և բարի ժպիտով, խոսակցություններով և ակնածանքով հանդիպում պարսիկներին: Դա ինքնապաշտպանության ամենանպատակահարմար միջոցն է գյուղացիական տեսակետից: Իհարկե հենց դրա համար էլ գյուղացիներին զարմացնում է Աղասու վրդովմունքը Թագուհու առևանգման առիթով: Նրա կատաղի հարձակումը ֆարրաշների վրա գյուղացիների համար լինում է կարծես անսպասելի, տարորինակ մի քայլ, վոր տարակուսանքի պես բան է շարժում հանդիսատեսների, գյուղացիների մեջ: Գյուղացիների տեսակետից Աղասու հարձակումը ֆարրաշների վրա մի խելացնոր քայլ է, վորը վոչ միայն ավելորդ է, այլ և վնասակար:

Այդպիսով Աբովյանի գյուղացու պասիվ հոգեբանությունը, նրա համակերպումը պարսիկներին, նրա անտարբերությունը ազգային խնդիրների վերաբերյալ, հարազատորեն բխում են նրա ուրույն տեղային հոգեբանությունից, նրա նեղ գյուղական մտահացողությունից: Մեկուսացած և ինքնամփոփ կյանքն անհրաժեշտորեն պիտի խոչընդոտեր նրա մեջ ազգային ինքնաճանաչության զարգացմանը մի կողմից և ապա մյուս կողմից պիտի նպաստեր նրա հոգեբանության արդեն շեշտված գծերի զարգացմանը: Այդպես էլ է իրապես Աբովյանի գծագրած գյուղացիությունը, թեև ինքը՝ Աբովյանը կարծես հաճախ ցանկանում է այլ կերպ նկարել նրան, կարծես ձգտում է «ազգային» և կրթու-

թյան սիրահար դարձնել նրան: Բայց այդ բոլոր դեպքերում չափազանց արդեն պարզ է, վոր ինքը Աբովյանն է խոսում, այլ վոչ գյուղացին: Վորոշակի այդ նկատելի յե այն էջերի մեջ, ուր Աբովյանը խոսում է քահանաների մասին: Նրա գյուղացին քահանաներին չի սիրում և քննադատում է, բայց նա այդ քննադատության մեջ այնքան «գիտակից», «զարգացած» է, վոր մենք պարզորոշ նկատում ենք նրա յետևը կանգնած հրապարակախոսին: Այդ գյուղացին որ. անբավական է քահանայից նրա համար, վոր վերջինը գյուղացի մանուկներին չի ուսուցանում: «Յերեխերքներս, կարդում ենք, չորան դառած ման են գալիս, նրանց դարդը չեն քաշում վոր մեկ այբբեն էլա, մեկ ձգի բգի սովորեցնեն, հենց իրենց փիքրըն են քաշում և այլն (էջ 23): Այդպիսի պրետենզիաներով մոտենում է քահանաներին 19-րդ դարի նախամուտի գյուղացին: Ավելորդ է բացատրել վոր, այդ պարբերությունը և ընդհանրապես Աբովյանի գյուղացու «քննադատությունը» հենց իր՝ հեղինակի հրապարակախոսությունն է: Հենց իր՝ Աբովյանի կոնկրետ նկարները, նրա գծագրած ամբողջ պատկերը բացերև կերպով ցույց է տալիս, վոր նրա գյուղացին չեր կարող այդքան «պահանջկոտ» լինել:

Միևնույնը պիտի ասել և Աբովյանի ազգասիրական-հրապարակախոսական զեղումների մասին: Սովորաբար մեր քննադատները նրա բոլոր ազգասիրական հրապարակախոսությունը վերաբերում են գյուղացիությանը և դուրս է գալիս այդպիսով, վոր 19-րդ դարի նախամուտին գյուղացիները վոչ միայն չեյին սիրում հոգևորականներին, վոչ միայն կրթության վոգևորված սիրահարներ, յերկրպագուներ եյին, այլ և վառված եյին ազգային տենչերով: Յեվ այդ ասվում է այն պատճառով, վոր քննադատները շփոթում են հրապարակախոս Աբովյանին նկարիչ Աբովյանի հետ: Հրապարակախոս Աբովյանը հաճախ արտահայտում է այնպիսի խոհեր, վորոնք միանգամայն օտար են ժամանակակից գյուղացու համար: Այն ինչ, ավելի քան պարզ է, վոր Աբովյանը այն բոլոր պարագաներում, յերբ խոսում է «ազգի», «լուսավորության» մասին, յերբ զինում է իր գյուղացիներին քննադատական-հրապարակախոսական մտքերով, իրապես արծարծում է վոչ թե ժամանակակից գյուղացիության տենչերը, այլ առաջավոր հայ ինտելլիգենցիայի խոհերը: Հենց այդ նկատի ունենալով մենք աշխատել ենք գծագրել ռուսահայ գյուղացու տիպարը հենվելով միայն Աբովյանի այն նկարագրական ակնարկ-

ների և հատվածների վրա, վորոնք քիչ շատ հարազատորեն վերարտադրում են ժամանակակից գյուղացիության պատկերը։ Յեթե այդ կողմից մոտենալու լինեյին և հայ տրադիցիոն քննադատները—նրանք շատ հեշտ կնկատեյին Աբովյանի գյուղի բոլոր բնորոշ հատկանիշները,—վոչ միայն «յերջանիկ», «դրական», «լուսավոր» կողմերը, այլ և «մռայլ» ու մթին գծերը։ Նրանք կնկատեյին այնտեղ թագավորող կոշտ կենդանային հասարակակենցաղը, կնկատեյին գյուղացիության պրիմիտիվ, չափազանց պրիմիտիվ հոգեբանությունը, կընկատեյին «հայրերի», նահապետների յուրօրինակ բռնակալությունը։

Վերջին կողմը Աբովյանի գյուղի բնորոշ գծերից մեկն է, վոր միանգամայն համապատասխանում է բնատնտեսության պայմաններում ապրող գյուղին։

Աբովյանի գյուղը նահապետական է կամ ավելի վորոշ՝ հայրապետական գյուղ է։ Մասնավոր սեփականություն այդտեղ գոյություն ունի և այդ հողի վրա ճոխ զարգանում է «ընտանիքի» հոր տիրակալությունը։ Ընտանիքի վրա իշխում է, թագավորում ընտանիքի «հայրը», «մեծը». բոլորը պիտի հնազանդեն նրան և լուռ, առանց տրտունջի, բողոքի։ Ահա ինչու, նահապետական գյուղում առանձին հարգանքով, գոնե արտաքին ակնածանքով են հանդիպում, վերաբերվում «մեծ»-երին։ Գյուղի կառավարիչներն ընտրվում են նրանցից, գյուղի յերիտասարդները պարտավոր են խոնարհանքով բարևել նրանց և մեծարել։ Աբովյանի ժամանակ մանավանդ այդ տիրապետությունը հզոր եր, ավելի քան հետագայում. նրա մոտ տիրում են և վորոշում ամեն բան «մեծերը»։ Յերբ «մեծերը», տանուտերը, քյադխուդաները դուրս են գալիս յեկեղեցուց, յերիտասարդների խմբակը, վոր կանգնած է լինում յեկեղեցու մոտ, լուռ սպասում է նրանց ցրվելուն։ Յերիտասարդները չեն համարձակվում ուրախանալ, զվարճանալ «մեծերի» մոտ, վորոնք գյուղամիջումը կանգնած հանդարտ զրույց են անում։ Իրենց անհամբերությունը և անբավականությունը նրանք հայտնում են կամաց, գրեթե շշուկով։ Նրանք տարակուսում են՝ թե ինչու «անատամ ռեխ» ունեցող «մեծերը» չեն ցրվում վերջապես և հնարավորություն չեն տալիս նրանց զվարճանալու։

Ավելի ծանր և դաժան է կանանց դրությունը։ Նախնի մարդկության և վայրենի ցեղերի պատմաբաններից մենք գիտենք արդեն, վոր նահապետական ընտանիքներում կինը սովո-

րաբար կատարյալ մի ստրուկ եր, մի սեփականություն, վորի վերաբերմամբ «ընտանիքի հայրը» կարող եր կատարել ամեն բան։ Նա կարող եր ծեծել նրան, սպանել, կախել։ Յեվ կինը պարտավոր եր լռել և առանց տրտունջի, բողոքի հպատակվել «ընտանիքի հոր» կամքին։ Դա մի գերիշխանություն է, վոր զարգանում է տնտեսական վորոշ պայմանների շնորհիվ։ Այն ժամանակից սկսած, յերբ կինը կորցնում է իր տնտեսական անկախությունը, յերբ նա սկսում է ապրել միմիայն տղամարդու աշխատանքի շնորհիվ—նա դառնում է նրա սեփականությունը, հարմար «յերեխաներ ծնելու և հաճույքների» համար միայն անհրաժեշտ մի օբյեկտ։ Այդպես է և Աբովյանի գյուղում։ Այդտեղ մենք կանանց անկախ տնտեսական գործունեյություն, վորպես գոյություն ուներ հեռավոր անցյալում մայրապետական ընտանիքներում,—չենք տեսնում։ Ընդհակառակը, մենք ամենուրեք նկատում ենք միայն տղամարդկանց։ Յեվ անհրաժեշտորեն այդտեղ յեվս զարգանում են ճիշտ նույն յերևույթը, ինչ վոր շեշտեցինք արդեն վերը։ Կինը տղամարդու հլու հպատակն է դառնում վորը զուրկ է իր սեփական կամքից։ Նա պիտի լռե նրա մոտ։ Շատ բնորոշ է այն արդեն, վոր Աբովյանի մոտ կանայք միանգամայն աննկատելի յեն. նրանք միայն լուռ, առանց շշուկի անցնում են գրքի եջերից—իսկ բոլոր տղամարդիկ, և՛ ծերերը, և յերիտասարդները ուրախանում են, խմում, խոսում և սրախոսում։ Կանանց այդ կամազրկությունը վորոշակի արձանագրել է իր գրքի եջերում Աբովյանը—և վոչ առանց հիացմունքի... «Տրեխները կամ լաչիները հանելիս՝ ձեռն եր վոր ընկնում եր։ Վորը վոտն եր ճմում, վորը ջուրն եր տաքացնում, վորը բերում, վոր վոտն ու գլուխը լվանա, վորը թևերն եր քաշում, վորը շորերը հանում, վորը տեղը քցում, քնացնում։ Քնած վախտին եր յերբ կարեր մեկ ճանճ՝ վոր նրա մոտովը անցկենա, կամ յերեխին նստի, ենքան աչքարաց եյին հարսն ու աղջկերքը։ Մեկ զոնաղ պատահածին պես, ես պատիվը զոնաղինն եր՝ յերբ կարեյին նրանք նրա յերեսին բաց աչքով մտիկ տալ։ Մեկ բան ուզելիս՝ վոտի տեղ՝ գլխի վրա եյին գնում՝ վոր նրա ասածը անեն ու ձեռները ծոցներին դրած՝ աչքը կթած ունեյին՝ վոր տեսնեն, թե իրանց տերը կամ զոնաղը ինչ կհրամայի՝ վոր կատարեն։ Կեսուրը կամ կեսարը մեկ աչքը քցելիս՝ ուզում եյին՝ վոր տեղն ու տեղը հալչեն, ենքան հնազանդ եյին»*)։

*) Խաչ. Աբովյան. եջ 34

Աբովյանին շեշտում ենք,—չնայած նրան, վոր նա «եվրոպացի» չե, չնայած նրան, վոր նա գերադասում է գերմանացու հետ ամուսնանալ—այնուամենայնիվ համարում են և՛ ստրկական այդ հնազանդությունը, և՛ ընդհանրապես «նահապետական հարաբերությունները»: Դա արդեն նրա վերը գծված յերկվության արտահայտություններից մեկն է: Պետք է նկատել, վոր միևնույն վերաբերմունքը դեպի «նահապետական» անցյալը նկատելի չե ժամանակակից հայ սոցիալ-նարոդնիկներից շատ շատերի մոտ, վորոնք վոգևորությամբ և նույնիսկ առանձին ազգային սնապարծությամբ յերգում են հայ կնոջ նահապետական «համեստությունը» կամ «ամոթխածությունը», չնկատելով ամենևին հոգեկան այդ հատկությունների ամբողջ հետադիմական բնույթը:

Բայց Խ. Աբովյանը վոչ միայն սիրում, համակրում էր գյուղական հայրենիքի այդ և վերը գծված ուրիշ կողմերը, այլև համոզված է, խոր և ուժեղ համոզված, վոր բոլոր այդ հատկանիշները հարատև պիտի մնան անխախտ ու անփոփոխ: Նա ամենևին չի մտածում այն մասին, վոր յերբևիցե կարող են փոխվել հասարակական պայմանները, վոր յերբևիցե կարող են հեղաշրջվել հին, պրիմիտիվ գյուղացիական հարաբերությունները: Յեվ յուրօրինակ այդ օպտիմիզմին, յուրօրինակ այդ համոզմունքին խոշորագույն չափով նպաստում էին հենց տիրող հասարակական-տնտեսական պայմանները: Պատմական-հասարակական այն անցյալում այլ կերպ մտածել կամ խորհել Աբովյանը չէր կարող: Կայուն, հետամնաց տնտեսական իրականությունը, գյուղն իր ինքնապարփակ կյանքով, հառաջդիմիչ գործոնների կատարյալ բացակայությունն անհրաժեշտաբեն նպաստում էին այն բնորոշ օպտիմիզմի զարգացման, վոր մենք նկատում ենք և Աբովյանի մոտ: Չնկատելով իր շրջապատում շարժող, հառաջդիմիչ ուժեր—նա չէր էլ կարող յերևակայել, վոր գյուղը յերբևիցե կարող է փոխվել, վոր կարող են ստեղծվել ապագայում նոր համայնակենցաղ և նոր հոգեբանություն: Ահա ինչու և Աբովյանին ամենևին չի սարսափեցնում այն դրամատերը, վոր թույլ, ընդհանուր ներկերով գծված յերևում է նրա վեպի մեջ: Դա թույլ «Ներհար» հարվածող մի տիպար է, վորի մասին Աբովյանի գյուղացիները խոսում են հեգնանքով, արհամարհանքով: Յեվ նրանք, և՛ ինքը Աբովյանը շեշտում են նրա միայնությունը գյուղական իրականության մեջ, շեշտում նրա դեմքը կոմիկական կերպով, առանց հետաքրքրության, առանց ծանրանալու նրա վրա: Նրանք չեն կարող ամենևին յերևակայել, վոր յերբևիցե ապագայում այդ «դրամատերը» կարող է փոխվել, կարող է ուժեղանալ, ուռճանալ, վտանգել գյուղացիներին և նույնիսկ դառնալ գյուղի արքան, գյուղի հզորագույն և ուժեղ տիրակալը:

Բաքու 1910

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

I

Միքայել Նալբանդյանը մեկն է 60-ական թվականների ամենահայտնի այն գործիչներից, վորին իրավամբ անհրաժեշտ է հատկացնել առանձին տեղ հայ գրականության և հասարակական մտքի պատմության մեջ:

Նալբանդյանը միակն է անցյալ պատմաշրջանի այն հրապարակախոսներից, վոր կարողացել է իր ժամանակ արձագանքել ռուս առաջավոր մտավորականության ուսմունքներին:

Նա յեղել է հայ իրականության հետ կապված մի հրապարակախոս: Բայց այդպես լինելով էլ կարողացել է յուրօրինակ հմտությամբ շաղկապել Գերցենի և Բակունինի ուրույն հայացքները կոնկրետ հայկական միջավայրի ինքնահատուկ պրոբլեմների հետ:

Դրանումն է կայանում Նալբանդյանի մեծագույն պատմական այն արժեքը, վոր մինչև այժմ էլ չի յենթարկվել անհրաժեշտ գնահատության:

Վոչ-պակաս չափով հետաքրքրական է նաև Նալբանդյանի կյանքն ու հետագա վիճակը:

1862 թվին «Լոնդոնի պրոպագանդիստների», Սերնո-Սոլովյեվիչի, Վետոշնիկովի և մյուսների հետ նա ևս մեղադրվում է, վորպես «վրդովեցուցիչ թուղթեր տարածող» և յերկարատև բանտարկությունից հետո Պետրոպավլովյան բերդում աքսորվում է Կամիշին քաղաքը: Բերդում արդեն Նալբանդյանը տառապում էր թոքախտից: Աքսորավայրում էլ նա մահանում է, միայնակ, առանց բարեկամների և մտերիմների:

Նալբանդյանի ժողովրդականությունը խիստ մեծ էր: Բայց քիչ չէր և թշնամիների թիվը:

Հայ կղերականությունը, բարձր հայ բյուրոկրատիան, և դրանց սպասավորող խոշոր ու մանր գաճաճները—բոլորն էլ կրակոտ և միշտ անհաշտ «Եմմանվելի» (այսպես էր Նալբանդյանի մականուններից մեկը) կատաղի հակառակորդներն էին:

Թե վորքան մեծ եր Նալբանդյանի հմայքը, այդ յերևում է մի հասարակ փաստից: Յերբ Նալբանդյանի աքսոր ուղարկելու մասին լուր է ստացվում Նոր-Նախիջևանում, վերջինի բնակչությունը ինքն իր կողմից խնդիր է հարուցանում հրապարակախոսի վիճակի թեթևացման մասին: Կառավարությունն այդ առթիվ քննություն և հարցում է կազմակերպում, վորի հետևանքով պարզվում է, վոր Նալբանդյանին պաշտպան են կանգնում հարյուր քաղաքացիներ, վորոնք բոլորն էլ լավագույն վկայություն են տալիս նրա «վարքի» մասին և հնարավոր են համարում ցարական կառավարությանը հաղորդել իրենց անվերապահ կարծիքը:

Յեթե մենք հաշվի առնենք պատմական մոմենտը, նկատի առնենք միջի այլոց այն, վոր թե բարձր հայ հոգևորականությունը, թե հայ «մեծ ազաները» դեռ 50-ական թվականներին Նալբանդյանին հալածել են, վորպես «ազգուրաց» և «ֆրանկմասոն» ապստամբի, յեթե մենք նկատի առնենք ցարական կարգերի պայմանները, այսպես կոչված «Յերրորդ բաժանմունքի» վերաբերմունքը «32-ի պրոցեսի» նկատմամբ — այդ ժամանակ միանգամայն պարզ պիտի լինի այն, վոր միմիայն անսահման սերն ու հարգանքը կարող եյին ներշնչել Նոր-Նախիջևանի «խաղաղ» հարյուր քաղաքացիներին արտասովոր այն խիզախությունն վոգին և յելույթը, վոր ցուցադրվել է նրանց կողմից Նալբանդյանի «խնդրի» քննության առթիվ:

Այդ բոլորին անհրաժեշտ է ավելացնել նաև այն, վոր Նալբանդյանի մասնակցությունը ռուս հասարակական շարժումներին հայ մտավորականության ամենառաջավոր խմբակցությունները անգամ համարում եյին բացասական և «ազգավնաս» գործ: Նրա ամենամոտ ընկերակիցներն անգամ շտապել եյին ընդգծել իրենց այդ բացասական վերաբերմունքը: Յեվ այդպես են վարվել նույնիսկ նրանք, վորոնք չեն կարողացել կամ չեն վստահացել ժխտել Նալբանդյանի կատարած գործի դրական արժեքը հայ հրապարակախոսության մեջ: Շատ ուշագրավ է, վոր հետագայում ևս նկատելի չե յեղել հակառակ այդ դիրքը «Յերկրագործության» նկատմամբ: Յեվ հենց հակառակ այդ վերաբերմունքով էլ պետք է բացատրել այն, վոր մինչև այսոր էլ գոյություն ունի մեր քննադատների մոտ վորոշ անորոշություն Նալբանդյանի հասարակական-քաղաքական հայեցողության մասին:

* * *

Նա համարվում է և' «ազգայնական», և' վոչ-ազգայնական: Յեթե 1905-ից առաջ հայ քննադատությունը համարում եր նրան զուտ-ազգայնական մի հրապարակախոս, ապա առաջին ռուսական հեղափոխության ազդեցության ներքո ստեղծվում է նոր մի հոսանք, վորի համաձայն Նալբանդյանը դառնում է «սոցիալիստ» մի հրապարակախոս և միջազգայնական վոտքից մինչև գլուխ: Այլ խոսքով մինչև 1905-ը գոյություն ունեցող միակողմանի վերաբերմունքին հակադրվում է միանգամայն նոր, նույն չափով միակողմանի մի ուրիշ տեսակետ:

Բացատրվում է այդ բոլորը նրանով, վոր հաճախ այսորվա նոր քննադատությունն էլ մոտենում է Նալբանդյանին իր սուբյեկտիվ տեսակետից:

Դրա համար էլ ամեն մի քննադատ աշխատում է վոչ այնքան նկատել իսկական յեվ ռեալական Նալբանդյանին, վորքան իր ուրույն հայեցողությանը համապատասխանող յերևակայական Նալբանդյանին:

Կրկնվում է նորից հին պատմությունը: Տրադիցիոն հայ պատմագրությունն անցյալում աշխատել է չնկատել ամենից Նալբանդյան հեղափոխականին: Յե. Շահազիզը, Լեոն և մյուսները առաջ են քաշել միշտ Ստեփ. Նազարյանին, իսկ Նալբանդյանի մասին խոսելիս էլ, համարում եյին նրան պարզապես միևնույն Ստ. Նազարյանին հետևող, Նազարյանցի խոսքերը կրկնող և կաղապարող մի հրապարակախոս: Այդ պատճառով հայ ընթերցողների համար յերկար ժամանակ «Յերկրագործության» հեղինակ Նալբանդյանը կատարելապես անհայտ եր: Բակունինի և Գերցենի մտերիմ բարեկամ Նալբանդյանը գոյություն չուներ հայ նացիոնալիստ քննադատների համար:

Սակայն... փոխվում են պայմանները: Ուժեղանում է բանվորական շարժումը կովկասահայ իրականության մեջ: Սոցիալիզմը, վոր առաջ համարվում եր «խենթերի» ուսմունք, դառնում է վոտքի յելնող բանվորական լայն մասսաների հեղափոխական ուսմունք: Յեվ աստիճանաբար, հասարակական «նոր հովերի» ազդեցության ներքո ստեղծվում է նոր մոտեցում անցյալի գործիչների նկատմամբ:

Դրա հետևանքը պիտի համարել անշուշտ Նալբանդյանի «Յերկրագործության» քննությանը նվիրված սովորագույն այն

նոր գրականությունը, վոր ստեղծվել է մեզ մոտ 1905-ից հետո:

Յե. Պալյան, Թ. Ավդալբեկյան, Սիմ Հակոբյան, Արսեն Տերտերյան, Ալ. Մարտունի նվիրում են առանձին ուսումնասիրություններ Միք. Նալբանդյանի տնտեսական տրակտատի մանրակրկիտ վերլուծությանը և առաջադրում են միանգամայն նոր հայեցակետ «Հյուսիսափայլի» հայտնի հրապարակախոսի մասին:

«Վոչ Ս. Նազարյան և վոչ Գր. Արծրունի չեղան, կարդում ենք Նալբանդյանի մասին գրված մի ուսումնասիրության մեջ, արտահայտիչ վորև տնտեսական-հասարակական սիստեմի, գավանանքի, վորը ձգտումն ունենար, իբրև անհրաժեշտություն և կամ իբրև իդեալ, արմատապես բարեփոխել կյանքը: Հասարակական տնտեսական խնդիրն իր եությամբ միանգամայն հեռու յեր թե մեկից և թե մյուսից, ոտար էր թե մեկին և թե մյուսին: Ահա այս տեսակետից Մ. Նալբանդյանի դիրքը միանգամայն առանձնակի և բնորոշ է, դուրս մնալով 60-ական թվականների ասպարեզից: Թեև Ս. Նազարյանցի ուղղության և 60-ական թվականների հոսանքին մասնակցեց նաև Մ. Նալբանդյանը, և այդ մասնակցությունը կապող օղակն է նրա և հիշված հոսանքի մեջև, բայց այդ Մ. Նալբանդյանի գործունեության առաջին շրջանն է միայն, յերկրորդական իր բովանդակությամբ: Սկզբնական, պատահական և կողմնակի, իբրև կարճատև աշխատակցություն մի ամսագրի, վորը ձեռնարկված էր Ս. Նազարյանցի կողմից և կարող էր հյուրընկալել Մ. Նալբանդյանի մի շարք քաղաքացիական կարծիքները»: Ապա այդ տողերից հետո շեշտելով «յերկրորդ շրջանի» (1860-1862) Նալբանդյանի «բոլորովին այլ ուղղությունը» միևնույն հեղինակն ընդգծում է՝. «Նրանց (այսինքն՝ «Հյուսիսափայլ»-ի գործիչների) հակապատկեր, Մ. Նալբանդյան զբաղվեց, նախ, ժողովրդի տնտեսական խնդրով: **Նրա անալիզը, վորոշ չափերով, հասավ մինչեվ հասարակական կազմի արմատները, նրա տնտեսական հիմքերը, վորոնց մեջ յեվ նա գտավ «հասարակական չարիքի» պատճառները: Ապա Մ. Նալբանդյանը ունեցավ, իբրեվ դավանանք, իբրեվ** credo, **հասարակական-տնտեսական կազմի մի այլ սիստեմ, վորը նա հակադրեց տիրող կապիտալիստական սիստեմին, յեվ վորի իրագործմամբ միայն, նրա կարծիքով, կարելի յեր բարելավել կյանքը հիմնավորապես յեվ լուծել հասարակական խնդիրները...»***):

*) Յե. Պալյան. «Միքայել Նալբանդյանի տնտեսական թեորիան». Բաքու 1911, եջ 12—14.

Յես կանգ չեմ առնում այդ բնորոշման առանձին կետերի գնահատության վրա: Քիչ հետո մենք առիթ կունենանք անդրադառնալու դրան: Առայժմ կարևորն այն է, վոր այդ բնորոշումը, վորքան էլ քննադատելի չէ, այսպես թե այնպես, **կարճ խոսքերով պարզում է 1905-ից հետո ստեղծված նոր քննադատական հոսանքի կողմնակիցների հիմնական հայեցակետը:** Այդ հիմնակետից յելնելով էլ, նոր քննադատությունը «սոցիալիստ» Նալբանդյանի գործը հակադրել է այն Նալբանդյանին, վորը վերոհիշյալ պարբերության համաձայն, «սկզբնական, պատահական և կողմնակի ու կարճատև մի աշխատակցություն» է ունեցել «Հյուսիսափայլ»-ի մեջ:

Ավելորդ կլիներ այստեղ շեշտել, վոր նոր այդ «թեքումը» չի պարզում և չի յել կարող պարզել ամենևին մեզ հետաքրքրող պրոբլեմը:

Վատ չէ, իհարկե, այն մեծ ուշադրությունը, վոր հատկացրվել և հատկացնվում է «յերկրորդ շրջանի» Նալբանդյանի հասարակական-քաղաքական դեմքի գնահատությանը: Բայց այդ ուշադրությունը ևս չպիտի կուրացնի մեր աչքերը: Այնինչ «Նոր Նալբանդյանը», «Յերկրագործության» Նալբանդյանը ծածկում է «Հյուսիսափայլի» Նալբանդյանին: Վերջինը դատապարտվում է մոռացության, դիտավորությամբ յետ է մղվում: Իսկ «Յերկրագործության» հեղինակն էլ այնքան խոշոր բարձունքների յե հասցնվում, վոր այլևս շատ դժվար է դառնում նրա հասարակական-տնտեսական աշխարհայեցողության օբյեկտիվ գնահատությունը:

Յեվ ահա դրա համար էլ այդօրինակ մոտեցումը խանգարում է իսկական և իրական Նալբանդյանի հասարակական դեմքի անաչառ լուսաբանության և ճանաչողությանը:

Նորագույն, չափազանցրած այդ միակողմանիության հարկավոր է վերջ տալ նույնպես, ինչպես վերջ են տվել մենք հայ կղերական յեվ լիբերալ հրապարակախոսների նիհիլիստական մոտեցմանը Նալբանդյան-հեղափոխականի նկատմամբ:

Ահա ինչու անհրաժեշտ է հենվել իրական փաստերի, առարկայական փաստերի և ամենից առաջ հենց Նալբանդյանի և նրա ժամանակակիցների գրությունների անկողմնապահ տեսության և քննության վրա:

II.

Ինչումն էր կայանում ամենից առաջ Ստեփ. Նազարյանցի և Միք. Նալբանդյանի հասարակական հայացքների տարբերությունն այն շրջանում, երբ այդ յերկու գործիչներն աշխատում էին կողք-կողքի, մի ընդհանուր կազմակերպության — «Հյուսիսափայլ»-ի մեջ: Ասում ենք «կազմակերպություն», վորովհետև 50—60-ական թվականներին, «Հյուսիսափայլ»-ը ստեղծելով հասարակական մի հոսանք, կատարում էր միևնույն դերը, ինչ վոր վիճակվել էր հետագայում կուսակցություններին:

Մենք այդ հարցը զուր տեղ չենք տալիս: Քիչ առաջ տեսանք արդեն, վոր նույնիսկ Նալբանդյանի «կողմնակից» քննադատը նրա աշխատակցությունը «Հյուսիսափայլ»-ին համարում է «պատահական», «յերկրորդական» և «կողմնակի»...:

Այդ հարցին անհրաժեշտ է տալ վորոշ պատասխան, վորպեսզի պարզ լինի մեզ համար Միք. Նալբանդյանի հետագա էվոլյուցիան:

Սակայն, վոչ միայն վերոհիշյալ քննադատը, այլև բոլոր հայ քննադատները մինչև այժմ չեն զբաղվել այդ հարցի քննությամբ, կամ պարզաբանությամբ: Չեն զբաղվել նրանք դրանով միայն նրա համար, վոր բոլորն էլ կանգնած են յեղել Յե. Պալյանի հիմնական տեսակետի վրա:

Այսոր էլ Նալբանդյանի նկատմամբ տիրականորեն իշխում է այդ տեսակետը: Այսոր էլ միանգամայն անառարկելի և ակներև է համարվում այն, վոր մինչև 1860 թվականը Նալբանդյանի և Նազարյանցի միջև վոչ մի տարաձայնություն չի յեղել, և վոր աշխատակցելով Ստ. Նազարյանցի ձեռքով խմբագրվող «Հյուսիսափայլ»-ին Միք. Նալբանդյանը միանգամայն համակիր է յեղել Նազարյանցի հասարակական և գրական բոլոր հայացքներին:

Այն ինչ իրապես յեղել է հակառակը: Յեվ այդ հանգամանքը չի կարելի ասել, վոր անհայտ է մնացել հայ գրականության պատմագիրներին: Այսպես օրին. Միք. Նալբանդյանի յերկերի հրատարակիչը Ա. Ջամինյանը, կանգ առնելով՝ յերկերի առաջին հատորին կցված առանձին նախաբանի մեջ՝ Միք. Նալբանդյանի կենսագրության հիմնական էջերի վրա, հետևյալ խոսքերով է բնորոշում «Հյուսիսափայլ»-ի յերկու գործիչների տարբերությունը. «Վորքան և սկզբնապես Նազարյանի ու Նալբանդյանի մեջ մտքերի համերաշխություն լիներ, այնուամենայնիվ. այս

յերկու տարբեր խառնվածքներն ու մտքերը կարող չէյին հաշտվիլ. մեկը մեղմ էր, չափավոր, միակողմանի գաղափարների տեր, անձնակի մարդ, մյուսը՝ տաք գլուխ, պատերազմող, ավելի լայն հայացքների տեր, կյանքի մարդ. մեկը՝ հաշվագետ, մանրակրկիտ, իսկ մյուսը՝ ավելի ծախսող, ավելի լայն բանվորություն: Այսպիսի տարբերությունների ժամանակ մի չնչին պարագա էլ բավական էր նրանց մեջ պառակտումն առաջ բերելու, ինչպես վոր իրոք և կատարվեցավ...» *):

Ճիշտ միևնույն կերպ են մոտեցել Միք. Նալբանդյանի և Ստեփ. Նազարյանցի հասարակական-գրական տարաձայնությունների բնորոշմանը բոլոր մնացյալ քննադատներն ու պատմագիրները:

Դրանք էլ կանգ են առել Նալբանդյանի «կրքոտ» վոգու վրա և գլխավորությամբ խուսափել են վորևէ կարևոր խոսք ասել սկզբունքային այն տարաձայնությունների մասին, վորոնք բաժանել են Նալբանդյանին Ստեփ. Նազարյանցից և պատճառ են հանդիսացել հետագա պառակտմանը:

Բացատրվում է դա նրանով, վոր թե Ա. Ջամինյանը և թե նրա հետ միասին բոլոր մյուս քննադատները հակառակ են յեղել միշտ Միք. Նալբանդյանի աշխարհայեցողությանը, և, հակված լինելով Նազարյանցի կողմը, չեն ցանկացել բնականաբար նսեմացնել հայ բուրժուական լիբերալիզմի կարապետի արժեքն ու դերը: Ի վերջո, ամենևին կարիք չկա մշուշելու այն, վոր թե կոնսերվատոր Շահազիզը և թե «ազատամիտ» Լեոն բացասաբար են վերաբերվել մարտնչող Նալբանդյանի հայացքներին: Այդ բացասական վերաբերմունքն ինքնըստինքյան, հասկանալի և «բնական» էր այն չափով, վոր չափ թե մեր տրադիցիոն պատմագիրները և թե ինքը Ստեփ. Նազարյանցը կանգնած էյին հայ նացիոնալիզմի գաղափարական դիրքերի վրա: Դրանով էլ պայմանավորվել է անշուշտ նրանց ավելի քան կտրուկ վերաբերմունքը դեպի Նալբանդյանի հեղափոխական գործունեությունը: Շատ լավ է բնութագծել նացիոնալ-լիբերալիզմի առանձնահատուկ այդ հայեցակետն ինքը՝ Ստեփ. Նազարյանցը իր հայտնի այն նամակի մեջ (1862-ին նոյեմբեր 3-ին), ուր արտահայտվել է Նալբանդյանի ձերբակալության առթիվ:

«... Մյուս հերոսի գործնեյությունը, կարդում ենք այդ-

---

*) Տես Մ. Նալբանդյան, Յերկեր. հտ. I. Ռոստով-Դոնի վր. 1901 էջ, 10—11:

տեղ, հիմար անձնապաշտպանություն յեվ անձնվեր անբարտավանություն է... 70 միլլիոնի առաջը կտրել, եսի նահատակ դառնալ, վոչ, այդ անհանո յե ինձ... գործը վոչինչ հայացք յունի դեպի մեր ազգը... այլ մի ոգից առած ցնորք է—խռովություն յեվ ապստամբություն ձգելու տիմար (...) ամբոխի մեջ», բերելով Ստեփ. Նազարյանցի նամակի այդ պարբերությունը, Միք. Նալբանդյանի կենսագրականի հեղինակը, պ. Զամինյանը գտնում է, վոր «ճշմարտությունն ավելի մոտ է Ստեփ. Նազարյանցը»:

Կոմենտարներ այստեղ պետք չեն, իհարկե: Իր պարբերությամբ Ստեփ. Նազարյանցը ինքն արդեն շատ լավ է բնորոշել իր հասարակական հայեցողությունը:

Հետաքրքրական է այն, վոր մինչև այժմ էլ հայ քննադատներից վոչ մեկի կողմից Նազարյանցը չի յենթարկվել գեթ ամենաչնչին քննադատության իր այդ այնքան նշանակալից հայտարարության համար:

1913-ին լույս է տեսել Թիֆլիսում, Ն. Աղբալյանի խմբագրությամբ Ստեփ. Նազարյանցի յերկերի ժողովածուն: Յեվ ահա այդ հատորին կցված իր առաջաբանի մեջ ոչ միայն քննական վորևե խոսք չի ասում Ս. Նազարյանցի մասին, այլև միանգամայն լռություն պահպանելով «Հյուսիսափայլ»-ի ամենաբեղմնավոր աշխատակցի մասին, Ն. Աղբալյանը հետևյալ ներբողական խոսքերով է ավարտում իր առաջաբանը. «Նազարյանը միակ մարդն եր իր ժամանակ, վոր կարող եր յեվ պատրաստվում եր վարելու աշխարհական դասի պայքարը հոգեվորականության դեմ: Վոչ վոք նրանից լավ չէր ըմբռնում հայության ճակատագիրը Ռուսաստանում, մեր ազգայնությանը սպառնացող վտանգները և այն միջոցները, վորոնցով հնարավոր է ազգային կերպարանքն անվթար պահելով ընթանալ ժամանակի հետ: Ժամանակի գրական գործիչների մեջ կան ավելի տաղանդավորները, բայց չկան ավելի հաստատակամներն ու տոկունները, վորոնք ժամանակի մեծ դատն իրենց ձեռքն առնելով կարողանային վոչ միայն համարձակ պայքարել, այլև հաղթանակել: Նազարյանն եր միայն, վոր կարող եր «ստանալ հաղթության արմավենին» *):

Կարծում ենք բավական է: Ինչպես տեսնում ենք Ն. Աղբալյանը, հայ լիբերալիզմի մի ուրիշ թևի իդեոլոգը, միացնում

*) Տես՝ Ն. Աղբալյան՝ Ս. Նազարյան (կենսագրական ակնարկ) Ստեփաննոս Նազարյանցի յերկերը. Թիֆլիս 1913:

և իր ձայնը Յե. Շահազիզին և Լեոին: Յերբ այդ բոլորից հետո անցնում ենք Ստ. Նազարյանցի հոդվածների քննությանը ավելի ևս հասկանալի է դառնում մեզ համար «համազգային միասնականի» այդ գնահատության իսկական դրդապատճառը:

Կանգ առնենք մի փոքր այժմ հենց դրա վրա: Անհրաժեշտ է գեթ թռուցիկ կերպով, մեր նյութի ավելի պարզ բնորոշման համար, ծանոթանալ Նազարյանցի և Նալբանդյանի հայացքների հետ հիմնական այն խնդիրների նկատմամբ, վորոնք արծարծվել են իր ժամանակ «Հյուսիսափայլ»-ի էջերում: Դա հնարավորություն կտա մեզ վորոշելու, թե վորչափ աննշան կամ մեծ է յեղել յերկու հրապարակախոսների տարաձայնությունը:

* * *

Ամենից առաջ ընթերցողի ուշադրությունը գրավում է մի հիմնական հանգամանք, վորը խիստ կարևոր է յերկու գործիչների անհատական ձիրքերի բնութագրման համար:

Իմ խոսքը Ս. Նազարյանցի և Միք. Նալբանդյանի վոճի կամ ավելի ճիշտ—հոդվածների ընդհանուր վոգու մասին է: Նազարյանցը գրեթե միշտ գրում է խիստ սառը, ցամաք և հաճախ բավական տաղտուկ լեզվով: Նա խուսափում է սուր արտահայտություններից և «կորեկտ» է նույն իսկ ամենակրակոտ պոլեմիկայի ժամանակ:

Նալբանդյանը, հակառակ դրան, գրում է խիստ սուր և պատկերավոր վոճով, և մերթ ընդ մերթ այնքան տարվում է, վոր լայն սիրտ մարդու նման բաց է անում, ինչպես ասում են, իր «սիրտը»: Նա խոսում է ընթերցողի հետ, խոսում խիստ անկեղծ և ընկերական տոնով: Շնորհիվ դրան նրա հոդվածները թողնում են հաճախ մտերմական նամակների տպավորություն:

Յես կբերեմ այստեղ մի կտոր միայն, վորը, կարծում եմ, բավական պիտի համարվի Նալբանդյանի գրելու ձևի բնորոշման համար:

1858 թվ. սեպտեմբերի 30-ին գրված կոմս Եմանվելի հիշատակարանը սկսվում է հետևյալ տողերով՝ «...Ահա սկսանում է հոկտեմբերը. ցուրտ և խոնավ յեղանակները յուրյանց անախորժ քամիներով սկսեցին մռայլել սիրտը. յերկինքը տեսա թե լաց է լինում մարդու գլխին: Շատ անգամ դուրս եմ գալիս դաշտ, բայց չկա այն ախորժ բերկրությունը, վոր զգում է մարդ

ամառային ժամանակ. ծառերը յուրյանց խշշոցով, կարծես լաց են լինում յուրյանց տերևաթափությունը, այն կանաչ ու թարմ տերևները, վոր մի-յերկու ամիս առաջ քաղցր հովանի եյին մեր համար այրող արևի յերեսից, այժմ դեղնած ու թառամած թափվել են գետնի վերա, ծառերի տակին, և չինականների անգործ վոտաբոբիկ և ըստ մեծի մասին մերկ տղայքը վորոնում են հողի մեջ կաղին, վոր դեռ ես ընկած չեյին հավաքողի ձեռքը: Աշունը, մանավանդ թե հյուսիսումը, մի շատ տխուր ժամանակ է. մարդը, նայելով բնության վերա և տեսանելով, յերբ վոր սա փոքր առ փոքր յետ եր քաշում յուր կենսական զորությունքը և պատրաստվում եր մտանել քնի մեջ, տխրում է, մահու պատկերը կամ թե մարդկային կյանքի օրինակը վորպես հայելու մեջ նկատելով թառամած տերևների վերա...: Պիտի իմանալ, վոր իմ կյանքը մի հյուսիսային գյուղի մեջ շատ միօրինակ է և միայն մխիթարությունն մնացել է ինձ մատենագրությունը...»:

Այսպես է սկսում նա իր հիշատակարանը 1858-ին գրած իր հոդվածում: Իր այդ մտերիմ Նախաբանով Նալբանդյանը հենց առաջին տողերից ստեղծում եր առանձին կապ իր բազմաթիվ ընթերցողների հետ, վորոնց հետ, վորոնց համար ավելի քան պարզ եր դառնում այն, վոր այդպիսի տողերի հեղինակը չի կարող ստախոս, կեղծավոր կամ անբարեխիղճ լինել: Յեվ բնականաբար Միք. Նալբանդյանի կրակոտ և հրաշունչ տողերն ես առաջ եյին բերում անմիջական արձագանք, բողոք, վրդովմունք: Իսկ կրակոտ, «անհաշտ», մոլեգնոտ տողեր անհամեմատ ավելի շատ կար Մ. Նալբանդյանի մոտ: Բայցի մի յերկու լիրիքական պարբերություններից նրա վողջ հրապարակախոսությունը լեցուն եր կրակով և պողպատե վճռականությամբ: Իսկ այդ բանը կատարելապես բացակայում եր Ստ. Նազարյանցի մոտ:

Յեվ դրա համար էլ այն ժամանակ, յերբ վերջինը պաշտպանվում եր և արդարանում հակառակորդների առաջ, Միք. Նալբանդյանը քարկոծում եր, խարազանում և ինքը նետվում թշնամիների դեմ: Ստեփ. Նազարյանցը յերկարորեն, և հաճախ խիստ տաղտկալի միօրինակությամբ, աշխատում եր համոզել հակառակորդներին, քրիստոնեական հորդորներ եր կարդում, դիմում եր Աստծու, Ներսես Լամբրոնացու, «լուսավոր մարդկանց» օգնության. Նալբանդյանը ավելորդ եր համարում հաշտ լեզվով խոսել այդ «մեծատունների», «ռըսկոլնիկների» հետ..:

...:«Հոյակապ, հավիտենական պարծանքի արժանավոր վաստակներ ունի վաստակելու մի արժանավոր հայրապետ, վոր կոչվում է բազմելու մեր տանելի Նոր, Գրիգորիս Լուսավորչի, Եջմիածնյան աթոռի վերա, Ռուսաստանի հաղթող արծվի թևարկության տակ: Յեկեղեցին կարոտ է գիտուն և առաքինի պաշտոնյաների, վոր ուղղությամբ, սուրբ գրքի հիման վերա քարոզեյին Աստուծո բանը ժողովրդին, հասկացնեյին նորան քրիստոնյա մարդու կոչումը...»*):

«Հյուսիսափայլի հրատարակողը վոչ ում չկամի վնասել նրանթապես. ամենայն ծաղիկ ունի յուր գույնը և յուր հոտը, ամենայն ծառ յուր տերևները և յուր տեսակ համով պտուղները և ամենեցուն հավասար բավական տեղ ու հոտ կա Աստուծո լայն ու արձակ աշխարհի վերա. այդ բոլոր ծաղիկները և այդ բոլոր ծառերը իբրև մի մայրենի հողի վերա բուսածք, հավասարապես պարծանք են հայկական անվանը Ռուսաստանի մեջ: Ուրեմն թող մեզանից հեռու մնա ամենայն անազնիվ կիրք, ամենայն հակառակություն. Նպատակը մի յե, հայրենիքը մի. ով ինչ չափով և ինչ ճանապարհով կարող է, թող ծառայե նորան»**):

Այսպիսի տարտամ և բարոյախոսական լեզվով է խոսում Ստ. Նազարյանցը: Նա դրա համար էլ շարունակ դիմում է Քրիստոսի, Սահակ և Մեսրոպի օգնությանը: Բողոքական միսիոնարի քրիստոնեական ժպիտը դեմքին հորդորներ է կարդում և յերկարորեն ծամծմում է «միության» և «բարեգործության» մասին մի շարք սիմպլիստական մտքեր:

Այլ է բոլորովին Միք. Նալբանդյանը: «...Մեր ազգի մեջ, ասում է նա, այժմ կան հայացքներ, ուղղություններ, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ: Ոտարոտի մի բան եր հերքել այս. նույնպես ոտարոտի յեր ցանկալ մի տեսակ միավորություն հակառակող բաժինների: Այդ վնասակար եր մեր ազգին: Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը—կյանք է... Թող յուրաքանչյուր կողմը առանց բռնադատական գոհարբերության և առանց ամենայն բռնադատական կամակորության գործ դնե յուր բոլոր զորությունը, յուր մտքերի բոլոր խստությունը, այդ ժամանակ միայն կարող է հայտնվել կատարյալ և վճռական հաղթությունը. պատերազմը այն ժամանակ կարող է

*) Ստեփ. Նազարյանց՝ Յերկեր. հատ. 1. եջ 119.

**) Ս. Նազարյանց՝ Յերկեր. Հ. 1. եջ 284—285

հասանել յուր պայծառ և պաղավետ նպատակին։ Օրհնյալ է պատերազմը. թող լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ։ Նա, վոր փախչում է ազնիվ պատերազմից, մարդ չէ բարոյապես, այլ մի թշվառ արարած կնամարդի բնավորությամբ։ Սուտ խաղաղասիրությունը, վորի տակ, վորպես գայլ վոչխարի զգեստով, թաքնված է անձնական օգուտ ու փառք, մենք մեծարում ենք յեզվիտ պատվանունով։ Ճշմարտության բուն հետևանքը բաժինք է. պիտո է լինին հերձվածներ, վոր ընտրվածքը յերևին։ Յեվ գինին մինչև չխմորվի և չպղտորվի, չէ պարզվում։ Ծծումբի ազդեցությամբ կտրված քաղցուն, վոր չէ խմորվում ավելի, նույն պատիվը ունի գինիքի մեջ, ինչ պատիվ ներքինին մարդերի մեջ. ով ականջ ունի լսելու, թող լսե»*)։

Ինչպես տեսնում ենք, տարբերությունը խիստ մեծ է։ Միք. Նալբանդյանը միանգամայն ապարդյուն և վնասաբեր է համարում «սուտ խաղաղասիրությունը»։—Գաղափարների, կարծիքների, ասում է նա, հոսանքների պայքար կա, և նա պիտի լինի։ Այն պայքարը կարող է ավարտվել մեկ կամ մյուս կողմի հաղթանակով, «հիմնական խնդիրների» կարսական լուծման միջոցով։ Իսկ նա, ով այդ չի նկատում, կամ նկատելով հանդերձ ցանկանում է փարիսեցիաբար հանդես գալ «սուտ խաղաղասերի» դերում, իրապես կատարում է ներքինիի դերը։

Ինչի՞ց եր բխում Նալբանդյանի այդ վորոշ դիրքը—կարող է հարցնել ընթերցողը։ Չէ՞ վոր Ստ. Նազարյանցն էլ հենց այդ տարիներին պաշտպանում եր միևնույն հասարակական իդեալները, և Նալբանդյանի հետ միասին, «Հյուսիսափայլ»-ի եջերից մղում եր միևնույն քաղաքական պայքարը Չերքեզյանների և կղերական-պահպանողական վողջ բանակի դեմ։

Այդ հարցին դժվար չէ պատասխանել, յեթե մենք դառնանք այն խնդիրներին, վորոնք զբաղեցրել են այդ ժամանակաշրջանում «Հյուսիսափայլ»-ի յերկու ղեկավարներին։

Քննենք ամենից առաջ այն թեմաները, վոր զբաղեցրել են այդ գործիչներից յուրաքանչյուրին։

Միք. Նալբանդյանը հայ ժողովրդի հին պատմությանը հատկացրել է ուշադրության խիստ սահմանափակ չափով—վորչափ այդ անհրաժեշտ եր գոյություն ունեցող «հետադիմական բանակի», հայկական «սքոլաստիկայի և օբսկուրանտիզմի» ա-

*) «Հյուսիսափայլ». 1858. եջ 308—309

մենակտրուկ խարազանման համար։ Այսպես օրին. Խորենացու անունը նա հիշել է միմիայն նրա համար, վորպեսզի առիթ ըստանա նորից քարկոծելու «կղերականներին», «մութի սպասավորներին», հետադիմության թե «նոր» և թե «հին» ներկայացուցիչներին։ Միևնույն նպատակով նա ձեռնարկել է Ղազար Փարպեցու հայտնի Թուղթի հրատարակությանը։

Յեթե դրան ավելացնենք առաջին հատորի մեջ զետեղված բազմաթիվ բանաստեղծություններից «Սուրբ Մեսրոպի տոնին», «Ոշական» և «Մեծ Վահանի պատասխանը» վերնագրով յերեք յերգերը (վորոնցից առաջին յերկուսը գրվել են 1850—5։ թ., իսկ վերջինը—1860-ին)—ահա և այն աննշան տուրքը, վոր տվել է հեռավոր անցյալին ազգային—հեղափոխական իդեալներով տոգորված Նալբանդյանը։ Անցյալի այդ մի քանի եջերն էլ նա օգտագործել է իր մշտական մոտիվների,—«լուսավորչական», աշխարհական իդեալների արծարծման համար։ Իսկ յեթե դրա հանդեպ հիշենք այն, վոր Ստ. Նազարյանցի մոտ յերկասիրությունների մեծագույն մասը նվիրված է ավատական-կալվածատիրական Հայաստանի վողջագուրմանը և ընդհանրապես «հին օրերի», «անցյալի», «հին կարգերի» փառաբանմանը—այդ ժամանակ տարբերությունը կդառնա ավելի քան վորոշ։

Յերկու հրապարակախոսներն էլ յեղել են մինչև 1860 թ. «ազգի» յերգիչներ, «ազգի» հավաքման և կազմակերպման յերգասացներ։ Սակայն մեկի աչքը հառած է յեղել միշտ «դեպի» «լուսավորյալ մեծատուններին» կողմը, դեպի անցյալի «հայ թագավորությունը» և «տխմար ամբոխին» կառավարող աշխարհական և հոգևորական իշխանավորների բանակը։ Իսկ Նալբանդյանը միշտ տարված «ժողովրդի», «ազգի մեծամասնության», «աղքատների» իդեալներով՝ անցյալի մասին էլ խոսել է միջանկյալ և միմիայն նրա համար, վորպեսզի նորից շեշտվի ու ընդգծվի, վոր անցյալում եւս յեղել են բաղխումներ, հոսանքներ, «մութի» և «լույսի» ընդհարումներ։ Դրա համար էլ նա չի խուսափել շեշտելու իր քննադատական վերաբերմունքը «պատմական անցյալի» նույնիսկ նվիրական եջերի նկատմամբ։ «...Մենք, ասում է Միք. Նալբանդյանը, կարճատես և կիսագրագետ մարդերին թողնում ենք զվարճանալ և ցնծալ, մինչդեռ քրքրելով ազգային պատմության փլատակները, գտանում եյինք մի վորևիցե նշխարված բեկոր. մեզ միայն պահում ենք վողբալ և մորմոքվել դոցա վերա և խրատ և խելք ուսանելով չարաբաստ անցա-

ծից, **աշխատել բարվոքել ներկայն ապագայի լավության համար։ Մեր պատմության միջից վոչ մի բան չե մխիթարում մեզ, վորովհետեվ սովորած ենք հիմնավոր կերպով քննել վորեվիցե ազգի պատմական արժանավորությունը։** Բայց ինչևիցե, թե պատմություն էր, թե կցկտուր ավանդություններ եյինք, պատմական արժանավորությունից զրկված, արժան էր որ մի հառաջ այդ բոլորը դնել մեր ազգի առջև, բայց վոչ հում և խակ, ինչպես մինչև այժմ կատարված է այդ գործողությունը, այլ **յեփած կրիտիկայի կրակով...»։***) Այդպես է հիմնավորում Նալբանդյանը իր նկատողությունների մեջ Ղազար Փարբեցուն և ուրիշ հայ պատմագիրների (ժողովրդական լեզվով) հրատարակության նշանակությունը։ Բավական է միայն համեմատել սուր և կարուկ այդ տողերը այն յերկարապատում հոդվածների հետ, վոր գրել է Ս. Նազարյանը թարգմանիչների, հին Հայաստանի, Քրիստոսի «իսկական սպասավորների» մասին և ընթերցողի համար պարզ կլինի յերկու հրապարակախոսների մոտեցման յեղանակի տարբերությունը։

Այն ժամանակ, յերբ Նալբանդյանը հրատարակում է Ղազար Փարբեցու Թուղթը, յերգեր է ձոնում Ժան Ժակ Ռուսոյի, Հենրիկոս Թոմաս Բոքլի հիշատակին, ճիշտ միևնույն այդ ժամանակամիջոցին Ստ. Նազարյանը զբաղվում է «Մարկոս Տուլլիոս Կիկերոնի» ատենական ճառերի, Ներսես Լամբրոնացու Թուղթի ատենաբանության և այլ նման գործերի քննությամբ։ Յեվ շատ բնորոշ է, վոր նույնիսկ այդորինակ հեղինակների անունը հիշելիս Ստ. Նազարյանը ղեկավարվել է միշտ իր ուրույն հակադեմոկրատական հայացքների պրոպագանդայի մոտիվներով։ Ի վերջո պատահական չպիտի համարել ամենեվին այն, վոր Կիկերոնի ճառերից Նազարյանը ընտրել է առաջին հերթին Կատիլինայի դեմ ուղղված ճառը։ Տեսնենք այժմ ինչ պիտի ըստանար հայ ընթերցողը Կիկերոնի այդ ճառի ընթերցանությունից։ Կիկերոնը, ինչպես հայտնի յե, հռոմեական արիստոկրատիայի, բարձր ֆինանսական շերտերի ու կապալառուների հրապարակախոսն էր, վորը հռոմեական դեմոկրատիայի դեմ լինելով, ռեակցիոն և դեպի միապետությունը սահվող բանակի շահերն էր ներկայացնում։ Նրա ճառերն ուղղված են դեմոկրատական շարժման բոլոր ղեկավարների դեմ, և դրա համար էլ

*) «Հյուսիսափայլ». 1858. էջ 305.

վերջիններին նկարագրում են դիտավորությամբ ամենամռայլ և աղավաղված գույնով։ Կատիլինան հռոմեական ապստամբ, անբավական գյուղացիական դեմոկրատիայի պարագլուխն էր։ Այն բնորոշումը, վոր տվել է Կիկերոնը իր ճառի մեջ Կատիլինայի շարժման՝ տիրող դասակարգերի իդեոլոգների սովորական մեթոդն է, վորով նրանք հեղափոխականներին անվանում են «կուլտուրայի» և «խաղաղության» թշնամի։ Իրապես ինքը Կիկերոնն էր իր ժամանակակիցների կողմից մեղադրվում, վորպես ժողովրդական անրավականության նպաստող ռեակցիոն գործիչ։

Ս. Նազարյանը հրատարակել է Կիկերոնի ճառը վոչ միայն առանց «կրիտիքական դիտողությունների», այլև հնարավոր է համարել իր կողմից ևս մի քանի եպիտետներ նվիրել Կատիլինային և նրան հետևող ապստամբ բանակին. «Սորա մեջ, ասում է Ս. Նազարյանը, ականավոր մարմնական և հոգեկան ձիրքերի հետ միավորված էր մի շատ վատթար և դատապարտելի բնավորություն։ Հանդգնություն, խորամանկություն, ագահություն, զեղխություն, շռայլություն և մի չափազանց ձգտողություն ցուցանելու յուր ցանկությունը կամքը մինչև այս՝ շատ անարժան ճանապարհներով, էյին նորա բնավորության արմատական հատկությունքը, վոր գիտեր նա զանազան հնարներով, զորօրինակ հաճոյակատարությամբ, առատաձեռնությամբ, հարմարվելով մյուսների բարք ու վարքին, խորհրդակցությամբ և աշխատասեր կյանքով ծածկել և թագուցանել»։ Ստ. Նազարյանցին հայտնի յեր անշուշտ Սալլյուստիոսի գրած պատմությունը։ Հակառակորդ լինելով Կատիլինայի շարժմանը, այդ պատմագիրն այնուամենայնիվ կարողացել է խուսափել այն տերմիններից, վոր գործածված են Կիկերոնի և Նազարյանցի մոտ։ Կիկերոնի հայկական յերկրպագուն դրանով արդեն ցույց տալիս էր, վոր պատմական անցյալը նրա համար լոկ մի առիթ է իր սեփական հասարակական-քաղաքական իդեոլոգիայի դրսևորման համար։

Ավելի ևս համոզվում ենք դրանում, յերբ ծանոթանում ենք Նազարյանցի այն հայացքների հետ, վոր արծարծել է նա ֆրանսիական առաջին հեղափոխության առթիվ։ Դա շատ ուշագրավ հոդված է թեկուզ հենց այն տեսակետից, վոր պարզորոշ կերպով ցուցադրում է, թե վորչափ սխալվում են մեր այն քննադատները, վորոնք Նազարյանցին անվանում են «հայկական լուսավորիչ» և 60-ական թվականների առաջադիմական շարժման ամենախոշոր ներկայացուցիչ։ Ընթերցողը չպետք է մոռանա այն,

վոր Նազարյանցի հոդվածը գրված է առաջին Ֆրանսիական հեղափոխության, այսինքն այն հեղափոխության մասին, վորի նկատմամբ Նազարյանցի ժամանակակից ռուսական ամենաչափավոր «առաջադիմականներն» անգամ ունեյին շատ վորոշ դրական կարծիք: Սակայն այլ է միանգամայն Նազարյանցի վերաբերմունքը: «...Թեպետ, կարդում ենք նրա մոտ, հանդիմանության արժանի յէ այն ձախող գործերը և սխալմունքը, վորով տերությունը պարտական եր կացուցիլ յուր անձը, դեռևս վոչինչ բան անդառնալի կորած չեր: Անկարգությունքը վերացնելու, տերությունը յուր նպատակին մոտեցնելու համար ամենևին հարկավոր չեր ռեվոլյուցիա: Բոլոր վերանորոգությունքը վորոնց կարոտ եր Ֆրանսիան, կարող եյին հառաջանալ Լուդովիկոս տասնևվեցերորդի ձեռքով ցույց տված ճանապարհովը: **Այս ազնիվ յեվ անբաղդ թագավորը առաջարկեց Ֆրանսիացոց, ճըշմարիտ, օրինապատշաճ ազատությունը:** Կարգը և մի կենդանի շարժողության զորությունների հետ միաբանվելով, կարող եյին հարմարվել ժամանակի պիտույքին մանկացուցանել հին ձևերը, ներկան անցածի հետ զուգավորել, ավելի լավ որեր ապագայումը հետզհետե պատրաստել և հասուցանել Ֆրանսիային բոլոր օգուտները մի ճշմարիտ միապետության և մի հարազատ փոխանորդական կառավարության»:*) Հոդվածը գրված է սկզբից մինչև վերջ այսպիսի լեզվով: «Հին կարգի» դեմ պայքարողներին Ս. Նազարյանցը անվանում է «քարուքանդ» անողներ: «Փոխանորդները ասում է նա, մոռացել եյին, վոր նոցա ընտրությունը, նոցա կազմակերպությունը, նոցա գոյությունը, նոցա իրավունքը և գործակատարությունը եր միայն Թագավորի «շնորհիվ»... և դրա համար ել, իրենց անբարիշտ գնացքը արդարացնելու համար հանդես բերեցին այն վարդապետությունը ժողովրդի գերագույն իշխանության մասին, վորպես թե սա եր միայնակ, հավիտենական, մաքուր աղբյուրը ամենայն օրինապատշաճ իշխանության. մի հիմնականոն, վոր յուր ահավոր անորոշությամբ վոչինչ սահման, վոչինչ հաստատուն ուղղություն, վոչինչ կանոն, վոչինչ չափ, վոչ խոստովանում է և վոչ ել կարող է խոստովանել. մի ամենակարող զորություն, վոր վոչինչ բանով չկապված, կարող է ամենայն ինչ ստեղծագործել և ամենայն ինչ կործանել, բայց վոչ կարող է և վոչ հարկավոր է համարում հաշիվ տալ կամ

*) «Հյուսիսափայլ» 1858. եջ 33.

յուրյան կամ թե մյուսներին յուր ավերման կամ թե շինության մասին. **մի կամապաշտական ամենակարողություն, վոր Կռոնոսի պես ծնուցանում է զավակներ, վոր հետո կլանե նրանց, մի ամենակարողություն, վոր բնակվում է մի վերացական (!!!) եակի մեջ, վոր ամենայն տեղ յեվ վոչինչ տեղ չկա, և ժողովրդի անունով կամայապես շինվում է»...***)

Այստեղ, ինչպես տեսնում ենք, արծարծվում է մի ուրույն հասարակական քաղաքական սիստեմ: Ամեն ինչ ասված է պարզ և վորոշ: Ստեփ. Նազարյանցը հանդես է գալիս, վորպես միապետության համոզված պաշտպան, վորպես ժողովրդապետության, դեմոկրատիայի և նույնիսկ բուրժուական դեմոկրատիայի թշնամի, վորովհետև 1789 թվ. հեղափոխությունը իր եությամբ, ինչպես հայտնի յէ, բուրժուական հեղափոխություն եր, իսկ «հին կարգի» դեմ մարտնչող Ֆրանսիական առաջին գործիչ-հեղափոխականները բուրժուական հեղափոխականներ և բուրժուական դեմոկրատներ եյին:

«Ազատություն» և «Ժան Ժակ Ռուսսոյին» նվիրված բանաստեղծությունների հեղինակ, Միք. Նալբանդյանը չեր կարող յերբեք հաշտվել Նազարյանի մոնարխիստական այդ աշխարհայեցողության հետ: Յեթե նա Նազարյանցի հետ միասին մինչև 1860 թվականը խուսափում եր գրականության մեջ հեղափոխական պարզորոշ վորևե հոդված գրել, այդ վոչ թե նրա համար, վոր համաձայն եր Նազարյանցի հասարակական-քաղաքական հայացքների հետ, այլ միմիայն ցենզուրական ծանր պայմանների պատճառով:

Սակայն ստիպված լինելով լռել կամ եզոպական լեզվով արտահայտել իր հայացքները, Նալբանդյանը վոչ միայն չի գրել իր ամբողջ գործունեյության ընթացքում դեմոկրատիայի դեմ ուղղված հոդվածներ, այլ և անուղղակի կերպով միշտ ել ցուցադրել է իր հեղափոխական համոզումները:

Բավական է միայն կարդալ նրա բանաստեղծությունները, նրա հոդվածները ու նկատողությունները: Այստեղ ցրված առանձին պարբերությունների ու նախադասությունները բոլորն ել խոսում են կամ «շահագործվողի», «աղքատի» մասին կամ ել «ազատության» և «գիտության», «լուսավորության» և «պայքարի» մասին: Նույնիսկ բոլոր այն պարագաներին, յերբ Նալ-

*) «Հյուսիսափայլ». եջ 35. 1858 թվ.

բանդյանը քննադատում հայերի «անհամերաշխությունը» և «կրոնական միաբանություն» հաստատել—նա նկատի ունի միշտ **պայքարողների միաբանությունը, «լուսավոր» գաղափարների շուրջը խմբված մարդկանց «միաբանությունը»**, այլ խոսքով—**«ազատական-ժողովրդական» բանակի ընդհանուր կազմակերպությունը**: Իզուր չէր այնքան միամիտ ակնածությամբ Նալբանդյանը նվիրում առանձին ձոն Ժան Ժակ Ռուսսոյին, ուր շեշտում է՝ վոր Ռուսսոն «ցնդեցրել է հազարամյա շղթաները ծանրացած»: Այդ բանաստեղծությունը Մ. Նալբանդյանը գրել է արտասահմանում, իր գործունեության յերկրորդ շրջանում: Սակայն նույնքան վորոշ է արտահայտել նա իր «լուսավորչական» ազատական գաղափարները Մխիթարյանների մասին գրված այն հոդվածում, վոր լույս է տեսել «Հյուսիսափայլ»-ի մեջ, գրեթե միաժամանակ Նազարյանցի վերոհիշյալ հոդվածի հետ: Յեվ ահա այդտեղ Նալբանդյանը, հակառակ Նազարյանցին, իր քննադատությունն ուղղում է բռնակալության դեմ: «Մարդկության տառապանքը, ասում է նա, այն ամենադաժան փորձերը, վոր հազարավոր տարիներով կատարել է նա, յուր կյանքը և գոյությունը յենթարկելով այս փորձություններին և այս բոլորը ստրկության և ծառայության մեջ—այս իրողությունների ճիշտ պատմությունը դրել է մեր առջև այն անխորտակելի ճշմարտությունը, թե **ստրկությունը մայր է ամենայն անբարոյականության**: Ավելորդ չէ մի փոքր պարզել այս յեզրակացությունը մեր ընթերցողների առաջև, վորով և ապացուցանել, թե ինչ կերպով կամ ինչ ճանապարհով ստրկությունը մայր է լինելու ամենայն անբարոյականության, վոր, յուր կողմից նույնպես, ծնող է և գործարան սոսկալի և սարսափելի հանցանքների: Մեր խոսքը այս կերպով հառաջ տանելով ասում ենք, թե մարդը վորոշվում է այլ կենդանածին անասուններից յուր բանականությամբ:

«Այս բոլոր նկատողությունքը հավանեցնում են մեզ, թե մարդը ստեղծված է ազատ լինելու համար. նորա ազատությունը հետևանք է նորա ֆիզիքական կատարյալ կազմության և աննյութ և իմացական կարողության: Ազատությունը կամ ազատության վերամբարձ ցանկությունը, վորով միայն մարդը, վորպես բանական եակ, գիտակցաբար ճանաչած է լինում յուր արժանավորությունը այլ արարածների մեջ, վառվում է, բորբոքվում է մանավանդ, յեթե մի սեղանապիղծ ձեռք կամ իրողություն փորձ փորձեր կապել այս ինքնուցս, հոգեկան ձգտողության և անձնազգացության բնական իրավունքը: Յեվ ճշմարիտ,

ով մեզանից բողոքելու չէր, յեթե մի բարբարոս և բռնակալ ձեռք կապեր մեզ թե նյութապես և թե բարոյապես, կամ արգելանքի տակ դներ մեր ազատությունը, մեր կամքը, վոր հետևանք եյին մեր հոգեկան և ֆիզիքական կատարելության: Բռնակալական հոգին, վոր պաշտպան է ստրկության, բռնակալության, վոր չկամի խոստովանել մարդկային հավասարությունը, անիրավաբար մոտենալով ուրիշի ստացվածին և իրավունքին, առաջին անգամ մերկացուց յերկաթը անզորի և անպաշտպանի պարանոցի վերա»...*):

Այդպիսի տողեր մենք չենք գտնի Ս. Նազարյանցի մոտ, վորն օրգանապես խորշում եր «ազատություն» խոսքից: Նրա վոճն ու ամբողջ տերմինոլոգիան էլ կրում է բարեմիտ քաղաքացու խիստ չափավոր և զգուշավոր հոգեբանության ինքնահատուկ կնիքը:

Ահա ինչու միանգամայն բնական պիտի համարել նաև Ս. Նազարյանցի առանձին սերը դեպի կրոնա-բարոյական թեմաները: Նրա բոլոր հոդվածներն էլ լեցուն են այդորինակ խորհրդածություններով: Բավական է միայն ուշադրությամբ թերթել թեկուզ հենց «Հայերի կոչումը մարդկության մեջ» («Հյուսիսափայլ» 1858 թ. № 1. եջ 1—14), «Քրիստոս հարյավ ի մեռելոց» («Հյուսիսափայլ», 1860, № 4, եջ 245-262) և «Ազգային մտածությունք» (Հյուսիսափայլ», 1864 № 3, 129—144) վերնագրով հոդվածները: Յես կանգ եմ առնում այդ հոդվածների վրա, միջանկյալ, վորովհետև այդտեղ ավելի ցայտուն կերպով է դուրս ցցված Նազարյանցի ակնարկած մտայնությունը:

«...Հավատը դեպի Աստված, նորա գոյությունը, նորա սերը, կարդում ենք այդ հոդվածներից մեկի մեջ, և նորա սիրո գործերը, անմիջաբար ծնուցանում է սերը առ նա, և սերը դեպի Աստված է բոլոր մարդկային գործողության ճշմարիտ հիմնական կանոնը... Բովանդակ մարդկային հոգին, թե նորա մտահայեցական շարժառիթը և թե գործնականը, կրոնական դաստիարակության մեջ կենսագործվում է և գտանում յուր հագուրդը...» Ապա, այդ տողերից հետո հիշելով Ներսես Շնորհալու և Լամբրոնացու անունները, Նազարյանցը առաջարկում է լայն հիմքերի վրա թե կրոնական կատեխիզիսի և թե կրոնական «յերանաշնորհ» հայրերի կողմից ավանդված «դավանաբանական հիմքերի» դասավանդու-

*) Միք. Նալբանդյան՝ Յերկեր. հատ. I, եջ 201:

թյունը։ Յեվ հենց այդ բացը լրացնելու համար էլ Նազարյանցը շտապել է տեղ տալ «Հյուսիսափայլ»-ի մեջ Ներսես Լամբրոնացու կրոնական ճառերի աշխարհաբար թարգմանությանը, այլ խոսքով, շտապել է ժողովրդականացման յենթարկել թե իր հիմնական գաղափարները կրոնական դաստիարակության մասին, թե հայկական միստիցիզմի ներկայացուցիչներից մեկի ավանդները հետագա սերունդներին։

Միք. Նալբանդյանը ևս—մինչև 1860 թվականը—տոգորված էր էկլեկտիկական վորոշ հայեցողությամբ կրոնի նշանակության մասին։ Ինչպես հայտնի յե, նա ևս կարևոր էր համարում «քրիստոնեական կրոնի» դասավանդությունը։ Դա—արդեն նրա էկլեկտիզմի յուրակերպ արտահայտություններից մեկն էր։ Բայց այդպես մտածելով ևս, չվստահանալով կտրել բոլոր կապերը կրոնի հետ, Նալբանդյանը մի բանում տարբերվում էր Նազարյանցից։ Նա հիշում էր կրոնի մասին միմիայն ի միջի այլոց, խիստ թռուցիկ կերպով, և հիմնական ու գլխավոր շեշտը դնում էր գիտության վրա։ ...«Մեր ասած ուսումնարանը, ասում էր նա, նման չե այդ ոբսկուրանտների ուսումնարանին. դոցա վարժապետքը, այն վողորմելի և թշվառ եակները աշխարհի յերեսին, արժանի չեյին ամենևին առանց պատրաստության վոտք կոխել մեր խընդրած ուսումնարանի շենքի վերա։ Այն ուսումնարանը, վոր կարող էր լուսավորության ավազան դառնալ մեր ազգի համար, պիտո յե ուսուցանէր յուր աշակերտներին, հայերեն, հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն, ընդհանուր աշխարհագրություն, հայոց պատմություն, ռուսաց պատմություն, հնախոսություն, որենսգիտություն, վաճառականության ուսմունքը, վաճառականության պատմություն, վիճակագրություն, մաթեմաթիկա, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր բնական պատմություն, գյուղական տնտեսություն, մեքենականություն, կրոնագիտություն, վայելչագրություն և նկարչություն։ Ահա այն ուսումնարանը, վորի լինելը ցանկալի և հոգով չափ փափագելի յեր մեր ամենևներիս սրտի համար*)։ Յեվ կարծես ավելի և վորոշ կերպով ընդգծելու համար իր հիմնական մտքի տարբերությունը Ներսես Լամբրոնացուն նորոգող Նազարյանցից, Նալբանդյանը մի ուրիշ տեղ ասում է՝ «...**Միստիկականությունը սեփականություն է հուսահատ մարդերի. շատ անգամ յերեվի մարդիկ անհաջող գտանվելով վորեվիցե նշանավոր գործերում, փոխումեն**

*) «Հյուսիսափայլ» 1858, էջ 167.

յուրյանց մտքերի տրամադրությունը ամենեվին անգիտակից, բնական ազդեցությամբ յեվ ընկնում են վորոնել յուրյանց ցավի ճարը վերացականության մեջ»*)։ Այդ խոսքերը Նալբանդյանը ասել է ֆրանսիական հայտնի բանաստեղծ Լամարտինի յերգերի հայերեն թարգմանության առիթիվ։ «. .Վոչ վոք, կարդում ենք Նալբանդյանի մոտ, չի տարակուսում, վոր պ. Լամարտինը մինն է արժանավոր բանաստեղծներից և թե նորա գործերը արժանացած են լուսավորյալ աշխարհի համակրությանը, բայց Լամարթինի գործերը, առաջին, հարկավոր բաները չեն մի ազգի համար, վորի մատենագրական չքավորությունը բարձրացած է մինչև ի Կոկյուտոս հայոց։ **Վորեվիցե անդաստիարակ ժողովուրդ միշտ անձնատուր է գտանվում միստիկականության, այսպես յեվ հայոց ազգի մեջ, վորքան մինչեվ այժմ հաջողել է մեզ քննել նորա հոգեբանական կողմերը, շատ առատացած է միստիկականությունը, վոր միշտ խափան յեվ արգելք է լինում ճշգրիտ լուսավորության, վերացնելով, կորզելով մտքերը այս աշխարհից, ուր պահանջվում է գործունեություն յեվ շարժողություն յեվ ձգելով մի գաղտնածածուկ վերացականության մեջ, ուր գաղարած եր ամենայն կյանք յեվ շարժողություն յեվ ուր խոստովանված կյանքը եր մի անշարժություն յեվ անզգայություն»...**։

Կարծում ենք, առանց բացատրությունների յել ընթերցողի համար պարզ պիտի լինի, թե վորքան մեծ խորխորատ կա Նազարյանցի և Նալբանդյանի հասարակական իմաստասիրության մեջ։ Յեվ հենց այդ տարբերությունից էլ բղխում էր, անշուշտ, յերկու հրապարակախոսների տարբեր վերաբերմունքը բոլոր մնացյալ խնդիրների, առանձնապես կենսական և այժմեյական պրոբլեմների նկատմամբ։

Իմ տեսությունը յերկարացավ, և դրա համար էլ յես կանգ կառնեմ միայն մի խնդրի վրա, վորպեսզի բնութագրվի ավելի վորոշ կերպով յերկու գործիչների պրակտիկան։

50—60-ական թվականների հիմնական պրոբլեմներից մեկն էր, ինչպես հայտնի յե, կանանց խնդիրը։ Արևելքում կինը կատարել է գրաստի դեր։ Նա փակված է յեղել հարեմի չորս պատերի մեջ, և կտրված լինելով միանգամայն հասարակական կյանքից, ստրկական ամենածանր վիճակ է ապրել։ Ֆրանսիական ճանապարհորդ Շարդենի հաղորդած տեղեկություններից հայտնի յե մեզ, վոր հայ կանանց դրությունը փաստորեն վոչնչով չի տար-

*) Նույնտեղ, 1859, էջ 733

բերվել արևելյան բոլոր կանանց վիճակից: Ցավ տվող «հասարակական կարծիքը» վոչ միայն չի ցանկացել վորևէ փոփոխության յենթարկել այդ դրությունը, այլ և համարել է հայ կանանց կացությունը միանգամայն օրինավոր և նորմալ: Մեզ հայտնի յէ արդեն, վոր նույնիսկ Խաչ. Աբովյանը կանգնած է յեղել այդ տեսակետի վրա, և քննադատության փոխարեն, ներբողական տողեր է նվիրել ասիականության հարազատ յերևույթներից մեկին: Դա արդեն Խաչ. Աբովյանի հակասություններից մեկն է, վոր նրա հոգեբանության ընդհանուր յերկվության հետ է կապված:

Սակայն Նազարյանցն էլ Աբովյանից ավելի հեռուն չի գնացել: Մոսկվայի պրոֆեսոր և Մոսկայում ապրող ու «արևմտյան գաղափարները» քարոզող Նազարյանցը նույնպես կանանց խնդրի առթիվ կանգնած է յեղել ժամանակակից «արևելցիների» իշխող տեսակետի վրա: Խոսելով ֆրանսիական կանանց և առանձնապես էմանսիպատորական շարժման մասին, Նազարյանցը այնքան հեռուն է գնում, որինակ, վոր նետում է հետևյալ խոսքերը «... կանանց վերադարձը դեպի գյունայեկոնը, գուցե թե շատ ոգտարան կլիներ հասարակությանը այսպիսի հանգամանքների մեջ և կազատեր նորան այն դատարկամիտ փքացած և ունայնասեր արարածների վտանգավոր արածներից, վոր ձեռնտու եյին միայն ընկերական վիճակի ամենակոպիտ նյութականությանը և յուրյանց կարող զենքով պատերազմում եյին ընդդեմ կյանքի վերածնելությանը, վոր լինելու չեր բնության, հոգու և ճշմարտության ձեռքով» («Ֆրանսիական հասարակությունը և կանայք») *):

Բարձյալ, այդպիսի տողեր անհնարին է գտնել Նալբանդյանի մոտ, վորը որգանապես չեր կարող համաձայնվել Նազարյանցի յուրորինակ սկեպտիցիզմի և հարեմի նորաձև պաշտպանության հետ: Ասում ենք «հարեմի», վորովհետև հունական «գյունայեկոնը», ինչպես հայտնի յէ, միևնույն արևելյան հարեմն եր իրեն հատուկ բոլոր ատրիբուտներով:

Նալբանդյանը վոչ միայն համաձայն չեր ընկերոն այդ հայացողության հետ, այլ և ջերմապես պաշտպանում եր կանանց ազատագրման գաղափարը: Աբովյանի և Նազարյանցի տեսակետներին նա հակադրել է միևնույն «Հյուսիսափայլ»-ի եջերում, իր առանձին տեսակետը:

*) «Հյուսիսափայլ», 1859, եջ 324.

Նրա «Մեռելահարցուկ» վիպակի հերոսներից մեկն այսպես է ձևակերպում Նալբանդյանի խոհերը. «... Ցավալի յե մեր ազգի դրությունը ընդհանրապես, բայց մասնավոր արտասուքի արժանի յեն հայ կանայքը: Խեղճերը բոլորովին անկիրթ և անդաստիարակ, համարյա թե ապրում են միմիայն բուսական և շնչական կյանքով, իմացականի մասին գաղափար էլ չունեն: Կարդալ, գրել ընդհանրապես չգիտեն, շատ չնչին բացառությամբ: Յուրյանց տանից կամ յուրյանց բնակված քաղաքից դուրս, աշխարհ կա-չկա, այդ մասին չունեն էլ վոչինչ տեղեկություն: Այսպես լինելով նոցա դրությունը, ինչ զարմանք, վոր մի տող կամ մի կանոնավոր յերաժշտություն տեղ չգտան նոցա սրտումը, ինչ զարմանք, յեթե սոսն աչքով նայեն այսպիսի բանի վրա, առանց վորևիցե գաղափար ունենալու ազատական արվեստների մասին»*):

Մենք գիտավորությամբ կանգ առանք այսքան յերկար Նազարյանցի և Նալբանդյանի խոսքերի վրա: Չենք կարծում, վոր ընթերցողը բողոքի այն յերկար ցիտատների համար, վոր բերվում են յերկու հրապարակախոսների հին, այսոր մոռացված, հոդվածներից: Մենք այլ կերպ չեյինք կարող վարվել: Նազարյանցի մասին ստեղծված լեգենդան այնքան ուժեղ է, վոր մինչև այժմ էլ մեր գրականագետների շարքերում տիրականորեն իշխում է այն տեսակետը, վորի հատուկ բնորոշումը տրվել է Ն. Աղբալյանի կողմից: Վերածնության ամենացայտուն, առաջավոր և խոշոր ներկայացուցիչը համարվում է այժմ էլ Նազարյանցը: Միք. Նալբանդյանը իր հերթին համարվել է յերկրորդական, վոչ-ինքնուրույն, վոչ-անկախ դեմք: Նա համարվել է Նազարյանցի հետևող, Նազարյանցի խոսքերը ու խոհերը կրկնող ու կազմակերպող մի «տաղանդավոր ժուռնալիստ»: Եվ վոչ ավելին:

Ահա ինչու հին այդ ավանդությունը ցրելու համար անհրաժեշտ եր կանգ առնել անմիջական աղբյուրների, Նազարյանցի և Նալբանդյանի իսկական գրությունների վրա: Մենք կարող եյինք ավելի շատ որինակներ և նմուշներ բերել: Բայց, կարծում ենք, իրական պատկերը պարզ է և այն ցիտատներից, վոր բերվեցին: Մի բան համենայն դեպս ավելի քան վորոշ կերպով ցուցադրում են վերոհիշյալ մեջբերումները: Այդ այն է, վոր **յերկու հրապարակախոսները տարբեր տեսակետներ են ունեցել**

*) «Հյուսիսափայլ». 1859. եջ 691.

մի շարք հիմնական խնդիրների նկատմամբ նույնիսկ մինչեվ 1862 թ., որ նրանք տարբեր խառնվածք ունենալով՝ միաժամանակ զանազան մոտեցումով են լուսաբանել ժամանակակից իրականության յերեվույթները:

Այդ կետը կարելի չե հաստատված համարել: Նույնչափ կարելի չե ապացուցված համարել և այն, որ Նալբանդյանի «կըրքոտությունը» կապված ե յեղել սերտորեն նրա ընդհանուր մարտական աշխարհայեցողության հետ. «Լուսավորության յեվ մարդկային ազատության թշնամիք, գրել ե նա դեռ 1859-ին, դարբնի գործարանք են բացում անտանելի ծանր շղթաներ պատրաստելու, յեվ յերբ կարելի յե, բոլորովին խեղդելու մարդկային բանականության որինավոր ազատ ընթացքը... Այսպիսի բաներ պատահում են դարու սկզբից մինչեվ նորա վերջը: Շատ անգամ լսվում են ոդի մեջ հարստահարված մարդերի վողբերը յեվ հառաչանքը, նույն միջոցին յեվ ոդը հնչեցնում ե հարստահարող բռնակալների ուրախական բացականչությունը»...

Յեվ ահա հենց այստեղ ե պետք վորոնել յերկու «լուսավորիչների» տարաձայնությունների պատճառը:

«Նազարյանցը, ասում ե Ա. Ջամինյանը, սենյակի մարդ եր»: Նա վոչ միայն «սենյակի» մարդ եր, կավելացնենք մենք, այլ և — տիրող կարգերի հետ հաշտվող «հին կարգի», բռնակալական պայմաններին համակերպող, և հին ավատական կալվածատիրական կարգերի հասարակական նորմաները կարկատող, շլտկող և մեղմացնող-բարեմիտ մի բուրժուա: Հակառակ դրան Նալբանդյանը չեր կարողանում և չեր ցանկանում հաշտվել «բռնակալության» հետ, նա լսում եր «հարստահարված մարդերի հառաչանքը», «բռնակալների բացականչությունը», նա տեսնում եր «ազատությունը» խեղդող «ծանր շղթաները», և համակված «յերրորդ դասի» յերիտասարդ իդեոլոգի մարտական հայեցողությամբ, կոչ եր անում շարունակել «պայքարը» առանց կոմպրոմիսների, շեշտել «յերրորդ դասի» նոր մտավորականության «հիմնական սկզբունքները» և պայքարել «մինչև վերջ» այդ «հիմնական» սկզբունքների հաղթանակի համար:

Յեվ հենց դրա համար ել այդ անզուսպ, կռվող և միշտ մարտնչող Նալբանդյանը անըմբռնելի և անընդունելի յեր հայ «առաջավոր հասարակության» համար: Նազարյանը ավելի հասկանալի և հարազատ եր: Իր «խոհեմ» ու լոյալ աշխարհայեցողությամբ նա ավելի յեր համապատասխանում հայ վաճառականական ինտելլիգենցիայի հասարակական-քաղաքական բաղձանքներին: Յեվ Նալբանդյանին ել հայ «առաջավոր մտավորականությունը» հասկանում և «ընդունում» եր այնքան և այն չափով միայն, վորքան նա ոգնում եր Նազարյանցին, կրկնում եր Նազարյանական գաղափարախոսությունը, ձայնակցում եր նրան: Դրանումն ել կայանում եր Նալբանդյանի վողբերգականությունը: Իր հոգու մեջ նա ուներ վորոշ յերկվություն: Կապված լինելով վորոշ չափով առաջ շարժվող «յերրորդ դասի» մտավորականության հետ, նա զգում և գիտակցում եր, վոր հայ իրականության մեջ այդ մտավորականության իդեոլոգիան հակասական ե և յերկուն,— հակասական այն չափով, վորչափի հակասական եր և հայ վաճառականության - առևտրական բուրժուազիայի կացությունը:

Մեզ հայտնի յե արդեն այն, վոր «մինչև 1860 թվականը Նալբանդյանը Նազարյանցի հետ միասին բուրժուազիային համարում եր առաջ մղիչ ուժ, վոր այդպես խորհելով նա ևս հենվում եր «լուսամիտ» վաճառականության վրա և պաշտպանում եր «ֆաբրիկագործության» զարգացումը:

Մեզ հայտնի յե նաև այն, վոր շնորհիվ ռուս միապետական կառավարության կողմից ցուցադրված հովանավորությանը, հայ բուրժուազիան լոյալ եր և «բարեմիտ» ցարիզմի նկատմամբ: Նա իր վողջ պայքարը ուղղում եր հայ հոգեվորականության, կրոնականության, կղերականության դեմ: Պայքարելով կրոնականության դեմ, նա չեր բացասում կրոնի և յեկեղեցու անհրաժեշտությունը, այլ ձգտում եր «ազգի» գերագույն ղեկավարությունը յենթարկել հոգևորականներին: Յելնելով այդ մեկնակետից, հայ առաջին լուսավորիչները «աշխարհաբարի» համար մղված իրենց պայքարն ել քննում եյին, վորպես հոգևորականության գաղափարական դիրքերի թուլացման և հայ կյանքի ու մշակույթի աշխարհականացման զորավոր զենքերից մեկը:

Յեվ Միք. Նալբանդյանը այդ պայքարի ընթացքում Նազարյանցի հետ եր: Այդ չափով նա ընթանում եր հաճախ նրա հետ հավասար քայլերով. առաջադրում եր «ազգի» (այսինքն՝ հոգևորականության դեմ պայքարող աշխարհականների) կազմակերպման, ազգի հավաքման և ամփոփման, նրա «վերաքըննության և աշխարհականացման իդեալները:

Բայց այդ պայքարի ընթացքում Նալբանդյանը իր մի վոտքով կապված եր պայքարողների ժողովրդական շարքերի, վարի խավերի, մանր բուրժուազիայի հետ:

Վերածնական շարժման հիմնական և գլխավոր ազդակը հայ ամփոփվող բուրժուազիան էր և բուրժուական յերիտասարդ մըտավորականությունը: Սակայն շարժման ղեկավար լինելով, այդ մտավորականությունը խոսում էր «ազգի» անունից և հենվում էր բոլոր այն տարրերի վրա, վորոնք իրենց դրությամբ արդեն շահագրգռված եյին հայ կյանքի աշխարհականացման և ժողովրդականացման մեջ:

Յեվ դրա համար էլ վորքան ատելի չէր «հիմար» ամբոխը, «ռամիկ» ժողովուրդը Նազարյանցի համար, այնուամենայնիվ նա ևս հենց իր հենակետի ուժեղացման համար դիմում էր հաճախ այդ ժողովրդական շարքերին: Նրա կրթական-բարեգործական ապագա ընկերության մեջ հենց դրա համար էլ «մեծատունների» կողքին վորոշ տեղ էր հատկացվում և վոչ-մեծատուններին, վորոնք ավելի չնչին անդամավճարներ տալով այս կամ այն չափով պիտի մասնակցեյին ընկերության գործին: **Բայց Նազարյանցը այդ ասում յեվ անում էր ի միջի այլոց-հակառակ իր իսկական համոզումներին: Չափազանց ուժեղ թելերով էր կապված նա հայ վաճառականության բարձր շերտերի հետ, հայկական այն ժամանակվա «նոտաբլների»—ֆինանսիստների յեվ բարձր չինովնիկների հետ:**

Այդպես չէր Նալբանդյանը:

Նրա հենարանի ավելի ուժեղ մասը կազմում էր արհեստավորությունը, մանր վաճառականները—մանր բուրժուազիան:

Դրանից էլ բղխում էր նրա «արմատականությունը», «կըրքոտությունը», ավելի հաստատուն գիծը և ավելի «մարտական վոգին—ընդդեմ բոլոր «յեգիպտական կուռքերի» և «բռնակալության»:

Դրանով էր բացատրվում նաև նրա այն սկեպտիցիզմը, վոր հաճախ այս կամ այն կերպով ցուցադրում էր Նազարյանցի նըկատմամբ և վորի հետևանքներից մեկն է լինում Նալբանդյանի հետագա ավելի բացահայտ պայքարը «հայրենի քուրմերի» դեմ:

Նալբանդյանի հասարակական հայեցողությունը և նրա գաղափարների եվոլյուցիան անհնարին է հասկանալ առանց շեշտված մոմենտների հաշվառման: Ավելի ևս անհրաժեշտ է անել այդ նրա համար, վոր Նալբանդյանի «մարտականությունը» ըստեղծվել է վոչ թե պատահական բնույթ կրող հանգամանքների, Նալբանդյանի «չար կամքի» կամ ուրիշ «չար» մարդկանց «վարակիչ» ազդեցության հետևանքով, այլ շնորհիվ առանձնահատուկ

այն միջավայրի ազդեցության, վորի պայմանների ներքո սնվել և կոփվել է յերիտասարդ Նալբանդյանի կամքն ու աշխարհայացքը:

Անցնենք այժմ Նալբանդյանի հասարակական դեմքի ճըշգրիտ մեկնաբանության համար կարևորագույն արժեք ունեցող այդ պայքարների քննությանը:

III

Ծնվել է Նալբանդյանը, ինչպես հայտնի յե, Նոր-Նախիջևանում, 1829 թվի նոյեմբերի 2-ին և իր թե մանկության, թե պատանեկության տարիներն անց է կացրել այդ քաղաքում: Այդ շրջանում էլ սկսում է նա իր հասարակական գործունեյությունը: Նրա ծնողները—չքավոր քաղաքացիներ եյին, վորոնք հնարավորություն չունեյին հոգալ իրենց վորդու դաստիարակության մասին: Սկզբում նա «ուսում» էր ստանում մի տիրացուի մոտ, ապա անցնում է իր ժամանակ հայտնի Տեր-Գաբրիել քահ. Պատկանյանի մոտ: 1846-ին Ներսես կաթողիկոսի կարգադրությամբ նա սկսում է հաճախել Յեկենյանի վարժարանը, ուր դասավանդում եյին աստվածաբանություն, քերականություն, տրամաբանություն և նման առարկաներ: Սքոլաստիքական այդ գիտության դեմ բողոքի ձայն են բարձրացնում Յեկենյան վարժարանի մի քանի ուսանողներ, վորոնցից Նալբանդյանը հոգևոր կառավարությանը ուղղված իր հայտարարության մեջ խարազանում է Յեկենյանի տգիտությունը: Սերնո-Սոլովևիչի սենատական գործի մեջ զետեղված Նալբանդյանի հայտարարությունից հայտնի յե մեզ այն, վոր նա պարապել և աշխատել է տանը, և վոչինչ չի ստացել այդ դպրոցներից, կամ վորևե ուրիշ ուսուցչի ղեկավարությունից: Համալսարանական քննություններին ևս նա պատրաստվել է տանը:

Արդեն այդ շրջանում Նալբանդյանը շնորհիվ իր տաղանդի և ընդունակության դառնում է քաղաքային համայնքի ամենաակտիվ անդամներից մեկը: Հայտնի յե որ. այն, վոր հոգևոր կառավարության հասարակ գրագրի պաշտոն վարելով՝ Նալբանդյանը շփվում էր համայնքի բոլոր շերտերի և առանձնապես չքավոր և միջին տարրերի հետ: Հաճախ ինքը՝ Նալբանդյանն էր իր կողմից գրում այս կամ այն խնդրատվի խնդիրը, և հենվելով գոյություն ունեցող օրենքների ու կանոնների վրա, օգնության էր գալիս թույլերին: Վորպես հոգևոր կառավարության բոլոր

գործերին, և մասնավորապես «կուլիսյան» կյանքին լավատեղյակ անհատ, նա շատ շուտ կարողանում է ծանոթանալ այն խմբակցությունների և հոսանքների հետ, վորոնք այդ ժամանակ պայքարում էին համայնական խնդիրների շուրջը։ Յեվ շատ շուտ Նալբանդյանը կարողանում է վորոշել իր դիրքը։ Նա անցնում է «աղաների», քաղաքի «նոտաբլների», հարուստների դեմ պայքարող «ժողովրդական» բանակի կողմը։

Նոր-Նախիջևանն այդ ժամանակ ինքնավար մի քաղաք էր, վոր ուներ իր առանձին վարչական մարմինները։

Վորպես առևտրականների և արհեստավորների քաղաք Նոր-Նախիջևանը այդ ժամանակ նման էր 15—16-րդ դարի իտալական և յեվրոպական այն քաղաքներին, ուր սոցիալական պայքարը կրում էր շատ պրիմիտիվ և տեղական բնույթ։ «Նախիջևանը յուր գյուղերով, կարդում ենք Նախիջևանի անցյալին ծանոթ մի պատմագրի մոտ, կարճ միջոցում դառնում է մի ովազիս լայնատարած և անշեն անապատի մեջ։ Հայ գյուղացիք շուտով ձեռք են բերում լուրջ, գործ հասկացող և հմուտ յերկրագործների հռչակ. նոցա արդյունաբերած ցորենը և մյուս հացաբույսերը անուն են ստանում և ավելի թանգ են գնահատվում, քան թե բոլոր շրջակայքինը։ Հայ քաղաքացիք հմուտ և ճարպիկ վաճառականներ են դառնում։ Նոքա մի կողմից առևտրական հարաբերություն են կապում հարավային Ռուսաստանի վաճառաշահ կենտրոնների հետ, մյուս կողմից սկսում են յերթևեկել Կոստանդնապոլիս, Անատոլիա և Սիրիա։ Նոքա են լինում հարավային Ռուսաստանի տոնավաճառների ամենալավ հաճախորդները, նոքա յեն լինում բրդի, մորթու և կաշվի ամենամեծ գնողները և վաճառողները, նոքա յեն լինում Սիբիրի յուղի բերողները, Պոլսի տաճկական ապրանքների և արևելյան վաճառքների Դոնի և Ազովի ծովի կողմերում տարածողները և վերջապես նոքա յեն լինում առաջինը, վոր առևտրական հարաբերություն են սկսում Յեվրոպայի հետ, ցորեն վաճառելու կենտրոնական գրասենյակ են հաստատում Տագրանրոգում։ Յեվ պետք է նկատել, վոր այդ դեպքում հայերը լինում են վոչ միայն հասարակ վաճառականներ, միջնորդներ գնողի և արդյունաբերողի մեջ, այլ և հաճախակի նոքա հանդիսանում են իբրև արդյունաբերողներ»..*)։

Նոր-Նախիջևանցիք այնքան ուժեղանում են, վոր սկսում

*) Յե. Շահազիզ՝ Պատմական պատկերներ. եջ 182—184.

են «Դոնի շրջանում ածխահանքեր մշակել», ապա «ցորենի շտեմարաններ են հիմնում», մեծ քանակությամբ բուրդ, կաշի և մորթի արտահանում արտասահման։ Միևնույն պատմագրի ասելով, Նոր-Նախիջևանը դառել էր այդ ժամանակ «առևտրի» խոշոր կենտրոն, և քաղաքացիները Ռուսաստանի և ուրիշ տերությունների զինվորական բանակների համար ձիերի յերամակներ էին գնում ղալմուղի, թաթարի և նողայի անապատներից և տանում էին Լեհաստան. վոչխարի, յեզերի և կովերի հոտեր էին գնում, վոչ միայն մսի համար, այլև բրդի, կաշվի, մորթու, ճարպի և յուղի համար»...*)։

Այդպիսի պայմաններում Նոր-Նախիջևանում չէր կարող առաջ չգալ վորոշ շերտավորում։

Առևտրական կապիտալիզմի այդ զարգացումը բնականաբար պիտի ստեղծեր նաև խոշոր վաճառականություն, արհեստավորություն, գյուղացիություն և մանր-առևտրականների կողքին։

Արդեն 17 դարի վերջին նկատելի յե դառնում յուրորինակ շերտավորման այդ պրոցեսը։ Դրա հետևանքը լինում է այն, վոր, շնորհիվ իրենց տնտեսական ուժի, խոշոր վաճառականներն իրենց ձեռք են առնում քաղաքային համայնքի կառավարության գործերը։

Քաղաքի «պատվելիների», «մեծատունների», «ջոջերի» հանդեպ կանգնած էին մանր առևտրականներն և արհեստավորությունը։

Առաջին բանակը, շնորհիվ իր տնտեսական և քաղաքական հզորության, ավելի ուժեղ էր և դրա համար էլ կարողանում էր ոգտագործել գոյություն ունեցող վարչական մարմիններն իր ոգտին։

Դա—«չաղերի» բանակն էր, վորին հովանավորում էին թե կառավարությունը, թե կաթողիկոսը։ Ոգտվելով այդ հովանավորությունից, այդ բանակն աշխատում էր իր դիկտատուրային յենթարկել համայնքի բոլոր անդամներին։ Յեվ ահա, այսպիսի պարագաներում խիստ մեծ կարևորություն էր ստանում, թե ում կարգադրությամբ են տնորինվում համայնական-հասարակական և յեկեղեցական-դպրոցական գումարները։ «Աղաներն» աշխատում էին այդ իրավունքն էլ իրենց ձեռքին պահել։

Յերկրորդ բանակին հարում էին, ինչպես ասացի, նաև գյուղացիները։ Դրանց մասին միևնույն պատմագիրը հաղորդում է, վոր «սկզբնական շրջանում դրանք քաղաքացվոց հետ միասին

*) Յե. Շահազիզ, «Պատմական պատկերներ» եջ 182—184.

կազմում եին մի հայկական շրջան և մի հասարակություն. Նոքա յել կառավարության գործերի մեջ նույնքան մասն ունեին, վորքան և քաղաքացիք, նոքա յել մասնակցում եին հասարակաց ժողովներին, նոքա յել իրավունքի տեր եին և ձայն ունեին։ Սակայն ժամանակի ընթացքում քաղաքացիք ամեն բան յուրյանց ձեռքն են հավաքում և սկսում են բռնաբարել գյուղացվոց իրավունքները, ըստ ցանկության հրավիրելով կամ չհրավիրելով նոցա ժողովներին, վորից և գյուղերի ու քաղաքների մեջ մի տեսակ սառնություն ե ընկնում...։ Սառնությունը հետզհետե խոր արմատ բռնելով՝ փոխվում ե ատելության ու թշնամության։ Հետագա հանգամանքները չեն նպաստում այդ գժտության ու ատելության պակասելուն կամ նվազելուն. ընդհակառակն առաջ են գալիս նոր, զուտ շինական և քաղաքային շահեր, մեկըմեկու իրավունքների բռնաբարության դեպքեր, վորոնք կամաց-կամաց գործն այն տեղն են հասցնում, վոր հասարակությունը պառակտվում ե յերկու թշնամական բանակի՝ գյուղացվոց և քաղաքացվոց։ Քաղաքի աղայական դասակարգը, վոր հետագա ժամանակներում քաղաքի հայ հասարակության կառավարության բոլոր գործերն յուր ձեռքն ե ձգում, բացի նորանից, վոր հեռացնում ե գյուղացիներին կառավարության գործերից, այլ և սկսում ե նոցա վերա նայել արհամարհական աչքով ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ հայ սեպուհներն ու նախարարները նայելիս են յեղել յուրյանց կալվածներում ապրող գյուղացիների վերա» ..*)։ Այդ տողերը գրել ե նույնպես Յե. Շահազիզը, վորի գրքերի լավ կողմն այն ե, վոր նրանց մեջ բերվում են բազմաթիվ ուշագրավ և փաստական տվյալներ։ Հակառակ լինելով նույնիսկ Նալբանդյանին և մանր-բուրժուական հոսանքների կողմից կազմակերպած սոցիալական պայքարին, նա հաճախ բերում ե կողմնակի այնպիսի տվյալներ, վորոնք հակասում են նրա հիմնական դրույթներին։

Այսպես որին. սկզբից արդեն նա իր բոլոր ուսումնասիրությունների մեջ ձգտում ե նկարագրել «հայ հասարակությունը» վորպես միացյալ և միասնական մարմին, իսկ կաթողիկոսի և աղաների դեմ պայքարողներին ել դուրս ե բերում բացասական գույներով, վորպես «խռովարարների» և «կրքոտ» ու «առանձին ատելությամբ» ղեկավարվող «խառնակիչների»...։ Բայց դրա

*) Յե. Շահազիզ «Պատմական պատկերներ» եջ 227—228.

հետ միասին, միևնույն իր գրքերի մեջ, կանգ առնելով անցյալի բնորոշ եջերի մանրակրկիտ նկարագրության վրա, նա՝ հաճախ հակառակ իր ուրույն հայեցողությանը՝ ստիպված ե լինում հիշատակել այնպիսի փաստեր, վորոնք ինքնին արդեն բավական են հայ նացիոնալիզմի տենդենցիոզ տեսությունների ջախջախման համար։

Մենք արդեն վերոհիշյալ նկարագրությունից կարող ենք յեզրակացնել միանգամայն վորոշ կերպով, վոր Նոր-Նախիջևանի համայնքը պառակտված ե յեղել յերկու հիմնական մասերի, յեվ վոր այդ մասերից յուրաքանչյուրն ունեցել ե իր ուրույն մոտեցումը հասարակական-տնտեսական խնդիրներին։ Ջեմստվոների խնդրի քննության ժամանակ գյուղացիք անտարբեր են մնում և միանում են «դրացի» զեմստվոյին։ Ընդհանուր զինվորության նկատմամբ գյուղացիք պաշտպանում են Նոր-Նախիջևանցիների հակառակ այն տեսակետը, վոր իրենք պիտի միանան Ռոստովի զինվորագրության շրջանին, և հիմնավորում են այդ տեսակետը նրանով, «վոր քաղաքացիք զանազան միջոցներով աշխատում են ազատել յուրյանց վորդիներին զինվորությունից և իրենք ստիպված են լինում նոցա տեղը զինվոր գնալ»։*) Ավելի ևս մեծ ե լինում անտագոնիզմը հողային ֆոնդի ոգտագործման և կարգավորման նկատմամբ։

Ինչպես տեսնում ենք Նոր-Նախիջևանի իրական պատկերն այնքան ել միորինակ չե, ինչպես այդ աշխատում են ապացուցել հայկական նացիոնալիզմի տրադիցիոն տեսաբանները։

Այդպիսի միջավայրում սոցիալական հակամարտությունը և պայքարն անխուսափելի յեր իհարկե։ Յեվ յեթե այդ պայքարի իսկական պատկերն մինչև այժմ պարզ չի յեղել մեզ համար, այդ միմիայն նրա համար, վոր նացիոնալիստական պատմագրությունն աշխատել ե ծածկել իսկական փաստերն և աղավաղված գույնով նկարել անցյալի եջերը։

Ահա ինչու և մինչև այսոր ել մեզ ավելի ծանոթ են. Լազարյանները, հայ կաթողիկոսները և արքեպիսկոպոսները, և միաժամանակ միանգամայն անհայտ են սոցիալական ներհակ ուժերի մնացյալ ղեկավարները։ Մեծ դժվարությամբ միայն, հենվելով պատահական ակնարկների և տվյալների վրա, մենք կարողանում ենք մոտենալ կարևոր նշանակություն ունեցող այդ խնդրի անաչառ լուսաբանությանը։

*) Նույնտեղ եջ 228.

Նոր-Նախիջևանի պատմությունից. օրինակ, հայտնի չէ մեզ, վոր «աղայական» բանակի կողմից իր ժամանակ, դեռ մինչև Նալբանդյանը, հալածանքի չեն յենթարկվել մի շարք ուրիշ գործիչներ ևս: Դրանցից յերկուսի վիճակն յեղել է առանձնապես ուշագրավ:

Քաղաքի «աղաների» և «կաթողիկոսի» ձեռներեցությամբ դրանք հանձնվել են ցարական կառավարությանը և յենթարկվել խստագույն—այն օրերի համար—պատժի:

Յերկուսի մասին բավական մանրամասն տեղեկություններ է հաղորդում արդեն հիշված Յե. Շահազիզը, վորը ինարկե—վոչինչ չի խնայում նրանց կատարած գործունեության քննադատության և դատափետման համար: Յես չեմ կարող այստեղ բերել բոլոր այդ մանրամասնությունները և յենթադրությունները ակնարկած ըմբոստների «վայրենության», «կոպտության», չարամտության կամ կրքոտության մասին: Մեզ համար ներկա պարագայում սուբյեկտիվ այդ վորակումները շատ քիչ արժեք ունեն: Կարևորն այն է, թե վորպիսի խնդիրների շուրջ են ընդհարվել «աղաներն» ու «ըմբոստները»:

Յեվ ահա, այդպես մոտենալով խնդրին, մենք տեղեկանում ենք, վոր դեռ 18-րդ դարի վերջին, Հովսեփ Արղությանի առաջնորդության ժամանակ, Նոր-Նախիջևանի յերկու քաղաքացիներ, «փոքր աստիճանավոր» Աբրամովը և մի վոմն Մանուկ Դերեջանյան կազմակերպում են առանձին կուսակցություն «աղաների» և «Արղությանի դեմ»: Դրանք ամբաստանագիր են գրում վերջինի դեմ և հայտարարում են, վոր **Արղությանը սեփականացրել է յեկեղեցիներում հավաքված փողերը**, վոր «**ցանկանալով անձնիշխան լինել՝ աշխատել է վոչնչացնել քաղաքային դումը յեվ նոր կանոնադրությունը** և համոզել է այդպես անել և մյուս հայերին, վոմանց սպառնալով, վոմանց էլ ազնվականություն տալ խոստանալով», և վոր «**տերության տված քաղաքային կանոնադրության տեղ նա կազմել ու տպագրել է յուր սեփական կանոնները, քաղաքի կառավարության համար 24 հոգաբարձու կարգելով...**»:

Հարցը, ինչպես տեսնում ենք, խիստ պարզ է: Աբրամովն ու Դերեջանյանը յերկու հիմնական խնդրի համար են պայքարել: Մի կողմից Արղությանի պաշտպանած 24 հոգաբարձությունների «տիրակալության փոխարեն» պահանջել են քաղաքային ինքնավարության «անխախտ կիրառումը», իսկ մյուս կողմից էլ

ցանկացել են թուլացնել աղաների տիրակալության «նյութական բազան»:

Պայքարն ընթանում է խիստ սուր կերպով: Աղաները ձգտում են ապացուցել, վոր «ամբաստանագրի» հեղինակներն անհանգիստ բնավորություն ունեցող մարդիկ են: Նրանց այդ հաջողվում է անել: Ցարական կառավարությունն էլ օգնության է գալիս աղաների կուսակցությանը: Դերեջանյանը դատի յե յենթարկվում: Գործը հասնում է սենատին, և բավական յերկար ձգձգվում է, վորովհետև Դերեջանյանի կողմից հայտարարվում է, վոր «դատարանը 26 հազարի արժողությամբ ընծաներ կաշառք է ստացել արքազանից և քաղաքագլխից»...: Յեվ ահա ֆինալը լինում է այն, վոր Յեկատերինոսլավի նահանգական կառավարության կարգադրությամբ Ռոստովի վոստիկանապետը գալիս է Նախիջևան, «**ձերբակալում է Դերեջանյանին յեվ հրապարակով շղթայելով յեվ մտրակահար անելով, ուղարկում է Սիբիրի Ներչինսկ քաղաքը**»: «Շատ ծանր, ավելացնում է իր կողմից Արղությանին մեծարող պատմագիրը, տպավորություն է անում այդ պատիժն ու դատապարտությունը ժողովրդի վերա»...:

Ընդդիմադիրների կուսակցությունը դրանից հետո թուլանում է, վորովհետև «ժողովրդի սիրտը սաստիկ ահ է ընկնում», բոլորեքյան թողնում, անցնում են առաջնորդի կողմը»: ...Բայց և այնպես, չնայած դրան, **Դերեջանյանը «նահատակ» է հռչակվում ժողովրդի մեջ, յեվ կոչվում է իր կրած ծանր պատժից հետո—«Յերանելի Մանուկ»**: Հերթը մնում էր Աբրամովին, վորը իր ընկերակցին հասցրած ծանր հարվածից հետո պետք է, ինարկե, պարտվեր: «...Մեծամեծներն» էլ իրենց կողմից միջամտում են և խնդրում կաթողիկոսից ներել Աբրամովին: Սկզբում Արղությանը չի համաձայնվում, բայց հետո «մեծամեծների խընդիրքը գետնին ձգած չլինելու» և իր «հոգևորական պարտականությունը կատարած լինելու համար» համաձայնվում է, բայց—«պայման է դնում, վոր այդ ներողություն խնդրելու գործողությունը կատարվի հանդիսավոր կերպով»: Յեվ ահա «նշանակած օրը» վորոշյալ ժամին ժողովրդի բազմությունը խռնվում է յեկեղեցին, յեկեղեցու գավիթը, բակը և հրապարակը. յեկեղեցում շքեղ գահի վրա բազմում է կաթողիկոսը, իսկ Աբրամովը սպիտակ շապիկ հագած, չոքեչոք գնալով, հրապարակով մտնում է յեկեղեցի, համբուրում է կաթողիկոսի աջը և ներողություն է խնդրում»*):

*) Նույնտեղ, եջ 197.

Սակայն պայքարը դրանից հետո չի ընդհատվում։ Ըստ յերևույթին Արրամովի վարկն ու դիրքը, վորպես հալածականի, նորից բարձրանում է։ Արրամովը նորից «**սկսում է գործ գնել յուր առաջվա չարությունները, վորով յեվ նորից վրդովում է ժողովրդի խաղաղությունը**»։ Կաթողիկոսը և աղաներն աշխատում են նրան ևս աքսորել Նախիջևանից։ Բայց այս անգամ այդ չի հաջողվում։ Իսկ ժողովրդական լայն շարքերի վերաբերմունքի բնորոշման համար բավական է ասել միայն այն, վոր ամենազոր Արղությանի և աղաների կողմից հալածված Արրամովը «մեռնելով թաղվել է Ս. Նիկողայոս յեկեղեցու բակում»...։ Դրանով արդեն ընդդիմադրական բանակը վորոշում էր իր դիրքն Արղությանի հանդեպ։

Թե վորքան ուժեղ է յեղել յերկու բանակների պայքարը, այդ յերևում նրանից, վոր Արղությանը, չբավականանալով «քաղաքային ինքնավարության» իրավունքների սահմանափակման համար հրատարակված իր հայտնի առաջին «Դաշնագրության» կանոններով—Դերեջանյանի շարժման ազդեցության ներքո, նոր խմբագրության է յենթարկում իր «Դաշնագրությունը» և ավելի ևս մեծ իրավունքներ է տալիս «հոգաբարձու-աղաներին»։

Նոր կանոնագրությունը նախ և առաջ 24 հոգաբարձուների փոխարեն կազմում է 36 հոգաբարձություններից բաղկացած խորհուրդ, վորին և տալիս է համայնական գործերի վողջ կառավարությունը։

Իսկ բոլոր մյուս հավաքույթները և ժողովները, վորոնք նախկին կանոնագրության համաձայն թույլատրվում եյին, հայտարարում են անթույլատրելի և ապօրինի։ Շատ բնորոշ են այդ կողմից նոր «Դաշնագրության» հինգերորդ և վեցերորդ կետերը։ Արժե կանգ առնել այդ կետերի վրա։

5. «Արգելելով գհասարակութեան ի հանդարտ ժողովոց և ի հավաքմանե, զի մի ազեղութիւն ինչե բեկումն անվան պատահեսցի ի նոցանե այսմ քաղաքի վորպես ուսուցեն նոցա չարքն, վորո վասն կրեցիք դուք հույժ, զի ի խառնիճաղանճ ամբոխից բարի ինչ վոչ հառաջանա և որենք կայսերական՝ զնոսա արգելուն։ Այլ յեթե զայս հասարակութեան ոգուտ և հարկավորութեան խորհուրդ ինչ հարկավորեցի բավական են այս քիչ յերեսուն և վեց անձինքս՝ վորք յերդմամբ ընտրյալք են ի հոգաբարձութիւն հասարակութեան։

6. «Արտաքս այսմ վոր ինչ ժողով լինիցի ի խանութս և ի

դաչֆախանայս և ի հրապարակս, ուր արգելյալ են օրենոք, հրամայել ի Մագիստրատեն Պոլիցին բռնել զխռովիչսն և հրապարակավ պատժել և յեթե ստորճանավոր վոք իցե ի մեջ նոցա, արտաքսել ի հասարակութենե, վորպես հատյալ անդամ և գրել ի գուբեռնական կառավարութեան պատժել գչարաճճին այն վորպես զպղտորիչ տերունի ժողովրդյանս այսմիկ»։

Արղությանը առանձին ներածության մեջ, վոր կցված է կանոնագրության յերկրորդ խմբագրությանը, պարզորոշ կերպով շեշտել է նոր կանոնների հրատարակության հիմնական մոտիվները։ «Ծանուցումն լիցի, ասում է նա, Նախիջևանա սրտադյուր և սիրելի ժողովրդյանս իմո, զի սահմանեմ զսույն կանոն հոգաբարձության վոր է քաղաքական տնտեսություն։ Վոչ իբրև պակասավորք սույնս բարեխնամատարական տնտեսության, այլ զ 1795 ամի կանոնեցելույն իմոյ նվիրեմ զվերանորոգություն և զհաստատություն, զոր ի սակավիկ ինչ հեռանալն իմ ի ձենջ ըստ կայսերական բարձրագույն հրամանի, հարյան ի մեջ ձեր արք չարք և պղտորիչք, վորք զպարզամիտս պատրյալ, առ հորսալո զազահություն և զփառս վասն ինքյանց, թյուրեցին զձեզ ի հուզից կանոնաց և ի բարի սահմանադրությանց, վորք սահմանեցյալք եյին մենք ըստ ձերդ հաճության և խնդրո։ Իսկ այժմ այն ամենայն կանոնք վոչ յերեխին ի մեջ ձեր զի չարքն անհետս են արարյալ զբարի սերմունսն մեր, զի զորոմս ապականիչս ընդարձակ սերմանել մարթասցին ի սիրտս պարզամիտ ժողովրդյանս իմո։»

Ինչպես կարող է տեսնել ընթերցողն, ինքը՝ Արղությանն այդտեղ շատ պարզ և վորոշ կերպով շեշտում է, վոր իր նպատակն է յեղել վերջ տալ «ապականիչների» գործունեյության և ազատել «պարզամիտ ժողովրդին» զանազան «պղտորիչների» վարակիչ ազդեցությունից։

Նրան այդ չի աջողվում։ Կարճ ժամանակ միայն լռում են ըմբոստները և «աղաների» հակառակորդները։ Սակայն անցնում է մի քանի ժամանակ և նորից սրվում են ներհակությունները և կազմակերպվում նոր շարժում «աղայական» բանակի դեմ։ Այս անգամ շարժման գլուխն է կանգնում Գաբրիել քահանա Պատկանյանը, վոր լինում է ավելի հմուտ և հեռատես։

Շատ հետաքրքրական է, ի միջի այլոց, այդ գործիչի վիվիճակը։

Նրա մասին մեր գրականության և մշակույթի պատմագիր-

ները սովորաբար պահպանում են շատ խորհրդավոր լռություն, կամ ել բավականանում են լոկ մի քանի ընդհանուր խոսքերով։ Յեվ այդ, չնայած նույնիսկ նրան, վոր իր ժամանակ Գաբր. Պատկանյանը կատարել ե խոշոր հասարակական դեր և միաժամանակ յեղել ե իր պատմաշրջանի ամենատաղանդավոր գործիչներից մեկը։ Մի բան համենայն դեպս կարելի յե հաստատել ամենայն վճռականությամբ։ Այդ այն ե, վոր Պատկանյանը յեղել ե ավելի խոշոր և բեղմնավոր գործիչ, քան Ալամդարյանը, վորի մասին հայ գրականության պատմագիրներն այսոր ել խոսում են արտասովոր ակնածանքով։

Պատկանյանցը իր ժամանակ կրթված մարդկանցից մեկն ե յեղել։ Մեզ հայտնի յե համենայն դեպս այն, վոր նա յեղել ե դպրոցների վարիչ Նոր-Նախիջևանում և Թիֆլիսում, վոր նրա դպրոցում ուսանել են բավական մեծ թվով աշակերտներ, և վոր թե Նոր-Նախիջևանում, և թե այդ քաղաքից դուրս նա մեծ համարում ե ունեցել։ Բացի հասարակական և մանկավարժական գործունեյությունից, Պատկանյանը հայտնի յե յեղել նաև վորպես գրականագետ։ Նրա գրական գործերը տոգորված են կեղծ-կլասիկական վոգով և նվիրված են «ազգային-քրիստոնեյական» գաղափարների արծարծմանը։ Այդ կողմից, պետք ե ասել, Պատկանյանն ամենևին չի տարբերվել ժամանակակից հեղինակներից։ Նա շարունակել ե ապրել հին իդեոլոգիայի ապրումներով և իր գրականական-հրապարակախոսական գործունեյության ընթացքում ել կրկնել ե կեղծ-կլասսիկական ռոմանտիկայով համակված հեղինակներին։

Պատկանյանի դպրոցում ե ուսանել առաջին տարիներին, ինչպես հայտնի յե, և Միքայել Նալբանդյանը, վորը՝ չնայած իր պաշտպանած տրամագծորեն ներհակ իդեոլոգիային, բավական սերտ կերպով կապված ե յեղել իր ուսուցչի հետ։ «Պատկանյանցն ել, հաղորդում ե Յե. Շահազիզը, փոխադարձաբար սիրում եր Նալբանդյանին և համարում եր նրան արդյունարար զավակ Նախիջևանի և ամբողջ հայոց ազգին, վորի շահերին նա անձնատուր եր, բայց չեր հավանում նորա հեղափոխական գործունեյության, վորով նա վտանգի մեջ եր ձգել վոչ միայն իրան, այլ և յուր մեկենաս Հայրապետյանցին։ Նորա գործունեյությունը Պատկանյանցի աչքին վոչ ազգասիրական և վոչ հայրենասիրական եր յերևում. նա կարծում եր, վոր նա շեղվել ե ուղիղ ճանա-

պարհից և ցավալի վախճան ե գտել, կամենալով գլխով բանալ ճանապարհ ապառաժի մեջ*)։

Այդ բնորոշումը մենք կարող ենք միանգամայն ճիշտ համարել, յեթե հաշվի առնենք Պատկանյանի քաղաքական իդեոլոգիայի չափավորությունը։ Յեվ ահա, հենց դրա համար ել շատ հետաքրքրական դեմք ե հայ հասարակության պատմաբանի համար Պատկանյանի հասարակական գործունեյության քննությունը։

Վորքան ել այդ տարորինակ չե, Պատկանյանը ևս, լինելով լեգալ մեթոդների և ազգային-կրոնական պատգամների հետևող, միաժամանակ հանդիսացել ե իր հայրենի քաղաքի մանր բուրժուազիայի իդեոլոգը։ Այլ խոսքով, նա շարունակել ե Դերեջանյանի և Աբրամովի գործը։ Լինելով «աղայական» բանակի հակառակորդ՝ նա միևնույն ժամանակ կանգնած ե յեղել լեգալ հողի վրա, և իր բոլոր յելույթները հիմնավորել ե հին ազգային-կրոնական իդեոլոգիայի սկզբունքներով։ Այդ յերկվությունը և հակասությունը Պատկանյանը համարում եր միանգամայն բնական, վորովհետև խորապես համոզված եր նրանում, վոր կկարողանա հաղթահարել «անարդար» աղաներին «իսկական» քրիստոնեյական պատվիրանների զորությամբ։

Դրանով ել բացատրվում եր, անշուշտ, նրա ինքնահատուկ վերաբերմունքը դեպի Նալբանդյանի ընտրած ուղին։

Բայց այդպես լինելով ել, Պատկանյանը, ինչպես ասացի, արտահայտել ե Նոր-Նախիջևանի մանր բուրժուական դեմոկրատիայի տարերային անբավականությունն և բողոքը «հայրենի մեծատունների» դեմ։ Յեվ Խալիբյանի դեմ մղած նրա պայքարը սոցիալական այդ անբավականության արձագանքներից մեկն ե հանդիսացել։

Խալիբյանը—Նոր-Նախիջևանի հարուստ «մեծատուններից» մեկն ե յեղել։ Յեթե հենվենք նույնիսկ այն տեղեկությունների վրա, վոր հաղորդում ե նրա կոմպատրիոտներից մեկը, մենք կարող կլինենք ստանալ վորոշ նյութ նրա սոցիալական վարքագծի անաչառ բնորոշման համար։ «Առևտրական գործերով ստեպ-ստեպ Հարությունը (Խալիբյան) գնում ե Մոսկով և Նիժնի տոնավաճառը և հաջող գործառնությամբ շուտով բավականին կարողություն ե ձեռք բերում։ **Նրա հարստության աղբյուրներից մեկն էլ լինում է տոնավաճառում յուր համաքաղաքացիների**

*) Յե. Շահազիզ—Տեր-Գաբրիել Պատկանյանց, Թիֆլիս 1910, եջ 114։

մուրհակները շատ էժան գնով ձեռք բերել յեվ ամբողջությամբ խեղդելով՝ յետ ստանալը, *վորով շատ վատ որինակ է լինում և ուրիշներին: Բայց ամենագլխավորը, վոր նպաստում է նրան հետագա ժամանակներում մեծ հարստություն դիզելու — լինում է այն, վոր* **նա կարողանում է հաջող առեվտրական ընկերություն կազմել, վորի միջոցով յեվ սկսում է մեծ քանակությամբ արդար յուղ բերել Սիբիրի կողմից յեվ շահաբեր ու արդյունավետ վաստակով ներքին նահանգներում վաճառել յեվ օտար յերկիրներ յեվս արտահանել»:** *Այդ պատկերն այնքան վորոշ է, վոր դրան մենք կարող ենք վոչինչ չավելացնել:*

Լինելով խոշոր վաճառական, միևնույն Խալիբյանը հայտնի յեր Նոր-Նախիջևանում նաև, վորպես սպեկուլյացիայով զբաղվող առևտրական: Սովի ժամանակ այդ Խալիբյանն է լինում մեկը նրանցից, վորոնք պահում են ցորենը իրենց ամբարներում՝ հացի գինը բարձրացնելու համար: Յեվ ահա Պատկանյանն է լինում առաջինը, վոր հացի թանգության առաջն առնելու համար ձեռնարկում է վորոշ միջոցներ: «Պատկանյանը Լուսավորչի յեկեղեցու Հովհաննես աղայի ձեռքով հանում է յեկեղեցու փողը և գործ է դնում, վորով հացի թանգության առաջն է առնում...: Այդ սովի խնդիրը շատ աղմուկի առարկա յէ լինում քաղաքում: Վոմանք ասում են, թե Խալիբյանք են այդ արհեստականորեն ստեղծել, վոր աղքատ ժողովուրդը սովամահ լինի, կոտորվի...»:

Պատկանյանցի վարկը այդ դեպքից հետո ավելի ևս բարձրանում է, «շատերը սկսում են ապավինել նորա աղոթքին», և «1834-ի ծննդյան ու զատկին հարյուրավոր տներ հրավիրում են նորան, վոր նա գա և իրենց տներ օրհնե»...):*

Յերկու պայքարող բանակների բախման յերկրորդ առիթը լինում է «գլխահարկի» խնդիրը: Քաղաքային համայնքի արհեստավորությունը և չքավոր տարրերն անբավական եյին այդ հարկից և ձգտում եյին վորևէ կերպ միջնորդություն հարուցել պետության առաջ «գլխահարկի» վերացման համար: «Աղաները», հակառակ դրան, կողմնակից եյին հիշյալ հարկի գոյությանը: «1840 թ., կարդում ենք Յե. Շահազիզի մոտ, լուր է հասնում թե Կոմս Միքայել Վորոնցովը դուրս է յեկել շրջագայելու յուր իշխանության յենթարկված Նոր-Ռուսիո յերկրի քաղաքները: Մեր Գաբրիելը մտածում է օգտվել այդ հանգամանքից և յերբ

*) Յե. Շահազիզ, նույնտեղ եջ 56—57.

կոմսը հասնի Նախիջևան, խնդրե նորան, վոր նա միջնորդե կայսեր առաջ վերացնելու գլխահարկը, վոր դրվել եր հայերի վրա 1836-ին և հակառակ եր արտոնագրին: Քաղաքի մեծամեծները թեև բողոք եյին ուղարկել այդ գլխահարկի առթիվ և արտոնագիրը կեղծելու համար ուր հարկն է, բայց այդ միայն առերես եր, նոքա ուրախ եյին, վոր դրանով պիտի կարողանային բոլորովին ստրկացնել ժողովուրդը, ինքյանք նոցա տեղ հատուցանելով և իրանց ծառայեցնելով նոցա, և արդեն իսկ հավաքել եյին գլխահարկի գումարը 36, 37, 38, 39 և 40 թվերի համար և պահել քաղաքի գանձարանում, վոր բողոքի բացասական պատասխան ստացվելու դեպքում իսկույն և յեթ հատուցանեն արքունի գանձարանին»:)*

Յերկու կողմերն էլ պատրաստվում են իրենց «ծրագիրն» առաջ տանելու համար: Խալիբյանն իր կուսակիցների հետ միասին աշխատում են ամեն կերպ խանգարել Պատկանյանին, իսկ վերջինն էլ իր հերթին կազմակերպում է ժողովրդական շարքերը կոմսին հանդիպելու և խնդրագիրը գլխահարկի վերացման մասին ներկայացնելու համար: Յես կանգ չեմ առնում այդ դիպվածի առանձին խիստ բնորոշ մանրամասնությունների վրա: Պատկանյանցը իր «ծրագիրը» կարողանում է հաջողացնել: Յեվ ինարկե այդ հանգամանքը նորից բարձրացնում է նրա վարկը: Բողոքի մեծամասնությունը կազմող մանր արհեստավորությունը և մանր վաճառականությունն առանց այն էլ անբավական եր Խալիբյանից, վորը «հավաքում եր քաղաքացիներից զանազան պատրվակներով փող»: «...Դրամը մտնում եր Դումը, իսկ այնտեղից ծախսվում եր քաղաքագլխի ցանկությամբ, առանց հսկողության, առանց հաշվետվության. ով կը համարձակվեր բերան բաց անել և հաշիվ պահանջել»: Միակ մարդը, վոր այդ անում եր, և անում եր ավելի քան կտրուկ կերպով, դարձյալ Պատկանյանն եր, վոր բնականաբար դառնում եր սոցիալական ուրույն շարժման ղեկավարը:

Այդ բոլորից հետո միանգամայն տարորինակ և տենդենցիոզ պիտի համարվեն նրանց կարծիքները, վորոնք փոխարեն հենվելու իրական փաստերի վրա և ճշտությամբ լուսաբանելու պայքարող յերկու բանակների ընդհարման իսկական դրդապատճառները, դիմում են միակողմանի և սուտ հերյուրանքների օգ-

*) Յե. Շահազիզ. Նույնտեղ եջ. 74.

նությանը: «Վոմանք, ասում է Նոր-Նախիջևանի մի ուրիշ պատմագիրը, այնպես են ներկայացնում, վոր Տեր-Գաբրիելը միմիայն արդարության ու ճշմարտության համար է հալածվել Նախիջևանի մեջ թե հոգևոր իշխանության և թե աղաների կողմից, սակայն ուղղամտությունը պահանջում է ասել, վոր Տ. Գաբրիելը սաստիկ **ամբարտավան**, խառնակիչ և միանգամայն **արծաթասեր** անձն է յեղել, և այս հատկությունների պատճառով իրեն դեմ գրգռել է թե՛ ընկերակից քահանաներին և թե աղաներին»: Այս տողերը գրել է Ա. Ջամինյանը Նալբանդյանի Յերկասիրություններին կցված իր ներածական հոդվածի մեջ, այլ խոսքով գրեթե կես դար անց այն դեպքերից, վորի մասին խոսում է:

Ինքը՝ Ա. Ջամինյանն էլ, ինչպես և Պ. Յե. Շահազիզը չեն ժխտում ամենևին այն, վոր մինչև իր կյանքի վերջը Պատկանյանը անհաշտ պայքար է մղել «աղաների» դեմ: Քիչ առաջ բերված պարբերության մեջ էլ ասվում է միմիայն այն, վոր Գ. Պատկանյանը մեղադրվել է գլխավորապես աղաների կողմից, վորպես սաստիկ ամբարտավան և խառնակիչ անձնավորություն:

Ինչ վերաբերվում է այն մեղադրանքին, վոր նա միաժամանակ յեղել է «արծաթասեր», դա էլ առանձին արժեք չի կարող ունենալ ներկա պարագայում, քանի վոր այդ փաստը բերում են մի կողմից Պատկանյանի կոնկուրենտ քահանաները, և ապա մյուս կողմից էլ այն «աղաները», վորոնք այնքան էլ անբիծ չեյին հենց իրենք:

Հիմնականը նրանումն էր, ի հարկե, վոր Գ. Պատկանյանը «հակաղայական» հոսանքի շահերի ու հայացքների արտահայտիչը լինելով, իր պայքարն առաջ էր տանում «սաստիկ անբարտավան» կերպով: Իսկ այդ արդեն հակառակորդների կողմից պիտի համարվեր «խառնակչություն»:

Այդ բանը շատ լավ է հայտնի հենց իրեն Ջամինյանին էլ: Դրա համար էլ փոխարեն Նախիջևանի «մեծ աղաների» խոսքերը կրկնելու, նա պարտավոր էր պարզել յերկու հոսանքների սոցիալական տենդենցները: Յեվ ահա, յերբ հաշվի յենք առնում վերը բերված բոլոր փաստերն ու տվյալները, յերբ քննում ենք Նախիջևանի քաղաքային համայնքի «**չաղերի**» և «**ճիհարճերի**» ընդհարումների առանձին էջերը, ստիպված ենք լինում արձանագրել նորից այն, վոր Պատկանյանցի «ամբարտավանությունը» ինչպես նաև հետագայում Միքայել Նալբանդյանի «ամբարտավանությունը» կայացել է միմիայն նրանում, վոր յերկու այդ գոր-

ծիչներն էլ դատափետման են յենթարկել «աղաներին» և կազմակերպել են՝ ժամանակին հատուկ պրիմիտիվ և միամիտ մեթոդներով՝ դեմոկրատական տարրերի անբավականությունը:

Գաբրիել Պատկանյանցը անհավասար այդ պայքարի ընթացքում ջախջախվել է և յենթարկվել կատարյալ մեկուսացման:

Խալիբյանը և խալիբյանականները չեյին կարող անդորր սրտով վերաբերվել իրենց ուժեղ հակառակորդի «ամբարտավանությանը»: Չեյին կարող անել այդ նաև այն պատճառով, վոր Պատկանյանի ազդեցությունը հետզհետե ուժեղանում էր, իսկ խալիբյանականների դրությունը թուլանում: Յեվ ահա, դրա համար էլ վորոշում է հանվում—գլխատման յենթարկել ընդդիմադրական շարժումը Պատկանյանցի անվանարկման միջոցով:

...Աղայական կուսակցությունը այս անգամ էլ միացած Ներսես կաթողիկոսի հետ, և հենվելով ցարական վոստիկանության կողմից հասցրած օգնության վրա, դիմում է պրովոկացիայի և, հարուցելով մի շարք մեղադրանքներ, դատական պատասխանատվության է յենթարկում Պատկանյանցին: Մեղադրական ամբաստանագրի կետերից մեկը լինում է ի միջի այլոց այն մասին, իբր թե Պատկանյանցը, կաշառելով մի քանի մարդկանց, ցանկացել է սպանել Խալիբյանին: Իր «ազերսագրի» մեջ Պատկանյանցը բողոքելով ամբաստանության դեմ կտրուկ կերպով հայտարարում է, վոր Խալիբյանի ձեռներեցությամբ սկսած նոր գործը պրովակացիոն մի ձեռնարկություն է: Պատկանյանցը, ինքը չի ժխտում այն, վոր իր ժամանակ, ցանկանալով հիմնավորված բողոքագիր ներկայացնել Խալիբյանի հակաժողովրդական գործունեյության մասին, բանակցություններ է վարել Նախիջևանի քաղաքացի Իսմայիլյանի միջոցով վոմն Կարչևսկու հետ: Վերջինը իբր թե համաձայնվել է կազմել բողոքագիրը: Սակայն գործը ձգձգվել է: Յեվ յերբ Իսմայիլյանը նորից դրամ է պահանջել Կարչևսկուն հանձնելու համար, Պատկանյանը ցանկացել է տեսնել այդ մարդկանց, վորոնք պիտի անմիջապես տեսնեյին Չերկասկում բնակվող Կարչևսկուն և նրան հանձնեյին դրամը: Դրա համար էլ, յերբ գնում է Կարչևսկու պահանջած 50 ռուբլին հանձնելու վերջինի ծանոթներին և անմիջապես հաղորդելու իր բողոքի բովանդակությունը ընկնում է դարանի մեջ: Բանից դուրս է գալիս, վոր Իսմայիլյանը, լինելով Խալիբյանի մարդկանցից, հաղորդել է այդ մասին Խալիբյանին և քրեական հանցավոր Թերզյանի հետ միասին ցանկացել է մատնել Պատկան-

յանցին։ Լսենք այժմ իրեն՝ Պատկանյանցին.—«Ի 9 օգոստոսի, պատմում է նա, Իսմայիլցովն երբ զհինգերորդ տոմսակն, յորում Քարջևսկին գրէր առ Իսմայիլցովն առնուլ յինէն զ74 մանէթ և հատուցանել առ նա. ես չկամենալով զայրացուցանել զՔարջևսկին, յանձն կալայ տալ 50 մանէթ՝ միայն կամեցա տեսանել զայրն, զառաքեալն ի Քարջևսկու։ Ի 10-ն օգոստոսի յետ հասարակ աւուր եկն առ իս Իսմայիլցովն և ասաց. եթէ կամիս տեսանել զառաքեալն ի Քարջևսկու և անձամբ անձին տալ նմա զդրամն, պարտ ես այս երեկոյի ի 9 ժամ ելանել ի ծայր քաղաքի ի տափարակավայր յալմաղայից Փանոսի կոչեցեալ զոր ասի անցանել առաքելն Քարջևսկոյ զճանապարհ ի Ռոստովէ ի Չերքեզկի։ Ի 9 ժամ ես գնացի առ Իսմայիլցովն ուր գտի և զԹերզովն և նրանք հաւատացուցին զիս թե առաքեալն ի Քարջևսկու տակաւին չի դարձեր ի Ռոստովէ, այլ դարձցի իբր յետ միո ժամի, և ես ասացի նոցա, թե ուր գտանիցին զիս և գնացի։ Ի տաս ժամու եկն Իսմայիլցովն և գնացինք ի միասին, յորժամ հասանք ի տափարակավայր հանդէպ յալմաղայից, վոչ գտաւ ինձ առաքեալն Քարջևսկու։ Իսմայիլցովն ցուցեալ, ինձ ի հեռուստ զայն ինչ և զայն ինչ ասէ, ահա անդ է կամ ահա աստ և այսպիս հեռացուց զիս ի քաղքէն մինչև հասաք ի տեղի ինչ, ուր ի զարմանս իմ գտաք երեք հեծեալս ընդ Թերզովին։ Իսմայիլցովն և Թերզովն ցուցանել ինձ զմի ի հեծելոցն ասե, սա է առաքեալն Քարջևսկու, և սոքա երկոքին ուղեկիցքն նորա են. ես իսկոյն հանեալ զ50 մանէթ ետու ի ձեռս նորանց և ասացի. թող սա այժմ շատասցի այսու և յորժամ ավարտեսցէ զիմ աղերսագիրն, յայնժամ հատուցեմ նմա այլևս 150 մանէթ. և զայս ասացեալ յորժամ նորա ի այլ իմ գտանալի տոմս, մին ի հեծելոց, վոր էր ծպտեալ ժանդարմ, կալեալ իմն սկսեալ վորոտագին կանչել կարաուլ։ Առ այս աղաղակ Թաթափեցան դարանամուտ Հարութիւն Խալիպեանն, դատավոր Մասլիննովն, սեկրետար և ատրեաշչի Սեմենովն և ժանդարմաց գլխապետ Բարոն Քլեյստ և այլք բազումք ծպտեալ ժանդարմք ուժգին կալեալ ի հեղարձիլ զիս աղաղակեն թե սա կաշառակեր զմեզ, ուղէ սրիկայս սպանանել զԽալիպյանն։ Ամենեքին շուրջ պատեալ զիս և հայհոյէին, Թշնամանէին, սպառնային... Տարան զիս ի մագիստրատ. ուր կարգէին զատեան ահաւոր ի 11 ժամ գիշերո առին յինէն ցուցմունք կարի հուժ կարճ, **չգրեցին եվ վոչ տասներորդ իմոց պատասխանեաց, ուր տեր Մարտիրոսն կոչեաց զիս Յու-**

դա...*)։ Յես բերում եմ 1852 թվ. սեպտեմբեր 25-ին գրված այդ բնորոշ բողոքագրի շատ փոքրիկ մասը։

Թե այդ բողոքագիրը, և թե միևնույն «գործի» մեջ ամփոփված Խալիբյանի գրությունները նորից ապացուցանում են այն, վոր Խալիպյանը ինքն է կազմակերպել ամբողջ այդ պրովոկացիոն ձեռնարկությունը, վորպեսզի կարողանա այդ ձևով հասարակական բեմից վտարել իր ուժեղ հակառակորդին։

Դատն այս անգամ էլ ձգձգվում է բավական յերկար, և քննվում է մի քանի ինստանցիաներում։ Մեղադրական բոլոր կետերն էլ յերկու դատական ինստանցիաները համարում են անհիմն և միևնույն սենատը նորից քննության առնելով Պատկանյանցի գործը՝ մեղադրում է նրան Խալիբյանի սպանության համար ձեռնարկած փորձի մեջ։ Սենատը անբասիր ճանաչելով Պատկանյանցին մյուս յերեք մեղադրական կետերով նորա վերա բարդած հանցանքներից. «սպանության փորձ անելու գործում» հանցավոր է համարում Պատկանյանցին և դատապարտում է նորան. աքսորանքի Սիբիրի կողմերը, նախապես զրկելով նորան ամեն իրավունքից։ «Գործը այդպես չի վերջանում։ Հետագայում «Կայսերական Խորհրդարանը» նոր վորոշում է հանում վորով **) «ի նկատի առնելով, նախ, վոր Տեր-Գաբրիել քահանայի խոստովանությունը յեղել է արտաքո դատարանի, յերկրորդ, վոր արձանագրություն կազմելուն մասնակցել են ուրիշ անձերի թվում և հայկական մագիստրատի ատրյաշչի Սեմյոնովը, առաջին դատավոր Զեյթունյանը, վորոնց գործողությունների վրա, ներքին գործոց նախարարի ասելով, Խալիբն ազդեցություն է ունեցել, և յերրորդ, վոր ակտերը կազմելու համար սահմանված ձևերի—**պակասում է մեղադրյալի ստորագրությունը**—մյուս կողմից էլ Պատկանյանցի գերեզմանոց գնալը Իսմայիլցյանի հետ Կարչևսկու ուղարկած մարդուն տեսնելու համար, վերջնականապես հերքված չէ, քանի վոր քննություն կատարելու ժամանակ ի նկատի առնված չէ մի ամենակարևոր հանգամանք. Իսմայիլցյանին խուզարկելը, վորին մեղադրյալը ասելով, Կարչևսկին գրել է տոմսակներ փող ստանալու մասին, վորովհետև յեթե գտնվեր, գոնե մի տոմսակ, արդեն իսկ գործը բոլորովին կփոխվեր. 1859 թվի

*) «Գործ №39 (1852 թ.) վեհատան ծայրագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց յաղագս ապօրինի ներգործութեանց Գաբրիել քահանայի Պատկանեանի և այլն»։

**) Յե. Շահազիզ՝—Գաբ. Քահ. Պատկանյանց.

դեկտեմբեր 7-ին Իշխան Օրլովի նախագահությամբ կայացած նիստում, վճռվում է փոխել ծերակույտի վճիռը, և քահանային թողնել խիստ կասկածանքի տակ՝ չենթարկելով նրան յուր հոգևոր իշխանության հսկողությանը։ Յեվ այս գլխավորապես այն հիման վրա, վոր մեջ բերված փաստերը մեղադրյալի դեմ բավարար չեյին, նամանավանդ, վոր օրենքը պահանջում է, վոր վորքան ծանր լինի մեղադրանքը, նույնքան և զորավոր պիտի լինեն մեղադրյալի հանցավորության ապացույցները»։

Յես դիտավորությամբ այդքան յերկար կանգ եմ առնում վողջ այդ պատմության վրա, վորը ուշագրավ է հենց այն տեսակետից, վոր ակներև պարզությամբ ապացուցում է Պատկանյանցի կատարյալ անմեղությունը իրեն վերագրած հանցագործության մեջ։ Մի րոպե միայն յեթե նկատի առնենք այն, վոր այդ բոլորը կատարվել է այն օրերին՝ յերբ ամենուրեք տիրում եր ամենավայրագ բռնակալություն, ցարական կնուտի և «չերրորդ բաժանմունքի», ամենազոր աղաների և հայկական կղերական ինկվիզիցիայի միահեծան իշխանությունը, այդ պարագային միանգամայն հասկանալի կլինի այն, վոր միմիայն փաստերի և մեղադրական վորևե հիմունքների կատարյալ բացակայությունը կարող եր դրդել ցարական դատարանին այնքան արտասովոր վճիռ հանել «խառնակիչ» Պատկանյանցի մասին։ Մյուս կողմից այդ եպիզոդը ինքնին արդեն ցուցադրում է այն, թե վորպիսի ծանր պայմանների մեջ եր գտնվում հայ հրապարակախոսների և գործիչների կյանքը 40—60-ական թվականներին, վորպիսի զազրելի միջոցների եյին դիմում հայկական «մեծատուները» և կղերականները «ազգի» «ղեկավար» կաթողիկոսի հետ միասին հասարակական մտքի ու ազատ խոսքի ճնշման և ջախջախման համար։ Յեվ դրա համար ավելի արտասովոր փայլ է ստանում այն մի քանի անհատ գործիչների յելույթը, վորոնք կարողանում եյին մռայլ անցյալի այնքան դժնդակ պայմաններում իրենց բողոքի խոսքն ասել «հայրենի» բռնակալներին։

Իր հերթին ցարական կառավարության տարբեր մարմինները, յելնելով իրենց շահերից, մերթ պայքարում եյին հասարակական այդ շարժումների ղեկավարների դեմ, մերթ աշխատում եյին վորևե կերպ հենարան դարձնել վերջիններին իրենց ընդհանուր քաղաքականության համար։ Խնդիրը նրանումն է, վոր, պաշտպանելով «մեծատուններին» և «կաթողիկոսին», միևնույն ցարիզմը մերթ ընդ մերթ կռվում եր վերջինի դեմ այն չափով,

վորչափ հանձին հայ կաթողիկոսության նկատում եր հասարակական-քաղաքական խոշոր մի ուժ, վորը կարող եր խանգարել ցարիզմի ընդհանուր գործառնություններն Անդրկովկասում։

Միանման ներհակություններ նկատում ենք նաև առաջնորդի ու կաթողիկոսի հարաբերությունների մեջ։ Առաջնորդներին հաճախ դուր չեր գալիս կաթողիկոսի միջամտությունը թեմական գործերի մեջ, և դրա համար ել շատ անգամ առաջնորդները, սեպարատ քաղաքականություն վարելով, հակառակ դիրք եյին բռնում կաթողիկոսի հանդեպ։

Այդ ներհակությունները նկատի առնելով, Նոր-Նախիջևանի քաղաքական համայնքի յերկու բանակներից ամեն մեկն աշխատում եր վորևե կերպ օգտվել հանգամանքներից և առաջ տանել իր գիծն ու քաղաքականությունը։

V.

Նալբանդյանի կամքն ու հասարակական կոչումը կոփվում է հենց պատմա-հասարակական այդ միջավայրում։

Ահա ինչու և Նալբանդյանի, տակավին պատանի և յերիտասարդ Նալբանդյանի, գործունեյության նախնական շրջանը պետք է համարել խիստ կարևոր նշանակություն ունեցող մի ետապ նրա հասարակահայեցողության անաչառ լուսաբանության համար։

Նրա պայքարը Խալիբյանի դեմ, վոչ մի պարագայում չի կարելի համարել «անհատական» կամ «անձնական» պայքար։

Առաջին նվագ գուցե և տարօրինակ է թվում այն, վոր Միք. Նալբանդյանն այնքան յեռանդ ու ժամանակ է վատնել «յեկեղեցական-դպրոցական», կարծես թե հասարակ մի խնդրի առթիվ, վոր նույն այդ գումարների օգտագործման այս կամ այն ձևի մասին ստեղծվել է այնքան լայն ու մեծ պայքար, վոր վոտքի եյին կանգնել Նոր-Նախիջևանի բոլոր բնակիչները, շարժվել և հուզվել եր քաղաքային վողջ համայնքը, կառավարական մարմինները, կաթողիկոսը, հոգևոր վարչության բոլոր անդամները...։

Թե վորքան մեծ է յեղել Նալբանդյանի կազմակերպած այդ պայքարը կարելի յե դատել նրանից, վոր մինչև այսօր ել կան մարդիկ Նոր-Նախիջևանում, վորոնք չեն կարողանում պաղարյուն և անաչառ յեղանակով խոսել կամ դատել Խալիբյանի խնդրի մասին։

«Յեկեղեցական» գումարների խնդիրն իրապես յեղել է հասարակական խոշոր պրոբլեմ Նոր-Նախիջևանի համայնքի համար,— մի պրոբլեմ, վորը ինքն արդեն նպաստել է հասարակական յերկու ներհակ ուժերի սոցիալական բռնկման, այլ խոսքով անցյալի «կռիվների» հարատև բռնկմանը:

Պատկանյանի բանտարկությունից հետո կռիվը մտել եր նոր հունի մեջ: Աղմուկը Խալիբյանական գումարների մասին հասել եր արդեն կառավարության կենտրոնական մարմինների ականջին:

Վաղարշապատի գիտական ինստիտուտի դիվանում գտնվող գործից հայտնի յե ի միջի այլոց այն, վոր Խալիբյանի դեմ առանձին ամբաստանագիր եր ներկայացրել «Նոր-Նախիջևան քաղաքի և հինգ շրջակա գյուղերի հասարակությունը»: Հենվելով այդ բողոքագրի վրա, Ներքին գործերի Նախարարը (1851 թ. ապրիլի 11-ին) հայտնել եր կաթողիկոսին, վոր «յեկեղեցական գումարների» տնօրինության նկատմամբ Սինոդի կողմից թույլատրվել է վորոշ անկանոնություն: 1856 թ. ապրիլի 25-ին հաղորդելով Ներսես Կաթողիկոսին վերոհիշյալ գրության մասին, Մաթևոս Արքեպիսկոպոսն ընդգծում եր իր հայտարարության մեջ, վոր իրեն» առաջարկվել է վերցնել գումարները Խալիպովից և դիմել գեներալ գուբերնատորին Նորույն Ռուսիո և Բեսարաբիո ցուցանել ի կողմանե տեղական քաղաքական իշխանության զպատկանելույն ոգնությունն»... Միևնույն «գործ»-ի մեջ գտնվում են Խալիպովի մի քանի ուշագրավ դիմումները: 1856 թ. մայիս 8-ին Խալիբյանը ներկայացնում է կաթողիկոսին ընդհանուր հաշվետվություն իր մոտ յեղած գումարների մասին, իսկ կաթողիկոսն էլ իր կողմից նոր լիազորագիր է տալիս Խալիբյանին, վորի վրա հենվելով՝ վերջինը հրաժարվում է հասարակությանը հանձնել վիճելի գումարները: Դրա հանդեպ առաջնորդը, դիմելով մագիստրատին, առաջարկել եր կատարել «հասարակության պահանջները»: Սակայն, յերբ մագիստրատը դրանից հետո անցնում է այդ կարգադրության «գործնական կիրառմանը», 1856 թ. հուլիսի 2-ին միջամտում է Տագանրոգի զինվորական նահանգապետը, վորը, քանդելով մագիստրատի վորոշումներն, իր պաշտպանության ներքո յե առնում Խալիբյանին: Գրեթե միաժամանակ դրա հետ, 1856 թվ. հուլիս 13-ին, Ներսես կաթողիկոսն առանձին բողոքագրով խնդրել եր Ներքին Գործերի Նախարարին անուշադրության մատնել Առաջնորդի դիմումն և հաստատել իր լիազո-

րի իրավունքները, քանի վոր նա «արժանավոր» գործիչ լինելով՝ պիտի յենթարկվի բացառապես հոգևոր իշխանությանը: Միաժամանակ Ներսես կաթողիկոսը խնդրում եր «վոչ խոսքով, վոչ գործով չանհանգստացնել չինովնիկ Խալիբյանին, վորի արժանիքները յեկեղեցու ոգտի նկատմամբ անօրինակ են և վորի համար նա տակավին չի վարձատրվել». («заслуги котораго к пользам церкви не подажаемы, и он за это еще не вознагражден»):

Դրանից հետո Խալիբյանի հակառակորդներն արդեն կիսով չափ պարտված եյին: Ավելի յեվս ուժեղանում է Խալիբյանը, յերբ կաթողիկոսի կողմից ուղարկված քննիչ-հանձնաժողովը կարողանում է վարկաբեկման յենթարկել Մաթևոս արքեպիսկոպոսին: Պաշտպանողական մեթոդներից Խալիբյանն անցել եր արդեն հարձակողական արշավանքի: Նրան հաջողվում է տապալել Խալիբյանականների դեմ պայքարող առաջնորդին և թեմի հոգևոր իշխանության գլխին կանգնեցնել «մեծատունների» թեկնածու Գաբրիել յեպիսկոպոս Այվազյանին:

Սակայն, կռիվը դրանով չի դադարում: Խնդրի հարուցանողը այս անգամ լինում է Մ. Նալբանդյանը, վորը շարունակում է հին պայքարը թե «Հյուսիսափայլի» մեջ և թե հետագայում:

Իր քաղաքականության արդարացման համար Գաբրիել Այվազյանը գրել է ստվար մի գիրք, ուր մանրամասն պատմում է թե ինչպես է նրան աջողվել կոմպրոմիսների և փոխադարձ համաձայնությունների միջոցով հաշտեցնել «Նոր-Նախիջևանցիներին Խալիբյանի հետ և վերջ տալ կռիվներին»: Չնայած այդ գրքի մեջ բերված յերկար բացատրություններին, ընթերցողը նույնիսկ Այվազյանի խոսքերից կարող է իմանալ այն մասին, վոր վիճելի խնդրի նկատմամբ ժողովրդական լայն խավերի մեջ մինչև վերջ մնացել է միևնույն բացասական վերաբերմունքը դեպի Խալիբյանը: Դրանով էլ պիտի բացատրել, անշուշտ, այն, վոր Հնդկաստանում թողնված Բաբաջանյանի հայտնի կտակը ստանալու համար Նոր-Նախիջևանի հասարակությունը իր լիազորագիրը տվել եր վոչ թե Խալիբյանի կամ Այվազյանի թեկնածուներին, այլ «ազգային» կուսակցության անհաշտ հակառակորդին—Միքայել Նալբանդյանին: Շատ բնորոշ են այդ կողմից Այվազյանի խոսքերը Նալբանդյանի մասին: «Այս բանսրկուս, ասվում է Այվազյանի գրքի մեջ, մեծապես հորդորիչ և ձեռնտու գտան իրենց Նալբանդյան Միքայել անունով տաքգլուխ յերի-

տասարդը։ Սա ուրիշ պատճառ չուներ Գաբրիել վարդապետին հակառակելու, յեթե վոչ այս՝ վոր նախ՝ նա յուր թշնամւոյն, այսինքն Խալիպյան Հարություն աղայեն ազգային բարեգործություն ընդունեցավ և առաջ տարավ և յերկրորդ այս, վոր նա հաղորդել եր Մատթեոս արքեպիսկոպոսին տեղը, վոր յուր պաշտպանն ու բարերարն յեղած եր ժամանակով, թեպետև նորա խորհրդոցը և գործոցը անհաղորդ։ Այս Նալբանդյանը վոչ սակավ հույս տվավ **ժողովրդյան դժգոհ մասին**, վոր թեպետ յեկեղեցոց գումարներու խնդիրը լուծված և Տերութենեն ու Սինոդեն վերջավորյալ ճանաչված է, բայց կարելի չէ այնպես անել, վոր թե Առաջնորդը և թե Խալիպյան Հարությունը Եջմիածին կանչվեն, դատաստանի տակ ձգվեն, դատապարտվեն ու պատժվեն՝ իբրև գող և յեկեղեցակողոպուտ»*)։

Ինչպես ասացինք «ժողովրդի դժգոհ մասի» ձեռներեցությամբ հետագայում Նալբանդյանը ստանում է առանձին լիազորագիր Հնդկաստանի կտակը ստանալու համար և նորից դառնում է քաղաքային համայնքի նորածին «յերրորդ դասի» արմատական ղեկավարը։

Կարծում ենք, այն բոլոր ցիտատները, վոր մենք բերեցինք անցյալի իսկական իրականության անաչառ լուսաբանության համար, տալիս է, այսպես թե այնպես, բավական լիակատար պատկեր։

Խալիբյանի դեմ մղված պայքարը—Նոր-Նախիջևանի քաղաքային համայնքի յերկու հիմնական բանակների անտագոնիզմի ցուցանիշներից մեկն է յեղել։ Յեվ սուր ընթացք է ստացել նա միմիայն նրա համար, վոր «չաղերի» բանակը Նախիջևանում խիստ ուժեղ է յեղել։

«Աղաների» կուսակցությանը, ինչպես տեսանք, ոգնել են կաթողիկոսն ու կառավարությունը մի կողմից և ապա Առաջնորդն ու մագիստրատը՝ մյուս կողմից։ Լինում եյին այդ պայքարի ժամանակ առանձին եպիզոդներ, յերբ շնորհիվ մանր բուրժուական դեմոկրատիայի ուժեղացման թուլանում եր առժամանակ «աղաներ»-ի դիրքն այս կամ այն ֆրոնտում։ Բայց այդ եպիզոդները շատ թեթև հարված եյին հասցնում մեծատուններին։

Փոխվում է այդ դրությունն այն որից, յերբ առաջ է գա-

*) Գ. Այվազյանի «Պատմություն Խալիպյան ուսումնարանին ազգին Հայոց»։ Տփխիս 1880, եջ 80—82։

լիս «նոր բուրժուական», «ուսյալ» այն վաճառականությունը, վորը իր շուրջն է համախմբում արհեստավորներին, մանր վաճառականներին, գյուղացիներին և կազմակերպված բնույթ է տալիս հասարակական իր գրոհին։ Հակաաղայական բանակն այդ որից իր ձեռքն է առնում «դումը»—քաղաքային ինքնավարությունը և իր ազդեցությանն է յենթարկում նույնիսկ առաջնորդին։

Այս անգամ Խալիբյանի դեմ պայքարող բանակի գլխին կանգնում է Հայրապետյանը, և հենց այդ մոմենտից էլ Նալբանդյանը դառնում է նոր շարժման ամենատաղանդավոր ղեկավարը։ Յեկեղեցական գումարների խնդիրն այն նշանակությունն ուներ, վոր, կազմելով հոգևոր կառավարության բյուջեյի ամենահիմնական մասը, ստեղծում եր անհրաժեշտ նյութական պատվանդան այս կամ այն հոսանքի համար։ Դրա համար էլ Խալիբյանի կուսակցությունը, հենվելով Ներսես կաթողիկոսի կողմից հասցրված պաշտպանության վրա, չեր համաձայնվում վոչ մի կերպ կատարել ժողովրդական հոսանքի պահանջները և հրաժարվել իր իրավունքից վերոհիշյալ գումարների նկատմամբ։

«Աղաների» խումբը շատ լավ եր գիտակցում այն, վոր, զրկվելով յեկեղեցական-դպրոցական գումարներից, նա պիտի զրկվեր անխուսափելիորեն նաև հասարակական իր բոլոր դիրքերից։ Մյուս կողմից հակաաղայական բանակի ղեկավարներին էլ հայտնի յեր այն, վոր, խլելով Խալիբյանից և նրա կուսակիցներից յեկեղեցական գումարները, նրանք մահացու հարված կտան «աղաներին» և կամրացնեն քաղաքային նոր դեմոկրատիայի դիրքերը։

Յեվ ահա հենց այդ կարեվոր հանգամանքն էլ գիտավորությամբ խեղաթյուրվել է մինչև այժմ Նալբանդյանի բոլոր կենսագիրների կողմից։

«1853 թ. հունիսի 14-ին կարդում ենք այդ կենսագիրներից մեկի մոտ, Միք. Նալբանդյանը խույս է տալիս Բիշնեից և, հոգևորական գործեր քննելու պատրվակով, գաղտուկ Նախիջևան է գալիս հունիսի 14-ին և նույն որը առանց մեկի հետ տեսնվելու փախչում, հեռանում է Մոսկվա»։ Այդ տողերը Ա. Ջամինյանը գրում է, վորպես մեղադրանք իբր թե «անձնական» մոտիվներով ղեկավարվող կրքոտ Նալբանդյանի հասցեյին։

Նալբանդյանի վողջ ընդդիմադրական պայքարը քննվում է այդպիսով, վորպես հանցանք, փախուստ և խիստ դատապարտելի մի քայլ։

Միամիտ ընթերցողը կարող է նույնիսկ կարծել, վոր Խալիբյանը կատարելապես անմեղ և արդար է յեղել, վոր Նալբանդյանը վորպես «խառնակիչ» և «կռվարար» (կամ գուցե նույնիսկ «արծաթասեր», ինչպես ասվում է Պատկանյանցի մասին) զուր տեղը պայքար է սկսել Խալիբյանի դեմ, վոր Նալբանդյանը ինքն էլ ինչվոր մեղքեր է ունեցել, և դրա համար էլ իր մեղքերը ծածկելու նպատակով «խույս է տվել Քիշնևից» «հոգևորական գործեր քննելու պատրվակով», «գաղտուկ»(!!!)Նախիջևան է յեկել, և առանց մեկի հետ տեսնվելու «փախչել, հեռացել է Մոսկվա»:

Այդ լեգենդան խիստ տարածված է և դրա համար էլ հայ գրականության տրադիցիոն պատմաբանները սովորաբար խիստ ընդհանուր կերպով են խոսում Ա. Նալբանդյանի գործունեության ակնարկած շրջանի մասին:

Իրապես վողջ այդ պատմությունը սկզբից մինչև վերջ տենդենցիոզ լինելով, միաժամանակ խայտառակ մի փորձ է անվանարկման յենթարկելու Նալբանդյանի քաղաքացիական խիզախ յելույթը «ազատական» բանակի դեմ:

Միքայել Նալբանդյանն այլ կերպ վարվել չեր կարող և այդ բանը շատ լավ գիտե ինքը Ա. Ջամինյանն էլ: Վորպես «Հայ յեկեղեցու պատմության» հեղինակներից մեկը, նա, ի հարկե, շատ լավ է ծանոթ թե Դավիթ-Դանիելյան հայտնի կռիվների և թե հայ յեկեղեցու պատմության մնացյալ մութ այն եջերին, վորոնք վոչինչով չեն տարբերվել հռոմեյական «պապականության» և միջնադարի ինկվիզիցիայի մռայլագույն եջերից:

Ահա ինչու ավելի քան խելառ ու անհեռատես պիտի լիներ Միքայել Նալբանդյանը, յեթե ներեր հիմարաբար ինքնիրեն հայկական ինկվիզիցիայի գիրկը: Դա հավասար պիտի լիներ պարտության:

Այդպես կարող եր վարվել միմիայն խաղաղ քաղքենին, քրիստոնյա սպասավորը, կաթողիկոսին և Եջմիածնին կուրորեն հավատացողը և վոչ թե պայքարը ղեկավարող, մարտնչող ու իր ուղին ճանաչող գործիչը:

Միքայել Նալբանդյանի «փախուստը» գալիս է նորից հաստատելու մեր հիմնական թեզն այն մասին, վոր Խալիբյանական գումարների խնդիրը յեղել է խոշորագույն սկզբունքային խնդիր, վորի շուրջն ընդհարվել են սոցիալական յերկու շերտեր և վորի այս կամ այն լուծումն այդ շերտերից յուրաքանչյուրը համարել է իր կյանքի ու մահու խնդիր:

Դրանով էլ բացատրվում է, անշուշտ, այն, վոր Նալբանդյանի կողքին, այդ «դպիր», «գրագիր» և ամենազոր «աղաների» ու «Ներսես կաթողիկոսի» դեմ պայքարող Նալբանդյանի կողքին կանգնել են հասարակական լայնագույն շարքեր, վորոնք պաշտպանել են նրան, ոգնել և ազատել թե կաթողիկոսի և թե կառավարության սիստեմատիկ հետապնդումներից:

Թե վորքան ուժեղ եյին այդ հալածանքները ցարական ամենաբիրտ բռնակալության այն որերին—այդ յերևում է հենց նրանից, վոր նույնիսկ Մոսկվայում չեն դադարել Նալբանդյանի դեմ ուղղված հարվածները:

Նրան չի ոգնում այդտեղ վոչ Մատթեոս առաջնորդի հանձնարարական թուղթը Խաչատուր Լազարյանի անունով և վոչ էլ ուսուցչությունը Լազարյան ճեմարանում: Ներսես կաթողիկոսի պահանջի հիման վրա Միքայել Նալբանդյանը կալանավորվում է այդտեղ՝ Եջմիածին ուղարկվելու համար: Նրան ոգնության է գալիս միմիայն մի պատահականություն:

Նալբանդյանը մինչև այդ արդեն հայտարարված է յեղել հոգևորական դասից դուրս յեկած անձնավորություն: Հետևաբար հենց այդ պատճառով էլ նա չեր կարող այլևս համարվել «փախստական տիրացու» և յենթարկվել կաթողիկոսական դատաստանի իրավասությանը: Հենվելով որենքի այդ կետի վրա՝ Նալբանդյանի բարեկամները կարողացել են միջամտել և ազատել նրան թե բանտարկությունից և թե հետագա ավելի ծանր ռեպրեսսիաներից: Այդպիսով մի հասարակ պատահականության շնորհիվ միայն հայ գրականության ամենախոշոր հսկաներից մեկն ազատվում է հայկական ինկվիզիցիայի և ցարական բռնակալության մագիլներից: Յեթե հիշենք մի ակնթարթ Միք. Նալբանդյանի ուսուցչի, Գաբրիել Պատկանյանցի, վիճակը և վողբերգական դրությունը, նրա դեմ ստեղծված և Խալիբյանական կուսակցության ջանքերով կազմակերպված հալածանքները, և ապա վերջում—Պատկանյանցի յոթնամյա բանտարկությունը, յեթե հիշենք այն, վոր միևնույն «ազատական» կուսակցության և Եջմիածնի ջանքերով ծրագրված է յեղել սկզբում աքսորել Պատկանյանցին Սիբիր, այդ պարագային միանգամայն պարզ կլինի, թե վորպիսի խոշոր հարվածներից է կարողացել ազատել իրեն 50—60-ական թվականների ամենախոշոր հրապարակախոսը:

Նրա կյանքի նախնական այդ շրջանը, նրա հասարակական պայքարի առանձին փուլերն այնքան բնորոշ և ուշագրավ են,

վոր պետք է դառնան առանձին և ավելի մանրակրկիտ քննության առարկա մեր դիվաններում գտնվող և տակավին չմշակված նյութերի հիման վրա։ Յես կանգ եմ առել միմիայն թռուցիկ կերպով այդ պայքարի վրա։

Կասկածից դուրս է այն, վոր այդ պայքարի ընթացքում Նալբանդյանին մեծագույն չափով նպաստել է նրա վճռականությունը, մարտականությունը և կտրուկ գործելակերպը իր բոլոր թշնամիների հանդեպ։ Նա կարողացել է վոչ միայն կռվել ու պայքարել, այլ և ճանաչել իր հակառակորդներին, հաշվի առնել նրանց ուժերը, գնահատել նրանց իսկական արժեքը։ Յեթե այդպես չլիներ, նա, իհարկե, չեր կարողանա ժամանակին պաշտպանվել հարվածներից և ժամանակին «խույս» տալ վտանգավոր վայրերից։

Հիմար, սենտիմենտալ և անհեռատես պիտի լիներ նա, յեթե հետևեր այն գործիչների որինակին, վորոնք հավատում եյին հայկական ինկվիզիցիայի «ուղղամտությանը» և դրա համար ել փոխարեն կռվի բոլոր մեթոդների կիրառմանը նետվում եյին «միամտորեն» աղվեսի մորթի հագած գայլերի գիրկը։

Միք. Նալբանդյանն իր ընդհանուր մտածելակերպով դեռ յերկար ժամանակ շարունակում եր կապված մնալ ազգայնական կրոնական մի շարք տրադիցիաների հետ։ Կռվելով հանդերձ, նա հավատում եր տակավին նրան, վոր կառավարության «բարձր» մարմինները և ավելի «լուսամիտ» հոգևորականները կարող են գտնել «արդարությունը» և պատժել «ժողովրդի սեփականությունն և իրավունքները» բռնաբարողներին։

Բայց այդպիսի արտաքին կաղապարի մեջ ել նրա պայքարը որվա ուժեղների—«աղաների», «մեծատունների» դեմ—սոցիալական բողոքի նախնական արտահայտություններից մեկն եր»։

Այժմ մեր որերին—փոքր և չնչին են յերևում հարավային Ռուսաստանի փոքրիկ քաղաքային համայնքի այդ խնդիրներն ու պայքարը։

Այդպես չեր անցյալում։

40—60-ական թվականներին, ցարիզմի բռնակալության և Եջմիածնական ինկվիզիցիայի տիրակալության որերին «սքոլաստիկայի», «աղայականության» և «հայկական ոբսկուրանտիզմի» դեմ կռվող փոքրիկ խմբի այդ ազատամարտն ուներ անշուշտ մեծագույն արժեք։

Դա—առաջ շարժվող, վոտքի յելնող, ամփոփվող ու կազմակերպվող «յերրորդ դասի» առաջին յելույթներից մեկն եր։

Յեվ Նալբանդյանը, վոր այդ պայքարի ամենաուժեղ և արմատական ղեկավարն եր, իր մղած պայքարի ընթացքում ել ստանում է կամքի և հայեցողության այն ամրությունը, վոր հետագայում դարձնում է նրան նախ «Հյուսիսափայլ»-ի մարտնչող հրապարակագիր, իսկ քիչ հետո՝ «Յերկրագործության» հեղինակ։

Խալիբյանի և կաթողիկոսի, աղաների և աղայական կուսակցության դեմ վարած պայքարը կապում է նրան ավելի սերտ կերպով ժողովրդական շարքերի, արհեստավորության, մանրբուրժուական դեմոկրատիայի շահերի հետ և դարձնում նրան մարտնչող հրապարակախոս...։

Դրանով ել պայմանավորվում եր նրա հասարակական գաղափարների հետագա եվոլյուցիան։ Դրանից ել բղխում եյին անհրաժեշտաբար նրա գաղափարական տարաձայնություններն ու բաղխումները Ստեփաննոս Նազարյանցի հետ։ Այդ տարաձայնությունները աստիճանաբար այնքան ուժեղանում և խորանում են, վոր գծվում են հետագայում ավելի քան պարզորոշ կերպով, վորպես հասարակական մտքի յերկու տարբեր և ներհակ ուղիներ։

VI

Միք. Նալբանդյանի գործունեյության յերկրորդ շրջանը սկսվում է փաստորեն նրա արտասահմանյան ճանապարհորդունից հետո։

Ստանալով նախիջևանցիներից վորոշ հավատարմաթուղթ, Միք. Նալբանդյանն ուղևորվում է նախ Անդրկովկաս և ապա անցնում է այդտեղից արտասահման։ Նրա ձերբակալության ժամանակ գրավված վավերագրերի մեջ գտնվում է, ի միջի այլոց, այդ ճանապարհորդության մանրամասն մարշրուտը, վոր հնարավորություն է տալիս մեզ նկարագրել նրա անցած ուղին։

Այդ մարշրուտից յերևում է, վոր Նալբանդյանը դուրս է յեկել Փոթի նավահանգստից 1860 թ. նոյեմբերի 13-ին և ապա մտնելով Կ. Պոլիս, Մեսինա, Նեապոլ, Ջենովա, Փարիզ 1861 թ. հունվարի 18-ին հասել Լոնդոն, ուր մնացել է մեկ որ միայն, ապա նորից ուղևորվել Փարիզից Լոնդոն 1861 թ. փետրվարի 3-ին։ Այս անգամ մնացել է նա Լոնդոնում տաս որ։ Ըստ յերևույթին հենց այդտեղից ել սկսվել է Միք. Մալբանդյանի առաջին ծանոթությունը Գերցենի հետ։

Մարտի 13-ին Նալբանդյանը դուրս է գալիս Լոնդոնից և ապա նորից մտնելով Փարիզ, անցնում է Մարսել, Ալեքսանդրիա, Գահիրե, Ցեյլոն, Մադրաս և հասնում Կալկաթա մայիսի 30-ին։ Ավարտելով այդտեղ ժառանգության հետ կապված գործերը, Նալբան-

յանը սեպտեմբերի 27-ին դուրս ե գալիս Կալկաթայից և Սուեզի նեղուցն ու Ալեքսանդրիան անցնելուց հետո, նորից մտնում ե Կ. Պոլիս նոյեմբերի 21-ին։ Այստեղ ևս նա մնում ե բավական յերկար ժամանակ։ Դուրս գալով Կ. Պոլսից դեկտեմբերի 17-ին, Նալբանդյանը նորից Մարսելից ու Փարիզից անցնում ե 1862 թ. հունվարի 9-ին Լոնդոն, ուր մնում ե նա դարձյալ բավական յերկար ժամանակ։ Լոնդոնից փետրվարի 10-ին նա վերադառնում ե կրկին անգամ Փարիզ։

Մարշրուտի վերջում բերված վերջին տողերից յերևում ե, վոր Միք. Նալբանդյանը մի անգամ ել դրանից հետո այցելել ե Լոնդոնը։ Սակայն այս անգամ թվականը բացակայում ե*)։

Այդպիսով այդ մարշրուտից մի բան համենայն դեպս պարզվում ե շատ վորոշ կերպով։

Այդ այն ե, վոր Նալբանդյանը վոչ թե մի անգամ և այն ել պատահական կերպով ե մտել Լոնդոն, այլ մի քանի անգամ այցելել ե ու բավական յերկար ժամանակ մնացել ե քաղաքում։

Սերնո-Սոլովյեվիչի պրոցեսի սենատական գործի մեջ ամփոփված մի շարք դոկումենտների շարքում գտնվում ե ի միջի այլոց և Միք. Նալբանդյանի հարցաքննության արձանագրությունը, վորի մեջ նկարագրված ե Միք. Նալբանդյանի Լոնդոնի այցելություններից մեկը։... «Ավելացնում եմ այստեղ, ասում ե Նալբանդյանը, անուններն այն մարդկանց, վորոնց աջողվել ե ինձ տեսնել Լոնդոնում։ Ահա նրանք—Գերցեն, Ոգարյով, Բակունին և յերիտասարդ Գերցենը։ Ամենից առաջ յես ծանոթացել եմ յերիտասարդ Գերցենի հետ պատահաբար, Զոոլոգիական այգում, ուր յես նրա ռուս լինելու մասին իմացա հենց այն հանգամանքի շնորհիվ, վոր մեզ հետ եր գյուղացու զգեստ հագած մի մարդ. դրա անունը, ինչպես իմացա հետո, Մարտինով եր։ Յերիտասարդ Գերցենի հետ մենք պտույտ արինք այգում և մտնելով այն բաժինը, ուր գտնվում եր ռնգեղջյուրը, յես ասում եյի նրան, վոր այդպիսի մի ռնգեղջյուր յես գնել եմ և ուղարկել

*) Գերցենի յերկերի վերջին հատորին կցված հավելվածի մեջ Լեմկեն, հենվելով Գերցենի նամակների վրա, կանգ ե առնում միմիայն մեկ այցելության վրա և ասում ե, վոր Միք. Նալբանդյանը 1862 թ. մոտավորապես մինչև մարտի 11-ը մտել ե Լոնդոն և ապա 13-14 ապրիլին հեռացել։ Ըստ յերևույթին այդ հենց վերջին այն այցելությունն ե, վորի թվականը բացակայում ե մեր հիշատակած վավերագրերի մեջ։ (Տես А. Герцен. „Полное собрание сочинений и писем“. ред. Лемке. Ленингр. 1925 թ. հատ. XXII եջ 320.)

Ռուսաստան։ Նա խնդրեց ինձ տալ այդ ռնգեղջյուրի լուսանկարը և յես տվի նրան հետևյալ կամ յերրորդ օրը, յերբ նա յեկավ ինձ մոտ լուսանկարի համար։ Դրանից հետո նա խնդրեց ինձ մտնել իր մոտ, և յես յեղել եմ նրա մոտ մեկ անգամ։ Բացի դրանից վոչ վոքի չեմ տեսել այնտեղ։ Դրանից հետո նա տեսնվել ե ինձ հետ ճաշարանում. այդտեղ եր նաև նրա հայրը, Ոգարյովը և Բակունինը։ Առանձնապես վոչինչի մասին չեյինք խոսում, միայն ճաշում եր ամեն մեկը իր համար։ Հյուրանոցից դուրս յելնելուց հետո, Գերցենը խնդրեց ինձ մտնել իր մոտ (յերիտասարդ Գերցենը), և յես նորից յելա նրա մոտ, ուր գտնվում եյին նաև նրա հայրը, Ոգարյովը և Բակունինը»...։ Նալբանդյանի պատասխանն ամբողջապես այդպիսի «դիվանագիտական» ձևով ե կազմված։ Նա նորից կրկնում ե, վոր «վոչ մի առանձին խոսակցություն չի ունեցել», վոր Բակունինը խնդրել ե միայն հաղորդել Իվան Սերգեյիչ Տուրգենևին, վորպեսզի վերջինը ոգնե Բակունինի կնոջը ուղևորվել Սիբիրից դեպի Տվերի նահանգը, վոր այդ բանը ինքը Նալբանդյանը հաղորդել եր Պետերբուրգում Բակունինի յեղբորը, վորին մի անգամ ե միայն հանդիպել։

Տուրգենևը խնդրել եր Նալբանդյանին հանձնել Բակունինի կնոջը յերեք հարյուր ռուբլի... Նալբանդյանը հաղորդում եր, վոր Տուրգենևից ստացել ե ստացական այդ գումարի համար, և դրամը իր կողմից հասցրել ե Բակունինի հաղորդած հասցեյով։

Թե այդ, և թե Նալբանդյանի հետագա պատասխաններից շատ վորոշ յերևում ե, վոր Նալբանդյանը միայն համոզված ե յեղել նրանում, վոր իր մեղադրանքը Նալբանդյանի դեմ Սենատի քննիչ հանձնաժողովը հարուցել ե հենվելով գլխավորապես նրա ձերբակալության ժամանակ գտնված դոկումենտների վրա։ Յեվ դրա համար ել նա աշխատում եր ցուցադրել, վոր իր ծանոթությունը յեղել ե խիստ պատահական, վոր վորոշ դեր ե կատարել ռնգեղջյուրը, վոր Բակունինի, Գերցենի և Ոգարյովի հետ ել նա տեսնվել ե միմիայն ճաշարանում և դրանից հետո յել համաձայնվել հասցնել Բակունինի նամակը Տուրգենևին և այլն, և այլն։

Այդ բոլորը չեր կարող, ի հարկե, խաբել քննիչներին, թեև ավելի ուշ վավերագրերի և փաստերի բացակայությունը հավանական եր դարձնում մի վորոշ չափով Նալբանդյանի ասածների ճշտությունը։ Ընդհանուր առմամբ Միք. Նալբանդյանն ամբողջ

հարցաքննության ընթացքում տալիս եր խիստ անորոշ և խուսափողական պատասխան, այնպես վոր քննիչ հանձնաժողովը չեր կարողանում վոչ մի արգումենտ գտնել իր առաջադրած մեղադրական կետերի հիմնավորման համար:

Շատ ուշագրավ է այդ կողմից 1862 թ. դատական հարցաքննության ժամանակ առաջադրված 20-րդ հարցական կետը: Այդտեղ հանձնաժողովի անդամները, հիշեցնելով նրան այն, վոր Բակունինը Պետերբուրգում ապրող Խաֆաֆովի հասցեյով ուղարկել է նախ 4 և ապա 10 որինակ հայերեն մի գիրք, վորի անունը նա դրել է «Խոհարարական»—ընդգծում է, վոր այդ գրքի մեջ խոսքը վոչ թե խոհարարական արվեստի մասին է, այլ գոյություն ունեցող կառավարությունների և, ի միջի այլոց, Ռուսաստանի՝ վորի մասին խոսվում է «ամբարտավան» տոնով:

Շեշտելով այն, վոր այդ գրքի վերնագիրն է «Յերկրագործություն», քննիչ հանձնաժողովը հարց է տալիս, թե ինչու՞ յեն այդ գրքերն ուղարկվել և ինչու՞ յե Բակունինը այդ գրքերն ուղարկել Խաֆաֆովի հասցեյով՝ Նալբանդյանին:

Առաջադրված հարցին Նալբանդյանը տվել է հետևյալ պատասխանը... «Յես այդ գիրքը չեմ խնդրել Բակունինից: Ինչ վերաբերում է այդ գրքի չորս որինակներին, յես չեմ հիշում, վորովհետև այդ ժամանակ առողջ չեյի և հետևաբար գրքերի նկատմամբ վոչինչ չեյի կարող անել, նույնիսկ յեթե ստացած ել լինեյի: Վորքան հիշում եմ յես, մարկիզ Տրավերսեն մի անգամ հանձնել է մի նամակ, ուր խոսվում եր ինչ վոր բրոշյուրների մասին, չեմ հիշում, կա՞ր վերնագիր թե վոչ, սակայն նա ինձ չի յել հանձնել—վորովհետև ինքն ել չի ստացել, ինչպես ասում եր ինքը»:

Այդպիսով Միք. Նալբանդյանը, վոր իր գիրքը հրատարակել եր Սիմեոն Մանիկյան մականունով, ինչպես տեսնում ենք, շատ լավ գիտեր այն, վոր քննիչ հանձնաժողովին ամենևին հայտնի չե հեղինակի իսկական անունը:

Մինչև քննության վերջն ել այդ բանն անհայտ է մնում քննիչ հանձնաժողովի համար: Անշուշտ հենց դա յել նպաստում է նրան, վոր Նալբանդյանի նկատմամբ Սենատը հանում է համեմատաբար ավելի մեղմ վորոշում:

«Յերկրագործության» մեջ կային ավելի քան կտրուկ տողեր: Յեվ այդ արդեն բավական եր Նալբանդյանի դատապարտման համար:

Թե վորքան անհանդուրժելի յեր ցարական գրաքննության տեսակետից «Յերկրագործության» մեջ արծարծված սոցիալական-քաղաքական քարոզը, այդ յերևում է հենց նրանից, վոր առաջին անգամ Ռուսաստանում Նալբանդյանի բրոշյուրը հրատարակվել է միմիայն 1912 թ. և այն ել առանց այն տողերի, վորոնք վերաբերում եյին անմիջապես ռուսական կառավարությանը: Այդ այն տողերն են, ուր Միք. Նալբանդյանը, բնորոշելով տիրող բռնապետական կառավարությունների քաղաքականությունը մանր ժողովուրդների նկատմամբ, գոչում է.

«...Ռուսական բանտերը լցվեցան լեհացիներով, կարծեմ շուտով Սիբիրի մեջ ավելի շատ պիտի լինի լեհացի, քան թե Լեհաստանում. Վարշավայի հրապարակների վրա արյունը մինչև ծունկն է հասնում, զինվորները անզեն մարդոց վրա հարձակվելով, սպանում են առանց խնայելու - հասակն և սեռը: Ռուսիո գերմանաթաթար կառավարությունը իբրև մի վամպիր ծծում է Լեհաստանի արյունը, փակում է նրա յեկեղեցիքը, դպրոցները և հրամայում է քար կամ փայտ դառնալ»:

...«Քաղաքակրթություն է տարածում»:

«Փոքր Ռուսիան (15 միլիոն ժողովուրդ) յուր լեզվով, յուր պատմական ավանդությամբ, վոչինչ հարաբերություն չունի Մեծ Ռուսիային, և վոչ միայն այսչափ, այլ և սաստիկ թշնամի յե նրան և ազատության մարգարեներին պատասխանում է բանտով, կնուտով և աքսորով:

«Քաղաքակրթություն է տարածում»:

— Հափշտակել և ստրկացել է Ֆինլանդիան:

«Քաղաքակրութթյուն է տարածում»:

«Թաթարնոք ճանկել է Վրաստանը և Հայաստանի մի մասը և ճնշում է նրանց յուր ծանրության տակ:

«Քաղաքակրթություն է տարածում».

«Յեվրոպական պետությունքը անդադար ոգնություն են տալիս Թյուրքիային, վոր նա դիմանա և չկործանվի...»:

«Սոքա ամենքը, իբրև բռնի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում և վոչ վոք չե հարցնում աշակերտի կամքը, կամի արդյոք ուսանել թե վոչ: Սակայն չե պիտո աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթությունից: Բանտերն են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ գիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կազդուրելու

մարզարան; կախաղանը և գլխապարտության խայտառակ սյունը՝ «դուռն ճշմարիտ վոր տանի ի կյանս հավիտենականս...» կեցցե կատուն, վոր յուր փորի համար մուկ է բռնում...»։

Նասկածից դուրս է այն, վոր արդեն այդ մի քանի տողերի համար Նալբանդյանը ցարական կառավարության քրեյական կոդեկսի հիման վրա կարող եր դատապարտվել ծանրագույն պատժի— յեթե միայն ցարական դատարանին հայտնի լիներ այն, վոր «Յերկրագործությյան» հեղինակ Սիմեոն Մանիկյանը դա միևնույն Միքայել Նալբանդյանն է։

Ցարական կառավարությանը հենց այդ բանը հայտնի չեր, և դրա համար ել ամբաստանագիրը հենվել եր ամբողջովին ռուս եմիգրանտների նամակների և այլ անուղղակի տվյալների վրա։ Իսկ այդ նամակները մի բան համենայն դեպս պարզում եյին ավելի քան վորոշ կերպով։ Դա Գերցենի, Բակունինի և Ոգարյովի առանձին վերաբերմունքն եր դեպի Նալբանդյանը, վորը նրանց կողմից համարվում եր մոտիկ և մտերիմ անձնավորություն։

Այդ նամակները «Սենատական գործից» արտատպելով—իր ժամանակ հրատարակության եր հանձնել Լեմկեն նախ «Былое» ամսագրի, իսկ հետագայում նաև «Ռուս ազատագրական շարժման պատմությյանը» նվիրված իր հայտնի մենագրությյան մեջ։ Գերցենի նամակները հետագայում տեղ են գտել նաև նրա յերկերի ու նամակների լիակատար ժողովածուի մեջ։ Արդեն այդ նամակների մեջ բերված տողերը բավական են Գերցենի ինքնահատուկ վերաբերմունքի բնորոշման համար։

«... Այս թուղթը գրում է Գերցենը Տուրգենևին 1862 թ. ապրիլի 11-ին, կըհասցնե քեզ, ազնվագույն (благороднейший) և բարի (добрейший) բժշկագիտության դոկտոր և հայ Նալբանդովը։ Լավ ընդունիր նրան, նա միանգամայն արժանի յե դրան։ Նորերս նա յեղել է Կալկաթա և այժմ ուղևորվում է թաթարֆիննական Մոսկով քաղաքը»...։ Միևնույն այդ նամակի մեջ նա խնդրում է պատասխանը ուղարկել Նալբանդյանի միջոցով։

Մի ուրիշ նամակի մեջ, վոր ուղղված է դարձյալ Տուրգենևին և գրված է 1862 թ. ապրիլի 21-ին, Գերցենը ընդգծելով, վոր «Նալբանդյանը շատ և շատ արդար ու լավ մարդ է» (очень и очень честный и хороший человек), խնդրում է Տուրգենևին նորից հանձնել Նալբանդյանին իր նամակը *)։

*) А. И. Герцен.—Полное собрание сочинений и писем. Пет-рбург. 1920 г. հատոր XV. եջ 105, 110, 195, 219. Տես նաև՝ հատ. XVII, եջ. 2 հատ. XVII, եջ. 92, 93.

Սերնո-Սոլովևիչին 1862 թ. 24 հունիսի գրված նամակի մեջ Գերցենը նորից ասում է, վոր «Նալբանդյանը չափազանց ազնիվ մարդ է (преблагароднейший человек) ասացեք նրան, վոր մենք հիշում և սիրում ենք նրան։»

Այդ բոլոր նամակներն ուշագրավ են այն կողմից, վոր ակնհայտնի կերպով հաստատում են Գերցենի մտերիմ վերաբերմունքը դեպի Նալբանդյանը։ Ավելի ևս մտերիմ եյին Բակունինի և Նալբանդյանի հարաբերությունները։ «Սենատական գործի» մեջ ամփոփված վավերագրերը և առանձնապես Բակունինի նամակները Նալբանդյանին ավելի քան վորոշ կերպով հաստատում են, վոր Նալբանդյանի և Բակունինի միջև յեղել է վորոշ քաղաքական համաձայնություն և համագործակցություն։ 1862 թ. մայիսի 6-ին Լոնդոնից ուղարկած իր նամակի մեջ, օրինակ, Բակունինը գրում եր Նալբանդյանին, ի միջի այլոց. հետևյալը.—«Այստեղ բավականին թվով ռուսներ կան, նրանցից շատերը ավարա մարդիկ են, բայց կան և լավերը։ Ցես ծանոթացա նրանցից մեկի, մի լավ և պետքական մարդու՝ Նիկոլայ Վորոնովի հետ։ Նա Պետերբուրգում կըլինի հունիսին և կբերի Ձեր անունով ինձնից նամակ։ Ընդունեցեք նրան, իբրև լավ և հավատարիմ մարդու։ Այժմ Ռուսաստան վերադառնալով՝ կըգնա Թիֆլիս։ Նախ սովորեցրեք նրան, թե ինչպես Մոսկվայի և Պետերբուրգի միջոցով գրագրություն ունենա ինձ հետ, նույնպես Ոդեսայի և Թիֆլիսի, այն է Պոլսի միջոցով, վորի համար նրան տրված կըլինի հասցե. **—Նա օգտակար կը լինի թէ Եվրոպայի և թէ Ասիայի նկատմամբ,** այդ պատճառով վատ չեր լինի, վոր սրա մասին հանձնարարեյիք Թիֆլիսի լավ մարդկանց, վորոնք իրենց հերթին ծանոթներ ունենային Պոլսում»...։

Զորս օր հետո գրված մի ուրիշ նամակի մեջ, Բակունինը, նորից կանգ առնելով Վորոնովի «առաքելության» վրա, հիշեցնում եր Նալբանդյանին, վոր Վորոնովը «մի կամքի տեր և խելոք խախոլ է» և «լավ է ճանաչում Կովկասը»։

«Նա—գրում է Բակունինը—**կըխոսի Ձեզ հետ մեր ապրանքները Կովկաս փոխադրելու միջոցների մասին։** Նրա մտադրությունն այս է. Տրապիզոնից թուրքական փոքրիկ նավակները այցելում են Կովկասի ափերը, տանելով իրենց հետ կոնտրաբանդա և այլ բազմաթիվ իրեր։ Լեռնականները, օգտվելով լեռներից դեպի Սև ծովի շփվող ամբողջ գծի վրա ընկած ռուսական պոստերը վառելու փայտ տանելու արտոնությունով, շատ անգամ փայտի

մեջ պահած տարել են Լոնդոնյան մեր արգելված ապրանքներից: Իսկ ռուսաց գծի վրա նրանց գնում են մեծ հետաքրքրությամբ և պատրաստ են վճարել կրկնակի գին: Խնդիրը պարզ է, պետք է օգտվել այդ հանգամանքից և կանոնավորել գործը: Նամակս ստանալուն պես գրեցեք Պոլիս Ձեր գործունյա մարդկանցից մեկին, որի ազնվության մասին կարող եք պատասխանատու լինել մեր առաջ, որ այս առիթով հարաբերություն սկսի Տրապիզոնի կոնտրաբանդիստների հետ»:

«Սենատական գործի» մեջ գտնվում է նաև ծածկագիր նամակի մի բառարան: Այդ բառարանի առանձին խոսքերը գալիս են նորից հաստատելու այն, որ Նալբանդյանի և Բակունինի բարեկամությունը կրել է քաղաքական բնույթ: Բառարանի մեջ հիշվում են Գարիբալդին, Գերցենը, Մաձինին, Բակունինը, թընդանոթ, գնդակ և այլն, և այլն: Վերոհիշյալ նամակների մեջ «Լոնդոնյան ապրանքներ» ասելով Բակունինը նկատի ունի Լոնդոնի անլեգալ հրատարակությունները: Վորոնովը պիտի կազմակերպեր այդ հրատարակությունների առաքման և տարածման գործը Կովկասում:

Միաժամանակ Նալբանդյանի միջոցով Բակունինը ծրագրում էր կազմակերպել հեղափոխական կոմիտեներ թե Կովկասում և թե առանձնապես Թյուրքիայում:

Այդ վերջին կետի պարզաբանումը գտնում ենք հայտնի արևմտահայ հրապարակախոս Պոլսի «Մեղու» պարբերաթերթի խմբագիր Սվաճյանցի 1862-ին (Մայիս 14) գրված ընդարձակ նամակի մեջ: Այդ նամակը առաջին անգամ հրատարակել է Լեմկեն *) իր վերը հիշված ուսումնասիրության մեջ: Սակայն Լեմկեն օգտվել է Ասկարխանովի անհաջող թարգմանությունից: Իր հերթին այդ սխալ ռուսերեն թարգմանությունից հայերեն թարգմանությունը հետագայում հրատարակել է Ա.-Դոն իր աշխատության մեջ: Ահա դրա համար էլ մենք անհրաժեշտ ենք գտնում լրիվ բերել Սվաճյանի նամակն առանց այն սխալների, որոնք սպրդել են հիշված հրատարակությունների մեջ.

«Մայիս 14/26—1861 կ. Պոլիս—**Ամենապատիվ բարեկամ իմ.** Մայիսի 9-ի ի Փարիզե գրյալ նամակդ ընկալա: Հին նշանագիրներու ցուցակը, որ ինե խնդրեր էիք, չեմ գիտեր որ նամակի մեջ պարունակյալ, զայն ընկալա. չեմ գիտեր վոր նամակի մեջ

*) Мих. Лемке,—Очерки освободительного движения шестидесятнх годов. Петербург. 1908. էջ 113—114.

կըսեմ, վասն զի Ձեր նամակները այժմ չեն ի մէջի: Թողութի՛ն ըրե, որ կարգավորյալ չեմ պատասխաներ նամակներուդ: Ցես խելացնոր մարդ մը չեղեր չեմ, հոս մեր ազգին մեջ ամենափոքրիկ գործ մը կատարելն ալ մարդ կըսպաննե. դու կըտրտնջաս մեր թուլութենեն և իրավամբ, բայց քանի որ մեր քաղքեն չելեր ես. մոռցեր ես բոլորովին մեր ազգին բնավորությունը, հըշմարիտ է, չեթե չըրը չեղին մեկը կուգա դժվար է լուծը ձգելը. Նույն չես ալ կըսեմ—Պըն. Մարտիրոսին նամակը մինչև հիմա չի տալուս կընեզանաս, բայց կաղաչեմ մեր գիթ ըսելիքներուս պաղարյունով, քանի որ դու մեկնիր ես մեր քաղքեն. կաշխատեմ որ իրոք ստանանք ինչ որ Պարոն Մարտիրոսին ըսեր ես թե ունեմք, որպեսզի խրկած նամակը իր մարդու կարենանք համարձակ տալ, բայց ի զուր, ազգին մեջ չեղած անվերջանալի խընդիրները և այն մարդիկներուն գործքերը. որոնց վրա քանի մը ամիս առաջ վստահություն ունեյինք և այժմ չունենք, այսպիսի կարճամիտները կըսեմ, անհնարին կըվհատեցնեն զմեզ, հիմա խորհըրդածե. չունենալով այս քաղքիս մեջ սեղանավոր մը, ունեմք ըսելը թող որ քեզ քրիթիկ կացության մեջ կըդնե, այլ և մեր ընկերները չեն ներեր, որ այսպիսի բան մը հաղորդեմ այն մարդուն, որ բոլոր ընկերութ՞... կրնա փչասել. չես, ինձի համար, քու ըրած տնօրինությանդ վրա բոլորովին ապահով եմ, և չեթե լավ մտածելեն հետո վորոշես որ նամակը պիտի տալ իր տեղը, չես անկասկածաբար կուտայի. մտածե և իմացուր ինձի:

Աշխատեցա որ (Հորիֆելո) յեղբարց Լոժ ունենամք հոս և հրամանը ունենք; քանի մը ատենեն լոժը պիտի բանամք: Այս լոժին անունն է Հայկ Կմ. Որիոն: Ասի յեղբայրություն մեն Անգլիո պաշտպանության տակ, և տունեն ալ հրաման առնված է, որ այս յեղբայրությունը իշխանություն ունենա իրենց զգտնի ժողովները ընելու: Այս ալ փրենք մասոններուն յեղբայրության պես է, բայց կարծեմ ավելի պարզ. և նպատակ է անկար յեղբայրները իրենց հիվանդության ատեն զիրենք հոգալ և ստակով նըպաստել. թե որ մեր լոժը բավական կարողություն չունենա աղքատ և հիվանդ յեղբարց օժանդակելու այն ատեն Լոնդոնի մայր Լոժը պարտական է մեզի նպաստելու դրամով: Տարին երբև տարի կես անգլիական լիրա պիտի տա յեղբայր ընդունվողը և շաբաթը վեց բենս. հույս ունեմ, որ աս յեղբարությունեն օգուտ քաղենք, վասն զի ասոր ծայրը հեռուն է: Անցագիրներու համար ինչ որ ըրիր շատ լավ է, Ենժենյորին համար ինչ որ

ըսէք ի միտ առի, բարեգործական ընկերութեան համար խոչընդոտներ կան, բայց չեն անհաղթելի։ Կարծեմ վոր քանի մը օրէն ի կարգի կըմտնա։ Բավական գումար մը ժողովեցինք, գրսի գործակալներու յերթալիք թուղթերը դեռ ճամբա չելան. ասկէ ետ քեզ պիտի բարկացնե, յես ալ կըբարկանամ. բայց հարկ է, վոր այսպես ըլլա, այսուամենայնիվ այս օրերս զանոնք ալ պիտի ճամբա հանենք Փյաթիպյանին հետ. տեսութիւն կընենք. շատ պատվական մարդ է, բայց հանդարտ մարդ պետք եր, վոր քո temper-եդ քանի մի մարդ ըլլար հոս, վոր քիչ մը շուտով քալեինք։ Վորոնց հետ վոր գործ մը ունեմ շատ մեծ դժվարութիւններ կը կրեմ։ Տորոսեն վարդապետ մը յեկավ հոս, քանի որ է, վոր կաշխատեմ, վոր առուտուր մը ընեմ այս մարդուս հետ. հազիվ կըցա քսան յերեսուն հոգիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարութեամբ. քիչ մ'ալ ստակ յես և բարեկամին մեկը տվինք անոր, վոր հարկավոր յեղած դասագիրքները առնե և ճամբու ծախքը ընե։ Մնացածին համար խոսք տվինք, վոր պիտի աշխատենք իրենց համար։ Կըսեք թե apatie ինծի մոտ է—յես ալ Ձեզի պես կըմտածեմ. սակայն կրնաս ճար մը գտնալ. մեր ազգը քիչ կաշխատի կամ այնպիսի բանի համար կաշխատի զոր դու կարհամարհես և կամ ի ցույց կըգործե. յերբ ազգասիրութեան խնդիր է ամենը խոսքերնին բարձր ձայնով կընեն. անոնցմե վոմանցը կեղծավորութիւն է, վոմանցը գաղջ սեր մը. բայց գործադրութեան համար ամենևին չկա մարդ գրեթե։ Ասանկ գրուցելովս պետք չէ վոր հուսահատեմք, յես միտք ունեմ միշտ աշխատելու, թեպետ այս աշխատանքը զիս շուտով կըծերացնե։ Թե վոր վերոգրյալ ըսածներես արդյունք մը տեսնվի քեզի կիմացնեմ»։

Այդ նամակը, ինչպես տեսնում եք, գրված է կոնսպիրատիվ լեզվով։ Կան տեղեր, վոր անորոշ և մշուշապատ են։ Սակայն և այնպես Սվաճյանի ընդհանուր միտքը ճշտված է բավական պարզ կերպով։ «Մեղուի» խմբագիրը խոսում է այստեղ «հեղափոխական» կազմակերպության մասին։ Նա «անգլիական հովանավորության» մասին խոսելով նկատի ունի, ըստ յերևույթին, Լոնդոնի եմիգրանտներին։ Լոնդոնի խումբը «Լոնդոնի մայր Լոժը, ասում է Սվաճյանը, պարտական է մեզի նպաստելու դրամով»։

Պետք է խոստովանել, վոր նամակն այնպես է գրված, վոր «անգլիական օգնությունը» կարելի չէ ըմբռնել նաև, վորպես անգլիական կառավարության կողմից հասցնվելիք օգնություն։ Սվաճյանը, վորպես արևմտահայ բուրժուազիայի հրապարակախոս, գուցե և կանգնած եր այդ տեսակետի վրա։ Թեև մինչույն «Մեղուի» մեջ յեվրոպական քաղաքակրթության ջատագովությանը նվիրված տողերի հետ միաժամանակ մենք պատահում ենք հաճախ նաև քննադատական վորոշ տողեր։

Ինչևիցե։ Յեթե նույնիսկ ընդունենք, վոր ինքը Սվաճյանը կանգնած եր շեշտված տեսակետի վրա, այդ պարագայում մեզ համար դեռ ևս պարզված չէ լիովին—կանգնած եր արդյոք ինքը Նալբանդյանն էլ նույն այդ տեսակետի վրա։ Իսկ այդ հարցն ամենահետաքրքրականն է։

Վորքան էլ անորոշ չի Սվաճյանի նամակի մեջ շեշտված դիտողությունը, այնուամենայնիվ **հայ ռազմական նացիոնալիզմի հետեվողները բացառապես այդ նամակի վրա յեն կառուցում են իրենց ուրույն մոտեցումը Նալբանդյանի գործունեյությանը։** Բռնելով բարակ այդ թելից, նրանք աշխատում են այսօր էլ դեպի իրենց կողմը քաշել Նալբանդյանին, և դրանով արդեն դարձնել նրան դաշնակցիզմի հետ սերտորեն կապված մի դեմք։

... «Տաճկահայ ժողովրդի, մասնավորապես Կիլիկայի ազատության խնդիրը, կարդում ենք հայ նացիոնալիզմի պատմաբաններից մեկի մոտ, համարվում եր շատ հասունացած, վորովհետև Նալբանդյանի և նրա համախոհ հայերի հույսը դրված եր վոչ միայն յեվրոպական ազատագրական շարժման ղեկավարների, այն է՝ Գարիբալդու, Մաձինիի, Զարտարիժսկու, Գերցենի, Բակունինի **այլ յեվ յեվրոպական պետությունների, մասնավորապես Անգլիայի վրա, հավատացած լինելով, վոր կարիք յեղած դեպքում կարելի կը լինեվ Կիլիկիա իջեցնել անգլիական զորքեր**... Նալբանդյանի այս գործունեյությունը այնքան նշանակալից է, վոր նա իր անձնավորության շնորհիվ կարողացավ մի տառապող ժողովրդի դատով հետաքրքրել յեվրոպական հայտնի հայրենասերներին և ազատամիտներին» *)։

Պետք է ասել, ինքը Լեմկեն, վորը նույնպես հնարավորություն ուներ ուշադրությամբ վերլուծելու Սվաճյանի նամակը (միաժամանակ նաև «Սենատական գործի» մյուս վավերագրերը), բոլորովին այդպիսի յեզրակացություններ չի անում։

Ա-Դոն հենվելով Սվաճյանի նամակի սխալ թարգմանու-

*) Ա-Դո «Միքայել Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի էջը և Բակունինի նրան գրած նամակները»։ Յերևան 1908 թ. եջ 23—24։

Թյան վրա—վստահանում է անել այդ։ Յեվ վարվելով այդպես ի հարկե տենդեցիոզ լույսով է լուսաբանում «Յերկրագործության» հեղինակի խսկական դեմքը։

Այդպիսով դուրս է գալիս, վոր Նալբանդյանը կանգնած է յեղել այսօրվա հայ նացիոնալիստների տեսակետի վրա և պաշտպանել է նրանց հասարակական-քաղաքական իդեալները։

Տեսնենք այժմ—ինչ է ասում ինքը Նալբանդյանը։ Մենք ունենք բավականաչափ նյութ։ Դա ամենից առաջ «Յերկրագործությունն» է և ապա նաև կառավարական քննիչ հանձնաժողովին տրված Նալբանդյանի ցուցմունքները։

*
* *

«Յերկրագործության» վրա ակներև ազդեցություն են թողել թե Գերցենը և թե 60-ական թվականների ռուս «ժողովրդական» հրապարակախոսները։ **«Թողեք մեռելներին թաղել իրենց մեռելները»**, *նոցա արևը մտած է, իսկ դուք կենդանի չեք և ապագայի արշալույսը Ձեր գլխի վրա չե բացվում»։*

«Յերկրագործության» առաջաբանի մեջ բերված **առաջին նախադասությունը Նալբանդյանը վերցրել է Գերցենից։**

Այդ ազդեցության հետքը նկատում ենք և Նալբանդյանի բրոշյուրի ընդհանուր կառուցվածքի մեջ։

60-ական թվականների ռուս ժողովրդականները կանգնած եյին այն տեսակետի վրա, վոր Արևմուտքը «փթել է», վոր կապիտալիստական և «մեշչանական Յեվրոպան» այլևս խոսք չունի ասելիք, և վոր «համայնական հողատիրություն» ունեցող ռուս գյուղացիությունը շնորհիվ իր «համայնական» հոգեբանության կարող է ավելի շուտ հասնել սոցիալիզմին, քան արևմտյան աշխատավորությունը։

Նույն այդ ընդհանուր մոտեցումը նկատում ենք և Նալբանդյանի մոտ։

«Յերկրագործության» առաջին տողերը նվիրված են կապիտալիստական Արևմուտքի խարազանմանը։ Հակառակ Անգլիական «քաղաքականության» բազմաթիվ հայկական չերկրպագուների—Նալբանդյանն ամենակտրուկ կերպով վորոշում է իր բացասական դիրքը Յեվրոպայի նկատմամբ և միևնույն ժամանակ կոչ է անում իր ընթերցողներին «Թարմ Ասիայում» վորոնել «տնտեսական խնդրի» լուծումը։

«...Այո, կարդում ենք Միք. Նալբանդյանի մոտ, Յեվրոպան կանգնած է այս մի դժվար լուծանելի խնդրի առջև, այդ տնտեսական խնդիրն է մարդը և հացը։ **Եվ այդ խնդիրը, կանուխ**

թե ուշ, թեեվ սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի։ Վոչինչ բռնություն, վոչինչ պահպանողական համակարգություն, վոչինչ ընդդիմադրություն, վորեվիցե կողմից չե պիտօ կարողանա փրկել նորա առաջը, թեեվ այսօր, հալածված չեվ անտարական են այդ ապագայի մարգարեները չեվ առաքյալները»։

Յեվ ահա, այդ տողերից հետո «Յերկրագործության» հեղինակն ավելացնում է.

«Ինչպես միջին դարերում, Ասիո անկյուններից խուժն բարբարոսներ իջան ու հեղեղեցին Յեվրոպա, այնպես ևս մարդու և հացի խնդիրը լուծվելուց հետո, **չեվրոպական մարդը պիտի փջնե Ասիա։ Պիտի գա որ, յերբ այն պառավ Ասիան մանկանա չեվ Ասիական ազգերը այն վայրկյանից պիտի սկսանին յուրյանց պատմությունը... Ասիո ապագան ավելի մեծ է, ավելի լայն է տնտեսական խնդրի վերաբերմամբ, քան թե Յեվրոպիո ապագան...»։**

Այդպիսով Արևմուտքին հակադրվում է «Թարմ» արևելքը։ Յեվ հենց դրա համար էլ Նալբանդյանը կոչ է անում հայ հասարակությանը թողնել «հին ուղին», հրաժարվել վաճառականությունից, դառնալ «հայրենիք», կառչել հողին և բնությանը և այդ ձևով զարկ տալ «ժողովրդի» վերածնությանը։ Բայց առաջ մենք շեշտեցինք արդեն Նալբանդյանի այն տողերը, ուր նա խստագույն քննադատության է յենթարկում բոլոր բռնապետական կառավարությունների քաղաքականությունը մանր ժողովուրդների նկատմամբ։

Յերկրագործության մեջ այդ քննադատությունն ամենից ուժեղ կերպով ուղղված է Անգլիայի դեմ։

«...Մինչև այժմ բռնակալ աշխարհակալությունքը մի սուտ փաստ ունեյին յուրյանց ձեռքում, վոր այսոր չե կարող արդարանալ և մարդկային բանականության դիմանալ։ Ի՞նչ էր այդ փաստը։ Այն, թե հզոր կառավարությունք տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի, միմիայն վայրենությունը քաղաքակրթելու համար։ Անձնական շահը չե, վոչ, քավ լիցի, մարդկության սերն է, վոր ստիպում է նրանց ստրկացնել զանազան ազգեր, վորովհետև այդ ազգերը յետ են մնում և չեն քաղաքակրթվում։

—Այսպես ուրեմն, Անգլիան Հնդկաստանի մեջ մի վորոշյալ կշիռ աֆիոն գնում է ժողովրդից 25 լիբրե ստերլինգի, իսկ ինքը նույն կշիռը վաճառում է 150 լիբրեյի, և կառավարու-

թյունից ավելի վոչ վոք իրավունք չունի շինականից գնելու, նույնպես և շինականը իրավունք չունի ուրիշի վաճառելու։

«Քաղաքակրթություն են տարածում»։

Անգլիան ամիսը յերեք շոգենավ աֆիոն բռնությամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամիսը յերեք շոգենավ արծաթ է տանում, այս անբարոյականություն է»*)։

Այդպիսի մոտեցում ունենալով անգլիական կառավարության նկատմամբ, Նալբանդյանը ինարկե շատ հեռու յեր կանգնած հայ նացիոնալիստական այն բանակից, վորը ինքը—վողջ արևելքի «քաղաքակրթությունը» կապում եր անգլիական հաղթությունների հետ։

Բավական է միայն թերթել ժամանակակից հայ հեղինակների հրապարակախոսական հոդվածները, և ավելի քան կտրուկ կերպով կպարզվի Նալբանդյանի և հայ միացյալ «լուսավորիչների» տեսակետների տարբերությունը։ «Մեր աչքի առաջ են, կարդում ենք միևնույն «Յերկրագործության» մեջ, բյուրավոր անգործ գործավորք, վոր տանջվում են սովից և վերջին ճիգն են թափում, պատերազմելով մի ծայրացյալ աղքատության հետ։ Յերևակայեցեք բյուրավոր ընտանիք, վորոնց մի անդամը գործելով մի գործարանի մեջ և ստանալով շաբաթը մի քանի շիլլինգ, ապրում եյին վորպես և իցե, այժմ այդ գործավորը դարձած յուր չքավոր ընտանյաց մեջ, չէ կարող և այն մի քանի շիլլինգը ճարել ընտանիքը ապրեցնելու համար»։

Նալբանդյանն ընդգծում է, վոր ժողովրդական մասսաների չքավորությունը, պրոլետարիզացիան և գործազրկությունն Անգլիայում—կապված են անհրաժեշտաբար կապիտալիստական արդյունաբերության հետ։

Նալբանդյանի բողոքն այսպիսով մանր բուրժուական հրապարակախոսի բողոքն է, վորը չի կարողանում նշմարել կապիտալիստական զարգացման ընթացքում առեղծվող ներհակությունները, չի կարողանում նկատել կազմակերպվող և պայքարող պրոլետարիատի շարքերը, և հենց դրա համար ել կապիտալիզմին հակադրում է նախակապիտալիստական շրջանը, մանր-բուրժուական տնտեսության եպոխան։

Սխալվում են հենց դրա համար ել նրանք, վորոնք Նալ-

*) Միք. Նալբանդյան. հատ. II. եջ 369.

բանդյանի դավանած նոր հասարակահայեցողությունն անվանում են «սոցիալիստական»։

Բավական է միայն ուշադիր կերպով քննել Նալբանդյանի «Յերկրագործությունը» վորպեսզի պարզ լինի այն, վոր առաջադրելով «յերկրագործությունը—վորպես ուղիղ ճանապարհ» Նալբանդյանը պաշտպանել է իրապես մանր բուրժուազիայի շահերը։

...«Յերբ վոր մի ազգ կազմող անհատների մեծագույն մասը պարապի յերկրագործությամբ և առհասարակ գյուղական տնտեսությամբ, այն ժամանակ, այդ ազգի ընդհանրությունը հարուստ է և ապահովյալ. վորովհետև նրա հիմքը դրված է բնականապես և բնության վրա։ Ազգի մեծագույն մասը յերկրագործությամբ ապահովյալ է, և անհնար է թե նեղություն պատահի ապրուստի կողմից։ Փոքրագույն մասը, վորը բաղկանում է վաճառականությունից, չի կարող անգործ մնալ, քանի վոր մեծագույն մասի արդյունքը սպառում է նորան կամ մշակության, կամ վաճառականության և վորևիցե մի դժբախտ դիպվածում, այդ փոքրագույն մասից ամենափոքրագույն մի մասը միայն կարող է յենթարկվել առորյա և անցողական նեղության, քանզի ազգի հիմքը դրված է յերկրի մակերևույթի վերա և կախված չէ օդի մեջ»*)...։

Ինչպես տեսնում ենք, Նալբանդյանը չի ժխտում վաճառականության կարևորությունը։ Նա միայն հիմնական ու գլխավոր շեշտը դնում է «յերկրագործության» վրա, իսկ «փոքրաթիվ վաճառականներին» ել թելադրում է սպասավորել յերկրագործ ժողովրդին։

...«Մինչև այժմ, ասում է նա, հայոց ազգի մեջ, խախուտ և անհիմն վաճառականության խորհրդով հիմնվեցան մեծ կամ փոքր ընկերություններ, նորանցից վոմանք ընկան դեպքերի հարվածի տակ, վոմանք տեվում են կիսամեռ, բայց մինչև այժմ չյերևեցավ և վոչ մի ընկերություն, վոր պարապեր յերկրագործության և յերկրագործական բերքերի մշակության, մինչև այժմ չերևաց մի ընկերություն ազգային վաճառականության»։

Յես այստեղ դիտավորությամբ կանգ չեմ առնում այն աղբյուրների վրա, վորոնց ազդեցության ներքո մշակել է Միքայել Նալբանդյանը իր ինքնահատուկ հասարակական-տնտեսական սիստեմը։ Կասկածից դուրս է, վոր նրա վրա մեծագույն ազդե-

*) Այդ խնդրի և Նալբանդյանի կյանքի և գործունեյության ավելի մանրամասն քննության վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել առանձին ուսումնասիրության մեջ։

ցություն են թողել մի կողմից ֆիզիոկրատները և ապա մյուս կողմից էլ ուտոպիական սոցիալիստները...:

Նրա դավանած «ազգային սոցիալիզմը» չափազանց ուրույն մի սիստեմ է, վորը զերծ չէ բազմաթիվ հակասություններից:

Մի կողմից նա, կարծես թե, ժխտում է կապիտալիստական հասարակարգը, բայց մյուս կողմից էլ իր «ազգային յերկրագործական պետությունը» թելադրում է վորոշ հարաբերությունների մեջ մտնել այդ միևնույն կապիտալիստական Յեվրոպայի հետ:

Մի կողմից խարազանում է մասնավոր սեփականության վրա կառուցված հասարակությունը, բայց միևնույն ժամանակ իր նկարագրած «ապագա հասարակությանը» թույլատրում է ունենալ փոքրաթիվ վաճառականներ, վորոնց հանձնարարում է միայն լինել կատարելապես «անկախ Յեվրոպայից»:

Յեվ այդպիսի հակասություններ քիչ չեն Նալբանդյանի մոտ:

Իր հիմնական ուշադրությունը նա, ինչպես ասացի, դարձրել է միայն «յերկրագործության» վրա:

Բացատրվում է դա նրանով, վոր «սոցիալական չարիքի» գլխավոր պատճառը Նալբանդյանը համարում է «հողազրկությունը»:

Յեվ դրա համար էլ առաջարկում է իր ուրույն «հողային ծրագիրը»:

«...Լսիր, յեթե կամենում ես գեղի մեջ բնակվել, ապա ուրեմն մյուս գեղացիների չափով կստանաս քո բնակության, առընին պարտեզի, անասնոց զոմի և այլ կարևոր բաների հարկավոր յեղածի չափ հողի քանակություն, վորի վերա կշինես քո բնակությունը, վերաստաց պարագաներով: Իսկ թե քաղաքում կամենում ես բնակվել, նույնպես մյուս բոլոր քաղաքացիների չափով հող կստանաս տուն և բնակություն հաստատելու համար: **Յեվ այս յերկու դիպվածում, այսինքն թե գեղում, յեվ թե քաղաքում, քեզ տրված հողը, վորի վերա շինություն թե արել ես յեվ թե վոչ, ազատ ես կամեցածիդ պես, գրավ դնել, վաճառել ընծայել, ի վերջո դու նորա անպայման տերն ես յեվ դորա վերա խոսելիք չկա:** Իսկ խոսելիքը վերաբերվում է դաշտային հողին ուր պիտի ընթանա յերկրագործությունը: Պիտի իմանաս, վոր գեղի և քաղաքի յուրաքանչյուր անդամը, հավասար չափով իրավունք պիտի ունենա մի վորոշյալ քանակության հողը մշակելու և գործելու: Յեվ այս իրավունքը պիտի տևե այնքան վոր-

քան նա, կամ նորա սերունդը, պիտի բնակվի այն հողի վրա: Յուրաքանչյուր քաղաք, յուրաքանչյուր գեղ, պիտի ունենա յուր հատուկ հողը, վոր պիտի սեփական մնա քաղաքի կամ գեղի հասարակության: Քաղաքի կամ գեղի բնակիչքը հավասար իրավունքով ազատ են յուրյանց բաժինը գործել և մշակել, քանի վոր գտնվում են այն գեղում կամ քաղաքում: **Յեվ յերբ դու, լինելով քաղաքացի, զբաղված լինելով վաճառականությամբ, կամ այլ գործերով, չկամիս կամ ձեռնհաս չես քո բաժին ընկած հողը մշակելու, կամ մարդիկ վարձելով մշակել տալու, այդպիսի դիպվածում կարող ես վարձու տալ յեվ այդ կերպով օգուտ քաղել քո հողից: Յերբ հող վաճառելու սկզբունքը թույլ տրվի, այն ժամանակ աղքատության յեվ թշվառության սկզբունքը կընդունվի...»:** «Հողը պատկանում է հասարակության, վորի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վրա, հավիտյանս ժամանակների, և մյուս կողմից վաճառելու իրավունք չունի—հողով, իսկ մյուս կողմից առանց արգելքի, հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վրա, և անհնար է, վոր նա կամ աղքատության հանդիպի, կամ խայտառ կարոտ մնա:»

Յես դիտավորությամբ կանգ եմ առնում յերկար այդ պարբերության վրա, վորովհետև ի վերջո Նալբանդյանի ուրույն տնտեսական ուսմունքի ամենահիմնական կողմերը շեշտված են հենց վորոշյալ խոսքերի մեջ:

Նալբանդյանը՝ ինքը շատ պարզ ու վորոշ կերպով ընդգծում է, վոր իր ապագա հասարակության մեջ կարող են լինել և վարձու աշխատավորներ, և վարձկալական պայմաններ, և նույնիսկ արտադրական միջոցների մասնավոր սեփականություն: Հողի «համայնացման» միջոցով նա ցանկանում է խափանարար պատնեշ կառուցել կապիտալիստական զարգացման հանդեպ, և ապա այդ ձևով էլ կռվել «աղքատության» դեմ:

Ահա ինչու Նալբանդյանը վոչ մի սպասելիք չունի Արևմուտքից և արևմտյան «կարգերից»: Հիմնական և գլխավոր ուշադրությունը նա դարձնում է Արևելքի վրա:

Ռուս նարոդնիկները հակադրում եյին «ախտավոր» և «կապիտալիստական» Յեվրոպային իրենց «անարատ» և «գյուղացիական» Ռուսաստանը:

Նալբանդյանը կանգնած լինելով ըստ եյության միևնույն հասարակահայեցողության հիմնական դիրքերի վրա ներբողներ է ձոնում իր ասիական հայրենիքին: Քիչ առաջ մենք ծանոթացանք արդեն նրա այդ մասին ունեցած հայացքների հետ: Նա, ինչպես տեսանք, սեփականատիրական կարգերի դեմ չէ: Նա յերգում է միայն Ասիան, վորպես «հողատու» և յերկրագործական մի վայր, վորը հենց այդ հատկությունների շնորհիվ կարող է «ժողովրդի մեծամասնությանը» ապահովել «հողազրկությունից» և «աղքատությունից»:

Իսկ վորպեսզի Ասիայում ևս չկրկնվի Անգլիայի կամ Ֆրանսիայի պատմությունը, Նալբանդյանն առաջադրում է «հողի համայնացման» յուրորինակ իր ծրագիրը:

Այդ բոլորը, ինչպես տեսնում ենք, Բակունինի գաղափարների շատ միամիտ և վորոշ փոփոխությունների յենթարկված ձևակերպումն է:

Մենք դժվարանում ենք այդտեղ նկատել արևմտյան մտածողների այն ինքնուրույն և հայ միջավայրի կոնկրետ պայմաններին համաձայնեցրած մեկնաբանությունը, ինչ վոր նշմարում են Նալբանդյանի չափազանց եքսպանսիվ յերկրպագուները:*)

Մեր կարծիքով Նալբանդյանի կատարած գործը 60-ական թվականներին այնքան խոշոր է յեղել, վոր ամենևին կարիք չկա ավելորդ չափազանցությունների մեջ ընկնել:

Մեզ թվում է, վոր Նալբանդյանի հողային ռեֆորմի ծրագիրը կառուցվել է Նոր-Նախիջևանի քաղաքի և շրջակա հայ գյուղերի հակամարտության և վեճերի ազդեցության ներքո:

Նրա բողոքը Անգլիայի և անգլիական արդյունաբերության դեմ ստեղծվել է վոչ միայն Յեվրոպական և ռուսական մտածողների քարոզած գաղափարների ազդեցության ներքո, այլ նաև շնորհիվ հայ մանր վաճառականության, քաղաքային արհեստավորության, քայքայվող մանր բուրժուազիայի սոցիալական անբավականության:

Ցուրակերպ ձևով Նալբանդյանն աշխատել է ձևակերպել ժողովրդական վարի խավերի հայացքները: Յեվ վորպես արևելյան մանր բուրժուազիայի հրապարակախոս նետվել է առաջին հերթին Ասիայի ամենախոշոր բռնակալի—կապիտալիստական Անգլիայի դեմ:

---

*) Տես որին. Թ. Ավդալբեկյան՝ «Միքայել Նալբանդյան» Յերևան 1928.

«Յերկրագործության» ամենաթերի և պակասավոր կողմերը հանդիսանում են հենց այդ խորհրդածություններն արևելքի և հայ ժողովրդի ապագայի մասին:

Բայց դրա փոխարեն անհամեմատ ավելի ուժեղ են նրա քննական դիտողություններն արևմտյան հասարակության ներհակությունների մասին:

Այստեղ Նալբանդյանը գծվում է ամբողջովին, վորպես մարտնչող, պայքարող և հեղափոխական դեմք:

Յեվ յեթե հաշվի առնենք, վոր այդ սուր քննադատությունը նա գրել է 60-ական թվականներին, Գաբրիել Այվազյանի, հայ կղերականության տիրապետության որերին, այն պատմաշրջանում, յերբ նույնիսկ ամենաառաջավոր հայ կղերականները տոգորված եյին կույր յեվրոպասիրության հովերով և մեծարման եյին յենթարկում կապիտալիստական Արևմուտքն ու ցարական Ռուսիան—այդ պարագայում ավելի քան պարզ կլինի «Յերկրագործության» առանձին արժեքը մեր գրականության պատմության մեջ:

«Յեվրոպան ուշ ծնվեցավ, բայց շատ արագ ծերանում է», ասում է Նալբանդյանը: Յեվ ասելով այդ, կարողանում է նկատել այն, վոր «Յեվրոպան կանգնած է մի դժվար լուծանելի խնդրի առջև», վոր Արևմուտքում իշխող բռնակալական պետությունները դասակարգային պետություններ են, վոր «տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է»: «Այդ ասելով, շեշտում է Նալբանդյանը, պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և վոչ նրա միջից, նորա քրտինքով և նրա արյունով հառաջացած մի քանի մեծատունք»:

Ապա կանգ առնելով Անգլիայի բնակչության գերազանց մեծամասնությունը կազմող «հասարակ ժողովրդի» կացության վրա—Նալբանդյանը գտնում է, վոր «Անգլիո («հասարակ ժողովրդի») տնտեսական դրությունը, մանավանդ բաղդատելով նորա այլ ճյուղերում ունեցած ազատ որենսդրության հետ, զարհուրելի յե»:

Նալբանդյանը շատ լավ գիտե, վոր տնտեսական այդ դրության հեղինակները իշխում են դասակարգային դիկտատուրայի միջոցով, և վոր «տիրության» ձեռներեցությամբ ստեղծված պատերազմներից «հասարակ ժողովրդի—ազգի համար չկա վոչ ջերմություն և վոչ սառնություն»:

...«Խեղճ ազգը կրում է ծանր հարկեր՝ զոհում է իր առույգ

գավակներին թշնամին վանելու համար, վոգևորվում է հաղթությամբ, տաղեր է յերգում և գործը ավարտելուց հետո՝ ուրախ-ուրախ վերադառնում է յուր գեղը, կարծելով և հավատալով, թե մեծ գործ կատարեց հայրենիքը փրկեց, հողը փրկեց և պատիվը պահեց։ Սորանից ավելի կույր և խոշոր հեգնություն մենք չենք կարող յերևակայել»..։

Մենք գտնում ենք, վոր Նալբանդյանի «Յերկրագործության» ամենաուժեղ տողերը հենց այդ սուր դիտողություններն են։ Նազարյանցի ընկերակիցն այստեղ հանդես է գալիս իր արտասովոր բարձրությամբ։ Նա—չնայած հակառակ իր հայացքներին մի հիմնական կետում համենայն դեպս հետևողական է։

Դա բացառական, կտրուկ և վորոշ վերաբերմունք է դեպի «հին Յեվրոպան,» այն Յեվրոպան, վորը չի կարողացել և չի կարողանում, Նալբանդյանի համոզումով լուծել «անտեսական խնդիրը, մարդու և հացի խնդիրը»։

...«Յեվ այդ խնդիրը, ընդգծում է նա, կանուխ թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի։ Վոչինչ բռնություն, վոչինչ պահպանողական համակարգություն, վոչինչ ընդդիմադրություն, վորևիցե կողմից, չե պիտի կարողանա փակել նորա առաջքը, թեև այսոր հալածական և աքսորական են այդ ապագայի մարգարեքը և առաքյալքը»...*)։

Կարծում ենք դրանից հետո շատ դժվար է պնդել, վոր Նալբանդյանը նպատակ է ունեցել «տաճկահայ խնդրի» լուծումն իրագործել, և դրա համար ծրագրել է ոգտագործել մի կողմից արևմտյան և ռուս հեղափոխականների և մյուս կողմից էլ անգլիական կառավարության աջակցությունը։

Կարելի յեր ամենևին կանգ չառնել միակողմանի և հիմնովին սխալ այդ տեսակետի վրա, յեթե միայն Ա. Դոն միայնակ լիներ։ Դժբախտաբար այդ սխալ մեկնաբանությունը չափազանց ընդհանրացած է։ Ահա հենց այդ էլ իրավունք է տալիս—բացի «Յերկրագործության» արդեն հիշատակված տողերից կանգ առնել նաև ուրիշ ավյալների վրա, առանձնապես Նալբանդյանի այն հայտարարության վրա, վոր արել է նա Քննիչ Հանձնաժողովին հարցաքննության ժամանակ։ Այստեղ Միքայել Նալբանդյանը հայտնել է նախ այն, վոր իր մոտ գտնված ծածկագիր բառարանը ինքն արտագրել է Փարիզում, մի ուրիշի մոտ գտնված որինա-

*) Մ. Նալբանդյան հատ. II եջ 359.

կից, և վոր այդ ուրիշը իր հերթին ստացել է բառարանը վոմն Պետրոս Բեյից։

Իսկ Պետրոս Բեյն էլ Նալբանդյանի հայտարարության համաձայն, յեղել է իրեն «Հայաստանի դուքս հայտարարող մի շառլատանի ագենտ»։ Այդ շառլատանը. պատմում է Նալբանդյանը, վորին վոչ վոք հայերից չի ճանաչում, յերկու անգամ Միլանում հրատարակել է Ֆրանսերեն լեզվով խղճուկ մի բրոշյուր՝ «Մեմուարներ» վերնագրով. այդ բրոշյուրի մեջ նա զետեղել է իր մի շարք տխմարագույն նամակները Թուրքիայի զանազան պետական պաշտոնյաներին ուղղված յեվ դրանց մի քանի նամակները..»։

Այդ մարդուն, վորչափ կարողացել են փարիզեցի հայերը իմանալ Պետրոս-Բեյից, վարձատրում է անգլիական կառավարությունը ճիշտ է այդ թե վոչ, յես չեմ կարող վստահանալ։ Սակայն վոչ մեկ հավաս, վոչ այդ շառլատանին, յեվ վոչ էլ նրա ագենտին յես չեմ ընծայում։ Այդ շառլատանը, վոր իրեն անվանում է Լուսինյանների շառավիղ Լևոն, այս տարի հրատարակել է ֆրանսերեն մի ծանուցագիր, վոր կոչվում է «Հայաստանի դիկտատորի և պրոտեկտորի կողմից Յեվրոպայի բոլոր պետություններին ուղղված ցիրկուլյար»։ Ցիրկուլյարը հրատարակվել է, վորքան հիշում եմ, 1862-ին, մարտի սկզբին, յեվ տպած է կոշտ թղթի վրա, Միլանում, թեև նա գրում է, վոր իր բնակավայրը Զեյթունն է, Տորոսի լեռներում, ուր նա վոտք չի կոխել։ Ցիրկուլյարը արտատպվել է, յեթե չեմ սխալվում, 1862-ին, մայիսի սկզբին իտալական մի լրագրում, վոր կոչվում է «Իտալիա» և լույս է տեսնում Միլանում կամ Տուրինում, ավելի ճիշտ Միլանում։

Այդ ցիրկուլյարի մեկ որինակը կարող է լինել և արտաքին Գործերի Նախարարության մոտ, վորովհետև ինչպես ասացի, ծանուցագիրն ուղղված է յեղել յեվրոպական բոլոր պետություններին։ Ծանուցագրի մեջ, վոր գրված է խղճուկ ֆրանսերենով, նա, այսինքն Լևոն Լուսինյանը, դիմում է յեվրոպական կառավարություններին և խնդրում է, վոր Կիլիկիայի մի քանի քաղաքները, վորոնք Միջերկրականի արևելյան ափերի մոտ են, հայտարարվեն ազատ քաղաքներ, վոր իբր թե Անգլիան առաջարկել է Թյուրքական Սուլթանին ազատություն տալ ինչ վոր քաղաքի կամ վայրի, և վոր Սուլթանը սկզբում խոստացել է կատարել Անգլիայի պահանջը. իսկ հետո չի կատարել իր խոսքը։

Հետուստում է, վոր ինքը (ինքնակոչը) մի խումբ իր լեռնեցիներով (պետք է յենթադրել, վոր խոսքը Տավրոսի լեռներում ապրող հայերի մասին է) կռվել է թշնամիների հետ և հաղթել: Շատ այդպիսի հիմարություններ կան, վորոնց չեմ հիշում այժմ: Կարճ ասած, վողջ այդ ծանուցագիրը լեցուն է սուտով, վորովհետև յերբեք նա չի յեղել Տավրոսի լեռներում, վոչ վոքի դեմ չի պատերազմել, Զեյթունումն էլ ամենևին չի յեղել...:

Նկատելով այդ ավանտյուրիստի անամոթությունը յեվ լըրբությունը յես խորհեցի գրել նրա դեմ ուժեղ բողոք յեվ տպել բոլոր լեզուներով: Այդ նպատակով յես գրել եմ առաջ հայերեն, սկսել եմ թարգմանել... իմ բողոքը գտնվում է իմ թղթերի մեջ, հայերենը—ավարտված, իսկ ռուսերենը—անավարտ յեվ դեռևս անմշակ: Հանձնաժողովը կարող է հավաստիանալ դրանում»*)...:

Ապա, այդ հետաքրքրական հայտարարությունից հետո, Նալբանդյանը պատմում է, վոր ակնարկած Լուսինյան Դուքսը դրամ գրություն է սկսել Թուրքահայերի հետ և Կիլիկիայի ազատագրման համար դրամ է խնդրել նրանցից: Միաժամանակ նա կազմել է բառարան և իր բոլոր թղթակիցներին է ուղարկել, վորպեսզի ապացուցի, վոր կապ ունի բառարանի մեջ հիշված մարդկանց հետ»:

Նալբանդյանը հաղորդում է նաև, վոր մի քանի Գարիբալդիականների հետ Լուսինյանը կապ է ունեցել, սակայն վոչ Գարիբալդու հետ...»:

Ցանկանալով նախազգուշացնել Պոլսի հայերին, վորպեսզի նրանք դրամ չտան ավանտյուրիստներին, Նալբանդյանը և մի քանի Փարիզեցի հայեր ուղարկում են այդ մասին նամակ Բյաթիպյանի միջոցով Պատրիարքարանին...:

Վողջ այդ պատմությունն ուշագրավ է միայն մի կողմից: Յեթե նույնիսկ ընդունենք, վոր Նալբանդյանը ցանկացել է խաբել քննիչներին, և վոր բառարանի մասին հորինած պատմությունը նա ստեղծել է իրեն արդարացնելու համար, մի բան համենայն դեպս ակներև է—դա նրա ավելի քան վորոշ և բացասական վերաբերմունքն է դեպի անգլիական կառավարության քաղաքականությունը: Ներկա պարագայում Նալբանդյանը արտահայտում է իր իսկական վերաբերմունքը:

Թե Լուսինյաններից վորին է նկատի ունեցել նա*) դժվար է վորոշել: Չենք կարծում, վոր խոսքը Թորեն Նարբեյի կամ նրա յեղբոր Գվիդոնի մասին յեղած լինի: Այդ յերկուսի «իշխանական» պրետենզիաների մասին պատմում է նաև Ստեփան Փափազյանը իր հայտնի հիշողությունների մեջ**): Բայց ներկա պարագայում այդ չէ կարևորը, այլ այն, վոր Նալբանդյանը բավորոշ կերպով ցուցադրում է իր դիրքն անգլիական կառավարության նկատմամբ: Նա «շառլատանություն» է անվանում

*) Այս և բոլոր մյուս մեջբերումները քաղում ենք Համ. Կենտ. Գործ. Կոմիտեի պետական դիվանում գտնվող «Սերնո-Սոլովևիչի, Վետոշնիկովի և մյուսների» հայտնի գործից, վոր բաղկացած է մի քանի հատորներից: Բերված կտորը գրված է Նալբանդյանի ձեռքով, և ապա նույնությամբ բերվում է նաև առանձնապես Նալբանդյանին նվիրված հատորի մեջ. „Сенатская записки о маркизе де Траверсе и Налбандове· (Правит. Сенат и 5 Департ. 1 отдел· Сен· произв)·

*) Իր «Զեյթունի անցյալն և ներկայեն» գրքի մեջ Զ ե յ թ ո ւ ն ց ի ն (Վիեննա 1920 հատ 1, եջ 104) պատմում է հետևյալը: «Անցան մի քանի տարիներ, գրեթե խաղաղ ու հանդարտ, մինչև 1861 թ. ձմեռը Հաճընեն Զեյթուն յեկավ Լևոն անունով մեկը, վոր ինքզինքը իշխան կանվաներ ու չորս ամսո չափ մնալով այնտեղ, հանրագրություն մը պատրաստեց նույն ժամանակի Ֆրանսիայի վեհապետ Նապոլեոն Գ. կայսեր ներկայացնելու համար: Հանրագրության իմաստը այն եր թե «Մենք Տորոս լեռանց մեջ բնակող հայերս 70.000 զենք բռնելու կարող մարդ ունենք, կը փափագենք, վոր մենք մեզ կառավարելու առանձնաշնորհումն ունենանք, ատոր համար կաղաչենք Ձեր կայսերական վեհափառությանը, վոր հանեք միջնորդել Թյուրքիո կայսեր մոտ, վոր մեր ցանկացած ազատությունը շնորհելով մեզ, հայ իշխանը մը նշանակե մեր վրա իբրև կառավարիչ»: Կասկածից դուրս է, վոր այդ Լևոնն էլ (վորը գուցե նույնիսկ Նալբանդյանի կողմից հիշված Լուսինյանն է) շառլատանի մեկն է յեղել, վոր փառասիրությամբ է ֆրանսիական դիվանագիտության շահերը:

**) Տես՝ Ստ. Փ ա փ ա զ յ ա ն «Պատգամավորի մը հուշատետրեն» («Անահիտ» 1907 թ. եջ 58):

«Նար-Պեյ, պատմում է Ստ. Փափազյանը, ցանկարում է իր յեղբայր Գվիդոնը թագավոր ընտրել տալ (ինքնին էլ հարկավ կաթոլիկոս) Կիլիկիո վերականգնված գահուն»: Թե վորքան մոտ եյին կանգնած յերկու այդ յեղբայրները ավանտյուրիզմին, այդ յերևում է միևնույն Ստ. Փափազյանի հետևյալ գիտողությունից Նար-Պեյի մասին... «Նար-Պեյի մեծ արամությունը հոս է յեղեր, զի այս որերս Լուսինյան ըլլալու հաջողեր է, Բրենս դը Լուսինյան, բեթինկոնտին վերին ծայրը կարմիր լաթ մը դնել սկսած եր և Կիպրոսի մեջ ունեցած ժառանգությունը պահանջելե յետեւ ըլլալուն—վորուն համար որը ութը տաս նամակ կը գրեր»: Ինչպես տեսնում ենք, բավական հիշեցնում է Նալբանդյանի նկարագրած Լուսինյանին: Բայց Փափազյանը խոսում է 1878 թվականի դեպքերի մասին: Ահա ինչու է ավելի հեշտ կլիներ յենթադրել, վոր Նալբանդյանը պատմում է մի ուրիշ ավանտյուրիստի մասին:

տաճկահայերի և մասնավորապես Կիլիկիայի «ազատագրման» անվան տակ սկսած ազգայնական սպեկուլանտների գործունեությունը:

Միևնույնն է ասում է նա և իր բանտից գրած նամակներից մեկում (ապրիլ 8-ին 1863 թ.), երբ կանգ առնելով եվրոպական պետությունների քաղաքականության վրա արևելյան ժողովուրդների նկատմամբ—ամենախիստ քննադատության է ենթարկում եվրոպական բուրժուազիայի կրոնական սպասավորների—միսիոնարների գործունեությունը:

«Ես չգիտեմ գրում է նա, թե ինչ է տպագրել պարոն Բարտոլդը տաճկահայ բողոքականների մասին, բայց զգում եմ, որ այդ մի կողմնապահ ներբող պիտի լինի հօգուտ իր եղբայրակիցների-ի պաշտոնե-ամերիկացի արկածախնդիրների:

Այն ամենը, ինչ որ տպեն միսիոներներն այս գործի վերաբերմամբ անիրավացի են և սուտ: Այս խնդրում նրանց նույնքան կարելի չէ հավատալ, որքան և յուրաքանչյուրին, երբ սրանք գրում են 16 և հաջորդ դարերի պատմությունը: Իհարկե, ով որ բուն տեղում չի ուսումնասիրել, թե ինչ ասել է հայ բողոքականը և որ գլխավորն է, թե ինչ մարդիկ են այդ պարոնայք միսիոնարները, այդպիսին անշուշտ խաբեության զոհ կը դառնա, սակայն ինձ չի կարող մոլորեցնել ոչ որևէ Բարտոլդ և ոչ էլ նույն ինքն միսիան, **վոր գործում է միեվնույն սկզբունքներով, վորով պատվելի Ֆրանսուա Քսավիեն գործում եր Հնդկաստանում, Ճապոնիայում, յեվ վորով հետագա «ճիզվիտ առաքյալները գործում եյին յերկնքի վորդու մայրաքաղաքում»:**

Ապա շեշտելով այն, որ այդ միսիոնարները **«մեծամեծ ռոճիկներ են ստանում, յեվ կանխիկ դրամով կամ անգլիական դեսպանության հովանավորությամբ գնված դավանափոխ անձերի չնչին թիվը մեծացրել եյին»,** *Նալբանդյանը տալիս է կապիտալիստական արևմուտքի քաղաքականության այնպիսի հատու բնորոշում, որ կարող է խիստ ուսանելի լինել հայ նացիոնալիստական հոսանքների համար նույնիսկ այսօր:*

«Ամբողջ խնդիրը, կարճ ասեմ, ահա թե ինչ է — Հայերը Տաճկաստանում զուրկ են վորեվե պաշտպանությունից: Անգլիական ու Ֆրանսիական կառավարությունները իրանց օգտին են ծառայեցնում այդ հանգամանքը: Նրանք փաշաների բռնություններից իրանց պաշտպանության տակ են առնում այն

քրիստոնյաներին, վորոնք կամ բողոքականության յեվ կամ կաթոլիկության գիրկն են ընկնում: *Ահա այն միակ հուսութը որի վրա հենված է եղել այս դավանությունների հաջողությունը Տաճկաստանում 40-ական թվականներին . . .: Ինչպես է ուրեմն համբերում տաճիկ կառավարությունը, երբ որ շատ պարզ է Ֆրանսիայի և Անգլիայի ձգտումները»*)...: Կարծում ենք, այդ բոլորից հետո, կարելի չէ միանգամայն որոշ համարել Նալբանդյանի պաշտպանած տեսակետը:*

Նա, ինչպես տեսանք արդեն, շատ լավ էր ծանոթ եվրոպական պետությունների քաղաքականությանը արևելյան ժողովուրդների նկատմամբ: Նրա վերաբերմունքը դեպի անգլիական և ֆրանսիական կառավարությունների գործելակերպը միանգամայն բացասական է: Նա այնքան հեռատես է, որ կարողանում է մերկացնել զանազան եվրոպացի «հայասերների», միսիոնարների և թուրքահայ ժողովրդի կեղծ բարեկամների գործունեության իսկական դրդապատճառները: Այդ միսիոնարներին Նալբանդյանը համեմատում է նույնիսկ Հնդկաստանում և Յապոնիայում գործող միսիոնարների—արևմտյան կապիտալիզմի առաջին սուրհանդակների հետ:

Շատ դժվար է այդ բոլորից հետո որևէ նմանություն գտնել Ա. Դո-ի, հայ ռազմական նացիոնալիստների և Նալբանդյանի պաշտպանած տեսակետների մեջ:

Հայ բուրժուազիայի գաղափարախոսները թե անցյալում և թե այժմ կանգնած են այն տեսակետի վրա, որ կապիտալիստական Արևմուտքը, լինելով «կուլտուրական» միավոր, «ազատական» միսիա ունի Արևելքում և որ «թյուրքահայ ժողովրդի» ազատագրումը կապված է «քաղաքակիրթ» եվրոպական պետությունների «հաղթական արշավի» հետ:

Հայ ազգայնականները միշտ առանձին խանդաղատանքով են վերաբերվել զանազան եվրոպական «հայասերների», միսիոնարների և դիվանագետների գործունեությանը և ժողովրդական վարի խավերի մեջ էլ տարածել են կատարելապես թյուր և սխալ հասկացողություն կապիտալիզմի «դիվանագետ-միսիոնարների» իսկական գործունեության մասին:

Միքայել Նալբանդյանը, իր գործունեության սկզբնական

**) Տես. «Նորք», 1924 թ. գիրք 4. էջ 174—175: «Միքայել Նալբանդյանի բանտից գրած նամակները»:*

շրջանում գույն և տոգորված է յեղել ռուսահայ մտավորականության ընդհանուր այդ մտայնությամբ։

Բայց նրա մոտ **հիմնականը** ու գլխավորը այդ չե յեղել։ Յեվ հենց դրա համար էլ նա կարողացել է այնքան շուտ ազատագրվել «յեվրոպասիրության» ազդեցություններից։ 1861-ի թ. վերջից սկսած արդեն նա թոթափում է հին գաղափարների ծանր լուծը և կտրուկ կերպով բռնում է այն նոր ուղին, վորի բնորոշումը տեսնում ենք նրա «Յերկրագործության» մեջ։

Ահա այդ է, վոր չեն կարողացել նկատել ռուսահայ հասարակական մտքի մեր պատմագիրները։

...«Նալբանդյանը, կարդում ենք այդ պատմագիրներից մեկի մոտ, պատկանում է այն հասարակական խմբակցության, վորն յուր զարգացման և զանազանավորման տարբեր շրջաններում ծնել է նաև Գր. Արծրունուն և Քր. Միքայելյանին։ Ինչ վերաբերում է «Յերկրագործության»—այդ բրոշյուրը կրել է պատահական բնույթ. և այնքան էլ կարևոր չե «Նալբանդյանին հասկանալու համար»։ ...«Ազգության հրապարակախոս» լինելով Նալբանդյանը, շարունակում է Արս. Տերտերյանը, **միՆչեվ յուր կյանքի վերջը մնաց հավատարիմ յուր դավանած սկզբունքներին յեվ Նազարյանի հետ միասին հիմնադիր հայկական լիբերալիզմի**...։*)։ «**Փառք յեվ պարծանք Նազարյանին յեվ Նալբանդյանին, վորոնք իրենց աշակերտներով** (!!!) **հանգեծ մինչեվ մեր օրերը մնացին ազգության, յեկեղեցու յեվ պետության ջերմեռանդ յերկրպագուներ**» **)...։

Ամե՛ն ինչ ասված է այստեղ ավելի քան պարզ լեզվով։

Ա. Տերտերյանը ավելի ճշմարտախոս է և հետևողական։

Նա կարծես լրացնում է և հասցնում տրամաբանական վերջակետին հայ նացիոնալիզմի պաշտպանած տեսակետները։

Յեվ նա վատ չե անում։ Ինքնահատուկ իր լուսաբանությամբ Ա. Տերտերյանը պարզորոշ կերպով ապացուցում է, թե վորքան տենդենցիոզ և միակողմանի է յեղել մինչև այժմ հայ քննադատների մոտեցումը դեպի Նալբանդյանի հասարակական-գրական գործունեությունը։

---

*) Արսեն Տերտերյան՝ «Միքայել Նալբանդյան, Ազգության հրապարակախոսը»։ Ալեքսանդրապոլ 1910—եջ. 64.

**) Նույն տեղ՝ եջ 65։

*
* *

«Յերկրագործության մեջ Նալբանդյանը կանգ է առնում նաև «ազգ»-ի և «ազգության» վրա։ Բայց այն, ինչ վոր նա յե սում «ազգության» մասին—բավական տարբերվում է հայ ռազմական նացիոնալիզմի պաշտպանած հիմնական թեզերից։

«Ազգությունը»—Նալբանդյանն «ընդունում է» միայն վորպես գոյություն ունեցող «իրողություն»։ Յեվ միմիայն այդքան։ Միաժամանակ դրա հետ նա շեշտում է, վոր ինքը «չե արգարացնում» ազգությունը» և կանգնած է այն տեսակետի վրա, վոր «ազգությունը» դա միևնույն «յերկրագործ ժողովուրդն է», վորի համար ամենահիմնական խնդիրը—«տնտեսական» խընդիրն է։

Անշուշտ, վողջ այդ իմաստասիրությունը բավական խառն է և հակասական։ Ցուրորինակ նացիոնալիզմ կա Նալբանդյանի մոտ, բայց և այնպես նրա դավանած աշխարհայեցողությունն այն չե, ինչ վոր վերագրում է նրան Տերտերյանը։

«Ազգությունը, կարդում ենք Նալբանդյանի մոտ, իբրև հավասարի յերևույթ, ընդհանուր մարդկության պատմության մեջ, չի կարելի մերժել, **բեվ բանականությունը յերբեք չե կարող արգարացնել նորան**։ Մարդը մինչև այժմ չե հասել այնտեղ, վոր առանց յերկրորդական և պաշտոնական անունի հանդես գա միայն մարդու բնական անունով։ Մինչև այժմ մարդը չկա աշխարհիս յերեսին, մինչև այժմ ազգեր կան...»*)։

Արձանագրելով այդպիսով «ազգի» փաստական գոյությունը, Նալբանդյանը վորոշակի կերպով ընդգծում է, վոր «վերանը, Նալբանդյանը...» —

...«Զոր-չոր ազգություն քարոզել, առանց մեկնելու քո քարոզության պատճառները, վոչ այլ ինչ է յեթե վոչ ֆանատիկոսություն, և այդ տեսակ քարոզությունը յերբեք չե կարող արդյունք արձակել մի ժողովրդի մեջ, վոր **վերացականից առաջ ամենայն ոպե զարկվում է իրական կյանքի հետ**» ..։

Այստեղ ևս շատ բան ասված է անորոշ և մշուշապատ ձևով։

---

*) Մ. Նալբանդյան. հատոր 2, եջ 361.

Նալբանդյանն, ըստ երևույթին, ցանկանում է բնորոշել սոցիալական ներհակությունները, բայց նա չի կարողանում մոտենալ պրոբլեմի լուծմանը հենց նրա համար. որ կանգնած լինելով էկլեկտիկական տեսակետի վրա պրիմիտիվ հասկացողություն ունի դասակարգային պայքարի մասին:

Ցեվ ահա դրանից էլ բղխում են նրա դեգերումները և հակասական կարծիքները:

Նա շեշտում է, որ «ազգությունը» դա միևնույն «երկրագործ ժողովուրդն է», որ հիմնական խնդիրն «ազգության» համար «տնտեսական խնդիրն է»: Բայց ասելով այդ,—ընդունում է միաժամանակ փոքրաթիվ վաճառականների գոյությունը, այն վաճառականների, վորոնք պիտի սպասավորեն «երկրագործների ազգության» կամ էլ «հասարակության»:

Ինչպես տեսնում ենք, այդ բոլորը ամենատիպիկ մանր-բուրժուական գաղափարախոսություն է,*) վորը շատ սերտ կեր-

*) Իր ուսումնասիրություններից մեկի մեջ («Միքայել Նալբանդյան». պատմական—գրական վերլուծություն, Ցերևան 1928. էջ 118) Թադ. Ավդալբեգյանը հայտարարում է ի միջի; այլոց, հետևյալը՝.. «Նալբանդյանի «Ցերկրագործության» վերլուծությունը խախտում է նաև հիմունքն այն հայացքի, ըստ վորի 50-70-ական թվականների ռուսահայ գրականությունը միայն բուրժուազիայի իդեոլոգիա յե ներկայացնում: Սույն հայացքը պաշտպանողներին ի հերքումն կարող ենք մատնանշել հայ հրապարակախոսին, վոր դեպի համայնացրած հողն ու մանր յերկրագործությունն եր կոչում սուրուկ, աղքատ ու պանդուխտ ազգակիցներին...»:

Այդ պարբերության մեջ կան մի քանի սխալներ:

Այդ այն է նախ, վոր Ավդալբեգյանից առաջ էլ մի քանի քննադատների կողմից շեշտվել է այն, վոր Նալբանդյանի «Ցերկրագործությունը» վորոշակի կերպով տարբերվում է 50-60 ական թվականների գրականության հիմնական ուղղությունից: Ավդալբեգյանի տեսության միակողմանիությունը նրանումն է, վոր նա Նալբանդյանին անվանում է բացառապես գյուղացիության իդեոլոգ: Ցերկրորդ սխալը նրանումն է, վոր իր տեսակետի արդարացման և հիմնավորման համար նա հորինել է մերկանտիլիզմի հայկական թեորիան: Ավելի ճիշտ կլիներ ասել, վոր Նալբանդյանը վոչ թե տրամաբանական մի սխալ է ստեղծել, այլ զանազան սխալներից հյուսված մի հրապարակախոսական տեսություն: Նալբանդյանի տրակտատը իբրաև տնտեսագիտական տրակտատ չէ, այլ քաղաքական մի տեսություն, վորը զերծ չեր, ինարկե, հակասություններից: Ապա յերրորդ սխալն էլ այն է, վոր Ավդալբեգյանը կարծում է, թե իր ուսումնասիրությունը բաց է անում ինչ վոր նոր հորիզոններ: Վորքան մեզ հայտնի յե—մինչև այժմ վոչ վոք չի պնդել, վոր 50—60-ական թվականներին, բացի բուրժուական իդեոլոգիայից, չի յեղել ուրիշ վորևէ իդեոլոգիա: Ցեղել է անշուշտ: Խոսքը միայն նրա մասին է, վոր ի շ խ ո ղ ույժը յեղել է բուրժուազիան, և բա-

պով շաղկապված է Բակունինի դավանած ընդհանուր աշխարհայեցողության հետ:

Դրա վրա արդեն շեշտել են մի քանի պատմագիրներ: Բակունինի մոտ նացիոնալիզմը շեշտված է յեղել, պետք է ասել, ավելի սուր կերպով: Բակունինը մինչև 1861 թ. պաշտպանել է, ինչպես հայտնի յե, սլավոնական ժողովուրդների հեղափոխական ֆեդերացիայի գաղափարը: Նրա կռիվը Գերմանիայի, Ավստրիայի դեմ զերծ չե յեղել նացիոնալիզմի վորոշ տարրերից: Նրա հայեցողության մեջ յեղել են, անշուշտ, նաև ռուսական սլավյանոֆիլներին հատուկ վորոշ գաղափարներ:

..,«Զգտելով բարձրացնել սլավոնական հեղափոխություն, կարդում ենք մի պատմագրի մոտ, Բակունինը խորհում եր այն վորպես ռուսական հեղափոխության նախադուռը: Նա յերազում եր ցարական իշխանության տապալման մասին, միապետական կառավարության ջախջախման մասին, վորպեսզի ազատված Ռուսիան կանգնե սլավոնական շարժման գլխին: Նրան թվում եր, վոր ահա հենց այդ ժամանակ էլ կրգա սլավյանների ազատության ժամը, և վոր սլավյանությունը, ազատագրված ժողովրդական Ռուսիայի ղեկավարությամբ. կուղղե իր զենքը միապետական Ավստրիայի, Թյուրքիայի, Գերմանիայի, Վենգրիայի, վողջ աշխարհի դեմ, յեթե միայն սլավյանության վերջնական ազատագրման համար պահանջվի հեղափոխական այդ շարժումը:

Նա յերազում եր համասլավոնական միության մասին, վորի մեջ պիտի մտնեյին վոչ միայն սլավոներեն խոսող ժողովուրդները, այլ և մաջարներն ու հայերը: Այդ ժողովուրդները պետք է ստեղծեյին մի ընդհանուր ազատ արևելյան պետություն, վերածնված արևելյան աշխարհ—հակառակ արևմտյան աշխարհին, իր սեփական մայրաքաղաքով—Պոլսում»*):

Պաշտպանելով սլավոնական ֆեդերացիայի այդ իդեոլոգիան Բակունինը հակադրում եր այդ յերկրագործական, «գյու-

այնմ «առաջավոր գրականությունն» էլ («լուսավորչականությունը») հանդիսացել է բուրժուազիայի իդեոլոգիան: Նալբանդյանի «Ցերկրագործությունը» բ ա ց ա ռ ու թ յ ու ն է: Ցեվ հենց դրա համար էլ նա անհայտ է մնացել: Զհամապատասխանելով 50 - ական թվականների «առաջավոր» մտավորականության ը ն դ հ ա ն ու ր գ ծ ի ն, նա հ ե ն ց այ դ պ ա տ ճ ա ռ ո վ էլ «մ ո ռ ա ց ու թ յ ա ն» է մ ա տ ն վ ե լ—ինչպես նրա նման մոռացության են մատնվել նաև հայ լիբերալիզմի ուրիշ հակառակորդները:

*) Տես՝ Вяч. Полонский—Бакунин. том 1. էջ, 196.

դական», թարմ արևելքը—«քաղաքային», կապիտալիստական և պառաված Արևմուտքին։ Արևմտյան յերկրներում ել, նրա կարծիքով հեղափոխական շարժումների հիմնական գործոնը պիտի հանդիսանար գյուղացիությունը *)։

Կասկածից դուրս է, վոր Բակունինի ընդհանուր այդ աշխարհայեցողության մեջ բնորոշ նկատելի յեր ռուսական սլավոնոֆիլական մեսսիանիզմի ազդեցությունը։

Ահա հենց դրա համար ել շատ դժվար է համաձայնվել նրանց հետ, վորոնք Նալբանդյանի «Յերկրագործության» մեջ արծարծված ընդհանուր կոնցեպցիան կապում են բառացիորեն Բակունինի աշխարհայեցողության հետ։

Բակունինը, Գերցենը ճիշտ այնպես, ինչպես և Ռուսսոն, մեծագույն ազդեցություն են թողել, իհարկե, Նալբանդյանի վրա։

Բայց ազդվելով անգամ այդ մտածողներից, «Յերկրագործության» հեղինակը մտածել է միանգամայն ինքուրույն և աշխատել է ժամանակակից մտածողների գաղափարներից կառուցել իր սեփական սխեմը—համակերպելով այն հայ իրականության կոնկրետ պայմաններին։

Շնորհիվ դրան ել «Յերկրագործությունը» թողնում է առաջին նվազ հակասություններով լի հոդվածի բնավորություն։

Այստեղ կարելի չե գտնել ո՛չ ֆիզիոկրատների, ո՛չ Ռուսսոյի ո՛չ ուտոպիքական սոցիալիստների, ո՛չ նույնիսկ Հեգելի ազդեցությունը»...**)։

*) Իր հայտնի «Խոստովանության» մեջ (Исповедь) Բակունինը ընդգծում է, վոր նա ավելի մեծ հույս է ունեցել բոհեմական, չեխական և գերմանական գյուղացիների, քան առհասարակ քաղաքների բնակչության վրա։ «Գերմանական և ֆրանսիական դեմոկրատների մեծագույն սխալը, իմ կարծիքով, ասում է նա, կայացել է նրանում, վոր նրանց պրոպագանդը սահմանափակվել է քաղաքներով, չի խորացել գյուղերի մեջ, քաղաքները դառել են այսպես ասած արիստոկրատներ, և այդ պատճառով գյուղերը վոչ միայն հեղափոխության նկատմամբ անտարբեր դիտողներ են յեղել, այլ և շատ վայրերում թշնամական վերաբերմունք են ցուցադրել դեպի հեղափոխությունը»։ Տես՝ Материалы для биографии Бакунина. Москва 1923 г. том I. եջ 196. Այդ հատորի մեջ զետեղված է Բակունինի վողջ «Խոստովանությունը»։

**) Ինչ վերաբերում է անարխիզմին—ամենից քիչ այդ է նկատելի։ Ա. Տերտերյանը սխալվում է, յերբ նկատում է «Յերկրագործության» մեջ անարխիզմի առանձին տարրեր։ Այդ սխալը բացատրվում է նրանով, վոր նա 1860–62 թվականների Բակունինին համարում է անարխիստ, այնինչ այդ շրջանում նա չեր առաջադրել տակավին իր անարխիստական «իմաստասիրությունը»։

Յեվ ահա տաճկահայերի ազատագրումը ևս Նալբանդյանը քննում է, վորպես բոլոր աշխատավորների, հողագործների և յերկրագործների ընդհանուր ազատագրական շարժում։

Բակունինին մոտենում է նա այդ կողմից։

Բակունինի հեղափոխական իդեոլոգիան նա ընդունում է այն չափով, վորչափ նա հիմնավորում եր Նալբանդյանի դավանած ընդհանուր հայեցողությունը՝ «բոլոր բռնակալական կառավարությունների անկման և համայն մարդկության ապագա ազատագրման մասին» *)։

Ահա թե ինչու Նալբանդյանի գաղափարախոսության իրական իմաստը կտրականապես տարբերվում է Արծրունու և Քր. Միքայելյանի գաղափարախոսությունից։

Նա բողոքում է վոչ թե թյուրքք ցեղի, վոչ թե մյուսուլմանության դեմ, այլ ոսմանյան բռնակալ կառավարության—վորոշ դասակարգի պետության դեմ։ Յեվ պայքարելով ոսմանյան այդ կառավարության դեմ նա հավասար պայքար է հայտարարում միաժամանակ նաև յերկրագնդի բոլոր մյուս բռնապետական կառավարություններին,—ռուսական ցարիզմին, անգլիական, ֆրանսիական, գերմանական, ավստրիական և ուրիշ կառավարություններին։

«Յերկրագործության» մեջ նա այդպես է կառուցում իր քննադատության սխեմը։

Նրա համար գոյություն չունի «լուսավոր» Յեվրոպա և «մութ» Արևելք։

*) Պետք չե մոռանալ այն, վոր ինքը Բակունինն ել իր հեղափոխական գործունեության ընդհանուր տերրիտորիայի մեջ եր մտցրել, ի միջի այլոց, Թյուրքիան։ Իր նամակներից մեկի մեջ (ուղղված Գարիբալդիին) 1862 թ. մայիսի 10-ին նա գրում եր՝ «Վորտեղից կսկսվի շարժումը։ Գուցե ապստանշան կլինեն Ֆրանսիայի ներքին պայմանները։ Կլինե այդ արդյոք իտալական, մաջարական, սլավոնական, հայկական յեվ հունական ժողովուրդների հանկարծակի ապստամբություն։ Կլինե այդ արդո՞ք, այնուամենայնիվ, ռուսական հեղափոխություն։ Ահա ինչումն է խնդիրը։ Համենայն դեպս, գործադրենք ամեն ջանք, վորպեսզի այդ ապստամբությունները նպաստեն յեվ հասնեն մի նպատակի՝ Իտալիայի կատարյալ ազատագրում, վողջ արևելքի ապստամբություն և ազատագրում։ Պետք չեն ավստրիական և գերման տիրապետությունը, բայց դրա հետ միասին պետք չե ցարիզմը և կայսրությունը Ռուսիայում։ Այդ բոլորի տեղը բոլոր ազատ ժողովուրդների ավտոնոմիա և ֆեդերացիա։ Գործը մեծ է, բայց վոչ անհնարին»։ Լեմկե՝ Очерки освободит. движения шестидесятых годов. եջ 287.

Յեվրոպական պետությունների քաղաքականությունն արևելյան ժողովուրդների նկատմամբ նա համարում է սուտ, փարիսեցիական և բռնակալական։

Յեվ համոզված կերպով կոչ է անում ժողովրդական լայնագույն մասսաներին վոչ մեկ հավատ չընծայել կուլտուրական շպարով ծածկված նրանց խոսքերին ու խոստումներին։

Գուցե և Նալբանդյանի համար ևս հայ ժողովրդի շարժումները գրավել են առաջնակարգ տեղ։ Բայց թյուրքահայ «յերկրագործ» ժողովրդի շարժումները նա քննել է վոչ թե «ցեղական» տեսակետից—այլ վորպես ընդհանուր ազատագրական-հեղափոխական շարժումների հատվածներից մեկը, բռնապետական բոլոր կառավարությունների դեմ ուղղված, ալեկոծվող մասսաների հսկայական հորձանքի ալիքներից մեկը։

Նալբանդյանի, ինչպես նաև իր մյուս ժամանակակիցների վողբերգականությունը նրանումն էր,—վոր 50—60-ական թվականներին պրոլետարիատը տակավին թույլ էր, իսկ մանր-բուրժուական դեմոկրատիան էլ ցրիվ և անկազմակերպ։

Մանր-բուրժուական այդ դեմոկրատիան անընդունակ էր իր ձեռքն առնել գյուղացիական մասսաների շարժումը։ Նա ինքը գեգերում էր հակասությունների մեջ և հաճախ ջլատում և պառակտում էր մտցնում հեղափոխական շարքերի մեջ։

1848 թվականի հեղափոխական շարժումների ճնշումից հետո մանր-բուրժուական այդ դեմոկրատիան՝ տարված նացիոնալիստական ցնորքներով՝ քարշ էր գալիս բուրժուազիայի յետևից։

Իսկ հեղափոխական մտավորականության ավելի անկեղծ իդեոլոգները, չկարողանալով կանգնեցնել այդ պրոցեսը, կամ ընկնում եյին մռայլ հոռետեսության և սկեպտիցիզմի գիրկը, կամ էլ դիմում եյին անարխիստական մեթոդների։

Ավելի ևս ծանր էր Նալբանդյանի կացությունը, վորովհետև իր հարազատ միջավայրում նա միայնակ էր կատարելապես։

Ահա ինչու և նա, վորպես «Յերկրագործության» հեղինակ, անհայտ է մնում մինչև 1905 թիվը։

Այդ նոր Նալբանդյանին հայ հասարակությունը չի ընդունում։ Չի ցանկանում ճանաչել նրան այդ կողմից—նաև նացիոնալիզմին ապասավորող հայ պատմագրությունը։

Բայց այդպես վարվելով անգամ—վերջինը չի կարողանում կատարյալ մոռացության մատնել Նալբանդյանին, և դրա համար

էլ դիմում է նրա կատարած խոսքի և գործի աղավաղմանը։ Մեր որերի քննադատությունը չի կարող այդպես վարվել։

Նալբանդյանն ավելի բարդ դեմք էր, քան նրան սովորաբար նկարագրում են։ Նրա աշխարհայեցողության մեջ կային հակասություններ և ներհակություններ, վորոնք բղխում եյին 50—60-ական թվականների հայ իրականության ներհակություններից։

Բայց այդ ներհակություններով հանդերձ Նալբանդյանն անցյալի հայ գրականության ամենախոշոր դեմքն է։

Նա կռվի յե յելել իր ժամանակի պրիմիտիվ մեթոդներով և զենքերով 50-60-ական թվականներին—«հայրենի» բոլոր տիրակալների, մեծ աղաների, «կաթողիկոսի», «ուժեղների» դեմ։

Նա ձգտել է հաստատել «ժողովրդական իշխանություն» և տարված այդ ձգտումով կապվել է 60-ական թվականների արևմտյան հեղափոխական հոսանքների հետ։

Նրա նկարած իդեալը, նրա հասարակական-քաղաքական քարոզի կոնկրետ բովանդակությունը, վերջապես նրա առաջադրած ուղիներն ու մեթոդները—արտացոլել են մանր բուրժուական մտավորականության յերևույթներից բղխող բոլոր ներհակությունները։

Բայց այդ բոլորը չի խանգարել նրան նկատել և խարազանել «քաղաքակիրթ» Արևմուտքի փարիսեցիական քաղաքականությունը, յեվրոպական պետությունների բռնակալությունը Արևելքի նկատմամբ և «հին աշխարհի» բոլոր մութ կողմերը։ Յեվ դրա հետ միասին Նալբանդյանը միակն է յեղել հայ մտավորականության մեջ, վոր կռվի յե կանչել հայ աշխատավորությանը յերկրագնդի բոլոր բռնակալների դեմ հանուն «տնտեսական խնդրի» լուծման։

Ահա հենց այդ կողմերն են, վոր դրդում են մեզ առանձին ուշադրություն հատկացնել խիզախ ու մարտնչող հրապարակախոսի «խոսքի ու գործի» քննությանը։

ՇԻՐՎԱՆԶԱԴԵՅԻ ՄԱՍԻՆ

1.

Հայ գեղարվեստական գրականության ամենաբնորոշ կողմերից մեկը—նրա **քաղաքացիական-հրապարակախոսական տենդենցն** ե։

Գեղարվեստը մեզ մոտ անցյալում ըմբռնվել ե, վորպես հրապարակախոսական պրոպագանդի զենք։ Յեվ նրա ամենացայտուն նպատակներից մեկն ե յեղել—**քարոզչությունը**։

Ճիշտ այնպես, ինչպես 60—70-ական թվականների ռուս պոետներն և գրողները ծառայեցրել են իրենց մուսան ժողովրդին, այնպես և մեր կյանքում հայ գեղագետներն իրենց յերգերն ու բոլոր գրական արտադրությունները կառուցելիս ցանկացել են գեղարվեստական ստեղծագործության միջոցով ազդել հասարակության և ժողովրդի վրա, փոխել նրա հետամնաց սովորությունները և հնավանդ հայացքները։ Տարբեր ե յեղել միմիայն այդ քարոզների կոնկրետ բովանդակությունը—տարբեր այն չափով, վորչափ տարբեր են յեղել և յերկու ժողովուրդների կենսական պայմանները—հասարակական տնտեսական միջավայրը։

Շնորհիվ հենց այդ «քաղաքացիական» շեշտի, հայ հեղինակը վորոշ միջավայրի նկարագրության հետ միաժամանակ աշխատել ե իրական կյանքից առնված տիպերի և դեպքերի կողքին գծագրել նաև մի վորևե «դրական» կամ «լուսավոր» դեմք։ Յեվ այդ «դեմքի» դերը գեղագետի մոտ—ամենավճռականն եր, վորովհետև հենց այդ «դեմքի» միջոցով հեղինակն արծարծում եր այս կամ այն չափով իր սեփական հայացքները։ Ակնարկած «լուսավոր» տիպը սովորաբար ժամանակին պատժում եր «չարերին», խրախուսում թերահավատներին և ապացուցում հեղինակի քարոզած հայացքների գերազանցությունը։

Իրապես դա մի մեթոդ եր—առնված կեղծ-կլասիքական դպրոցից։

Ինչպես հայտնի ե, այդ դպրոցի ներկայացուցիչներն ել նկարագրում եյին սովորաբար մի վորևե **ռեզոնյորի**, վորը կըրկ-

նում եր հեղինակի կարծիքները և ցուցադրում նրա դրական կամ բացասական վերաբերմունքը դեպի հասարակական վորոշ յերևույթները։ Իսկապես իրականության մեջ այդպիսի մարդիկ չըկային իհարկե։ Բոլոր այդ ռեզոնյորներն ել մտածածին դեմքեր եյին և հեղինակի պատգամախոսները։

Հայ գրականության մեջ այդպիսի տիպեր շատ ե ստեղծել առանձնապես Րաֆֆին։

Նրա հաճախ շատ ուժեղ յերկերին մեծագույն չափով վնասում եր հենց այդ կողմը։ Կենդանի և իրական մարդկանց կողքին Րաֆֆին միշտ շարում եր փայլուն մանեկեններ, վորոնց հանձնարարում եր յերկարորեն ճառել, քննադատել, արտասվել և վոգևորվել։

Այդպիսի մանեկենների սիրահար են այժմյան հեղինակներն ևս։

Նոր հայ գրականությունը բարեխիղճ կերպով հետևել և հետևում ե Րաֆֆիի ընտրած ուղիներին։

Յեվ ահա հենց այդ հատկությունից ազատ ե Շիրվանզադեն։ Նա կարողացել ե հրաժարվել պրիմիտիվ կեղծ-կլասիքական ձևերից և շատ անգամ կարծես զգուշավորությամբ խուսափում ե ռեզոնյորներ ստեղծելուց։

Իր յերկերի մեջ նա միմիայն անուղղակի կերպով, հազվագյուտ դեպքերում ցուցադրում ե իր հայացքները։ Սակայն այդ բոլորը Շիրվանզադեն կատարում ե հմտությամբ, առանց վնասելու իր յերկի գեղարվեստական ամբողջությանը։ Նա բռնի կերպով չի թելադրում իր հայացքները և չի կրկնում այն անդադար և միշտ ռեզոնյորների միջոցով։

Այդ հատկությունն ել Շիրվանզադեյին դարձնում ե խիստ ուժեղ նկարիչ և իրական կյանքի տաղանդավոր քանդակագործ։

Արևմտյան գրականության մեջ ռեալիստական ուղղությունն ստեղծել ե տաղանդավոր գեղագետների մի շարան։

Այդ գեղագետներն աշխատել են, վորքան կարելի ե մանրակրկիտ կերպով, արտացոլել իրենց յերկերում կոնկրետ իրականությունը, նկարագրել անաչառորեն մարդկային յելևեջները և ապրումները։

Այդպես են ֆրանսիական վիպագիրներ՝ Ֆլոբերը, Բալզակը և Զոլան։ Յերեքի մոտ ել ընթերցողը տեսնում ե ժամանակակից հասարակության պատկերը,—այդ հասարակության հիմնական տարրերի նկարագիրը։

Յերեք այդ հեղինակներն էլ ստեղծել են իրենց յերկերում կենդանի տիպերի և դասակարգային դեմքերի հարուստ մի պատկերահանդես:

Բուրժուազիա՝ ֆրանսիական, խոշոր, միջին և մանր, գյուղացիություն, մտավորականության տարբեր շերտեր, պրոլետարիատ՝ գործարանային և թափառաշրջիկ (լյումպեն-պրոլետարիատ) դրանք բոլորն էլ անցնում են միմյանց յետևից իրենց առանձնահատուկ հույզերով, տենչերով, իրենց ուրույն հոգեկան ձգտումներով և զգացումներով:

Յեվ շնորհիվ հենց դրան հիշյալ հեղինակները հսկայական նյութ են մատակարարում ժամանակակից կապիտալիստական հասարակության զանազան սոցիալական շերտերի հոգեբանության քննության և ուսումնասիրության համար:

Յեթե այսօր մենք չափազանցրած կարող ենք համարել Բալզակի և Զոլայի ձգտումը՝ գեղարվեստի միջոցով նկարել միանգամայն հարազատորեն իրականությունը իր բնատնհրաժեշտ որենքներով—այնուամենայնիվ չենք կարող ժխտել մի բան: Նրանց ընտրած ուղին նպաստում է իրականության ճանաչողությանը և օգնում է մեզ հասկանալ սոցիալական խմբակների հոգեկան հատկությունները: Յեվ այդ չափով վիպասանի դերը բարձրանում է—և հավասարվում սոցիոլոգի դերին:

Մի հիմնական տարբերություն միայն կարող է արվել այդ ուղիների հետևողներին: Այդ տարբերությունն այսօր էլ շատ անգամ է բերվում: Բալզակի և Զոլայի քննադատները գտնում են, վոր օբյեկտիվ և նատուրալիստական վեպերը հեռու յեն «իսկական գեղարվեստից»—ճիշտ այնպես ինչպես հեռու յե գեղարվեստից և մեխանիքական լուսանկարչությունը:

Ամեն մի ֆոտոգրաֆիա, ասում են դրանք, կյանքի ճիշտ նկարագիրը լինելով—հաճախ հակասում է «գեղարգեստական ճշմարտությանը»: Յեվ այդպես է հենց Բալզակի, Զոլայի և նրանց հետևողների ստեղծագործությունը:

Առաջին նվագ այդօրինակ տարբերությունը թվում է բավական համոզիչ:

Անշուշտ նատուրալիստ հեղինակների գործը մի քիչ մոտ է ֆոտոգրաֆիային:

Սակայն—միայն «մի քիչ»:

Յերբեք չի կարելի մոռանալ մի էյական հանգամանք:

Այդ այն է—վոր գեղագետը ինքը—կենդանի և մտածող ան-

հատականություն է: Դրա համար էլ նկարելով կյանքը նա անհրաժեշտաբար ցուցադրում է կյանքի պատկերներն իր սեփական սուբյեկտիվ տպավորության միջոցով:

Հաճախ հենց այդ պատճառով էլ, նա ընտրում է իր հոգուն մոտ և աշխարհայեցողության հարազատ մոտիվներ:

Ահա ինչու մենք զանազան նկարիչների մոտ հաճախ նկատում ենք զանազանագույն նկարներ: Մի նկարչի մոտ մենք տեսնում ենք կապույտ և ուրախ յերկինք, միշտ առողջ և զվարթ պեյզաժ. իսկ մյուսի մոտ տխուր և դալուկ ծառեր, ավերակներ, հինավուրց ռոմանիքական ամրոցների և կամուրջների տեսարաններ: Օբյեկտը, առարկան հաճախ միևնույնն է: Սակայն յուրաքանչյուր պոյետի սուբյեկտիվ աշխարահայացքը—«հոգեկան կառուցվածքը», յեթե միայն կարելի յե այդպես ասել, թողնում է իր առանձին դրոշմը գեղագետի ստեղծագործության վրա:

Բայց այդպես լինելով էլ գեղագետը չի դադարում իհարկե լինել սոցիալական վորոշ միջավայրի անդամ:

Նրա հենց շեշտված տրամադրությունը, նրա հոգեկան հույզերը և ընդհանուր աշխարհայեցողությունն արտացոլում է հասարակական վորոշ միջավայրում իշխող հույզերը: Յեվ նրա այդ «տրամադրությունները» արտահայտում են հասարակական այս կամ այն խմբակցության ապրումները:

Այդ իմաստով էլ ամեն մի պոյետ, վիպագիր կամ նկարիչ կապված է սերտորեն պատմական ֆոնի և կոնկրետ սոցիալական միջավայրի հետ:

Այդպես է և Շիրվանզադեն: Նրա ստեղծագործությունները կովկասյան քաղաքի ծագման և զարգացման հետ են կապված:

Նրա արվեստը—կովկասահայ բուրժուազիայի վերելքի հայելին է, նրա յերկերը—հայ լիբերալիզմի գեղարվեստական հիմնավորումն:

Ռուսահայ հասարակության ապագա պատմաբանին Շիրվանզադեյի գործերն առանձնապես մեծ նյութ կարող են մատակարարել հենց նրա համար, վոր այդ յերկերի մեջ տրվում է ռուսահայ «քաղաքային» հասարակության զարգացման պատկերը:

Նրա վեպերից մեկը «Զուր Հույսերը»—այն շրջանին է վերաբերում, յերբ ռուսահայ ազգայնական մտավորականությունը ամբողջովին տարված էր մի վառ յերազով՝ ազատված տեսնել Տաճկահայաստանը «Ավետյաց այն յերկիրը», ուր պիտի ամփոփվեր ապագայի «Հայաստանը»:

«Արսեն Դիմաքսյանը» նկարագրում է միևնույն «ազգայնական» շարժման մյուս կողմը՝ կուլտուր-տրեգերական գործունեությունն այստեղ, Կովկասում, նոր չերիտասարդության պայքարը «հին կուռքերի» դեմ, հայ բուրժուական ինտելիգենցիայի մարտը հետամնաց և խավար այն «քուրմերի» դեմ, վորոնք խանգարում եյին հայ «ժողովրդի» քաղաքացիական հասարակական արթնացմանը։

Իր մնացյալ վեպերում և պատմվածքներում Շիրվանզադեն նկարագրում է աննախանձելի դրությամբ այն միջավայրը, ուր ստիպված եր գործել «նոր ինտելլիգենցիան», նկարագրում է խավար ատիական այն հայացքները և բարքերը, վորոնց դեմ դուրս եր չեկել «չերրորդ դասի» չերիտասարդ մտավորականությունը։

Բավական հատկանշական է ի միջի այլոց այն, վոր «քաղաքացի» Շիրվանզադեն գյուղի և գյուղացիության մասին վոչ մի խոսք չի ասում։ Մի քանի չնչին տողեր է նվիրում նա «գյուղացիությանը» միայն «Արսեն Դիմաքսյան»-ի մեջ։

Դիմաքսյանը գնում է հայրենի իր գավառը և նկատում ինչպես մեծ քաղաքից հեռու իր ընկերը կատարել է «հսկայական» մի գործ։ Տեսնելով այդ աշխատանքը նա կարծես մի ակնթարթ նույնիսկ համոզվում է նրանում, վոր այդ հեռավոր և խուլ անկյուններումն է գտնվում իսկական ժողովուրդը խորհրդավոր այն սֆինքսը, վորի անունով նա ինքը և իր ընկերները գործել են և վորի նկատմամբ այնուամենայնիվ ցուցադրել են միշտ հանցավոր անտարբերություն և անփութություն։ Սակայն և այնպես, դրանից հետո էլ Դիմաքսյանը չի փոխում իր պասսիվ վերաբերմունքը։ Դարձյալ մինչև վերջ նա մնում է միևնույն «քաղաքացի ինտելլիգենտը»։

Դարձյալ նա չի կարողանում ծռել իր ուղին և նետվել գյուղական ժողովրդի աշխարհը։

...«Ավելի լավ է միշտ հալածվեմ, ասում է նա իր ընկերոջը, միայն թե կռվեմ այդ անշարժ հասարակության նախապաշարմունքների դեմ, քան թե թմրած կյանք վարեմ մի խուլ անկյունում։ Ի՞նչ կարող եմ անել գյուղական ժողովրդի համար. ճանապարհներ շինել, ջրեր անցկացնել նրա հողերով, ուսումնարաններ բաց անել — այդ բոլորը լավ գործեր են, բայց ինձ համար չեն»...։

Դիմաքսյանին և Շիրվանզադեյի բոլոր մյուս հերոսներին

գրավում է քաղաքի կյանքը իր կենդանի շարժումով և բուռն բաղխումներով։ Բնորոշ է այն, վոր Շիրվանզադեն չսիրելով գյուղը միաժամանակ չի նկատում նաև այն, վոր այդ խավար գյուղական իրականության մեջ ապրող գյուղացիությունը տառապում է տնտեսական շահագործման ճիրաններում։

...«Ցեվ ահա, ասում է նրա վեպի հերոսը, չերկար ժամանակ Հարեթյանի հետ խորհրդակցելով, չեկա այն չեզրակացությանը, վոր իմ կողմից միակ ոգնությունը կարող է լինել այն, վոր իմ հաշվով մի ուսումնարան բաց անեմ. Հարեթյանը ցույց տվեց ինձ մի ամենահարմար կենտրոնական գյուղ։ Այնտեղ կարող են հավաքվել մի քանի շրջակա գյուղերի չերեխաները»...։

Ցեվ միամիտ այդ հավատով համակված Դիմաքսյանը կոչ է անում գարկ տալ կրթական շարժմանը ու այդ ձևով բարձրացնել ժողովրդական վարի շարքերի տնտեսական կացությունը։

Նա ամենևին չի կարողանում և չի ցանկանում վորևե կերպ շոշափել մասնավոր սեփականության վրա խարսխված հասարակության հիմքերը։

Շիրվանզադեյի Դիմաքսյանն ինքն էլ մի շահագործող է, մի բուրժուա-կալվածատեր — միմիայն ավելի քաղաքակիրթ, ավելի հղկված և «բարեխիղճ»։

...«Ոգոստոսի վերջին, կարդում ենք Շիրվանզադեյի մոտ, Դիմաքսյանը ամառանոցից ուղղակի գնաց յուր ծննդավայրը։ Նոր կառավարիչը նրա կալվածները բավական կարգի յեր բերել և չեկամուտներն ավելացրել։ Գյուղացիներն այժմ չեյին ճնշվում կալվածատիրոջ ձեռքում։ Նրանք գոհ եյին իրենց վիճակից։ Դիմաքսյանը թեթև կերպով աչքի անցկացրեց Հարեթյանի հաշիվները և շնորհակալություն հայտնեց նրան։ Նա բնավ տրամադիր չեր այս անգամ նյութականով զբաղվելու, այս պատճառով մերժեց կառավարչի առաջարկությունը՝ անձամբ տեսնել կալվածքները»։

Ինչպես տեսնում ենք, Դիմաքսյանը բավական հեռատես կալվածատեր է։ Նա հմուտ կառավարչի միջոցով կարգի յե բերել իր կալվածները և կարողանում է նույնիսկ ավելի մեծ չեկամուտ ստանալ կալվածներից։ Նա կարողացել է այլ խոսքով «չեվրոպականացնել» իր կալվածքների կառավարությունը ու կապիտալիստական կուլտուրա կիրառել քաղաքից հեռու ընկած վայրերում։

Դիմաքսյանի վողջ հրապարակախոսությունը, նրա խոսքերն

ու խոհերն իրապես արտահայտում են ռուսահայ «Նոր հասարակության» կամ, ավելի ճիշտ, բուրժուազիայի և բուրժուական մտավորականության տենչերը։

Դրանով էլ բացատրվում է թերևս այն, վոր Շիրվանզադեի բոլոր յերկերում հիմնական և գլխավոր ֆոնը հանդիսանում է քաղաքը։ Այդ քաղաքային ֆոնի վրա յել հյուսում է նա իր պատկերները և գրվագները։

Այդ քաղաքը նա սիրում է, վորովհետև այդտեղ նա նշմարում է և՛ աղմուկ, և՛ կյանք, և՛ կրթական ու հասարակական ինտենսիվ շարժում։ Բայց վողջունելով «քաղաքի» նոր մարդկանց Շիրվանզադեն միաժամանակ խարազանում և դատափետում է «հին քաղաքը», —նախակապիտալիստական շրջանի գավառական քաղաքների իրականությունը։

Գավառական այդ միջավայրը նա չի սիրում։ Այդտեղ նա տեսնում է և՛ տգիտություն, և՛ անհատի ստրկություն, և՛ ամենաբիրտ վայրենություն։

Այդտեղ նա գտնում է մարդկանց, վորոնք ապրում են նահապետական պատվիրաններով, այն պատվիրաններով, վորոնք կրում են հնադարյան բռնակալության հետքերը։

Այդ խավար իրականությունը նկարող նրա յերկերից բնորոշ են մանավանդ «Նամուս»-ը և «Ցավագար»-ը։ Հայկական խավար ասիական միջավայրի պատկերն է այդտեղ տալիս Շիրվանզադեն իր նիստ ու կացով։ Հայ նոր գրականության ամենաուժեղ էջերն են կազմում նրա այդ յերկու գործերը։

Վորքան հաջող և վորքան ուժեղ է նրա «Ցավագար»-ը։ Այն խնդիրը, վոր շոշափում է այդտեղ հեղինակը պետք է ասել, չափազանց հասարակ է։ Մի խեղճ աղջիկ ընկնավոր, դառնում է զոհ—շնորհիվ այն հասարակ հանգամանքի, վոր գավառական մութ այն միջավայրը, ուր նա ընկել է—յուրատեսակ կերպով է մոտենում նրա հիվանդությանը։

Հավատացած, վոր «չար վոգիներն» են նրան այդ օրին հասցրել, բարեկամները ամեն միջոց գործ են դնում այդ «սատանան»—«չարը» սպանելու համար։ Յեվ վորպես այդ չար վոգու կրողը՝ աղջիկը դառնում է առաջին նահատակ-նպատակակետը «սատանայի» դեմ կռվողների համար։ Մի նյութ է դա, ուր ուրիշը մեր գրողներից գուցե կշռայլեր, կշատախոսեր, բոլոր շրջապատը կնկարագրեր խտացած, տենդենցիոզ և մռայլ բացասական գույներով, ուր միայն աղջիկը սպիտակ ծաղկե

նման կլիներ, իսկ բոլոր մյուսները խիստ դաժան և մութ դևերի նման։

Այդ սխալից ահա հաջողությամբ խուսափում է Շիրվանզադեն։

Վոչ մի սենտիմենտալ բացագանչություն, վոչ մի պաթոս։

Նրա մոտ դուք պարզ տեսնում եք, վոր այդ բոլոր մարդիկ քարացած նորմաների, հնացած բացասական նորմաների, անողոք հետամնաց սովորույթի զոհեր են։ Հանուն «օջախի», հանուն իրենց նեղ շրջանում տիրող հասարակական կարծիքի, նրանք հաճախ կռվում են և տանջում մեկին, վորին իրենք գուցե չեյին ցանկանա տանջել։ Բարի վայրենիներ, բարի գազաններ՝ զոհեր հասարակական նեղ միջավայրի, զոհեր տգիտության—ահա այն տպավորությունը, վոր ստանում եք դուք Շիրվանզադեի «Ցավագարը» կարդալիս։

Բավական է միայն կանգ առնել «Ցավագարում» նկարված հարաբերությունների վրա։ Վորքան պարզ սեր կա յերկու ամուսինների մեջ։

Մուրադը սիրում է իր կնոջը և ցանկանում է ազատված տեսնել նրան այնքան ծանր հիվանդությունից։ Այդ կտորը շատ լավ բնորոշում է և հայ գավառական միջավայրի կնոջ հոգեբանությունը։

«...Մուրադը անցուդարձ է անում պատշգամբի վրա։ Նա կանգ առեց, ծխախոտը հանեց գրպանից և յերեսը դարձրեց դեպի կինը. և վոչ մի թեթև հանդիմանություն, նախատինքի և վոչ մի թույլ նշան այդ մռայլ դեմքի վրա։

—Ի՞նչու չես խոսում, շարունակեց Սոնան, մինչև յերբ պիտի սիրտդ մըղ մըղ ուտես։

—Մինչև այն ժամանակ, քանի վոր սիրտ կա ուտելու, պատասխանեց Մուրադը և ծխախոտի ծուխը ուժգնաբար ներս շնչեց։

Նա շարունակեց անց ու դարձ անել։

Թող մեղավորը ուտի իր սիրտը, դու ինչ մեղք ունես, խոսեց դարձյալ Սոնան։

Ո՞վ է մեղավորը.

—Սինդ, ղուլդ, ի՞նչու նրան չես պատժում։

Մի դառն հեգնական ժպիտ սահեց Մուրադի դեմքով։ Նա ուսերը թոթվեց, գլուխը յերերեց։ Ասելն էր—ինչպես պատժեմ քեզ, խեղճ էյակ, քանի վոր աստված ինքն է քեզ պատժել։

Սոնան գուշակեց այս լուռ պատասխանի իմաստը.

— Յես ինքս ել չեմ հասկանում, շարունակեց նա, ինչ յերեսով աստծուց պատժվածը ուզում ե մարդկանց շարքն ընկնել: Մի շաբաթ ե գիշեր-ցերեկ մտածում եմ ու տեսնում, վոր յես իրավունք չունեմ այս տանը ապրելու, թող ինձ, գնամ իմ ծնողներիս մոտ. մենակ նրանց գլխին պատուհաս լինեմ: Թե չես ուզում թողնել, մի պահիր այս դրության մեջ:

—Բաս ինձ ով կպահի, յեթե յես քեզ սպանեմ, բաս իմ ցավեր վո՞րտեղ ուղարկեմ, յեթե քեզ ծնողներիդ մոտ ուղարկեմ: Ուշ ե...:

— Աստծուն ե հայտնի, վոր քանի քանի անգամ հորս տնից ուզեցել եմ հայտնեմ քեզ, վոր ընկնավոր եմ, ինչ անեմ, լեզուս կապին կապին ընկավ, չկարողացա:

—Հերիք ե, հերիք—կես բարկացած, կես ընկճված ձայնով պատասխանեց Մուրադը, աստծո դեմ կռվել չենք կարող: Ինչ վոր ճակատներիս գրված ե, պետք ե տանենք: Աչքերս այնքան մթնել եյին, վոր յեթե ամբողջ աշխարհը հակառակվեր, ելի քեզ հետ պիտի պսակվեյի: Ուրեմն աստծո կամքն եր: Հիմա հերիք ե, սառում եմ, վեր կաց, մի բաժակ չայ ածիր տուր ինձ ..»:

«Ցավագարը»-ը Շիրվանզադեի, ինչպես ասացի, մեր գրականության ամենաուժեղ արտադրություններից մեկն ե: Գավառական խավար մի անկյուն, այդտեղ այնքան կտրուկ, ուժեղ գույներով ե գծագրված, վոր ձեր առաջ ակամայից ծագում են վորոշ պատկերներ, տիպեր և խմբակներ այդ միջավայրից...: Շիրվանզադե-հոգեբանի ուժեղ հատկությունները այստեղ ավելի քան պարզ և վորոշ յերևում են: Շարժ, կարիկատուրա ամենևին չկա:

Հմուտ արվեստագետի վրձինի մի քանի ակնարկներով նա տալիս ե գավառական միջավայրի մռայլ պատկերը և արդեն դրանով, պատկերների միջոցով, առանց հրապարակախոսության և տաղտկալի շաղակրատության, ամենասուր խարազանման ե յենթարկում մռայլ և խավար անցյալը:

Այդպես ե նաև նրա «Նամուսը»-ը:

Քաղաքներում ապրող հայ մտավորականության կողմից այդ վեպն ընդունվել եր բացասաբար: Շիրվանզադեի նատուրալիզմը շատ շատերին թվում եր անհաճո և անթույլատրելի: Լեոն, օրինակ, իր «Ռուսահայ գրականության» մեջ հայտնել եր այն կարծիքը, վոր նատուրալիստական իր մոտեցումով Շիրվանզադեն վնասակար գործ ե կատարում:

Դա, ինարկե, ավելորդ փարիսեցիություն եր: Շիրվանզադեյի վեպի «նատուրալիզմը» այնքան ել սարսափելի չեր: Նա նկարագրում եր իրական կյանքը և գավառական իրականության իսկական դրվագները: Պատկերը—սոսկալի չեր, բայց այդպես եր իրականությունը: Հայ մտավորականը ցանկանում եր «յեվրոպացի» և «արևմտական» յերևալ իր հարևանների մոտ: Բայց նրա այդ «յեվրոպական» արտաքինի տակ ծածկված եր ասիացին, արևելցին, հետամնաց կովկասցին: Յեվ Շիրվանզադեն իր վեպերի և պիեսների միջոցով, տաղանդավոր արվեստագետին հատուկ անաչառությամբ անդադար, հիշեցնում եր այդ մասին: Մի այլ միջավայրում «Նամուս»-ի թեման հազիվ թե կարողանար հետաքրքրություն առաջ բերել: Բայց Կովկասում, գավառական Կովկասում, առանձնապես այդ թեման հրատապ և «այրող» թեմա յեր:

Յեվ լավ եր անում Շիրվանզադեն, յերբ մտացածին հերոսների փոխարեն նկարում եր իրական հայ մարդկանց՝ իրենց իսկական զգացումներով, կրքերով և ապրումներով:

Հայկական տաղտուկ իրականության մեջ դեռ ևս այժմեյական պրոբլեմներ եյին այնպիսի հարցերը, ինչպես կանանց գանակոծությունը, սնոտիապաշտությունը, տղամարդու վայրենությունը կանանց նկատմամբ և այլն, և այլն: Դրա համար ել մոտենալով այդ խնդիրների արծարծմանը Շիրվանզադեն իրապես շոշափում եր ամենահրատապ, կենսական պրոբլեմներ: Զափազանց ուշագրավ ե այն, վոր ինքը Շիրվանզադեն ել՝ չնայած իր առերևույթ «առաջադիմական» հայացքներին՝ չի կարողացել ազատագրել իր հոգին ասիականության մնացորդներից:

Նա, օրինակ, բավական յերկար կանգ ե առել կանանց հարցի վրա, առանձնապես: Բայց և այնպես նույնիսկ պայքարելով «ասիականության» դեմ, նա չի հեռանում իր ուսուցիչներից՝ Ստ. Նազարյանցից և Գր. Արծրունուց: Դրա համար ել ռեալիստ Շիրվանզադեն հաճախ ընդհարվում ե մտածող Շիրվանզադեյի հետ:

Այնտեղ, վորտեղ նա լոկ նկարագրում ե մայրենի տաղտկալի միջավայրը, այնտեղ Շիրվանզադեն ուժեղ և հզոր քանդակագործ ե: Իսկ այնտեղ, վորտեղ նա հին բարոյական «կուռքերի» և տրադիցիաների փլատակների տակ ձգտում ե ստեղծել նոր եթիքական հորիզոններ, նոր կյանքի կոնտուրներ, այդտեղ նա մնում ե դարձյալ միևնույն վողորմելի միջավայրի հարազատ զավակը:

Մեծ նշանակություն ունի այդ պարագայում հեղինակի դավանած բուրժուական լիբերալ աշխարհայացքը։ Ի՞նչպես կարող է Շիրվանզադեն յերևակայել «ազատ կնոջ», յերբ նրա իդեալները այդ միևնույն միջավայրի սահմաններից այնքան էլ հեռու չեն գնում։

2.

Դրանով էլ բացատրվում է իհարկե այն, վոր համարյա բոլոր «ազնիվ» կանայք Շիրվանզադեի մոտ իրենց «ուժեղ» և «խելոք» ամուսինների հավատարիմ հպատակներն են։ Յերբեք Շիրվանզադեյի «Նոր կինը» հարց չի տալիս, թե արդյո՞ք ինքը՝ կինը չպիտի ունենա իր անկախ կյանքը, իր անկախ մտածողությունը։ Գայանեյի ամբողջ տրագեդիան «Արսեն Դիմաքսյանի» մեջ նրանում է, վոր ամուսինը չի «խոսում», չի «զբաղվում» նրանով, չի «սիրում առաջվա պես»։ Այդպես է վոչ միայն Գայանեն։ Նրա նման են նաև բոլոր մնացած կանայք — Շուշանիկը («Քաոսի մեջ») և «Յեվգինեն»։

Թերևս մեր այս կարծիքը Շիրվանզադեի մասին առաջին պահուն թվա չափազանց տարօրինակ — չէ՞ վոր մեզ մոտ ընդունված է համարել նրան մեր հետամնաց բարքերի ամենախիստ քննադատը։ Յեվ հայ կանայք նրանից են սպասում նոր, առողջ խոսքեր իրենց մասին։

Այդ կարծիքը Շիրվանզադեի մասին, վորպես կանանց ազատագրման ջատագովի, մեզ մոտ անշուշտ ընդունված է, բայց դա ապացուցում է միայն մի բան։ Ինքը, հայ քաղքենի հասարակությունը, դեռ էս այնքան հետամնաց է, վոր նույնիսկ «Յեվգինե»-ի հեղինակի չափավոր մտքերը և քարոզները նրան թվում են հեղափոխական և չափազանց «ծայրահեղ»։

Այն, վոր այդ այդպես է, մենք տեսնում ենք Շիրվանզադեի հենց այն գրվածքներում, ուր նա նկարագրում է «հայ հասարակությունը»։ Իր պիեսների և «Յեվգինեյի» մեջ հեղինակը տալիս է մի քանի բնորոշ դեմքեր, վորոնք լիովին արծարծում են հայ քաղաքենի մտավորականության մտքերը և խոհերը։ Մենք կանգ կառնենք այժմ հենց այդ նկարագրության վրա, վորպեսզի ավելի պարզ լինի այդ միջավայրը և միջավայրի այն հայացքները, վոր խարազանում է Շիրվանզադեն։

* * *

«Յեվգինեյի» հենց առաջին էջերից մենք ծանոթանում ենք այդ «հասարակության» հետ։ Հավաքվել են մի քանի ծանոթներ, քննում են կնոջ անհավասարության խնդիրը և ահա այդտեղ շոշափված խնդրի արծարծման ժամանակ գծվում են հայ բուրժուական մտավորականության մի քանի բնորոշ տիպեր։

Ընթերցողի համար ուշագրավ են առանձնապես Միհրան Ալվերդյանի քույրը, հետո Աբգար Սուլթանյան գործարանատերը՝ «ինժեներ տեխնոլոգ», վերջապես Գալամքարյան ամուսինները։ Այդ ամբողջ խումբը, վոր կազմում է, կարելի յէ ասել, հայ հասարակության «առաջավոր տարրերը», հավաքվել և քննում է մի վոմն Արաբաջյանի հանցանքը։ Հանցանքը կայանում է նրանում, վոր Արաբաջյանի կինը մինչև ամուսնությունը «հանձնվել է» մի ուրիշին։ Իմանալով այդ, Արաբաջյանը կատաղում է և սկսում է տանջել իր կնոջը։ «...Նա զրկել է կնոջն ամեն հաճույքից, յերբեմն չի թույլ տվել ուտել անգամ, հետը խոսել է միշտ կոպիտ, շատ անգամ հայհոյանքներով»։

Նույնիսկ պահանջել է կնոջից անձնասպանություն գործել։ Կինը հուսահատված իր ծանր կյանքից ի վերջո ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին, և ահա այդ իրողությունը, մահվան այդ ուրվականը, ցնցում է «ընտրյալ» հասարակության բոլոր վերոհիշյալ անդամներին։

Սկսում են քննել, խոսել և բոլորը համարյա «անբավական» են մնում Արաբաջյանից։ Մենք դիտավորությամբ ընտրում ենք այդ չափավոր խոսքը, վորովհետև արտահայտել «հասարակության» տրամադրությունը շեշտված դեպքի առթիվ, վորպես «բողոք», անհնարին է, քանի վոր գտնվում են մարդիկ, վորոնք միանգամայն արդար էյին համարում Արաբաջյանին և, յեթե մեղադրում էյին նրան, այդ միայն նրա «կոպիտ» ասիական բնավորության համար։ Թվում է մեզ, յեթե Արաբաջյանը չտանջեր կոպիտ վայրենությամբ իր կնոջը, չստիպեր նրան թունավորվել, այլ իր անբավականությունն արտահայտեր այլ կերպ — «կուլտուրական եսթետիքական» ձևով, վողջ այդ «հասարակությունը» ամենևին չէր վրդովվել այնքան ուժեղ։ Ինչևիցե։ Թողնենք այդ վիճելի կետը և լսենք «հասարակության» կարծիքը։

Սառ. — «Այո, դա յեղեռնագործություն է և անմիտ յեղեռնագործություն»։

Պ. Գոլ.—Հունց վոր Ջարուհին ա ասըմ, թամամ բիաբրուչություն ա:

Տ. Գոլ.—Մի գործ, վոր ամոթ է բերում մեր ինտելլիգենցիային:

Վարսամյանը պարզում է իր տեսակետը խնդրի վերաբերյալ: Նա վրդովված խարազանում է Արարաջյանին, գտնելով նրան մեղավոր: Նրան ձայնակցում է և Միհրան Ալվերդյանը: Թվում է Վարսամյանի միջոցով արտահայտվում է ինքը հեղինակը: Նա ավետում է մի քանի հասարակ ճշմարտություններ այն մասին, վոր կինը նույնքան պատասխանատու չէ իր անցյալի համար, վորքան տղամարդը, վոր տղամարդն իրավունք չուներ վրդովվել իր կնոջ անցյալի համար, քանի վոր իր անցյալում նա յերևի կունենար ավելի մեծ կեղտեր: Վարսամյանը գտնում է, վոր հարկավոր է բողոքել այդ անարդարության դեմ:

Վարսամյանի և Միհրան Ալվերդյանի դեմ խոսում է ինժեներ Սուլթանյանը:

...«**Սուլթանյան.** – Տարօրինակ բողոք: Մոռանամ հարազատ կնոջս կեղտը, թե ինչ է բողոքում եմ անարդարության դեմ: Ազատիր ինձ այդպեսակ բողոքից:»

Հանձինս Սուլթանյանի խոսում է հայ ավելի պարզ արտահայտվող բուրժուական ինտելլիգենցիան, այն ինտելլիգենցիան, վոր գիտե և ճանաչում է իհարկե իր մեղքերը, բայց դրա հետ միասին միշտ սովորել է նայել կնոջ վրա վորպես մի առարկայի, մի «տանտիկնոջ», վոր պիտի կազմե նրա տան զարդարանքը:

Նրա համար կինը մի այնպիսի սեփականություն է, վորպես մնացյալ նույնիսկ անշունչ մարմինները: Յեվ յեթե նա անբավական է իր «ապրանք»-ի անհավատարմությունից—այդ միայն նրա համար, վոր նա իրեն խաբված է գտնում: Նրա մեջ արթնանում է սեփականատերը, վոր ցանկացել է ոգտվել «առողջ» և «անարատ» ապրանքից, իսկ հետո անակնկալ կերպով իր հաշիվները գտել է սխալ:

Ի հարկե, նա յերբեք չի անվանի իր կնոջը «ապրանք», չի արտահայտվի նորա մասին վորպես եզ մի կենդանու—նա ունի ավելի հարմար և ընդհանրություն ստացած խոսք—«տանտիկին»: Իր վայրկենական սեփականատիրական բնազդները նա միշտ կը վարագուրե կոկիկ ձևերով, կոմպլիմենտներով և քաղցր ժպիտով: Բայց և այնպես նրա իսկական էությունը միշտ պարզվում է այնպիսի դեպքերի ժամանակ, վորպես Արարաջյանինը:

Պ. Սուլթանյանը գոհված կնոջ մասին կարծես չի յել հոգում: Դրաման, նրա կարծիքով, նրանումն է կայանում, վոր այժմ պիտի տանջվի «խղճի խայթոցից» Արարաջյանը:

Բուրժուական հայ հասարակության մյուս սյունը, անդիպլոմ բուրժուազիան, պարզում է իր վերաբերմունքը մի նախադասությամբ—«Հունց վոր Ջարուհին ա ասըմ, թամամ բիաբրուչություն ա»: Դրան վոչինչ ավելացնել հարկավոր չէ, այնքան շատ բան է ասում այդ բացականչությունը:

Տանջանք, ցավ, սոսկալի, ծանր պայմաններ, անհամաձայնություն, և անհաշտ, միշտ անհասկանալի կյանք միմյանց հետ—այդ բոլորը թող մնա ընտանիքի նեղ շրջանում: Յեթե մի խեղճ աղջիկ իր ապօրինի զավակին ցուցադրե ամենքի առաջ՝ նա կխարազանվի. իսկ յեթե նա իր զավակին խեղդե, հասարակության մնացյալ անդամների համար աննկատելի կերպով, և ապա ընտանեկան միջավայրի ճնշման և ստիպողական պահանջների ազդեցության տակ ամուսնանա վորևե մեկի հետ, վորին չի սիրում, ծախվի հնամաշ մի ծերունու—այդ բոլորը կը համարվի խնդրի արդար և բնական լուծում: Միայն թե «բիաբրուչություն» չլինի:

Այդպես են տղամարդիկ. այժմ տեսնենք կանայք ինչպես են դատում:

Տ. Գալեմքարյանին ել ի հարկե վրդովեցնում է դեպքը, բայց դարձյալ նրան զբաղեցնում է դեպքի, այսպես ասած, կրիմինալ, յեղեռնագործական, սենսացիոն կողմը:

Նա խորը չի դատում և չի մտածում ամենևին բուն այն խնդրի մասին, վոր տեղիք է տվել յերկու ամուսինների տարաձայնություններին: Նա նույնիսկ մի տեսակ ուրախ և չար նախանձով հետևում է Յեվգինեյին և քննում է նրա դեմքի արտահայտությունը:

Տ. Գալ.—(առանձին, ամուսնուն) Նկատեցի՞ր. քանի անգամ ձայնը փոխեց:

Պ. Գալ.—Ա կնիկ, թողար տեսնանք, պեն չունիս:

Յեվգինե—(Ուշաթափության ժամանակ)

Տ. Գալ.—(ամուսնուն) Լավ ուշադրություն դարձրու, այդ բոլորը նրանից է...

Պ. Գալ.—Փին...

Ի հարկե այդ տիկին Գալեմքարյանը բուրժուական ընտանիքի ամենատիպիկ դեմքերից մեկն է: Յեվգինեն դեպքի նկա-

րադրության ժամանակ մտաբերում ե իր նմանօրինակ անցյալը և անդադար այլայլվում ե։ Ի հարկե, տիկին Գալեմքարյանն էլ հետևում ե առանձին չարությամբ։ Նրա համար դեպքը «բիտաբուռչություն» ե։

Այժմ լսենք «նոր սերնդի» կնոջ—«ազատագրվող» կնոջ ձայնը։ Դա Մարթան ե, վարժուհի, այրի։ Հեղինակը զուր չի շեշտել Մարթայի պրոֆեսիայի վրա։

Իմանալով Յեվգինեյի «արատ»-ի մասին, նա ևս սկսում ե նրան ատել և իր յեղբորն էլ խորհուրդ ե տալիս «արձակել» կնոջը։ Յեվգինեյի «մեղքը» նրա համար անհանդուրժելի յե։

Մարթան համարում ե Յեվգինեյին «անազնիվ» և «անբարոյական» մի արարած, վոր մտնելով իր յեղբոր տունը քանդել ե «օջախը» և անպատվել նրան ևս վորպես ընտանիքի մի անդամի։ Իր յեղբոր առաջ նա կտրուկ պահանջ ե դնում կտրել հարաբերությունները կնոջ հետ։ Տրադիցիաների և հին կուռքերի ստրկուհու վոգին արթնանում ե նրա հոգու մեջ։

Այնքան մեծ ե լինում «հասարակական կարծիքի» ազդեցությունը, վոր նրան հպատակվում են սկզբից մինչև վերջը, նույնիսկ «խելոք» և «զարգացած» Յեվգինեն, նրան հպատակվում ե և՛ նրա ավելի ևս «կրթված» ամուսինը, յերդվյալ հավատարմատար Ալվերդյանը։

Քննենք նախ Յեվգինեյին։ Բնորոշ ե, վոր նա միանգամայն համաձայն ե կարծես, շրջապատի հետ, լուռ հպատակվում ե բոլորին և միայն խեղճ-խեղճ հարցնում ե իր ամուսնուն, արդյո՞ք ճիշտ ե, վոր յեթե նրա կնոջ հետ ևս պատահեր այն, ինչ վոր Արաբաջյանի—նա կներեր իր հանցավոր կնոջը։ Ինքը Յեվգինեն կարծես ուժեղ համոզմունք չունի, թե ինքն իրավացի չե, թեև ինչ վոր թույլ գիտակցություն ստիպում ե նրան ասել, վոր չե, այդպես չի կարող լինել—կինը պատասխանատու չե իր անցյալի համար և այլն, և այլն։

Յեվգինեն զգում եր իրեն անչափ մեղավոր իր ամուսնու առաջ և, յերբ սա կամենում ե նրան գրկել, դեն ե հրում, վորովհետև «արժանի» չե համարում նրա գգվանքին։ Ամուսնուն այդ զարմացնում ե, նա կարծում ե նույն իսկ, թե Յեվգինեն կատակ ե անում իր հետ։

Յեվգ.—Կատա՞կ... տանջանք ե։

Միհ.—Ո՞վ ե տանջվում, ինչո՞ւ։

Յեվգ.—Նա, վոր արժանի չե տանջվելու յեվ ցուցով նա, վոր արժանի չե...։

Այստեղ արդեն մենք պարզ տեսնում ենք, վոր Յեվգինեյի գլուխը մտել ե այն միտքը, թե ինքը մեղավոր ե։ Նույնիսկ Արաբաջյանի դեպքը քննելուց հետո, այն յերկար փիլիսոփայություններից և շաղակրատությունից հետո, վոր արավ «հասարակությունը», այն բոլոր բարի խոսքերից հետո, վոր նա արավ ինքնասպանի մասին—Յեվգինեն տանջվում ե և իրեն ևս «մեղավոր» համարում։ Այդքան ուժեղ ե քարացած հին նորմաների ազդեցությունը, վոր ստիպում ե տանջվել նույնիսկ մի «զարգացած», խելոք կնոջ։

Հակամայից մենք հիշում ենք մի ուրիշ դեպք, Զոլայի վեպերից մեկում բերված, ուր դարձյալ նկարագրվում ե ամուսնացածների նմանօրինակ մի գժտություն։ Բայց կա այնուամենայնիվ մեծ տարբերություն Զոլայի և Շիրվանզադեյի մոտեցման յեղանակի մեջ։

Կինը Զոլայի մոտ դարձյալ սիրում ե իր ամուսնուն, պատմում ե նրան իր առաջին սիրո մասին։ Ամուսինը լսում ե և դարձյալ զգում ե իրեն վատ, տանջվում ե, խանդում ե։

Բայց մի եական հանգամանք—կինը պատմելով անցած օրերի մասին, չի յել մտածում, վոր նա «արժանի չե տանջվելու», նրա գլխում մեղքի մասին միտք անգամ չի ծագում, իսկ ամուսինը յեթե տանջվում ե, տանջվում ե ուրիշ պատճառով։ Նա կասկածում ե, արդյոք իր կինը, վոր մի ժամանակ սիրել ե ուրիշին, մոռացել ե միանգամայն նրան, այդ սերը, առաջին, այնքան ուժեղ սերը։

Ամուսինը հավատում ե կնոջ—յերբ նա պնդում ե, վոր մոռացել ե այդ սերը, բայց դարձյալ հաճախ նա մտածում և տանջվում ե. արդյո՞ք չի կարող բռնկվել նորից այդ առաջին սերը։ Վորքան հիշում ենք, Գաբրիել Դ'Աննունցիոն ել իր «Մահվան Հաղթանակ»—վեպում շոշափում ե հոգեբանական այդ առեղծվածը։

Դա, ի հարկե, հետաքրքրական հոգեբանական մի պրոբլեմ ե, թե ինչից ե նա առաջանում, վորո՞նք են իրական պատճառները, վատ ե դա թե լավ—այդ մենք թողնում ենք։

Յերկուսն ել զգում են, վոր կողմերից վոչ մեկը մեղավոր չե, և վոր միմիայն ժամանակի ընթացքում կարող են նրանք ազատագրվել իրենց վարանումներից...։

Այդպես չէ Յեվգինեյի վերաբերմունքը, վորը «տանջվում» է հենց նրա համար, վոր «հանցանք»-ի գաղափարը թույլ կերպով նրա գլխում ապրում է։ «Արժանի չեմ տանջվելու», ասում է նա իր մասին։

Յեթե Յեվգինեյից մենք դառնանք Միհրանին, կտեսնենք միևնույնը։ Մենք արդեն շոշափեցինք նրա համաձայնությունը Վարսամյանի հետ։ Բայց ահա նա տեղեկանում է իր կնոջ «մեղքի» մասին։ Յեվ իսկույն դրանից հետո դառնում է մի գազան, վոր քիչ է մնում նույնիսկ ծեծի նրան։ Վրդովեցնում է նրան այն միտքը, վոր Յեվգինեն յերբեւէ, թեկուզ մի ժամով, «պատկանել է այդ մարդուն»։ Ահա այդ է բնորոշ—«պատկանել» է։ Իսկ յեթե չի պատկանել «այլ այնպես, միմիայն սիրել է», այն ժամանակ ի՞նչպես։

Կարևորը Միհրանի համար—Յեվգինեյի «մարմնի» անարատությունն է։

Այստեղ արդեն մենք տեսնում ենք Միհրան Ալվերդյանի իսկական եյությունը։ Յեթե նրա տառապանքը բղխեր անզուսպ սիրո նախանձից, այդ դեպքում նա պիտի տանջվեր նույնքան և դեռ ավելի, բայց ամբողջ խնդիրը հենց նրանումն է, վոր Ալվերդյանի զգացմունքի արմատները միևնույնն են, ինչ վոր Սուլթանյանինը։ Յեվ նա զգում է այդ ինքը, և աշխատում է զսպել իրեն, սպանել գազանին, ինչպես ինքն է արտահայտվում։

Շիրվանզադեն մեծ համակրությամբ է վերաբերվում դեպի Ալվերդյանը, յեվ թվում է, համարում է նրան հասարակության «առաջավոր տիպար»։ «Ապացուցիր ասում է նա Վարսամյանի բերանով, ուրեմն, վոր մեր բարոյական աշխարհը ամայի չէ, վոր մենք էլ ունենք մարդիկ բարի ընդարձակ նշանակությամբ, գործի և խոսքի մարդիկ...»։ Հետևաբար Միհրանը «գազանը սպանելուց» հետո հեղինակի համոզմամբ կապացուցաներ, վոր «մենք էլ ունինք մարդիկ բարի ընդարձակ նշանակությամբ»։ Դա, ի հարկե, ֆիլիստերություն է։

Վողջ խնդիրն այնքան հասարակ է, վոր «հաջող» լուծվելու դեպքում էլ Ալվերդյանը դեռ վոչինչ չէր ապացուցանի։ Տարորինակ է այն, վոր նա դառնում է «գազան», իսկ այն, վոր նա ի վերջո կարողանում է «զսպել» իրեն, այդ զարմանալի չէ։ Այդպես պիտի լիներ։ Կապիտալիստական դարաշրջանում նույնիսկ ամենախոհեմ բուրժուան շատ լավ գիտե, վոր սեփական բռնությամբ չէ լուծվում ամեն բան։

Թվում է, յերկու ամուսինների այդ հաշտությունը չպիտի կատարվեր այնքան աղմկալի կերպով, ինչպես այդ տեսնում ենք Շիրվանզադեի մոտ։ Այդ ձևով չի կարելի ամենևին հաստատել կամ «ապացուցել», վոր մենք էլ ունինք մարդիկ։

Այդ տեսարանը կարող է միայն ծիծաղ և արգահատանք առաջ բերել։

Միհր.—Քո պատիժը դու արդեն ստացել ես, բավական է։ Մի՞թե չես զգում, ինչ է կատարվում այս րոպեյին—քո հոգում։ Դու պետք է մնաս իմ տանը։

Յեվ ապա վերջում՝

....«Համոզմունքով ներեցի, սիրելով կը մոռանամ...»։ Վարսամյանին և Շիրվանզադեին ըստ յերևույթին հիացնում է Ալվերդյանի արտասովոր այդ «վեհանձնությունը»։

Սակայն «անաչառ ընթերցողը» կարող է շատ լավ նկատել բուրժուական էթիկայի այդ տեսարանի կոմիքական բնույթը և Ալվերդյանի զավեշտական դիրքն իր հանդիսավոր ժեստով։

Ի՞նչ է նշանակում **պատիժ**, ուրեմն Ալվերդյանի մտքով անցել է և «մեղքի» գաղափարը և մնացել մինչև վերջը։ Ըստ յերևույթին այդպես է, վորովհետև—նա «ներում է»։ Բայց ինչ իրավունքով—մի՞թե այդ վերջին ակկորդը իրապես ավելի ես ծանր չպիտի լինի Յեվգինեյի համար։

Միհրան Ալվերդյանը ինքը մի քանի որ առաջ խոստովանվել է, վոր իր կյանքում «մոլորեցրել է» շատ կանանց, բայց չնայած դրան, իր այդ ավելի բարդ անցյալի համար պարտք չի համարել ներողություն խնդրել, նույն իսկ ասել Յեվգինեյին։ Իսկ ինքը մի հասարակ դեպքի առիթով տանջում է նրան, վրդովվում, իստերիկայի մեջ ընկնում և ապա վերջն էլ վեհանձնորեն «ներում է»։ Թվում է, ավելի շուտ Ալվերդյանը պիտի ներողություն խնդրեր, յեթե իրապես սիրում էր Յեվգինեյին, ցրեր նրա հին հայացքները, սխալ կասկածները «մեղքի» և «հանցանքի» մասին ու փարատեր նրա հուսահատությունը։

Ալվերդյանն այդպես չի վարվում։ Նա կատարում է Վարսամյանի ցանկությունը, բայց կատարելով էլ ապացուցանում է, վոր իր ամբողջ էությամբ շարունակում է կապված մնալ անցյալի հետ, շարունակում է լինել մի յերկրորդ Սուլթանյան, վոր տարբերվում է նրանից իր մի քիչ «ավելի լայն զարգացումով» և «յեվրոպականությամբ»։

Շիրվանզադեն սիրում է իր այդ հղկված հերոսին, նա հա-

վանում է մանավանդ նրա վերջին քայլը: Նրա հետ միասին հիանում է, ի հարկե, և հայ քաղքենի հասարակությունը, վորովհետև հանձին Ալվերդյանի տեսնում է այն ինտելլիգենտ-յեվրոպացիներին, վորոնք ազատ՝ «հին քրմերի», «հին հայացքների» ազդեցությունից՝ պետք է նպաստեն կանանց դրության փոփոխմանը և կանանց «ազատագրմանը»:

Մենք արդեն տեսանք, վոր Ալվերդյաններն իրապես շատ քիչ են տարբերվում Սուլթանյաններից: Թե ինչու յե այդպես նկարագրել «միջավայրի» և «հին հայացքների» դեմ կռվողին Շիրվանզադեն, այդ բացատրվում է նրանով, վոր Շիրվանզադեն ինքը, վորպես լիբերալիզմի գեղագետ, կանգնած է իր հերոսի պաշտպանած գաղափարական դիրքերի վրա:

Անցնենք այժմ «Արմենուհի»-ի մեջ արծարծված մտքերին:

3.

Մի ժամանակ քաղքենի հասարակության համար ստեղծվում եյին բազմաթիվ պիեսներ և յերկեր, ուր քարոզվում եյին «խելոք», «գեղեցիկ» գաղափարներ և վերջի վերջո ավետվում եր «բարի» սկզբունքների հաղթանակը: Այդպիսի պիեսները մինչև այժմ մեծ հարգի յեն գավառական քաղաքներում. այդ պիեսներն ունեն նաև իրենց համապատասխան դերասանները, վորոնք խաղում են մելոդրամատիկ կերպով և մի առանձին պաթոսով:

Ժամանակները փոխվել են. այժմ դժբախտաբար թե բարեբախտաբար շատ քիչ մարդ կը գտնվի, վոր զբաղվելիս լինի այդ տեսակ յերկերի ստեղծագործությամբ: Թերևս այդտեղ մեծ նշանակություն ունի և կինեմատոգրաֆների մրցությունը: Ավելի կարիկատուրային և ավելի պաթետիկ՝ կինոն, խոսք չկա, վոր մեծ բավարարություն է տալիս քաղքենու շարլոն ճաշակին: Տեսնել Մեֆիստոֆելին օպերայում շատ դժվար է, հարկավոր է մտածել նրա բարդ հոգեբանության մասին: Իսկ կինեմատոգրաֆում այնքան պարզ է ամեն բան — «Զոր, վոխերիմ սատանա», վերջացավ գնաց, Մարգարիտան էլ «խեղճ, խաբված աղջիկ», վոր ի վերջո «փառք աստծո» ազատվում է: Իսկական գեղարվեստի ստորացումն է դա, վոր նպաստում է նրա անկմանը:

Այդ տիպի մելոդրամներն ու գրվածքները «սիրվում» են չափազանց, մանավանդ հասարակության քաղքենի շարքերում: Այդ էս այն պատճառով, վոր սովորաբար ակնարկած գրվածք-

ներն առանձին մտավոր աշխատանք չեն պահանջում: Ինքը հեղինակը միշտ բացատրում է ընթերցողին ամեն բան, լրացնում և վերջապես կեղծ-կլասիկների նման շարում է դեմ առ դեմ յերկու տիպի մարդկանց, բացարձակ «լավերին» և բացարձակ «վատերին»: Վորքան «գեղեցիկ», «լուսավոր» են առաջինները, այնքան սարսափելի, մռայլված են վերջինները: Մոռացվում է այն հասարակ ճշմարտությունը, վոր «լավի» և «վատի» վերացական հասկացողությունները չափազանց առաձգական են: Դրա համար էլ հեղինակը պիտի խուսափե եպիտետներից և զանազան պրիմիտիվ բացատրություններից իր հերոսների բնորոշման համար:

Ահա, այդ հիմնական ճշմարտությունը մոռացել է Շիրվանզադեն իր «Արմենուհին» գրելու ժամանակ: Նրա պիեսները առհասարակ գեղարվեստական տեսակետից թույլ են: Բայց այն, ինչ վոր նա վերջերս հրատարակեց, մի առանձին ստեղծագործություն է, գրված հապճեպ և ըստ յերևույթին առանց մտածելու: Մեր խոսքը «Արմենուհու» մասին է: Մի պիես է դա, - ուր նկարագրվում է հայկական Նորա-ի պայքարը հայ միջավայրի «հետամնացության» դեմ:

Նկարագրվում է մի ընտանիք, հայկական սովորական «վատ» և «չար» ընտանիք, բաղկացած մորից, աղջկանից և վորդուց:

Մայրը «չոր-չոր, խորշոմած, գռեհիկ դեմքով մի կին է, քայլվածքն ու ձևերը գոռոզ»: Աղջիկը հիշեցնում է մորը՝ «շքեղ, բայց վոչ-ախորժելի ճաշակով հագնված կին է, դեմքով նման իր մորը: Խոսելու միջոցին դեմքը միշտ արտահայտում է ճախանձ ու չարություն: Վորդին, Սամսոն Ալադջյանը «տափակ ճակատով, հոնքերը միշտ կնճռած, անտարբեր, յեսամոլ, շահասեր մարդու տիպար»: Ինչպես տեսնում ենք, ընթերցողին մտածել այնքան էլ հարկավոր չե, սկզբից արդեն հեղինակը բացատրում է իր գծած տիպարների եյությունը:

Ահա, առաջին յերկուսը իրենց ազդեցության են յենթարկում յերրորդին — Ալադջյանին, և ըստ հեղինակի — դա արդեն մի ծեծված բան է Շիրվանզադեի մոտ, անդադար կրկնվող — մեծագույն չափով նպաստում են նրան, վոր յերկու ամուսինները չեն կարողանում հասկանալ միմյանց: Դրանք «չարերն» են: Զկա նրանցից վոչ մեկի մոտ մի լավ գիծ, հեղինակը մռայլ գույներով է նկարագրում նրանց դեմքը: Բոլորն էլ գծվում են, վորպես չար, նախանձ, ժլատ անձնավորություններ:

Յեվ ընդհակառակը—դրանց դեմ շարվում են դրական, «լավ» մարդիկ—Արմենուհին, նրա հայրը Հմայակը...

Արմենուհին, Ալադյանի կինը «սիրուն, համակրելի, համարձակ դեմքով, գեղեցիկ կազմվածքով մի կին է»։ Չնայած այդ եպիտետներին այդ «պայքարող կինը» ամենևին չի հաջողվել Շիրվանզադեին։ Դա մի շատախոս և ըստ էության պավեշտական դեմք է։

Նախ և առաջ անախորժ է հնչում այն, վոր Արմենուհին չափազանց լավ ատեստացիաներ է տալիս իր մասին։ **«Ախ, հայրիկ, հեշտ է այդ ասել, բայց ի՞նչպես։ Դու գիտես, վոր յես զզվում եմ բամբասանքից։ Իսկ Վերգինեն – միայն նրանով է շնչում ու ապրում»։**

Արմենուհին չափազանց զգացվող է։ Թափառական յերաժիշտներին նա 3 ռուբլի յե տալիս և պատվիրում աղախնուն՝ **«Մելանիա, շնորհակալություն հայտնեցեք նրանց։ Այդ ցնցոտիների տակ մարդկային սիրտ է բաբախում»։** Արմենուհին շատ զարգացած է։ **«Տիկին, Փարիզում տեսա՞ք Ռոդենի գործերը»։** —Վո՛չ, տիկինը չի տեսել, Արմենուհու հարցին նա պատասխանում է մի բամբասանքով։

Արմենուհին Փարիզում տեսել է այն պիեսը, վոր ներկայացնում է Բեթհովենի կյանքը, իսկ տիկին Սիրանույշը, յերբ լսում է Արմենուհու տպավորությունները—անմիջապես իր կողմից նկատում է, վոր նա այդ չգիտե։ Նա միայն գիտե, վոր յերկու ամսվա ընթացքում Փարիզում ծախսել է 4127 ռ.։

Արմենուհուն վոգևորում է բնությունը. ահա նրա պատետիկ մի ճառը՝ . «Յեվ դուք, նայելով հսկաների վարդագույն գագաթներին ու նրանց հուժկու կրծքին, սլանում եք դեպի հեռավոր, անծանոթ աշխարհներ, ուր չկան մանր կրքեր, չնչին հույզեր, նյութամոլություն, նախանձ, զրպարտություն, բանսարկություն, ատելություն։ Ահ, այդ սքանչելի յե, ինչպես տիեզերքի գոհար...» և այլն և այլն։

Տհաճության պես մի տեսակ զգացմունք է զարթնում հեղինակի դեմ։ Մի՞թե նա չի նկատում այդ կեղծ մոտիվները և մելոդրամատիքական ելեմենտները։ Արդեն բերված տեսարանը բավական է «Արմենուհու»-ն արխիվ նետելու համար։

Գնանք առաջ։

Արմենուհին գեղարվեստի մեծ յերկրպագուհի յե և սիրող սիրտ ունի, բայց ամուսինը զբաղված է իր գործերով, այդ բո-

լորն ամենևին չի նկատում և ուշադրություն չի դարձնում իր կնոջ վրա։ Յեվ ահա այդ վիճակում Արմենուհուն պատահում է մի բարի, սենտիմենտալ յերիտասարդ, վորը փախչում է իր կնոջից՝ մի «բռնավոր արարածից» և գալիս է հանգստանալու Արմենուհու մոտ։ Լսում է նա գեղեցիկ կնոջ նվագածությունը, հանգստանում այդտեղ, յերազում ավելի յերջանիկ կյանքի մասին և ապա վերջն էլ սիրահարվում։ Արմենուհին էլ փոխադարձաբար սիրում է Հմայակին։

Այնքան անորոշ է նկարագրված այդ սերը, վոր մինչև վերջը անհասկանալի յե մնում—ինչու պիտի Արմենուհին, օրինակ, սիրեր Հմայակին. մի՞թե նրա համար, վոր այդ վերջինը պատմել է իր «հրեշ» կնոջ մասին և լսել Արմենուհու նվագածությունը։

Թող թույլատրվի մեզ բերել այստեղ մի բնորոշ պատկեր, վոր նկարում է սիրային բացատրությունը Արմենուհու և Հմայակի մեջ։

Հմայակ.—Սերը սիրահարների միությամբ յերբեք չի կարող ապականվել։ Այն միայն կը կործանի ձեզ և ինձ, յեթե չմիանանք։ Մի լինեք յերկչոտ, յելեք բարձր ամբոխի բարոյական ցածր մակերևույթից։ Արծիվը չի կարող և չպիտի ապրե հավաբնում։

Արմենուհի.—Ախ դուք ճնշում եք գործ դնում ինձ վրա, այդ լավ չէ, լավ չէ։

Հմայակ.—Յես ունիմ իրավունք մինչև անգամ բռնանալու, յեթե՝ միայն Ձեր սերը սեր է։

(Մտածել է արդյոք Շիրվանզադեն, յերբ թելադրում է այդ խոսքերն արտասանել իր հերոսին)։

Արմենուհի.—Ապագան ցույց կըտա, թե վորքան ամուր է այն։

Հմայակ.—Ինձ համար չկա ապագա առանց ձեզ և վոչ մի օր, վոչ մի ժամ։

Արմենուհի.—Յերեխա մի լինեք՝ մտածեցեք։

Հմայակ.—Յես այրել եմ այն կամուրջը, վորով անցել եմ ձեզ հասնելու համար, ինձ համար դարձ չկա։ Ահա տեսեք (հանում է մատից պսակի մատանին)։ Այս իմ ստրկական շղթայի վերջնական օղակն է։

Արմենուհի.—Ի՞նչ եք ուզում անել։

Հմայակ.—Շպրտել դեն։ (Ձգում է մատանին ձախ կողմը, հեռու)։ Ահա այդպես—գնաց, ընկավ ձորը։

Արմենուհի.—Խելագար։

Հմայակ.—Ես դեն ձգեցի այն բռնակալական կապը, որը կոչվում է ամուսնություն։ Բավական է, որքան կրեցի այն իբրև խորին վիրավորանք անհատի ազատության։

Ինչպես տեսնում ենք, Հմայակի ստիլը «բարձր» է։ Անդադար «ապստամբություն» ինչ որ անորոշ կապանքների դեմ, ձգտում դեպի ինչ որ անորոշ ապագա, «ազատ» կյանք և մշտական համեմատություններ, համեմատություններ... «Ամենագեղեցիկ ծաղիկն ամենասոսկալի թույն է պարունակում իր մեջ, անունն է այդ ծաղկի բելադոն»...։ «Ես բարվոք եմ համարել նրա բուրմունքով մահ ընդունել, քան անվերջ սողալ բուսական կյանքի ձանձրույթում»։ Այդ ասում է Հմայակը։

...—«Ծառը ուրախ, զվարթ է ու գեղեցիկ իր ծաղիկներով ու կոկոններով, իսկ յերբ նա բեռնավորվում է պտուղներով, թեքվում է դեպի յերկիր և տառապում։ Հեռու լինենք յերկրից, Հմայակ, և բարձր պահենք մեր զգացումները»։ Այդ էլ ասում է Արմենուհին, որը նույնպես, ինչպես տեսանք, ճոռոմաբան վոճի մեծ յերկրպագուհիներից է։

Յերկու սիրահարների այդ բարդ խոսակցությունն ընդհատվում է. ասպարեզ է գալիս մռայլ, «տափակ ճակատով, խիտ հոնքերով» հայկական Րինալդո-Րինալդինին—Արմենուհու ամուսինն իր ատրճանակով, գալիս է խորամանկ, նախանձոտ Վերգինեն, բայց տեսնելով սիրահարվածներին Րինալդոն հանկարծ ընկճվում է, հաղթահարվում։

Ատրճանակը սկզբում ուղղվում է Հմայակի վրա, բայց Արմենուհին վեհանձնաբար ծածկում է Հմայակին.

Արմենուհի.—(ընկնելով Հմայակի առաջ, ծածկում է նրան իր մարմնով)։

Առաջ ինձ, հետո նրան։

Սամսոն.—Յեվ քեզ, և՛ նրան (ուզում է ատրճանակն արձակել, չի կարողանում, թուլանում է)։ Չ՜ե չեմ կարող, չեմ կարող (ատրճանակը գցում է գետին։ Տանջվում է։ Քիչ լռություն։ Խեղդված ձայնով)։

Գնա, գնա նրա հետ, ազատ ես (հեկեկում է)։

Արմենուհի.—(Գրկում է Հմայակին)։

Փակվում է սրտաշարժ տեսարանը։

Ի՞նչ ասել. մի՞թե կարելի են այդ կեղծ դրությունները—յուրօրինակ պաթոսը, մելոդրամատիքական էջերն անվանել գեղարվեստական։

Շիրվանզադեն ուժեղ և տաղանդավոր գեղարվեստագետ է, և թվում է, հենց այդ պատճառով էլ նա ավելի լավ, քան «լայն հասարակությունը» պիտի գիտակցեր իր Արմենուհու պակասավոր կողմերը։ «Ցավագար»-ից, «Քաոս»-ից և «Արտիստ»-ից հետո Արմենուհին մեծ, շատ մեծ քայլ նահանջ է։ Յեթե չնայած այդ բոլորին մենք կանգ ենք առնում Արմենուհու վրա, այդ միայն նրա համար, որ "Արմենուհին„ Շիրվանզադեի վերջին յերկասիրությունն է, և որ ավելի էական և կարևոր է, դարձյալ արտահայտում է հեղինակի հիմնական հայեցակետը «կանանց խնդրի» մասին։ Այդ հայեցակետին կը դառնանք մենք այժմ։ Թերևս Արմենուհու մեծ արժեքը կայանում է հենց նրանում, որ նա ավելի վորոշ և պարզ, քան Շիրվանզադեի նկարած մնացյալ կանայք, պարզաբանում է հեղինակի հայացքները։

Ինչո՞ւ Արմենուհին—այդ, ըստ հեղինակի կրթված, և խավար միջավայրից շատ և շատ բարձր կանգնած կինը կտրում է իր հարաբերություններն ամուսնու՝ Սամսոն Ալադյանի հետ։

Յերևակայեցեք մի այսպիսի դրություն։

Յերկար տարիներ Արմենուհին ապրում է իր «տափակ ճակատով» ամուսնու հետ։ Ապրում է և կարծես չի նկատում կամ, յեթե նկատում էլ է, չի դարձնում հարկավոր ուշադրություն այն խորխորատի վրա, որ հետագայում նրա համար դառնում է ակներև և ստիպում է նրան բաժանվել իր ամուսնուց։

Ըստ յերևույթին ամուսնական կյանքն այդ ժամանակ ընթանում էր քիչ շատե նորմալ հունով։

Լավ էր ընթանում մինչ այն, քանի Արմենուհու ամուսինը սիրում էր նրան, այլ խոսքով մի վորոշ ժամանակ նվիրում կնոջը և այլն...։ Բայց ահա Արմենուհին նկատում է ինչ որ «անտարբերություն» ամուսնու կողմից։ Սկսում է կասկածել և ապա մի գեղեցիկ օր, յերբ վորշակի իմանում է իր ամուսնու անհավատարմության մասին, կտրում է իր հարաբերությունները նրա հետ։

Այդ բոլորը մի փոքր տարօրինակ է թվում։ Բայց և այնպես, այդպես է նկարագրում իր հերոսուհուն Շիրվանզադեն։

Ինքնըստինքյան ծագում են մի շարք հարցեր, յերբ քննում ենք Արմենուհու դեմքը։ Ինչպե՞ս օրինակ բացատրել այն, որ «այդ խելոք» կինը միանգամայն հնարավոր է համարել ապ-

րել մի մարդու հետ, վորին չի սիրել ամենևին—ինչպես բացատրել այն, վոր այդ «կրթված» և «ուժեղ» կինը միայն իր ամուսնու «անհավատարմությունից» հետո չե վճռել կտրել «հարաբերությունները» նրա հետ։

Իսկ յեթե այդ վերջին դեպքը չլիներ—այդ պարագայում կշարունակե՞ր Արմենուհին ապրել իր «տափակ ճակատով» ամուսնու հետ։

Կարելի չե, իհարկե, յենթադրել, վոր Արմենուհու մեջ վաղուց արդեն ստեղծվել եր վճռական վորոշում թողնել ամուսնուն, վաղուց նա վորոշել և համենայն դեպս մտածել եր վերջնական քայլն անել։ Ամուսնու «անհավատարմությունը» լինում ե կարծես այն ուժեղ խթանը, վոր վերջնականապես կազմակերպված ուղղություն ե տալիս նրա բողոքին։

Բայց այդ յենթադրությունն ել խախուտ հիմքեր ունի, և խնդիրը դարձյալ չի պարզում։

Արմենուհին «ուժեղ և կրթված» անհատ ե, և ահա հենց դրա համար ել անհասկանալի յե թվում ինչու այդ ուժեղ անհատը շարունակում ե սիրել ամուսնուն մինչև մի վորոշ մոմենտ և դադարում ե միայն ակնարկած «դեպքից» հետո։ Յեվ հետո ինչու նա շարունակում ե և այդ դեպքից «հետո» մնալ իր ամուսնու, Ալագյանի, տանը։ Ինչու նա, այդ կինը, Հմայակի թախանձանքներին անգամ պատասխանում ե, վորպես մի խեղճ աշակերտուհի...։

Յեթե այդ բոլորը Շիրվանզադեն գրել ե իբր թե պայքարը նկարագրելու համար, պետք ե ասել, Շիրվանզադեին չի հաջողվել ամենևին համոզիչ կերպով արտահայտել իր հիմնական միտքը։

Ամբողջ խնդիրը հենց նրանումն ե, վոր այդ հակասությունները, առաջին պահուն անհասկանալի կողմերը, «անհարթությունները» կազմում են Արմենուհու և ընդհանրապես Շիրվանզադեի նկարագրած բոլոր կանանց հոգեբանական դեմքի անհրաժեշտ հատկանիշները։

Ինքն Արմենուհին վորքան ել չբողոքի—մնում ե այնուամենայնիվ նույն ատելի հայկական միջավայրի հարազատ զավակը։ Ի վերջո Արմենուհու ձգտումները չեն գնում այնքան ել հեռու և համենայն դեպս չեն անցնում քաղքենի մտահայեցողության սահմաններից։

Թող այդ ամուսինը, վորին «նվիրվել» ե նա, սիրե իրեն, իսկ սերն ել վորքան գիտենք Շիրվանզադեի մյուս յերկերից—

կայանում ե նրանում, վոր ամուսինը «զբաղվի նրանով», «փայփայե», թող ամուսինը հետաքրքրվի նրանով, պատմե իր «գործերի» մասին և վերջապես չդավաճանե նրան և Արմենուհին, Յեվգինեն, Գայանեն կլինեն միանգամայն յերջանիկ ու այլևս չեն բողոքի միջավայրի դեմ։

Վերջի վերջո այդ բոլոր կանայք, նրանց թվում և հայկական Նորա-Արմենուհին, յերազում են իդեալական քաղքենիական ընտանիքի մասին, վորի տեսակետից և քննադատում են «տղամարդկային մորալը»։

Ժամանակակից բուրժուական ընտանիքը իր հիմնական կողմերով միշտ մնում ե վորպես մի անհրաժեշտություն, բայց միայն առանց իր մութ կողմերի, առանց կանանց ստրկության և «ասիական» կոլորիտի։

Յեվ վոր ամենից բնորոշն ե—կինը չե մտածում ամենևին այն մասին, վոր նա ել կարող ե իր ամուսնուց անկախ, հոգեկան կյանք ունենալ, այլ վոչ միայն ապրել ամբողջովին նրա, իր ամուսնու, տղամարդու կյանքով և տղամարդու համար։ Կարծես այդ բոլոր բողոքող կանայք համաձայն են այն եյական պահանջների հետ, վոր դնում ե նրանց առաջ բուրժուական միջավայրը։ Կարծես մենք նրանց բոլորի բերանից ել լսում ենք միևնույնը.—Այո՛, մենք կանայք համաձայն ենք լավ, «քնքույշ» տանտիկիններ լինել, համաձայն ենք ձեզ ոգնել, սիրել, պատվել. միայն դուք ել գնահատեցեք մեր սերը, դուք ել սիրեք մեզ, փայփայեք։ Յեվ հետո վայրենաբար մի վարվեք մեզ հետ...։

Այդ կանայք, վոր հաճախ «բողոքող» են տիրող դասակարգերի ստեղծած միակողմանի նորմաների դեմ (ըստ ֆեմինիստների՝ տղամարդկանց ստեղծած նորմաների դեմ)՝ համաձայնվում են ծառայել և հպատակվել ամուսիններին միայն թե վերջինները «սիրեն» նրանց։

Թե ինչից ե բխում այդ յուրորինակ հոգեբանությունը—այն, վոր կանայք ամուսնանալով՝ դառնում են իրենց ամուսինների «հավատարիմ ընկերը», ապրում միայն նրանց կյանքով, ընթանում միևնույն ուղիով և մտածում ու խորհում նրանց պես, ամբողջովին յենթարկվում և նվիրվում նրանց, այդ բնորոշ յերևույթի բացատրությունը տրվել ե արդեն ժամանակակից հասարակագետներից շատերի կողմից։

Այն առարկությանը, թե կանանց պասիվությունը բացատրվում ե նրանց ուրույն ֆիզիոլոգիական կազմվածքով, հետև-

վարար և մի մշտական, հարատև յերևույթ է, վորը պիտի մնա անփոփոխ, այդ առարկությանն արդեն պատասխանել է հասարակագիտությունը պատմական էքսկուրսիաների և անցյալի քննության միջոցով։ Յեղել են անցյալում ուրիշ ձևեր էլ։ Հայտնի յե որինակ այն, վոր մայրապետական ընտանիքի շրջանում կինը մի ուժեղ անհատ էր, վոր ապրում էր իր անկախ կյանքով առանց յենթարկվելու տղամարդու «ազդեցությանը»։ Կանայք կամազուրկ անհատներ չեյին այդ ժամանակ և վոչ էլ հպատակվող իրենց ամուսնուն։ «Ցելեբեսի բոլոր ժողովուրդների մոտ, կարդում ենք մենք Նախնի մարդկության մի պատմարանի մոտ, վորոնք ամբողջ Արշիպելագի ամենից պատերազմասեր ժողովուրդներն եյին, կինը մասնակցում է բոլոր գործերին, ամուսինը խորհուրդ է տեսնում հասարակական խնդիրների մասին նրա հետ և հաճախ կինը բարձրանում է գահ այնտեղ, ուր միապետությունը լինում է ընտրական...։ Հասարակական հանդեսներին կանայք հայտնվում են տղամարդկանց շրջանում, իսկ այն կանայք, վորոնք վորոշ պաշտոններ են կատարում, մասնակցում են տղամարդկանց նիստերին, յերբ քննվում են պետական գործերը, ունենալով իրավունք արտահայտվել, ինչպես հաճախ ասվում է, ավելի շատ քան հարկավոր է»։

Տղամարդիկ այդ շրջանում նույնիսկ վորոշ կախում ունեյին իրենց կանանցից, հաճախ պարտավոր եյին նրանցից խորհուրդ հարցնել։

«Անհավատարմության» դեպքում էլ, յեթե մեղավորը տղամարդն է, նա վռնդվում է ընտանիքից, իսկ յեթե կինը—նրան իրավունք է տրվում բաժանվել։ Կինը մատրիարխատի ժամանակ առհասարակ այնքան ազատ է, վոր կարող է ապրել ում հետ ցանկանում է։ Դրա համար էլ մայրապետական ընտանիքում չեն կարող յերբեք ծագել այնպիսի կոլլիզիաներ, վորպես ժամանակակից ընտանիքներում, ուր չկա վոչ միայն կանանց անկախություն, այլ և հասարակ հավասարություն։

Իհարկե, մայրապետությունը կայուն էր շնորհիվ կանանց տնտեսական անկախության—կինը, վոր ինքը վորոշ տնտեսական դեր էր կատարում, վորպես յերկրագործ, բնականաբար վոչ մի կախում չուներ իր ամուսնուց։

Թե ինչպես է մայրապետությանը փոխարինում հայրապետական ընտանիքը, ինչպես են այնուհետև գերիշխում և կանանց «տերը» դառնում տղամարդիկ—այդ հարցերն այստեղ մենք չենք քննում։

Յեթե մենք թողնենք Արևելքի դեսպոտական պետությունները, ուր կինը միանգամայն ստրուկ էր իր ամուսնուն, վաճառքի մի առարկա, թողնենք և հին Հռոմը, ուր նա ամբողջովին յենթարկվում էր «ընտանիքի հոր» կամքին—վորի իրավունքները շատ քչով եյին տարբերվում Նահապետական Աբրահամների իրավունքից, յեթե մենք թողնենք այդ վաղեմի պատմական հեռուները և անցնենք այժմյան բուրժուական միջավայրին, դարձյալ շատ քիչ բան կտեսնենք փոխված։

Իհարկե, այժմ չկա կանանց առևտուր, քիչ կա գանակոծություն և ուրիշ ձևի բռնություն, բայց այժմ էլ կինը ժամանակակից ընտանիքում բացառապես տղամարդու համար ապրող մի անհատ է։

Այդ ստրկությունը ժամանակակից դարում բխում է նրանից, վոր կինը տնտեսապես անկախ չէ։ Կնոջ դերն է ժամանակակից ընտանիքում տնային տնտեսությունը։

Յեվ ըստ ժամանակակից բուրժուական մտածողների, այդպես էլ պիտի լինի միշտ—կինը ծնված է հենց նրա համար, վոր ոգնե և հանգստություն տա իր ամուսնուն։ Նույնիսկ նշանավոր բուրժուական «ամենաառաջավոր» մտածողները կրկնում են այդ միտքը։ «Կինը տանտիկին» է—ասում է նշանավոր գերմանական իրավաբան Դերնբուրգը։ Յեվ ահա կանանց համար ստեղծվում են առանձին նորմաներ, նույնիսկ որենսդրությունն արտահայտում է այդ բոլորը և ստեղծում կանանց համար ավելի բռնակալ որենքներ, քան ուժեղ սեռի։

Բայց կյանքը մի կետի վրա չի կանգնած միշտ։ Հասարակական պայմանները փոխվում են, տնտեսական հարաճուն զարգացումը, գոյության անողոք կռիվը ստիպում է կանանց էլ, մանավանդ միջին խավերից, նետվել տնտեսական շուկա և գործել միևնույն ասպարեզում, ինչ վոր տղամարդը։

Կանայք այժմ կատարում են խոշոր հասարակական դեր վորպես դերձակուհի, բանվորուհի, գրագրուհի, բժշկուհի... «Նոր ույժերի» մի ուժեղ հոսանք է դա, վոր թողնելով իր «դերն ընտանիքում» գործում է տղամարդու հետ հավասար, կատարում է միևնույն տնտեսական գործը, աշխատում միևնույն պայմաններում։

Գործելով տղամարդու հետ միասին ահագին գործարաններում, միևնույն պայմաններին և շահագործման յենթարկվելով, կանանց պրոլետարիատը շաղկապվում է բանվորների հետ ավե-

լի ամուր, անքակտելի թելերով։ Նրանք միանում են, խորհրդակցում, քննում միասին հասարակական ժողովներում այն միջոցները, վորոնց օգնությամբ կարելի յե փոխել հին կարգերը՝ ստեղծել նոր իրավակարգ, նոր հասարակություն, առանց շահագործման, առանց դասակարգերի — հետևաբար և առանց հնացած նորմաների կանանց վերաբերյալ։ Չկա այդտեղ տարբերություն կանանց և տղամարդկանց մեջ և յեթե կա յել վորպես մնացորդ նախկին մանր բուրժուական մտահայեցողության — աստիճանաբար և արագընթաց տեմպով նա անհետանում է։

Այդ կատարվում է պրոլետարական բանակում — բայց միևնույնը, ինչպես վերը շեշտեցինք, նկատելի յե և մանր բուրժուական միջավայրում, ուր կանայք գոյության կռվի շնորհիվ ստիպված են դիմել անկախ տնտեսական աշխատանքի։ Յեվ դառնալով տնտեսապես անկախ, գրավելով միևնույն անկախ ասպարեզը, ինչ վոր տղամարդիկ, նրանք դառնում են ավելի համարձակ, ազատ, ավելի անկախ։

Ստեղծվում են նոր կանայք — իրապես ազատագրվող և ազդող հասարակության վրա։ Փոխվում են անհրաժեշտաբար և շատ հին հայացքներ։ Կինն այլևս պարտք չի համարում «պատասխանատու» զգալ իրեն ամուսնու առաջ, չկա նրա մոտ «մեղքի» մասին գաղափար անգամ, նա նույնքան իրավունք ունի ազատ սեռական կյանքով ապրել — վորքան տղամարդը։

Իհարկե, մանր բուրժուական մտահայեցողությունը դնում է իր բնորոշ դրոշմը և դրանց վրա, բայց այնուամենայնիվ այդ կանայք իրենց անկախության համար պայքարողներ են և, վորպես այդպիսիք, ներկայացնում են պրոգրեսիվ յերևույթ ներկա հասարակակարգում այն չափով, վորքան կապում են իրենց շարժումը պրոլետար կանանց ընդհանուր շարժման հետ։

Յեվ ահա դրանց մոտ մենք չենք նկատի այն, ինչ վոր նկատելի յե Շիրվանզադեի կանանց մոտ։

Այդ վերջինները դեռ ապրում և մտածում են այնպես, վորպես մտածում է ժամանակակից բուրժուական ընտանիքների կանանց մեծամասնությունը — այն մեծամասնությունը, վոր շնորհիվ տնտեսական վորոշ դրության կապված է հին հայացքների և տրադիցիաների հետ — հոգով համարում է իրեն տղամարդուն լրացնող մի մասը։

Ահա ինչու և այդ կանայք չեյին կարող ձգտել ավելի լայն իդեալների, ավելի ազատ պայմանների։ Այդ կանանց և դրանց

ամուսինների՝ Վարսամյանների, Ալվերդյանների իդեալը մնում է բնականաբար միևնույն բուրժուական ընտանիքը իր եյական հիմքերով, միևնույն հետամնաց, հայկական իրականությունն իր բարոյական վորոշ հայացքներով՝ «մեղքի», «պատվի» և «պատասխանատվության» մասին։

Իսկ այն կռիվը, վոր մղվում է — մղվում է լոկ այդ իրականության «վայրենի» կողմերի, «ասիականության» դեմ։

4.

Շիրվանզադեի այդ վերաբերմունքը դեպի կանանց խնդիրը բղխել է նրա դավանած հասարակական հայեցողություններից։ Վորպես հայ լիբերալիզմի գեղագետ է մոտեցել նա հասարակական թե այդ և թե մյուս պրոբլեմներին։

Նա, ինչպես ասացինք, կապիտալիստական հասարակության նկարիչն է յեղել մեր գրականության մեջ։ Գուցե նույնիսկ ավելի վորոշ, քան մնացյալ հայ գրագետները։

Բայց միաժամանակ դրա հետ այդ միևնույն Շիրվանզադեն յեղել է տաղանդավոր, հմուտ և ուժեղ արվեստագետ։

Յեվ հենց այդ էլ հնարավորություն է տվել նրան նշմարել այնպիսի եջեր, վորոնք սովորաբար հասարակ նկարչի համար աննկատելի յեն մնում, նկատել կյանքի սուր եջեր, արտահայտել իրականությունն իր իսկությամբ և մերկացնել հասարակության խորքերում կատարվող սոցիալական ներհակությունները։

Ահա ինչու վոչ-սոցիալիստ Շիրվանզադեն կյանքի իր նկարներով կարողացել է տալ կապիտալիստական հասարակության քննադատությունը։ Առանձնապես ուշագրավ է հենց այդ կողմից նրա «Քաոսը»։

Այստեղ ևս Շիրվանզադեն չի հրաժարվում վերջնականապես հին աշխարհից։ Նրա Միքայելը «վերածնվում է» և վորպես լիբերալ վերածնվում է իր հայրենի մեղքերը քավելու համար։ Յեվ այդ «մեղքերը» քավում է նա կացարանների և բանվորական կենցաղի բարեկարգման միջոցով։ Շիրվանզադեի հերոսը ցանկանում է միայն «յեվրոպականացնել» արդյունաբերական գործունեյությունը։

Բայց և այնպես այդ վերջաբանը, Միքայելի հոգեկան բեկումը, նրա պայքարն անցյալի հետ, նրա «դարձն» ու «վերածնությունը» վորքան էլ նրանք չեն բղխում հեղինակի դավանած հասարակական հայեցողությունից, իրապես կազմում են

վեպի ամենաթույլ և վիրավոր կողմը։ Լիբերալ Շիրվանզադեն այստեղ հաղթել է գեղագետ Շիրվանզադեին, և դրանով արդեն վնասվել է «Քաոսի» գեղարվեստական ամբողջությունը։

Արևմուտքին և արևմտյան կապիտալիստական մշակույթին յերկրպագող «յերրորդ դասը» չէր կարող նկատել շեշտված ներհակությունը։ Հայ տրադիցիոն մտավորականությունն էլ չէր կարող առանձին թերություններ նշմարել, քանի վոր ինքն՝ այդ մտավորականությունը մտածում էր Շիրվանզադեի պես և նրա նկարագրած Միքայելին համարում էր իդեալական հասարակական մի դեմք։

Մեր օրերի ընթերցողը, այսօրվա իրականության ընթերցողը, այդ բոլորը նկատում է ավելի քան վորոշ։ Նա չի կարող չտեսնել այդ, վորովհետև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը ինքն արդեն լուծել է «անիծյալ խնդիրները»։ Պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարը, Խորհրդային իշխանության պրակտիկան, անցած տաս տարիների փորձը—այդ բոլորն ավելի քան պարզ կերպով դատափետման է յենթարկել անցյալի գաղափարական արժեքները։

Այսօր ամեն վոք գիտե, վոր արևմտյան կապիտալիզմն իր մեջ արդեն կրում է քայքայման և անկման անհրաժեշտ տարրերը, և վոր յեվրոպացի լիբերալը—դա բուրժուազիայի ավելի հղկված և ավելի ուժեղ կրկնատիպն է։

Ահա ինչու Շիրվանզադեի Միքայել Ալիմյանը իր բոլոր դրական հատկություններով հանդերձ այլ ևս չի կարող վոչ խաբել և վոչ էլ վնասել իր ուրույն հասարակական բարոյախոսությամբ։

Միքայելի քարոզը և պրոպագանդն այսօրվա ընթերցողի համար միանգամայն անըմբռնելի և անվնաս է։

Դրա փոխարեն իրական այն պատկերները, վոր նկարում է տաղանդավոր արվեստագետն իր սուր գրչով, իսկական կյանքի ճանաչողության այն ջիղը, վոր ցուցահանում է հմուտ անատոմին հատուկ ուժով նկարիչ Շիրվանզադեն իսկապես քանդում է ամեն մի իդեալիստական մոտեցում դեպի կապիտալիզմը և չափազանց ուշագրավ նյութ է մատակարարում բուրժուական «կուլտուրայի» քննադատության և դատափետման համար։

Յեվ ահա հենց դրանումն է «Քաոսի» մեծ արժեքը։

Դա տաղանդավոր մի վիպագրություն է, վոր իր նմանը չունի կովկասյան ժողովուրդների նորագույն գրականության մեջ։

Դա—վոչ միայն հայ բուրժուազիայի, այլ և կովկասյան բուրժուազիայի պատմության նախնական շրջանը նկարագրող մի դոկումենտ է։

Միաժամանակ Շիրվանզադեի վեպը կարող է և պետք է համարվի նավթարդյունաբերական Բագվի սոցիալական «դեմքը» բնորոշող ամենասուր և հետաքրքրական սոցիոլոգիական վավերագրերից մեկը։ Ասում եմ «սոցիոլոգիական», վորովհետև «Քաոսի» մեջ նկարագրված միջավայրը՝ տիպարները, տարբեր դեմքերի և խմբակների բախումները մատակարարում են մեզ նույնչափ կարևոր փաստական տվյալներ, վորչափ և զուտ տնտեսական և ստատիստիքական հետազոտությունները։ Արվեստագետը ներկա պարագայում կարծես լրացնում է մերկ և ցամաք թվերի կմախքի շրջապատը և կենդանի գույներ տալիս հին Բագվի սոցիոլոգիական ճանաչողությանը։

Իր վեպը Շիրվանզադեն գրել է դեռ այն տարիներին, յերբ մեզ մոտ շատ թույլ է յեղել սոցիալիստական միտքը։ Չնայած դրան վոչ-սոցիալիստ և վոչ-հեղափոխական Շիրվանզադեն կարողացել է «անաչառ» արվեստագետին հատուկ տաղանդով քանդակել արդյունաբերական Բագվի ֆոնի վրա սոցիալական յերկու ներհակ ուժերի ներկայացուցիչների դեմքերը։

Մեր առաջ անցնում են հայ և թուրք բուրժուաներ, բորսայի շուրջ պտտող սպեկուլյանտները, և ապա հեռվում հանքային շրջանում մուրի մեջ կորած բանվորների մութ շարաններ։

Մի կողմից լուսավոր և շքեղ քաղաքը իշխող բուրժուազիայի հետ միասին, մյուս կողմից հանքային շրջանը, ուր անընդհատ օր ու գիշեր աշխատում է պրոլետարիատը։

Յեվ չի սխալվում Շիրվանզադեն, յերբ բուրժուազիայի մըրցակից խմբերին միացնում է քաղաքում «քեֆի» շուրջը։ Դա նրան հնարավորություն է տալիս բնորոշել հայ բուրժուա Ալիմյաններին և «պապաշային», թուրք բուրժուա Քյավիմ բեկին, վրացի Իշխան Նիասիմիձեյին, ռուս սպային և օպերետային թեթև յերգչուհիներին։

Այդ պատկերից հետո նա Բագվի ներհակ կյանքը բնորոշելու համար տանում է իր հերոսին դեպի հանքերը, Բալախանի և մանրամասն գույներով նկարագրում է նոր միջավայրը։

Նա, ով յեղել է հանքային շրջանում, չի կարող չարձանագրել, վոր այդ նկարագրությունը տալիս է հանքերի խիտ և սուր պատկերը...։ «Ցեխոտ և նավթոտ տարածություններ»... Բուրգեր

գազի սուր ու շշմեցուցիչ հոտ... «մորթե գդակով մշակը»...և ապա, քիչ հեռու «առանձին քարաշեն շինություն» ու «հինգ վիթխարի հրեղեն աչքերը աղյուսյա պատի մեջ», վոր միշտ վառվում են «արձակելով խլացուցիչ աղմուկ»...։«Նավթային բոցը գլանաձև կաթսաների տակ մրրիկի պես պտույտ պտույտ է անում, գազանի պես մռնչում ու կատաղած լիզում յերկաթե ակութի պատերը։ Կաթսաների մեջ յեռում է ջուրը և մեքենաների մեջ շոգի արտադրում։ Յերկու մշակ հերթով գիշեր ցերեկ պտտում են հրեղեն ակների առջև և նրանց մեջ շարունակ վառ պահում կրակը, վորպես քուրմերն ատրուշանների մեջ»...։

Այժմ—հանքային շրջանում, շնորհիվ տեխնիկայի բարձրացման և ռացիոնալիզացիայի, շատ բան փոխվել է միանգամայն։ «Բաքսի» նշանակությունը դրա համար էլ նրանումն է, իմիջիայլոց, վոր նա առարկայական նյութ է տալիս անցյալի ավելի ճիշտ ճանաչողության համար։

Նավթի ուժը և նավթի ուժով միլիոնատեր դառած նախկին «տրեխավոր» Մարկոս աղաների և նախկին խոհարար «պապաշաների» դիմագծերին «Բաքսի» մեջ կարծես տարերայնորեն հակադրվում են անդադար նավթային բուրգերի մեջ և նավթային ամբարների շուրջ շարժվող մութ և նավթոտ բանվորների շարքերը։

Մի կողմից Բաքուն, մյուս կողմից Բալախանին։

Մի բանակում գեր, ուռճացած, պարազիտ և անբարոյական բուրժուազիա, մյուս բանակում լուռ, որ ու գիշեր աշխատող մրոտ և նավթոտ պրոլետարիատ։

Յեվ կարծես այդ պատկերները լրացնելու համար Շիրվանզադեն վրձինի մի քանի շերտերով բնութագծում է հայ բուրժուազիայի հոգեբանությունը, նրա «ասիականությունը», յուրօրինակ դեգերումը «ասիական» անցյալի և «յեվրոպական» ապագայի մեջ ու մշտական կապը նացիոնալիզմի հետ։

Յեվ ահա մի պատկեր ևս, ուր «Բաքսի» հեղինակը շատ թռուցիկ, շատ թեթև բայց և այնպես ավելի քան բնորոշ կերպով նկարագրում է հայ բուրժուազիայի և լուսավորչական յեկեղեցու միջև գոյություն ունեցող սերտ կապակցությունը։

...«Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Հայրապետը բարեհաճել է որհնության կոնդակ հղել առ Ձերդ ազնվություն, Պարոն Ալիմյան։ Յեկա, վոր հանձնեմ Ձեզ և իմ կողմից էլ—հայրաբար կրկին ու կրկին շնորհակալություն մատուցանեմ հանգուցյալի առատաձեռն ու ազգաշեն նվիրատվության համար։

— Տեր Սիմոն—կարդա՛ կոնդակը, ձայնդ բամբ է։

— Տեր Սիմոնը բաց արավ մի հաստ թերթ և բարձրաձայն կարդաց։

Այրին սկսեց լաց լինել.—

— Այս որհնյալ տունը արժանի չէ այս հայրապետական կոնդակին, ասաց սրբազանը, կոնդակը հանձնելով Սմբատին։

Մի՛ լաք, քույր, այլ ցնծացե՛ք, քանի վոր այսօրվանից յերկնավորի աչքը պիտի լինի Ձեր զավակների վրա։ Թող ամենաբարձրյալը հանգուցյալի հոգին դասեցնե ի շարս արդարոց։

Այս ասելիս սրբազանը ջերմորեն աչքերը բարձրացրեց դեպի վեր։ Կես ճանապարհին հայացքը կանգ առավ առաստաղից քաշ արած ահագին բրոնզյա ջահի վրա. «Ինչ արժե, հարցնում եր նա մտքում» (Բաքս, էջ 34—35)։

Արժե արդյո՞ք մի բան ավելացնել այնքան ծանոթ տեսարանին։

Այդ պատկերն անփոփոխ է նույնիսկ այժմ, հայ բուրժուազիայի տիրապետության վայրերում—արտասահմանյան գաղութներում։

Դա հայկական իրականության մի բնորոշ գիծն է, վոր Շիրվանզադեն ավելի ռելյեֆ, քան հայ ուրիշ գրագետները, նկարել է։

Նա շատ լավ է ըմբռնել փոքրիկ իրականության այդ հետաքրքրական գիծը—բոլորի յերկրպագությունը «մեծատուններին»։ Միևնույն «Բաքսի» էջերում Շիրվանզադեն յերևան է հանում նույն իսկ «ազատամիտ» քահանային, ժուռնալիստին, վորոնք պատրաստ են դրվատել Մարկոս աղաներին մի քանի ռուբլիների համար։

Հոգևորականից սկսած մինչև դեմոկրատ ինտելլիգենտը—ի վերջո այդ մեծատուն դրամատերից են սպասել ամեն բան։

Փոքրիկ, տաղտկալի իրականության մեջ նավթի և դրամի թագավորներ են այդ «յերևելի»-ները, վորոնց առաջ սողում է ամբողջ հասարակությունը։ Յեվ, իհարկե, քար չէ «մեծատուն»-ի սիրտը, «յերախտագիտության» զգացմունքը մեռած չէ տակավին նրա սրտում։ Ի վերջո նա «զգացվում» է և «նվիրաբերում» մի պատառ իր հարստությունից արժանանալով դրա համար միևնույն պատվին, ինչ վոր Մարկոս աղա Ալիմյանի ընտանիքը։

Մենք յերկար կանգ առանք այդ բնորոշ գծի վրա միմիայն նրա համար, վոր նա ավելի քան վորոշ ազդել է և հայ գրակա-

նության վրա։ Մի րոպե միայն քննենք հայկական գրականությունը, մի՞թե այդ «հերոսներ»-ի ապոլոգիան դուք չեք տեսնի ամեն մի քայլափոխում անցյալ օրերի մամուլի, հրապարակախոսության մեջ։ Գրականությունն ավելի քան բարեյացակամ է յեղել դեպի հայ «ազգի մեծերը»։

«Քաոս»-ի մեջ հայ բուրժուազիան—խոշոր և միջին—նկարված է, հակառակ հայ լիբերալ հրապարակագիրների մոտեցմանը՝ բավական անաչառ և օբյեկտիվ ներկերով։

Ահա Մարկոս աղան։ Մի հին, նահապետական միջավայրի զավակ, վոր յեկել է տրեխներով հեռու գավառական միջավայրից նավթային աշխարհը—անդուլ, համառ սկսել է դիզել հարստություն. դիզելու պրոցեսում ստեղծել է իր համար վորոշ բարոյակշիռ և հայեցակետ, վորով միշտ ղեկավարվել է։

Ծծել թշվառին, թույլին, նա միանգամայն արդար է համարել, բայց մոռանալ «հայ յեկեղեցին», յերբեք։ Նա չի վարանում անիծել իր այն վորդուն, վոր ամուսնացել է օտար յերկրում մի ռուս օրիորդի հետ։

Իսկ կինը և աղջիկը գտնում են նույնիսկ, վոր ավելի լավ կլիներ իրենց վորդու համար վարել անբարոյական կյանք, քան «մոռանալ կրոնը» և կապել իր բախտը մի օտարուհու հետ։ Բուրժուական կովկասահայ միջավայրի նացիոնալիստական նեղ հայեցակետ է դա, վորին հպատակվում է նույնիսկ «ազատամիտ» և լիբերալ Սմբատը։ Յերիտասարդ տարիներին նա տարվել է կարծես «դեմոկրատական» ուրույն հույզերով։

Բայց հետզհետե համոզվում է, վոր գործել է մի մեծ, անուղղելի սխալ, ամուսնանալով «օտարուհու» հետ։ Նա սկսում է համաձայնվել և իր մոտիկների հետ։ Աստիճանաբար նրա առանց այն էլ սառը հարաբերությունները կնոջ հետ սկսում են ավելի սրվել և կարծես ազգայնական մի սուր ներհակություն բաժանում է նրանց ևս։

Յեվ այնքան ուժեղ է տիրապետող այդ հայեցակետը, վոր հայկական վողջ շրջապատը միաձայն համաձայնվում է, վոր Սմբատն անպատճառ պիտի տանջվի, չարչարվի իր կատարած «սխալ» քայլի համար։ Մի րոպե թվում է նույնիսկ, վոր ինքը՝ Շիրվանզադեն էլ համաձայն է համարել Սմբատի քայլը «սխալ» և «վնասակար»։

Սմբատի կինն—ավելի «ազատամիտ» և դաստիարակված «ռուս հեղինակների ազդեցության տակ» նույնպես զգում է, վոր

այլ կերպ չեր կարող լինել—թեև մերթ ընդ մերթ նրա մեջ ծագում է վորոշ բողոք այդ հայացքների դեմ։ Նա ևս սկսում է զգալ նացիոնալիզմի և նրա ստեղծած սահմանների նշանակությունը։

Բայց մի հանգամանք բնորոշ է շեշտել. նրա մեջ հանգչում է այդ սուր վերաբերմունքը նավթահանքում, յերբ նա նկատում է այն ընդհանուր միությունը, վոր բոլոր բանվորներին շաղկապում է միմյանց հետ։

... Ահա այն աշխարհը, վորին ոգնելու գաղափարը գովատել են իր ազգի ամենաընտիր հեղինակները։

«Նրա սիրտը սկսեց բաբախել բարձր մարդասիրական զգացմունքներից։ Յեվ այդ պահին նա պատրաստ եր ներել սկեսրին, տալոջն ու բոլոր ազգականուհիներին, վորոնցից նա իրան արհամարհված եր համարում։

Նա տեսնում եր ազգերի ու լեզուների մի խառնուրդ, տոգորված միևնույն ցավերով և վշտերով։ Մուրի ու նավթի սև քողը սփռվել եր հավասար ամենի վրա ու կազմել տխուր միօրինակությունը։ Մի՞թե մանրակրկիտ չե այն մարդը, վոր այդ մռայլ հարթության տակ տեսնում է ինչ վոր խորդ ու բորդեր, մեկին սիրում է, մյուսին արհամարհում, մեկին ոգնում, մյուսին բարձի թող անում, համարելով իր արյունը օտար»... («Քաոս» եջ 328)։

Ահա այն խոհերը, վոր ծագում են Անտոնինա Իվանովնայի մեջ, և թվում է, նաև Շիրվանզադեյի գլխում, յերբ նա տեսնում է այն «նոր մարդկանց», վորոնք մեծ քաղաքում բռնում են հակադիր դիրք բուրժուազիայի նկատմամբ, յերբ քննում է պրոլետարական զանազան ազգություններից բաղկացած բազմությունը։

Շիրվանզադեն դասակարգային կովի կողմնակից չե բնավ և վոչ էլ հեղափոխական—նա լոկ հասարակ, բայց ուժեղ մի նկարիչ ե՝ կյանքի, մարդու, հասարակության։ Վորպես այդպիսին նա առաջինն է մեր ամբողջ գրականության մեջ, վոր յերևան է հանում իր յերկերում «չորրորդ դասը»—արտադրողների դասակարգն իր շեշտված հատկությամբ։ Գործարանային մեծ քաղաքի ազդեցությունն է դա։ Ի հարկե միայն այդ ի նկատի ունենալով մենք կը հասկանանք և նրա յերեք տիպերը—յերեք ազգությունների այն բանվորներին, վորոնք միշտ միասին, միշտ ձեռք ձեռքի գործակցում են։

Ռասուլ, Զուպրով, Կարապետ—ահա յերեք ազգությունների

պատկանող «տգետ» բանվորներ՝ մոռացած իրենց ազգային տարբերությունները՝ ընկնում են միաժամանակ հրդեհը՝ ոգնելով և պահպանելով միմյանց։

Թույցե և այդ պրոլետարների դեմքերն ստեղծել է ինքը՝ Շիրվանզադեն, բայց միթե բնորոշ չե այն, վոր վոչ-սոցիալիստ վիպասանը միմիայն պրոլետարիատի մեջ է նկատել այդ վեհ միջազգայնությունը, և նրա համաշխատակցության և ցեղրայրական մեծ համերաշխության ազդեցության ներքո յե ստեղծել յերեք ազգությունների սիմվոլիքական բանվորներին։

… «Նա տեսնում եր ազգերի ու լեզուների մի խառնուրդ ապորված միևնույն ցավերով ու վշտերով։ Մուր ու նավթի սև քողը սփռվել եր հավասար ամենի վրա ու կազմել տխուր միօրինակություն»։ Ահա պրոլետարիատի պատկերն ինչ հուշեր է զարթեցնում Շիրվանզադեի մեջ։ Վորպես կյանքի ուժեղ նկարիչ նա քանդակում է այն «նոր մարդկանց», վորոնք գալիս են ասպարեզ իրենց «նոր խոսքերով» ու «հավատքով»։

Այդ «նոր խոսքը» Շիրվանզադեն չի լսել, նա չի ճանաչել այդ նոր տարրը և վորպես ստեղծագործող մի տարր, վորպես հառաջմղիչ ու պայքարող մի ուժ ժամանակակից հասարակության։ Բայց և այնպես մեր իրականության մեջ նա առաջինն է յեղել, վոր նկարել և քանդակել է պրոլետարին իր ուրույն հոգեկան գծերով։

Արդեն այն, վոր Շիրվանզադեն կարողացել է նշմարել բանվոր դասակարգի միությունը, բանվորների տարերային միջազգայնությունը և դրանից բղխող միանման վարքագիծը,—այն, վոր իր նկարած պատկերներով խարազանման է յենթարկել բուրժուազիայի «հասարակական բարոյական» արժեքները — առանձին տեղ է տալիս «Քաոսին» մեր նորագույն գրականության մեջ։

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԸ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.

Անդրկովկասյան իրականության մեջ կապիտալիստական քաղաքի բարգավաճումը նկատելի յե դառնում անցյալ դարի վերջին տասնամյակից։

80—90-ական թվականներից արագանում է Կովկասում կապիտալիզմի զարգացման թափը։ Ամենաուժեղ թափով աճում են գործարանային նոր վայրերն և հզորանում է առանձնապես Անդրկովկասի արդյունաբերական յեռուն կենտրոնը—Բագուն։

Կապիտալիստական զորավոր այդ առաջընթացքը թողնում եր իր նկատելի ազդեցությունը կովկասահայ գյուղի վրա։

Տնտեսական նոր պայմաններն ավելի ևս արագացնում են գյուղի քայքայման պրոցեսը։ Շերտավորվում է գյուղացիական հասարակությունը։ Ստեղծվում է գյուղում աղքատների և թըշվառների նկատելի մի բանակ։ Հզորանում են գյուղական աշխարհում «պինջակավոր» և «կարտուզով» այն «ցեցերը», վորոնք 70-ական թվականներին տակավին թույլ եյին։

Ռուսահայ գեղարվեստական գրականության մեջ այդ բոլորը վորոշ չափով արտացոլվում է։ Հայ քաղքենի գեղագետները
նկարագրում են խիտ և մայլ ներկերով նոր գյուղական իրա-
կանության տխուր դրվագները։ Հուսահատ սրտով արձանագրում
են նրանք նահապետական բարքերի, «համայնական» հոգեբա-
նության անկումը և «ուժեղների» տիրապետությունը գյուղական
կյանքում։ Այժմ արդեն տխուր և հոռետեսական գույներով է
նկարվում «Ավետյաց» այն յերկիրը, վորի գեղեցկությունն և
իդիլլիական հմայքն անցյալում յերգում եյին հայ վիպագիրները։
Նույնիսկ քաղաքային կուլտուրայի դեմ պայքարող և քաղքենիական-գյուղացիական հովերով համակված ռուսահայ բանաստեղծներըստիպված են լինում արձանագրել գյուղական կյանքի մայլ եջերը՝ գյուղի «նոր տիրակալների» անողոք բռնակալությունը, հասարակական ձեռներեցության անկումը, շահագործվող թշվառների հեծեծանքը և վողբը։

Զափազանց հատկանշական գծերով այդ բոլորը նկարված է ռուսահայ քաղքենի պոետներից մեկի բանաստեղծության մեջ.

«Պարտքատերը գանգատ գնաց,
Բյոխվեն կըգա կըծեծի,
Տերտերն որհնեց անվարձ մնաց,
Կըբարկանա, կանիծի.
Են որն եկան թովջի արին,
Հարկ են ուզում տերության.
Ինչ տամ կոռին ու բեգյարին...
Վարի, վարի իմ գութան։
Ջեռս պակաս, ուժս հատած
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Դա նորագույն գյուղացու «գութանի յերգն է», յերկրագործական ծանր աշխատանքի պահուն յերգում է շինականն իր հուսահատ կյանքի տխուր էջերը, յերգում տառապանքով լի առորյան և անհույս ապագան։

«Գութանի յերգը» գրել է Հովհաննես Թումանյանը—անհետացող նահապետական գյուղի այդ տաղանդավոր յերկրպագուն։

Մեղմ լեզվով և տխուր շեշտով գծում է նա հայ գյուղի ինքնահատուկ այն պայմանները, վորոնք քշում են շինականներին դեպի արդյունաբերական վայրերը։

Միևնույնը նշմարում ենք վողջ այն գեղարվեստական գրականության մեջ, վորը նվիրվել է ռուսահայ գյուղի նկարագրությանը։

Մուրացան, Աղայան, Աղելյան, Ջավախեցի, Շահնազարյան, Փափազյան—ահա մի շարք գեղագետներ, վորոնք բոլորն էլ տոգորված են քաղքենիական-գյուղացիական ուրույն իդեալներով։

Յեվ ահա միևնույն այդ «գյուղացիական» գեղարվեստական իրենց գործերում տալիս են գյուղի աստիճանական քայքայման և տարրալուծման նկարներ։ Այդ հեղինակներից վոչ վոք չի նըկատում գյուղական իրականության մեջ վորևե հառաջամարտ մի տարր։

Այն մի քանի թշվառ շինականները, վորոնք մերթ ընդ մերթ համարձակվում են բողոքել գյուղում տիրող ունևորների

դեմ—մնում են կովկասյան հուսահատեցուցիչ իրականության մեջ կատարելապես միայնակ—ահա այն յերևույթը, վոր արձանագրվում է այդ գրականության մեջ։

... «Գյուղը, գոչում է հայ վիպագիրներից մեկի հերոսը—վոստայն է, վորը խեղդում է բոլորին, նետում սարդերի գիրկը... Ցանց է, վոստայն... Յեվ սարդերը տաղած, սարդերը գիշատիչ, վոչ մի անկյուն ազատ չէ... Ինչ կարող է անել... Հասկացող «ճանճը» ավելի շուտ կըբռնվի, ավելի շուտ կըվոչնչանա, և նրա կտրած չնչին թելը նորից կընորոգվի և ճանճերը կըբռնվեն, կը ծծվեն։ Իսկ ուր վոստայն կա, այնտեղ կա միմիայն ուտվող ճանճը»... (Վ. Փափազյան)։

Հեղինակն անհնարին է համարում պայքարը՝ գյուղական տզրուկների դեմ, վորովհետև գյուղում բոլոր «աղքատները» շահագործվողները ցրված յեվ բաժանված են միմյանցից։ Կյանքը չի ստեղծել այդտեղ ամփոփ, շաղկապված և ընդհանուր ընդդիմադրական-մարտական մի բանակ։ Արդեն հիշված հեղինակի մոտ «գիտակից» գյուղացին հուսահատ դառնությամբ նկատում է՝ «Նախ հարկավոր է, վոր ամենքը զգան թե ցանցը նեղիչ է յեվ թե նրանից դուրս էլ կա կյանք ու ավելի լավ կյանք... հետո շատ էլ հեշտ չէ պատռելը, առաջին զգացողին սարդը իսկույն կլանում է...։

Մի ճանճը վոչինչ անել չի կարող, մի ըմբոստը, յեթե չփշրվի յել ինձ նման՝ ոգին կըգժվի կամ ծաղրելի կդառնա... Պետք է ամենքը... իսկ այդ «ամենքը» ունենալ դյուրին չէ»...։

Ուշագրավ այդ տողերը կարդում ենք, ինչպես շեշտեցի, այն հեղինակի մոտ, վորն ինքն ուժգնորեն տոգորված է գյուղական-քաղքենիական վորոշ իդեալներով։ Յեվ այնուամենայնիվ, չնայած նույնիսկ ակնարկած հանգամանքին, վերոհիշյալ գեղագետը, հակառակ իր ուրույն գյուղացիական աշխարհայեցողությանը, ստիպված է արձանագրել գյուղական կյանքի մռայլ յեվ հուսահատ էջերը։

Վ. Փափազյանը—վորպես և մնացյալ հայ գյուղացիական վիպագիրները, պատկերներով խարազանում է քաղքենիական գյուղական բոլոր միամիտ ցնորքները, գյուղական պրիմիտիվ բոլոր անուրջները։ Այդ գեղագետներն իրենք խիտ ներկերով և խիստ շեշտով գծում են այն զորավոր պայմանները, վորոնք ստեղծել են հին գյուղի քայքայումը, շինականների գաղթականական լայն հոսանքը դեպի արդյունաբերական կենտրոնները։

Ռուս վիպագիրները տխուր զգացումով են արձանագրում գյուղի աստիճանական այդ մահացումը։ Յեվ նրանց նկարները շեշտում են բնաանհրաժեշտ հասարակական մի յերևույթ՝ քաղաքի աստիճանական բարգավաճումը։ Բոլոր այն շինականները, վորոնք տառապում են գյուղական սարդերի ցանցերում, բոլոր այն թշվառ գյուղացիները, վորոնք չեն կամենում վարել անասնական տաղտկալի և հուսահատական մի կյանք, առնում են գաղթականական ցուպը և ուղևորվում դեպի հեռավոր քաղաքները, նետվում կապիտալիստական շուկան՝ վաճառելու այնտեղ իրենց ուժը, ուժեղ մկանունքները և պատանեկական յեռանդը։

Յեվ ահա այդ բնաանհրաժեշտ յերևույթի դեմ հիշյալ մտավորականներն ուժգնորեն պայքարում են, թեև զգում են, վոր իրենց ճիգերն անզոր են։

Խոր զայրույթով խարազանում են նրանք բոլոր այն պանդուխտներին, վորոնք թողնում են իրենց գյուղական հայրենիքը և մեկնում դեպի գործարանային վայրերը։

Քաղքենի հրապարակախոսներն այլևս մոռանում են այն, ինչ վոր շեշտվում և արձանագրվում է հենց իրենց գեղարվեստական գործերի մեջ։ Բոլոր այդ հրապարակախոսների մոտ տխուր գյուղական իրականությունը դառնում է կախարդական և յերանավետ մի վայր…։ Վոգևորությամբ նկարագրում են մանր բուրժուական հայ մտավորականները գյուղի իդիլլիական գեղեցկությունը—և միաժամանակ մռայլ գույներով բնորոշում արդյունաբերական քաղաքի միջավայրը։ Նրանք հավատացած են, վոր հնարավոր կլինի նորեն վերածնել գյուղը—խափանել գյուղի տարրալուծման և շերտավորման պրոցեսը ու դարձնել բոլոր պանդուխտներին դեպի իրենց գյուղական հայրենիքը…։

Բայց հասարակական անողոք պայմաններն ընթանում են իրենց բնաանհրաժեշտ ուղիով։ Հակառակ քաղքենի գեղագետների վողբերին և անեծքներին, հակառակ գյուղացիական հրապարակախոսների ժխտական քննադատությանը—կապիտալիզմը սրարշավ առաջ է ընթանում, և քաղքենիները Կովկասում որըստորե բարգավաճում են։ Յեվ անհրաժեշտաբար տնտեսական հարաճուն զարգացումն ավելի ևս ուժգնորեն զարկ է տալիս գյուղի շերտավորմանը։ Պանդխտական հոսանքը հզորանում է և լայնանում։ Գյուղը ինքը նետում է քաղաք նոր և նոր շարքեր, և հետզհետե յերկար տարիների ընթացքում կովկասյան իրականության մեջ— քաղաքներում—ստեղծվում է նոր հասարա-

կական մի դասակարգ իր առանձնահատուկ ապրումներով և գաղափարական ձգտումներով։

Գյուղի մեր նկարիչների շարքերում առանձին տեղ է գրավում Ա. Շահնազարյանը, առանձնապես այն տեսակետից, վոր նա ավելի ցայտուն գծերով է նկարագրում «նոր գյուղը», քան բոլոր մյուս հեղինակները։ Ավելորդ չեր լինի դրա համար եւ կանգ առնել ավելի յերկար նրա պատմվածքների վրա, վորոնք լույս են տեսել այս տարի («Խավարի Աշխարհում» վերնագրով)։

Գեղարվեստական կողմը նրա յերկերի մեջ առայժմ բավականաչափ թույլ է. այդ, անշուշտ, ավելի քան վորոշ կարելի յե ասել նրա մասին։ Բայց չնայած դրան, դարձյալ նա մեզ համար ներկայացնում է մեծագույն արժեք։ Իր յերկերում նա կարողացել է արտացոլել գյուղական իրականության այնպիսի մանր, յերկրորդական կողմերը, վորոնք ամբողջացած, միացած տալիս—են այդ միևնույն իրականության բնորոշ նկարագիրը։

Այդ հին, ռուսահայ մտավորականության վաղուց արդեն ծանոթ, կուռքին մոտենում է Շահնազարյանը, բայց այն, ինչ վոր նա յե ասում, այն. ինչ վոր նա յե նկարագրում, տալիս—շատ և շատ տարբերվում է այն պատկերից, վոր գծել են մեր գրականության «ռահվիրաներ»-ը։

Շահնազարյանցը կարծես չի նկատում ամենևին միշտ կապույտ յերկինքը, չի նկատում այնքան շատ յերգված կանաչազարդ լեռները. նա չի լսում և գեղջուկի զվարթ ձայնը, չի տեսնում ժողովրդական պարերը…։

Ինչո՞վ բացատրել այդ հանգամանքը։ Արդյո՞ք նրանով, վոր հեղինակն ինքը չի սիրում գյուղացիներին կամ սիրում է յուրորինակ կերպով, թե՞ նրանով, վոր Շահնազարյանը «տենդենցիոզ» կերպով է քննում այդ գյուղական իրականությունը։

Այդ վերջին կարծիքը ճիշտ կլիներ այն պարագայում միայն. յեթե նկատեինք հեղինակի մոտ վորոշ կանխակալ միտումներ, վորոշ տենդենցիա…։ Ահա այդ ամենևին չկա հեղինակի մոտ։ Նա մի անկեղծ նկարիչ է, վոր հաճախ նույնիսկ ի վնաս գեղարվեստականության. վորպես պրոտոկոլիստ, ճշտությամբ և ամենամանրակրկիտ կերպով գծում է գյուղական իրականության, գյուղական կյանքի ցայտուն պատկերը։

Հետաքրքրական է այստեղ պարզել նախ և առաջ հենց իր, Արշ. Շահնազարյանի, դեմքը, ընդհանուր ձգտումները, իդեալները։ Ինչպես է նա ինքը նայում գյուղացիության ապագայի վրա,

ավելի ճիշտ՝ ինչ է ցանկանում, դեպի ուր է կամենում գնալ ինքը հեղինակը:

Վորոշ չափով պատասխանում է այդ հարցին Շահնազարյանը իր վերջին պատմվածքի մեջ («Քրիստոսի սիրուն»): Այդտեղ նա նկարում է մի յերջանիկ քահանա՝ Տեր Հուսկան վորդուն և նրա հոտի կյանքը: Մենք դիտավորությամբ կանգ չենք առնում այստեղ պատմվածքի հիմնական բովանդակության վրա, վորովհետև դա մեզ զբաղեցնող հարցին չի վերաբերում անմիջապես:

Այդ գյուղը, ուր ապրում եր Տեր Հուսկան վորդին «յերջանիկ է», մարդիկ ապրում են ղեկավարվելով Քրիստոսի պատվիրաններով հաշտ, առանց կռվի, առանց վիրավորելու միմյանց...: Այդ աշխարհը **գյուղական վաղեմի անցյալն է**, գյուղն առանց այժմյան բացասական կողմերի, բայց իր բոլոր մյուս կողմերով, սեփականատիրական կարգերի վրա հաստատված պայմաններով: Գյուղացիության շերտավորումը մնում է տակավի—նկան Տեր Հուսկան վորդու գյուղում և աղքատներ: Բայց Տեր Հուսկան վորդին և նրա հոտը՝ «քրիստոնեասեր գյուղացիները»՝ բարի և գթառատ սրտով են վերաբերվում դեպի աղքատներ, ոգնում և հոգում են նրանց կարիքները: Չկան այստեղ միայն «տանջողներ», չկա չափազանցեցրած շահագործում, չկան և վաշխառուներ—«մկրտանչիններ» ...Ուրախ և յերջանիկ մի կյանք է:

Իդիլլիական այդ պատկերը Շահնազարյանն անվանում է «ավանդություն»: Դա, իհարկե, կարող է ճիշտ լինել, վորովհետև ժողովուրդը շատ այդպիսի ավանդություններ ունի, վորոնց մեջ արտահայտում է և իր սոցիալական հայացքները: Բայց այստեղ, ներկա պարագայում արտահայտված են վորոշ չափով և իր, Շահնազարյանի ձգտումները և հասարակական բաղձանքները: Արդեն այն համակրական տոներից, վորով նա պարուրում է Տեր Հուսկան վորդու և նրա հոտի «յերջանիկ կյանքը»—մենք տեսնում ենք, վոր նա յեվս յերազում է գյուղացիության համար այդպիսի յերջանիկ մի ապագա: Պետք չէ մոռանալ վերջապես և այն, վոր այդ պատմվածքը գրված է գրքի վերջին, մնացած ընդհանուր բովանդակությամբ—հուսահատ պատմվածքներից հետո:

Միևնույն հայացքները յերևում են և ընդհանրապես մյուս պատմվածքների մեջ: Քաղաքը և քաղաքի բնակչին Շահնազարյանը կարծես չի նկատում ամենևին: Չի տեսնում նա բնականաբար և քաղաքներում պայքարող բանվորներին:

Յեթե մի կողմ թողնենք «վաշխառուներ»-ին, վորոնց մենք դեռ կդառնանք—միայն մի եսկիզ կգտնենք, ուր նա խոսում է քաղաքի բնակչի մասին: Բայց այդ եսկիզն էլ գրված է դարձյալ **գյուղացիական տեսակետից**: Նկարագրվում է մի բժիշկ, ավելի ճիշտ, տրվում է մի բժշկի կարրիկատուրա: Բժշկի հոգեբանությունը, այդ հոգեբանության առանձնահատուկ կողմերը, նրա անհատականությունը—Շահնազարյանն ամենևին չի նկատում: Յեվ ընդհակառակը, գյուղի բնակիչներին հեղինակը սիրում է, սիրում է մանավանդ գյուղի թշվառներին, շահագործվողներին: Ավելի ևս վորոշ նկատում ենք նրա մոտ մի առանձին սիրալիր վերաբերմունք դեպի գյուղի «ծեր»-երը, այն ծերերը, վորոնք տակավին ապրում են «բարի, հին անցյալի» նորմաներով, վորոնք խորամտորեն տատանում են իրենց սպիտակահեր գլուխները նկատելով «փուչ աշխարհի» նոր պայմանները «փոխված ժամանակը» և նոր սովորությունների ու բարքերը...: Այդ «ծերերը» հաճախում են յեկեղեցին, գործում և աշխատում «քրիստոնեական պատվիրանների» համաձայն, դատապարտում բռնությունը և «անհաշտությունը»: Այդ հին ծերերի տիպարն է քեռի Գոգոլը, վոր գյուղացի Սերոբի հուսահատության ժամանակ գալիս է հորդորելու, վոգեվորելու նրան: Պետք է նկատել վոր Շահնազարյանը չի իդեալականացնում դրան ևս—նա, ընդհակառակը շեշտում է հաճախ ծերերի պասսիվ բնավորությունը: Բողոքել անկարող են նրանք, ավելի հաճախ կտատանեն գլուխները և ցավակցաբար կնայեն շահագործվողի վրա:

Բայց չնայած դրան, գյուղական աշխարհում Շահնազարյանի համար դրանք մնում են դրական մարդիկ, դրական հենց նրա համար, վոր վաղեմի «գյուղական արդար բարոյականության» ներկայացուցիչներն են: Ահա հենց այդ պատճառով էլ մեզ համար ավելի յեվս գնահատելի յե գյուղի այն պատկերը, վոր տալիս է Շահնազարյանը: Մեզ համար պարզ է, վոր հեղինակի փափագն է գյուղացիների «հաշտ կյանքը», նրանց բարորությունը և վաղեմի անցյալի մասին: Ահա հենց, նա նույնիսկ յերազում է վաղեմի անցյալի մասին: Ահա հենց, այդ իդեալիստ հեղինակը ստիպված է սրտի խոր կսկիծով շեշտել հին գյուղական աշխարհի ստրիճանական քայքայումը...: Դրա համար էլ Շահնազարյանի վկայությունը խիստ արժեքավոր մի վավերագիր է մեզ համար:

Քայքայվել է նախկին գյուղը, բազմացել է աղքատների և թշվառների քանակը, գյուղացին տեր չէ իր ունեցվածքին: Ինչ-

պես և վիրպիսի պատճառների շնորհիվ ե այդ կատարվել, դա չի հետաքրքրում Շահնազարյանին։ Նա միայն առանձին տխրությամբ շեշտում ե փաստը։

Գյուղական հասարակությունն այլևս առաջվա միատարր, յեղբայրական ձգտումներով շաղկապված մարմինը չե—նա շերտավորված ե։ Գյուղացին աղքատանում ե, թշվառանում ե, ինչ վոր ֆատալ պայմաններ նրա տնտեսությունն ավերում, քանդում են։ Գյուղն են յեկել ինչ վոր նոր մարդիկ, վորոնք հրամայում են և գոռում ամենքի վրա. ամբողջ գյուղական հասարակությունը խեղդվում ե այդ նոր մարդկանց ճիրաններում։ Այդ—քաղաքից յեկած «պիջակավոր» վաշխառուներն են և «միկիտանչի» Մակարները։ Աղքատ, թշվառ գյուղացին այդ ժամանակակից ուժեղ ասպետների մշտական գերին ե։ Գյուղացին չգիտե, յերբ կարող ե ազատվել իր ծանր կացությունից, վորովհետև աննկատելի, աննշմարելի կերպով պարտքերը մեծանում են, բազմանում—տոկոսները ծնում են նոր տոկոսներ և այդպես անվերջ։ Վոչ մի լույս, վոչ մի ազատություն։ «Պինջակավորը» ամենապատվավոր մարդն ե գյուղում, նրանից վախենում են, բայց միևնույն ժամանակ և հարգում։ Նա շինել ե իր համար բարձր յերկհարկանի տուն գյուղի կենտրոնում. նա գյուղի մյուս «մեծերի» հետ իր հպատակության ներքո յե պահում բոլոր գյուղացիությունը։ Նույնիսկ գյուղական «ինքնավար» կառավարությունը լսում ե նրան և կատարում նրա ցանկությունը։ Տանուտերը, «սուդիան» գզիրը, այդ բոլորը տապակում են կարմիր ճիպոտով աղքատ գյուղացիության մեջքը հարկավոր յեղած ժամանակ...։ Խեղդվում ե գյուղացիությունն իր պարտքերի տակ, դես ու դեն նետվում, բայց դարձյալ վոչ մի ապաստան չի գտնում։ Ինչ անել... Ծերերը միայն նայում են, և խորհրդավոր կերպով շարժելով գլուխները հիշում «բարի հին անցյալը»։

Չկա այլևս «քրիստոնեյություն»—խիղճ, բարի զգացմունք, յեղբայրություն։ Ամեն ինչ անհետացել ե. վոչինչ չի կարելի անել ուժեղների, զոռբաների, հարուստների դեմ։

Ահա գյուղի ուժեղ բնակիչներից մեկը՝ «միկիտանչի» Մակարը պահանջում ե մի սոված գյուղացուց, վոր նա պարտքի փոխարեն ծախե իր կնոջը...։ Գյուղացին համաձայնվում ե, վորովհետև չի կարող այլևս տեսնել իր զավակների նվազած դեմքերը... նրանց լացը։ Հուսահատ, վոչ մի յելք չգտնելով, գյուղացին մի փութ ալյուրի համար համաձայնվում ե «համոզել» իր կնոջը։

Ահա մի ուրիշ գյուղի «հարուստը»—«վաշխառուն» խլում ե գյուղացուց նրա միակ ապավեն, գեղեցիկ մատակին՝ «ախպեր ջոմարդին» և հոգնեցնելով, սպանում...։

Ահա մի այլ գյուղի մի հարուստ. հասակավոր, արդեն յերկու անգամ ամուսնացած, պահանջում ե գյուղացի Սերոբից տալ կնության 12-ամյա աղջկանը։ Յերբ Սերոբը չի համաձայնվում, գյուղի հարուստը գտնում ե ինչ վոր գյուղացու, վորի արհեստն ե հարկավոր յեղած ժամանակ ավերել, այրել համագյուղացիների ունեցվածքը, գտնում ե ոգնական յերիտասարդների, վորոնք բոլորը համաձայնվում են ողիի համար ավերել Սերոբի այգին, նրա ապրուստի միակ միջոցը։ Բնորոշը այստեղ այն ե, վոր գտնվում են գյուղի մեջ վարձկաններ, վորոնք համաձայն են թշվառացնել մի գյուղացու, վորի դեմ իրենք անձամբ վոչինչ չունեն։ «Նոր գյուղը» այդպիսով ունի և իր խուլիգանները...։ Հուսահատված և տանջված Սերոբը ավերված «ածերից» գալիս ե գյուղը, գնում ե գյուղական հասարակության առաջ ավերված այգու խաղողի թփի վոստերը։ Շատ բնորոշ ե գյուղական իրականության այդ պատկերը։

...«Առավոտվա ժամը վերջացավ, և ալեվոր ծերունիների կոբացած մարմինները յերերուն քայլվածքով հրապարակ հասան և անհետացան սգավոր ամբոխի սովար շարքերում։ Վերջապես ժամի ծուռտիկ փողոցից դուրս յեկան յերկու ծերունի յեվս ու քաղցրությամբ զրուցելով՝ հրապարակին մոտեցան։ Քեռի Գոգորն եր, մեկն ել տերտերը։

Ճամբա տվեք, ճամբա բացեք—լսվեցին մի քանի խեղդված ձայներ. ամբոխը ճեղքվեց և պատկառելի ծերունիների առջև պատկերացան բարբարոսական անգթության վողորմելի զոհերը։ Մատաղ ծառերի ծաղկապատ գլուխները և առողջ վազերի հասուլիկ կուտրակները անկարգորեն թափված եյին շրջանի կենտրոնում, հողի ու փոշու մեջ։

Իսկ Սերոբը ձեռքը խաչած, շլինքը ծուռ, դեմքը գունատ, կանգնած եր լուռ։ Վո՛չ աղաղակ, վո՛չ մի անեծք, վոչ արտասուք...։

— Ո՜ֆ ո՛ֆ, մրմնջաց քեռի Գոգորը առաջ անցնելով, ես ինչ բան եր, վոր վորդի, ես ինչ կրակ ու պատիժ եր, ո՛ֆ, ո՛ֆ, ո՛ֆ, և նա իր վաստակած մատներով սկսեց շոշափել մեռած բույսերի դեռ թարմ վերքերը։

— Ա՜յ ժողովուրդ—սկսեց տերտերը դիմելով ամբոխին—ես

ինչ անաստվածություն է, վոր դուք եք անում, ինչ անիրավություն, ինչ կռապաշտություն է սա, ինչո՞ւ չեք իրար տուն քանդում, իրար միս ուտում... բավական չեղավ... ես քանդված գյուղը Սոդոմ Գոմոր դարձրիք, ախր յերկնային կրակից վախեցեք։ Չէ՞ վոր վերև Աստված կա, չէ՞ վոր այնտեղ արդար դատաստան կա...» *)։

Գյուղացիների համակրանքը Սեռոբի կողմն էր, և յերբ նա սկսեց անիծել Մանուկ աղային... «ունկնդիրների խոնարհ գլուխները բարձրացան ու հարյուրավոր աչքերի հանդիմանական հայացքները ուղղվեցին Մանուկ աղայի սպիտակ պառշգամբին»։ Բայց ահա Մանուկ աղան դուրս է թռչում, նրան հետևում են յերկու բարձրահասակ տղամարդիկ հաստագլուխ մահակները ձեռներին։

... «Գլուխն ոձի գլխի պես կըջարդենք—բղավեց աղան, ինքը հեռու կանգնելով, կոտրեք վոտներից տակ, աղցան կշինեք, կսատկացնենք եդ սոված շան վորդուն...»։

Յեվ այդ գանակոծության վրա յել վերջանում է «Սեռոբենց ծեր» պատմվածքը։ Վոչ մի գյուղացի վճռական բողեյին չի գտնվում, վոր ազատի Սեռոբին ծեծից .։ Այդ է հայկական նոր գյուղի «իդիլլիական» պատկերը, վոր անաչառ կերպով նկարում է գյուղական հասարակության հետ միշտ շփվող մի անկեղծ վիպագիր։ Ուսանելի յե այդ պատկերը, դաժան իրականություն, վայրենի բռնություն և վո՛չ մի բողոք, վո՛չ մի ընդդիմադրական շարժում այդ բոլորի դեմ։

Մի ուրիշ պատմվածք նկարագրում է դարձյալ նմանօրինակ մի դեպք։ Աղքատ, թշվառ գյուղացու կինը մեռնում է—հարկավոր է նրան սնունդ, հարկավոր է նրան կազդուրվելու համար «պորինջան»... Յեվ ահա թշվառ կինը հասկանալով ավելի յեվս թշվառ ամուսնու ծանր դրությունը, գիտակցելով, վոր ամուսնու մոտ դրամ չկա, գտնում է մի հին՝ վաղեմի գեղեցիկ հիշատակների հետ կապված 10 կոպեկանոց, տալիս ամուսնուն և խնդրում պորինջան բերել...։ Ամուսինը գնում է և ահա պատահմամբ նրան հանդիպում է դարձյալ իր «հոգեհանը» վաշխառու պարտատերը և անուշադիր թողնելով գյուղացու թախանձանքները, խլում է հիվանդ «մարանի դեղապետը»...։ Դարձյալ, այդ տեսարանի ականատես գյուղացիները վրդովվում են, բայց վոր-

* Արշակ Շահնազարյան —«Խավար աշխարհում» եջ 112—113։

պես միշտ— պղատոնաբար։ Վաշխառուն այս անգամ դեռ գյուղի պատվավոր անդամներից է—յերեցփոխ է և, իհարկե. նրա հետ «հանաք անել» անկարելի յեր։ «Շրջապատողներին տիրել եր ծանր ու հոգեմաշ լռություն—կարդում ենք Շահնազարյանի մոտ։

—Յերեցփոխ Պետրոս, թույլ տուր, թող տանի, դեղապետ ա, բան չկա, հնչեց մոտիկից մի խռոխտ, բաս ձայն։

Վաշխառուն հոնքերը կիտեց և գլուխը բարձրացնելով անկոչ պաշտպանին վորոնեց։

—Եդ դու՞ յես, խելառ Տիկո—խորին արհամարհանքով արտասանեց յերեցփոխը։—«Նման զնմանն սիրե». «ասում է ավետարանը, ախր դու յել բարի պտուղ չես։

Յերևի Տիկոն «խելառ» է կնքվել հենց նրա համար, վոր «բարի» պտուղ չի...։ Իսկ «բարի պտուղ» չեն իհարկե բոլոր բողոքողներն և անբավականները։ Այդ էլ շատ բնորոշ է գյուղական կյանքի համար։ Կատարվում է մի վոճիր, գյուղի «պատվավոր» անդամներից մեկը խլում է կնոջ «դեղապետը» և ամբողջ գյուղական հասարակության միջից միայն մի «խելառ Տիկո» յե գտնվում, վորը բողոքում է, մնացյալները հետո միայն ձայնակցում են—«խեղճն ա, թող տանի, խեղճ ա, խեղճ ա»... Բայց դարձյալ վաշխառուն հանդիսանում է ավելի ուժեղ, գյուղացին հուսահատ գնում է իր մահացող կնոջ մոտ։

Բողոքի վոչ մի ելեմենտ գյուղացիության մոտ Շահնազարյանը, ինչպես տեսանք, չի նկատում։ Միայն իր առաջին պատմվածքում («Մացակի լոշը») նա կարծես փորձում է նկարել մի այլ պատկեր։ Մկրտանչի Մակարը խլում է սոված գյուղացուց նոր թխած բոլոր հացը, խլում է նույնիսկ փոքրիկների համար պատրաստված փոքրիկ գունդերը։ Քաղցածների տեսարանը շարժում է կոպիտ տանուտերի քնած զգացմունքները... «Մանուկների վայնասունն ու Շամամի հեծկլտանքը քարերն եյին լացացնում, իսկ գյուղացիք տխուր հառաչում եյին»։ Հուսահատված, կատաղած, գյուղացի Ավոն վերջում հարձակվում է Մակարի վրա, և ահա այդ ժամանակ միայն գյուղացիք արտահայտվում են՝ «ոխխայ․,․․ շշնջաց ամբոխը միաձայն»...։

Ահա այդ է բնորոշը։ Ինքը գյուղական հասարակությունը չի համարձակվում ոգնել իր թշվառ հարևանին, չկան անհատներ, վորոնք համարձակվեյին քննադատել վայրենի վաշխառույին։ Յեվ իհարկե, շահագործվող գյուղացուն մի տեղ մնում է

լուռ տանջվել, համակերպվել ավելի հզորին, տանել գանակոծությունը, իսկ մի ուրիշ տեղ՝ հարձակվել գազանի վրա, խեղդել, սպանել նրան։ Դա ինստինկտիվ, հուսահատական մի ճիգ է, վորին դիմում է գյուղացին, յերբ նրա տանջանքը հասնում է ծայրահեղության։ Յեվ միայն «սպանված Մկրտանչիին» տեսնելով է համարձակվում ամբոխը լիովին արտահայտվել։ Յեվ այն էլ ինչպես—շշնջում է, և այդ ձևով վորոշում իր դիրքը։

Շահնազարյանը շոշափում է գյուղի և մի այլ կողմը—վարչական կազմը։ Գյուղացին խեղդվում է իր հազար ու մի տերերի ճանկերում, նա ստիպված է վճարել տուրքերը, տոկոսները—բայց այդ բոլորին ավելանում է և այն անիրավ վերաբերմունքը, վոր ցույց է տալիս գյուղական վարչությունը։ Տանուտերը, «սուդխան» լսում են հարուստներին և կատարում միմիայն նրանց հրամանը։ Ահա, որինակ, մի պատմվածքում—հարկեր հավաքողը գյուղի հարուստներից մեկն է, և ինչպես ընդունված է. վաշխառու։ Ոգտվելով գյուղացիների տգիտությունից, նա հաճախ ստանում է տուրքը, առանց անդորրագրեր տալու և ապա վերցնում յերկրորդ անգամ գյուղացուց վճարը։ Այն գյուղացին, վոր հրաժարվում է կատարել անիրավ պահանջը, իբրև ապացույց վկաներ է ցույց տալիս նույնիսկ գյուղի պատվավոր անդամներից, յենթարկվում է գանակոծության։ Սիմեոնը այդպիսիներից եր և ահա նրան տանում են տանուտերի մոտ և ամբողջ հասարակության առաջ ծեծում են («Կարմիր ճիպոտ»)։ Ապա վերջում նետում են գոմը, ուր մի օր մնալուց հետո Սիմոնը համաձայնվում է վճարել նորից իր պարտքը։ «Անճարը կերել է բանջարը»... նկատում է Շահնազարյանը։

Այս անգամ էլ բոլոր այն գյուղացիները, վորոնք քաջ գիտակցում եյին Սիմոնի իրավացիությունը, խոսք չեն գտնում նրա համար, չեն բողոքում նոր ձևի շահագործման դեմ։ Տոգորված լինելով անհատական գաղափարներով, այդ գյուղացիներից յուրաքանչյուրը մտածում է իր մասին միայն...։

Զափազանց հետաքրքրական է կանգ առնել հենց այդ գյուղացիների ձգտումների, իդեալների վրա։ Շահնազարյանը բերում է իր գրքում արդեն հիշված Սիմոնի յերազը, և այդ յերազն էլ ավելի քան վորոշ կերպով պարզում է հայ գյուղացու իդեալը...։

...«Սիմոնը հասել է իր իսկական նպատակին, **սեփական գութանը յոթ զույգ լծկաններով նրա միակ տենչանքն է կազմում,** Սիմոնն իրան կատարելապես յերջանիկ է համարում, նա քաղցր

ձայնով հորոլը յե կանչում և մեջ է մեջ ծլվլցնում յեզներին ու փայփայում—«Դեհ, մեռնեմ Ջեյրանին, Ծաղիկ ջան, մեջ արի ծաղիկ.,. ա՜յ գլխին մատաղ Արաբիս հորոլը...։ Յեվ վո՜րքան լավ են քայլում անիրավ կենդանիները, ահագին գութանը փետուրի թեթևությամբ է առաջ լողում և փխրուն հողի հաստլիկ շերտերը շարեշար է գլորում»...։

Ահա այդ յերազը—անհատական տնտեսության փափագը, իհարկե, ամենաբնորոշ կողմն է հայ գյուղացիության հոգեբանության։ Մեր քաղքենի սոցիալիստները մոռանում են այդ, բայց կյանքի անկեղծ և անաչառ նկարիչները հաճախ պարզում են այդ հոգեբանությունն ավելի ճիշտ, քան բուրժուական հրապարակախոսների բազմահատոր տրակտատները և հոդվածների ու բրոշյուրների ահագին կույտերը...

Շահնազարյանն անշուշտ, սուբյեկտիվ գրող է այն չափով, վոր չափով նա ինքը իր վորոշ տրամադրությամբ գունավորում է իր նկարած բոլոր դրվագները։ Նրա համար անցանկալի յե գյուղացիության շերտավորումը, բայց նա ստիպված է չեշտել իրական այդ փաստը։ Նրա համար ցավալի յե նկատել գյուղի քայքայումը, բայց նա չի կարող չարձանագրել իրական փաստերը։

...«Քանդվում է ամեն բան, փլվում գյուղական տնտեսությունը, խզվում են նախկին նահապետական հարաբերությունները, «խավար», մռայլ խավար է տիրում գյուղական աշխարհում»։ Կատարվում է այդ բոլորը Շահնազարյանի կարծիքով ինչ վոր աննկատելի ճակատագրական պայմանների շնորհիվ, հայտնվում են «մկրտանչիներ», գալիս են պինջակավոր մարդիկ քաղաքից և աննկատելի, բայց ուժեղ ձեռքերով խլում ամեն բան գյուղացուց և իշխում...։

Շահնազարյանը սոցիալոգ չե, նա չգիտե այն, վոր միևնույն պրոցեսը իր ժամանակին կատարվել է և մնացյալ յերկրներում։ Շերտավորվել է գյուղացիությունը, բազմացել են «աղքատները» և սովորանալով, գյուղական հասարակության մեջ կազմել են միանգամայն ուրույն մի խմբակ։ Նա չգիտե և այն, վոր հետագայում այդ նոր խմբակն ուժեղանում է և պայքարում շահագործողների դեմ։

Շահնազարյանը չի նկատում և այն գյուղացիներից յելած քաղաքի բնակչին, բանվորին, վոր գիտե կարդալ, վոր այնտեղ, հեռու մեծ քաղաքում անդադար շփվելով մեծ, ահագին գործա-

դաններում իր բազմալեզու ընկերների հետ՝ ստեղծել է իր համար մի նոր աշխարհայացք, նոր մտածողություն և գործելակերպ, և վոր այդ «Նոր մարդը»—բանվորը «աղքատների»-ն, շահագործվողներին կըմոտենա նոր խոսքերով, վոչ ջերմեռանդ—կրոնական, այլ ուժեղ բողոքի։

Այդ բոլորը Շահնազարյանը կարծես չգիտե։ Նա դեռ չի տեսնում ուրույն շերտավորված խմբակներ իրենց առանձին շահերով։—Յեթե նա հաճախ ասում է «հարուստներ», դարձյալ ինկատի ունի դրանց, վորպես առանձին անհատների և վաշխառուների։ «Հարուստները»—նրա համոզմամբ ժամանակավոր հիվանդոտ պալարներ են գյուղացիության առողջ մարմնի վրա, պալարներ, վորոնք պիտի անհետանան։ Շահնազարյանի բոլոր պատմվածքները ցույց են տալիս, վոր այդ հարուստների, վաշխառուների դերը շատ ավելի ուժեղ է գյուղում, վոր նրանք հետզհետե բազմանում են, վոր տնտեսական պայմաններն ընթանում են նոր ուղիով...։ Առաջանում է գյուղական բուրժուազիա։ Իսկ այդ գյուղական բուրժուազիայի դեմ նարոդնիկական գաղափարներով տոգորված Շահնազարյանը չի գտնում վոչ մի դեղատոմս, վորովհետև չի կարողանում ըմբռնել կապիտալիստական զարգացման պրոցեսը և նկատել հին կարգերի գերեզմանափոր.–պրոլետարիատին։

Իր զարգացման սկզբնական շրջանում «չորրորդ դասը» մեզ մոտ էլ շարունակում էր տակավին ապրել մանր-բուրժուական պատրանքներով։ Պետք չէ մոռանալ այն, վոր նորածին կովկասահայ բանվորությունը դուրս է յեկել գյուղից, և հենց դրա համար էլ դեռ յերկար ժամանակ կապված է մնում իր գյուղական հայրենիքի հետ։ Շնորհիվ դրան հայ բանվորի համար մանր-անհատական սեփականությունը հաճախ դառնում է կախարդական մի մագնիս, վորը քաշում է նրան դեպի գյուղական կյանք և պարուրում նրա հոգին գյուղացիական անուրջներով։ Ունենալով այդորինակ ապրումներ, հայ բանվորն անհրաժեշտաբար յերազում էր իր գյուղական տնակի և հողաբաժնի մասին։ Նա տենչում էր ստեղծել հենց այսոր կապիտալիստական հասարակարգի շրջանակներում իր սեփական, անկախ անհատական սեփականությունը։ Հայ բանվորը յերկար ժամանակ կտրված է մնում իր դասակարգային-պրոլետարական հիմնարկություններից։ Նա նույնիսկ փարում է բուրժուական-ազգայնական հոսանքներին, վորովհետև այդ վերջինները նկարագրում էյին

վարդագույն ներկերով անհատական սեփականության իդիլլիական աշխարհը...։

Բայց հասարակական իրականությունը կանգնած չի մնում մի մեռած կետի վրա ...։

Հասարակական-տնտեսական պայմանների հարաշարժ բարգավաճումը ավելի և ավելի սրում է սոցիալական փոխհարաբերությունները և աստիճանաբար կտրում գյուղացուն, բանվորին իր գյուղական հայրենիքից։ Հայ նորածին բանվորը յեփվելով գործարանային յեռուն միջավայրում—մշակում է իր ուրույն ուղին։

Այդ պրոցեսը սկսվել է արդեն վաղուց...։

Անհրաժեշտ է շեշտել այստեղ այն, վոր նրա դասակարգային ինքնագիտակցության զարգացմանը մեծագույն չափով նպաստել են և կովկասյան իրականության պատմա-հասարակական վորոշ պայմանները։

Համակովկասյան միջազգային բանվորական շարժումը յեղել է հիմնական այն գործոններից մեկը, վոր նպաստել է դասակարգային ինքնաճանաչության և ինքնափոփոխման։ Հայ բանվորը վոչ միայն բացասաբար չի վերաբերվել տնտեսական շարժումներին—այլ հաճախ ինքը, իր սեփական ձեռներեցությամբ կազմակերպել է վորոշ բողոք հայ կապիտալիստ գործարանատերերի դեմ։ Նա հեռու չե յեղել միայն—«չորրորդ դասի» քաղաքական հոսանքներից։ Յեվ դրա համար էլ հիշյալ գործադուլները հաճախ կրել են տարերային բնույթ, թեև չնայած դրան, նրանք ունեցել են հասարակական վորոշ նշանակություն։ Նրանք շաղկապել են հայ պրոլետարներին համակովկասյան բանվորության հետ, մերկացրել և ցուցադրել են բանվորի ու կապիտալիստի շահերի ներհակությունը..։

Այդպես է «նոր մարդը» մեր իրականության մեջ, նոր այն դեմքը, վոր արդեն իր գործունեյությամբ հեղափոխական մի գիծ է մտցնում մեր պրիմիտիվ ասիական իրականության մեջ...։

Հայ «չորրորդ դասի» ճնշող մեծամասնությունը տակավին, այդ անհրաժեշտ է արձանագրել—քիչ ունի ակնարկած «նոր դեմքերից»...։

Բայց վերջինները—այնուամենայնիվ գոյություն ունեն մեր կյանքում։ Նրանք վաղուց ի վեր աննկուն վոգով և իդեալիստական պատանեկական ավյունով գործում են տխուր հայ իրականության մեջ։ Նրանք հետզհետե ուժեղանում և բազմանում են։

Ահա ինչու և հնարավոր է պնդել, վոր մեր օրերում գոյություն ունի վորպես իրական և օրգանական մի յերևույթ վոչ միայն հայ գյուղացի-բանվորը, այլ և կովկասահայ պրոլետարը։

Յեվ նա, ով նպատակ ունի անաչառ կերպով դիտել հայ բանվորի ուրույն դեմքը, նա ով ցանկանում է քննել կովկասյան նորագույն սոցիալական միջավայրը, անհրաժեշտաբար պետք է կանգ առնե վոչ միայն նիրհող հայ քաղքենի բանվորի, այլ և պայքարող, մտածող և գիտակից այն բանվորի վրա, վորն արդեն գրավում է ուրույն իր դիրքը մեր կյանքում։

Հայ քաղքենի գեղագետները, շնորհիվ իրենց հայեցողության, չեն կարողացել այդպես անաչառ մոտենալ նորագույն իրականությանը։

Ռուսահայ նորագույն հեղինակներից նրանք, վորոնք քննել են հայ բանվորներին և ձգնել են նկարագրել վերջինի դեմքը—գրեթե միշտ ել պարուրել են իրենց նկարները քաղքենիական վորոշ հովերով։ Շնորհիվ դրան ստեղծել են նրանք կովկասահայ իրականության միակողմանի և աղքատ պատկերներ։ Իրենց յերկասիրություններ մեջ հայ քաղքենի գեղագետները գծել են ի հարկե, հաճախ նաև վորոշ ճշմարիտ եջեր, շեշտել են նույնիսկ վորոշ հետաքրքրական կողմեր։ Բայց նրանք չեն կարողացել ասել բոլորը և արձանագրել այն`եյականը, վորն անհրաժեշտ եր ասել և դրա համար ել չեն կարողացել ստեղծել հայ «չորրորդ դասի» իրական նկարագիրը։

Ռուսահայ նորագույն գեղարվեստական գրականության մեջ «բանվորի դեմքը» բավականաչափ հետաքրքրական կերպով նկարագծել են Ահարոնյանը և Փափազյանը։

Լինելով հայ բուրժուական նացիոնալիզմի ներկայացուցիչներ, այդ յերկու հեղինակներն ել արտահայտել ել միմիայն բացասական-ժխտական վերաբերմունք արդյունաբերական պրոլետարիատի նկատմամբ։ Նրանք յուրկուսն ել ունեցել են և ունեն այն խորունկ համոզումը, վոր կովկասահայ գյուղը հենց այսոր—կապիտալիստական հասարակարգի պայմաններում-պետք է «վերածնվե» և քաղաքներից նորեն դեպի իրենց գյուղական հայրենիքը պետք է դառնան «մոլորյալ պանդուխտները»։

Յեվ ահա զինված ուրույն այդ հայեցողությամբ ակնարկված հեղինակները մոտեցնել են քաղաքային միջավայրին։

Ամեն բան այդ նոր իրականության մեջ նրանց համար արտասովոր է և անհանդուրժելի։ Քաղաքի բոլոր անկյունները

մթին և մռայլ են նկարվում, գործարանային վայրը գծվում է խիստ բացասական գույներով։

...«Մեքենաներից դուրս պոռթկացող շոգին ծանրացել՝ խողովակներից վիժող մրոտ ծխի հետ էր խառնվում ու ննջիչ ու հեղձուցիչ՝ սփռվում զետնի յերեսին։ Յեվ այդ տխուր թաց ու մթին գիշերվա մեջ, կապտագույն-միաձույլ յերկնքի տակ, նավթահորերի ճախարակները կանչում եյին աղմուկով, նավթահորերից նետվող շոգու սյունակները պայթում եյին, բուրգերի կատարների պտտող լիսեռները տխրագին սուլում։ Քիչ հեռու հնոցները վիթխարի բոցավառ աչքերով փռնչում եյին կատաղի, կարմիր ու սևերախառն լույսով ներկում նավթի փրփուրը, զորեղ, թանձր հեղուկը։

Հեռավոր մութի մեջ գտնվող հանքերի միջից մի առ մի ողն եյին պատռում շչակների ձայները և տխուր վոռնոցներով կես գիշեր եյին ավետում»։*)

Այդպես է նկարում հայ քաղքենի գեղագետը իր համար օտար և անդուրեկան աշխարհը։

Այլանդակ ու դժոխային պատկեր է նկատում միմիայն նա։

...«Լիսեռները տխրագին սուլում են, գիշերը թաց է և մթին, օդը ճնշիչ է և հեղձուցիչ,—հուսահատեցուցիչ մի վայր է դա, վոր վոչ մի դրական կողմ չունի։

Միանման պատկեր է նկարագրում և Ահարոնյանը։«Յեվ ամեն կողմ աղբ ու մուրի մեջ կորած մի բազմություն, սըրտ-մտորեն խորհում, տնքում, նռում էր հնազանդ այն վիթխարի մուր ուժին, վոր անողոք ու բիրտ մռնչում եր հնոցների, մեքենաների, ճախարակների ժխորի մեջ, թնդում եր յերկրի մութ անդունդներում կամ ժայթքում դեպի վեր, վորպես թանձրացած գալարույթ։ Անհրապույր ու հողմածեծ հարկերի տակ ջլուտ բազուկներ կային, վորոնք կծկվում ու բացվում եյին հարվածների հետ ներդաշնակ, հաստ. հզոր թիկունքներ, վորոնք գալարվում, կռանում ու բարձրանում եյին մեքենաների քմահաճույքով և ծով քրտինքը ծորում եր խոժոռ ճակատներից, հոնքերից, ակոսում եր դեմքի մուրը, ընկնում, տրորվում եր վոտների տակ աղտոտ շաղախի մեջ։ Յեվ անվերջ, համատարած մի տնքոց, յերկունքի պես ծանր ու խորունկ, բարձրանում եր հազար կող-

*) Վ. Փափազյան «Մշուշ» եջ. 5։

մից, խառնվում էր հողմերի սալերին ու գնում էր խեղդվելու բաց մթնոլորտի մեջ»։*)

Յուրորինակ շատախոսությամբ և տափակ լամենտացիաներով համեմված այդ բնորոշումը դարձյալ, ինչպես տեսնում ենք, գծված է հուսահատական և մռայլ ներկերով։

Յերկու հեղինակներն էլ իրապես միանման են նկարում «նոր միջավայրը»։ Յեվ յերկուսն էլ մթին գործարանային իրականության տխուր ֆոնի վրա նկարագծում են հայ հուսահատ և «տնքացող» բանվորի դեմքը։ Պայքարող բանվորին նրանք չեն նկատում։ Այն նկարները, վոր նրանք տալիս են, բավականաչափ հեռու յեն իրականությունից։ Կոնկրետ բանվորական միջավայրի մասին յերկուսն էլ վոչ մի խոսք չեն ասում։ Բանվորական հոգեբանությանը հատուկ վոչ մի էյական գիծ չի շեշտվում։ Յերկուսի մոտ էլ նկարվում են Աբաղալի կամ Դարալագյազի միամիտ շինականները։

Հայ քաղքենի հեղինակների բանվորները միշտ յերազում են միմիայն իրենց գյուղական հայրենիքի մասին, վորը նրանց յերևակայությանը նկարվում է միշտ վորպես Ավետյաց յերկիր։

Ահա օրինակ, Վ. Փափազյանի բանվորն ինչպես է մտածում այն գյուղի մասին, վորի յուրորինակ «բարեմասնությունները» քշել են նրան դեպի հեռավոր վայրերը...։

...«Այժմ սլացել-անցել էր նա տարածության մեջ և գըտնում էր հրճվանք կանգ առնելու մի ծառալից հովտի խորքում։

Յեվ ահա այն գարնանային շքեղ ու պայծառ օրով, զով արևածագին, թռչունների զվարթ համերգին, առվակների հանդըստաբեր խոխոջի և ծառերի մեղմ շշուկի գիրկը։ Գյուղն էր այն, իր գյուղը, ծանոթ ծառաստանն ու ջրերը, հովն ու համերգը, դաշտն ու հովիտը։ Ծաղիկների, անհամար ծաղիկների բուրմունք լցրել էր օդը։ Բուրում էր հողը, բուրում յուրաքանչյուր ծառ և խոտ»...։

Այդ է միայն տեսնում գյուղում Փափազյանի բանվորը։

Բայց միևնույն հեղինակը իր մի այլ յերկարասիրության մեջ—անհամեմատ ավելի իրական ներկերով է գծել գյուղական նորագույն միջավայրը։ Փափազյանի գյուղական խիտ և ուժեղ նկարներում գծված է տխուր և հուսահատ այն վայրը, ուր խամրում է ամենայն ձեռնարկություն, ուր խեղդվում է ազատ միտքը և լքվում աշխատավորը։ Յեվ ի հարկե այն, ինչ

*) Ա. Ահարոնյան «Աստծո կրակը» էջ. 4։

վոր հայտնի յե մտավորական-հեղինակին չի կարող անհայտ լինել այն բանվորին, վոր ինքը յելել է գյուղից, «ճաշակել» է գյուղի բոլոր առանձին «բարեմասնությունները»։

Փափազյանի պատմվածքի ամբողջ միակողմանիությունը կայանում է հենց նրանում, վոր նա միակերպ և հասարակացրած նկարում հայ բանվորի հոգեբանությունը։

Այն, վոր հայ բանվորը, իր գործարանային միջավայրում մերթ ընդ մերթ յերազում է գյուղական հայրենիքի մասին, գուցե և ճիշտ է վորոշ չափով։ Մենք ասացինք արդեն, վոր հայ պրոլետարիատի լայն խավերը, շնորհիվ կովկասահայ իրականության մի քանի ինքնահատուկ պայմանների, յերկար ժամանակ համակված են յեղել գյուղացիական վորոշ պատրանքներով։

Փափազյանի սխալը կայանում է հետեվաբար նրանում, վոր նա հայ բանվորի մոտ նկատում է միմիայն գյուղացիական յերազներ։

Նա կատարելապես մոռանում է այն, վոր նույնիսկ հայ գյուղի մասին յերազող բանվորը պետք է ունենա բացի «գյուղացիական» տենչերից, նաև վորոշ պրոլետարական ձգտումներ։ Նա մոռանում է նաև այն, վոր հայ բանվորը չէր կարող միմիայն իդիլլական գույներով նկարել գյուղը։ Փափազյանի բանվորը գեթ մի վայրկյան պետք է հիշեր թե՛ վաշխառուներին, «քյոխվային», գյուղի բոլոր տիրակալներին և թե ընդհանրապես «գյուղական հայրենիքի» բոլոր տխուր պայմանները։ Միմիայն այդ կողմերը գծելով Փափազյանը կարող կլիներ տալ հայ բանվորի քիչ թե շատ հարազատ նկարագիրը։ Այդ մասին խոսել է ինքը Վ. Փափազյանը իր մի ուրիշ պատմվածքի մեջ։

4

Մի փոքր այլ կերպ է գծագրված Ահարոնյանի բանվորը։ Վերջինը նույնպես ծանոթ է գյուղական միջավայրի տխուր «էջերի» հետ։ Ճիշտ է, այդ բանվորն ես հաճախ «ախ» է անում գյուղի մասին...Հիշում է կանաչ արտը, հետո «հասած վոսկեգույն հասկեր ու Նորից Սարոն մինչև իրանը ցորենի մեջ թաղված ժպտուն զույգ յեզներն է հիշում»...Բայց Ահարոնյանի բանվորը գիտե և այն, վոր վաշխառուին հարկավոր է տալ 50 ռուբլի, վոր հայրենի գյուղում կան նիհարներ և թշվառներ։ Այդ բանվորը մերթ ընդ մերթ հիշում է գյուղական կյանքի տխուր

եջերը։ «Սարերում փոթորկից մարդ է խեղդվում. չերկար ձմեռը, անեծքի պես թառում է ցածրիկ խրճիթների վրա յեվ 8 ամիս անարև յերկինքը ցասումով ու խոժոռ է նայում վար»...։

Բայց ռեալիստական այդ ակնարկն Ահարոնյանի մոտ արվում է անուղղակի կերպով և չափազանց մակերևույթորեն։ Ի վերջո նրա բանվորն էլ մնում է միշտ Դարալագյազի պրիմիտիվ մի շինական։

Ահարոնյանը, վորպես և Փափազյանը, գիտավորյալ կերպով հակադրում է ծուլլ քաղաքային միջավայրին իդիլլիական գույներով գծագրված գյուղը։ Յեվ միանման կերպով են գնահատվում նաև յերկու միջավայրերի բնակիչները։ Գյուղում մարդիկ ավելի «կարեկից» են, իսկ քաղաքում «յեսասեր»։ Փափազյանի բանվորը վռնդվում է գործարանից, հիվանդանում է միայնակ—դաժան քաղաքում և մահանում անկարեկից մարդկանց մեջ։

Ահարոնյանի բանվորը զոհ է դառնում հնոց ու կրակին։ Յեվ դարձյալ նրա մահը—այս անգամ ավելի սոսկալի ու սարսափելի պայմաններում—անցնում է գործարանային միջավայրով աննկատելի կերպով, վորպես առօրյա մի յերևույթ։ Դըժբախտ այդ պատահարը չի արթնացնում բանվորների մեջ ընկերական լայն և վեհ զգացմունքներ, չի ստեղծում նրանց հոգում բողոքի հույզեր ընդդեմ տիրող անիրավ կարգերի։ Դա, իհարկե, սխալ է հիմնովին։ Բանվոր-ընկերների նա չի տեսնում։

Ահարոնյանը, այդ անհրաժեշտ է արձանագրել, տեսնում է գործարանային միջավայրում յերկու կարեկից հոգիներ։ Դրանցից մեկը լինում է հանքի կառավարիչը, իսկ մյուսը սպանված բանվորի գյուղացի հայրը։

Վերջինը գալիս է հուսահատ և տխուր՝ համակված գյուղացիական «անարատ աշխարհայեցողությամբ»։

Գործարանային ամբողջ իրականությունն ալեվոր գյուղացուն անհանդուրժելի յե թվում...«Աստծու կրակ» ասում է նա դողդոջուն ձայնով...Ապրունկ վրդովմունքով հրաժարվում է ալևոր շինականն այն դրամից, վոր առաջարկում են նրան սպանվածի համար»... Փող Մուքելիս համար... մրմնջաց նա. հայ հայ, երված ջիգյարիս գինը»... «Իմ երված ջիգյարը կարամ ուտի...հողն իմ գլխիս, վախ ջիգյարս, ջիգյարս... և չորացած աչքերից արցունքի կաթիլներ ընկան, ընկան գլորվեցին ճերմակ միրուքի վրայով...»։

Թուցե այդպիսի ծերեր և կան իրականության մեջ—բայց

Ահարոնյանի մոտ, համենայն դեպս, գծված է չափազանց մի ուտոպիքական մանեկեն։ Այնուամենայնիվ կեղծ և մելոդրամատիքական այդ պատկերը հուզել է մի քաղքենի քննադատի սրտը։ Նա տեսել է ծերունու խոսքերում գյուղացիական «անարատ» հոգեբանության հարազատ մի արտահայտություն։

Ահարոնյանը, իհարկե, բավականաչափ լավ գիտե այն,վոր ժամանակակից գյուղացին արդեն «ճաշակել է» դրամի համը։ Նրան ծանր է և այն, վոր գյուղում շատ հաճախ հանուն դրամի խախտվում է ամենայն մի պատգամ և թույլատրվում սոսկալի շահագործում։

Ժամանակակից գյուղի բնակիչները համենայն դեպս, ավելի մեծագույն չափով տոգորված են անհատական-նյութապաշտական բավականաչափ պրիմիտիվ հայացքներով։

Բայց չնայած այդ բոլորին, Ահարոնյանն այլ կերպ է գըծում գյուղի բնակիչներին։

Նա տալիս է գիտավորությամբ վերջինի իդեալականացրած բնորոշումը։ Վորոշ հրապարակախոսական նպատակների համար նրան անհրաժեշտ եր ասպարեզ հանել արխեոլոգիական մի գյուղացու տիպար և վերջինի միջոցով անիծել քաղաքները, ամբողջ գործարանային միջավայրը, «Աստծու կրակը»։ Ի վերջո Ահարոնյանի նպատակն է ալեոր շինականի ոգնությամբ արթանացնել գյուղացիական-քաղաքենիական պատրանքները . . . յեվ միաժամանակ վոչ մի խոսք չասել պրոլետարական կոլլեկտիվի վերաբերմունքի մասին, և արդեն դրանով ավելի ես կըտրուկ կերպով ընդգծել իր հիմնական միտքը։

Հայ քաղքենի գրագետի մոտ բավականաչափ «զգայուն» են նույնիսկ կապիտալիստական բուրժուազիայի կառավարիչները։

Ահարոնյանի նկարած կառավարիչը, որինակ, խառնվածքով «արի ու շիտակ» է, «նենգել, խաբել ու կեղծավորել» չգիտե...։ Նա ասում եր» վաստակավորի գրկանքի վրա հիմնված գծուծ, տմարդի տնտեսությունը»...։ Բայց և այնպես, միենույն այդ «մտավորականը» բավականաչափ յերկար ժամանակ սառնասիրտ կերպով դիտում է մարդկային շահագործման տեսարանները,—«վաստակավորի գրկանքի վրա հիմնված գծուծ տնտեսությունը»։

... «Ընկերական կյանքի ցավագին կնճիռները, վորոնց վրա դարերն եյին խոկացել ու լացել, նրան քիչ եյին զբաղեցնում»—կարճ և ազդու արձանագրում է Ա. Ահարոնյանը։ Միայն սարսափելի այն յերևույթը, վոր հուզում է ալևոր շինականին, արթնացնում է նաև մեր «մտավորականի» նիրհող հոգին։

... «Ալմաղյանը նախ շվարած մնաց իր տեղում, ապա առաջացավ ու ուժասպառ, խորտակված ընկավ աթոռի վրա. գլուխը ձեռքերի մեջ առավ, կուզեր լալ, բարձրաձայն հեկեկալ, բայց չէր կարողանում և աղետի գիշերվա մութ, ծանր վիշտը գիշատիչ թռչունի պես իր մագիլները նրա ուղեղի մեջ թաղեց, նրա հոգին ծվատեց...»։

Մենք չգիտենք, ինչ է պատահում վերջի վերջո Ալմաղյանի հետ։ Ըստ յերևույթին հետագայում նա պիտի վերածնվի և գիտակցե—վոր հիրավի «Աստծու կրակը» այն աշխարհն է, ուր նա աշխատում է... Ամբողջ այդ կախարդական մետամորֆոզը պետք է ապացուցանե նաև այն, վոր բուրժուական ինտելլիգենցիան կարեկից և ապադասակարգային է... Իսկ «չորրորդ դասի» ներկայացուցիչներն էլ իրենց հերթին պետք է տեսնեն, վոր կապիտալիստ գործարանատերերին սպասավորող մտավորականներն էլ բավականաչափ մոտ և հարազատ են պրոլետարիատին։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր հայ բուրժուազիայի վիպագիրը գտնում է միմիայն համակրական գույներ կապիտալիզմի և հանքային ադմինիստրացիայի ղեկավարի դեմքերը նկարելու համար։

Այլ կերպ է վերաբերվում նա, յերբ մոտենում է բանվորության նկարագրին։

Ահարոնյանը կարողանում է ժամանակակից ինդիվիդուալիստ գյուղացիների մեջ տեսնել կատարելապես «դրական մի դեմք»—իդիլլիական գյուղական իրականության մի բեկոր։

Ահարոնյանը նույնպես վորսում է բուրժուական ինտելլիգենցիայի շրջանում «ուղղամիտ», «խելացի» և նույնիսկ բանվորության մասին հոգացող մի մտավորական...։

Բայց տարորինակ կերպով նա չի կարողանում, իսկ ավելի ճիշտ, չի ցանկանում նկատել այն «մտածող» և «խորհող» բանվորին, վորը գործում է վոչ թե վորպես հլու ստրուկ, այլ վորպես իր մեծ հասարակական դերը գիտակցող մի ուժ։ Նա տեսնում է միշտ և ամենուրեք միմիայն կապիտալիստական անողոք մեքենայի անգիտակից և անզգա մասնիկներ...։

... «Չորս կողմից վաստակաբեկ բանվորներ հատ-հատ կամ մռայլ շարքերով դիմում էյին դեպի հանրակացարանները։ Յերեկոյան մշուշի մեջ նրանց յերերուն ստվերներն անցնում էյին տարտամորեն դանդաղ, անձայն ու խոհուն, ապա մեղմիվ լուծվում էյին թանձրացող խավարի մեջ։ Յեվ նրանց համր շար-

ժումների, վեհերոտ, ճնշված ընթացքի մեջ չկար կատարած աշխատանքի գիտակից հրճվանքը, վոր այնպես քաղցր ու հրապուրիչ է դարձնում հանգստյան ժամերը։ Բութ հոգնությունը, հաջորդ որվա դաժան վաստակի հեռանկարով ծանրացած էր ամենքի ուսերին այդ թաց, լպրծուն խավարի հետ։ Վոչ կատակ, վոչ քրքիջ, վոչ յերգ։ Ու հազար կողմից դարձյալ փնչացնում էյին մեքենաները տնքող դժգոհ գազանների պես, հեւում էյին հնոցներն ու խողովակները, ծուխ ու գոլորշու ամպեր գալարվում էյին խավարի հետ ու լուռ, վիթխարի խոնջանքի վրա հողմածեծ գիշերն էր իջնում վայելով»։

Ահա, վորպիսի տխուր և հուսահատ դեմքեր է տեսնում Ահարոնյանը բանվորական իրականության մեջ... Գիշերը վայում է, մեքենաները տնքում են, բանվորները բոլորն էլ հոգնաբեկ ու առանց կատակի, քրքիջի և յերգի, մռայլ շարքերով անցում են...։

Յեվ այդ է այն ամենը, ինչ վոր կարողանում է ասել մեզ բանվորական միջավայրի մասին Ահարոնյանը։

Գործարանային յեռուն միջավայրի յուրորինակ ուժն ու պայքարող գիտակից բանվորների դիմագծերը նա չի նկատում։ Բանվորի մահն անցնում է աննկատելի կիսագիտակից բանվորների շրջանում—և հուզում է միմիայն կապիտալիստական մեքենայի գլխավոր ղեկավարին։ Մենք տեսնում ենք պարզորոշ, վոր Ահարոնյանի և Փափազյանի բանվորներն ամենևին չեն տարբերվում միմյանցից։

Նրանց նկարած դեմքերը, վորպես յես ասացի քիչ առաջ, իրապես պրոլետարական զգեստների մեջ պարուրված գյուղացիներ են։

Յերկու հեղինակներն էլ վոչ մեկ խոսք չեն ասում հայ պրոլետարիատի դասակարգային տենչերի, նրանց առորյա կյանքի և տնտեսական պայքարի մասին։

Այդ, իհարկե, սխալ է։

Վորքան էլ հայ բանվորները համակված են յեղել գյուղացիական վորոշ պատրանքներով, վորքան էլ նրանք յենթակա յեն յեղել քաղքենիական հոսանքների ազդեցությանը—այնուամենայնիվ նրանք դարձյալ գործարանային ինքնահատուկ միջավայրում «յեփվել» և կերպարանափոխվել են ու մեծագույն չափով տարբերվել գյուղացիներից։

Քաղաքային ուրույն կյանքը, կապիտալիստական միջավայրը պետք է վորոշ կնիք դրոշմեյին հայ «չորրորդ դասի» հոգեբա-

նության վրա։ Արդյունաբերական պրոլետարիատի հատկանշական կողմերը պետք է հենց ակնարկած պատճառով արձանագրըվեյին հայ հեղինակների մոտ։

Ահարոնյանը և Փափազյանը մոտենում են հայ բանվորին համակված վորոշ տրամադրությամբ և բացասական վերաբերմունքով արդյունաբերական պրոլետարիատի նկատմամբ։ Յեվ շնորհիվ դրան, նրանք վոչ միայն չեն նկատում մտածող և մարտընչող բանվորին, վոչ միայն չեն տեսնում քաղաքի հեռավոր փողոցներում ամփոփվող ընկերական շարքերը, այլ և ընդհանրապես աղավաղված կերպով են ըմբռնում **նոր մտածողի** դիմագծերը։

5.

Ռուսահայ «չորրորդ դասի» դիմագծերը նկարված են Շիրվանզադեյի յերկերում։ Շիրվանզադեն քաղաքային յեռուն միջավայրը սիրում է։ Գյուղը նրա համար գրեթե միշտ օտար է յեղել։ Նախակապիտալիստական կենցաղով ապրող գավառական անկյունները Շիրվանզադեյի համար խավար և անդուրեկան վայրեր են։ Իր յերկերում նա մեծ վոգևորությամբ է նկարում քաղաքային տենդոտ կյանքը, քաղաքային բնակիչների միշտ աշխուժ և կենդանի դիմագծերը։ Բայց նա «յերրորդ դասի» ամենահետևողական վիպագիրն է։ Յեվ դրա համար էլ քաղաքի բոլոր բնակիչներից Շիրվանզադեյի համար ավելի սիրելի և հարազատ են բուրժուական տարրերը։ Նա գրեթե միշտ նկարում է հայ բուրժուազիայի կամ բուրժուական մտավորականության ներկայացուցիչներին։

Կապիտալիստական հասարակարգը Շիրվանզադեի համար իդեալական մի իրավակարգ է։ Այդ հասարակակարգը պետք է մնա միշտ կայուն և անսասան։ Նա պետք է միայն մաքրվե ասիականության բեկորներից—նախակապիտալիստական անցյալի կոշտ մնացորդներից։

Քաղաքակրթված Կովկաս, յեվրոպականացած իրականություն — ահա Շիրվանզադեի «կրթված» մտավորական-հերոսների վերջնական իդեալը։

Ունենալով այդպիսի համոզումներ, Շիրվանզադեն կանգ է առել քաղաքի շահագործվող բնակիչների վրա միայն հարևանցի կերպով։ Բանվորները նկարագծվել են նրա յերկերում լոկ վորոշ դեկորատիվ նպատակներով։

Քաղաքի շահագործվող բնակիչներին Շիրվանզադեն չի հաս-

կանում։ Այդ նկատելի չէ բավականաչափ վորոշ նրա այնքան հայտնի «Արտիստ»-ի մեջ, ուր նա թռուցիկ կերպով կանգ է առնում ռուս նավաստիների վրա։

Ծովային գործավորներին Շիրվանզադեն նկարագրել է ցամաք գույներով։ Նա չի կարողացել հասկանալ նրանց ուրույն հոգեբանությունը և ապրումները։

Յես չգիտեմ վորտեղ է նա ուսումնասիրել այդ միշտ վայրենի և միշտ դաժան նավաստիներին։ Ընդունում եմ մի ակնթարթ այն, վոր Շիրվանզադեն կարող եր միանգամայն անկեղծ, առանց վորոշ կանխակալ միտումների ըմբռնել նավաստիների հոգին, ինչպես նկարել է «Արտիստի» մեջ։

Բայց կասկածից դուրս է այն, վոր Շիրվանզադեի գծած նավաստիները կարրիկատուրային պատկերներ են։

Միանման նավաստիների հոգու նուրբ լարերը գիտել և նըկարագծել են այլ կերպ արևմտա-յեվրոպական և ռուսական խոշորագույն գեղագետները։

Ա՛յն, ինչ վոր Շիրվանզադեի համար միայն «գռեհիկ» է— վերոհիշյալ գեղագետների մոտ շեշտվել է վորպես բարդ և հետաքրքրական մի յերևույթ։

Այդ հեղինակները նկատել են խորհող, տանջվող—հարուստ և բարդ հոգեկան ապրումներով օժտված նավաստու բնորոշ դեմքը։

Շիրվանզադեն այդ չի նկատել, վորովհետև նա սկզբից արդեն չի կարողացել մտերմորեն, ինտիմ կերպով մոտենալ նավաստիներին և վերլուծել նրանց հոգին։ Նրա համար նավաստիների մթին սիլուետները յեղել են լոկ հարմարագույն մի ֆոն, վորի վրա ցայտուն կերպով նկարել է հեղինակը եստետ և արիստոկրատ «Արտիստ»-ի նրբին դիմագծերը։

Միանման դեր են կատարում բանվորների տխուր ստվերները Շիրվանզադեի մոնումենտալ այն գործի մեջ, վոր նկարում է նավթարդյունաբերական խոշոր քաղաքի միջավայրը։

«Քաոսի» մեջ բանվորները նույնպես դեկորատիվ դեմքեր են։

«Չորրորդ դասի» ներկայացուցիչները հիշյալ վեպի մեջ միմիայն ավելի վորոշ կերպով գծագրում են Միքայելի, Շուշանիկի. Անտոնինա Իվանովնայի գործունեյության հասարակական մեծ նըշանակությունը։

Սակայն անհրաժեշտ է այնուամենայնիվ արձանագրել այն, վոր նրա այդ նկարներն ունեին վորոշ նշանակություն և հասարակական արժեք։

Շիրվանզադեն կարողացել է դիտել և նկարագծել հայ բանվորի մի քանի հատկանշական գծերը, մի քանի կարևոր և էական հոգեկան հատկությունները։

Շիրվանզադեի մոտ բավականաչափ խիտ և կոնկրետ գծերով, առանց հրապարակախոսական տենդենցների— նկատվում է քաղաքային միջավայրը։ «Քաոս»-ի մեջ մենք տեսնում ենք կովկասահայ հասարակության բավականաչափ հարազատ նկարագրերը։

Երկու խոշոր հասարակական խմբակների տնտեսական կացության տարբերությունը ծանոթ է «Քաոս»-ի հեղինակին։

Շիրվանզադեն գծում է մի այլ կարևոր և էական գիծ ևս։ Նա նկարագծում է անաչառ կերպով և իրական ներկերով հայ բուրժուազիայի ուրույն ազգայնական աշխարհայեցողությունը։ Դեռ ավելին ևս։ Շիրվանզադեի մոտ տիրող սոցիալիստական տարրի բոլոր ներկայացուցիչներն էլ առանձնացած են միմյանցից։ Հայերը և Թուրքերը, վրացիները և ռուսները միշտ օտար են, միշտ անհաշտ և կեղծավոր են միմյանց հետ—վորովհետև տնտեսական անողոք մրցումն արդեն ստեղծում է թշնամական այդպիսի մթնոլորտ։ Նրանք պետք է միշտ կռվեն միմյանց դեմ։ Այստեղ հանդիպում են միմյանց բուրժուազիայի ներկայացուցիչները ժպտերես—բայց միաժամանակ գաղտնի դավեր են լարում և աշխատում վաղը տապալել միմյանց։ Այդորինակ միջավայրում տենդոտ արագությամբ աճում է նացիոնալիզմը։

Բայց ահա, բանվորական իրականության մեջ Շիրվանզադեն ամենևին չի նկատում վոչ տնտեսական մրցում և վոչ էլ ազգայնական թշնամական խոհեր։ Բանվորները միմյանց դեմ չեն պայքարում, վորովհետև նրանց իրական դրությունը վոչ թե նպաստում է նմանօրինակ պայքարի բորբոքմանը, այլ ավելի ևս մոտեցնում է բանվորներին միմյանց, շաղկապում է բոլոր պրոլետարներին ամուր և անքակտելի թելերով։ Բանվորները կարծես գիտակցում են, վոր նրանց դրությունը միանման է, վոր նրանք բոլորն էլ ունեն ընդհանուր մի կյանք և համանման ձըգտումներ։ Չափազանց հետաքրքրական է այդ կողմից «Քաոս»-ում նկարած հրդեհի պատկերը։ Երբ հրդեհից հետո բանվորները հավաքվում են բուրգերի տակ—զոհված ընկերների շուրջը, բոլորն էլ համակվում են մի ընդհանուր տխրությամբ և զգում են, վոր այն՝ ինչ վոր պատահել է յերկուսի հետ, հավասար չափով վերաբերվում է բոլոր բանվորներին, խոցում է զորավոր կերպով վոչ միայն զոհվածների մտերիմներին, այլ և ընդհանրապես նավթահանքի բոլոր աշխատավորներին։ «Արեգակը մայր մտավ, իր վերջին շողերը խլելով բուրգերի գագաթներից։ Իսկ այնտեղ, ընդարձակ բակում խռնվել եր բազմալեզու, բազմակրոն և բազմատարազ ամբոխը և անխոս վողբում եր սյուների տակ ջարդված ընկերներին։ Ծերունին ռուս եր, իսկ խուլ յերիտասարդը… Եվ յերկուսի էլ մահն ամբոխի համար անխտիր և հավասար ցավալի յեր, վորովհետև յերկուսի ճակատագրերի մեջ նա հավասար տեսնում եր իր աննախանձելի վիճակը»…։ *)

Այդ պատկերի մեջ Շիրվանզադեն նկարում է պրոլետարական հոգեբանության ամենաբնորոշ հատկանիշը՝ դասակարգային համերաշխությունը, համայնական բանվորական հոգին։ Այն ժամանակ, յերբ Ահարոնյանը նկարում է անտարբեր բանվորական ամբոխին, Շիրվանզադեի մոտ գծագրվում է ընդհանուր հոգեբանությամբ համակված մի ընկերական մարմին։ Դիտել են այդ նույնիսկ «Քաոս»-ի հերոսները—Սմբատը, Միքայելը, Անտոնինա Իվանովնան…։ Վորքան էլ օտար չեյին յեղել «չորրորդ դասին» այդ քաղքենի մտավորականները, այնուամենայնիվ նրանք ևս կարողացել են տեսնել համայնական տենչերով տոգորված պրոլետարիատի ուրույն դեմքը։ Հուսահատ և տխուր Անտոնինա Իվանովնային նույնիսկ վոգևորել է պրոլետարիատի շեշտված գիծը։ Բանվորական միջավայրում ազատվել է նա իր ազգայնական հույզերից և բանվորների մեջ տոգորվել միջազգային տենչերով։

… «Այստեղ, այդ պահին, կարդում ենք «Քաոս»-ի մեջ, նա առաջին անգամ սկսեց նախատել իրեն, վոր մինչև հիմա նշանակություն եր տվել ազգերի ու կրոնների տարբերությանը… Նա տեսնում եր ազգերի ու լեզուների մի խառնուրդ, տոգորված միևնույն ցավերով ու վշտերով։ Մուրի ու նավթի սև քողը սփռըվել եր համահավասար ամենի վրա ու կազմել տխուր միօրինակությունը։ Միթե մանրակրկիտ չե այն մարդը, վոր այդ մռայլ հարթության տակ տեսնում է ինչ վոր խորդ ու բորդեր, մեկին սիրում, մյուսին բարձի թողնում, համարելով իր հարևանն օտար…»**) Ինքը Շիրվանզադեն ևս ըստ յերևույթին մի վայրկյան վոգևորվել է բանվորական կոլլեկտիվ այդ հոգեբանությամբ։

Միևնույն «Քաոս»-ի մեջ նա նկարում է բանվորների, վորոնք միշտ գործում են միասին, աջակցում միմյանց։

*) Շիրվանզադե «Քաոս», Բաքու, եջ 424։

**) Շիրվանզադե. «Քաոս», եջ 328։

Յերեք այդ դեմքերը պատկանում են տարբեր ազգությունների։ Չնայած այդ հանգամանքին, նրանք յերեքն էլ—Զուպրովը, Ռասուլը և Կարապետը կապված են միմյանց հետ սերտ ընկերական հարաբերություններով։ «Տարբեր կրոնների, տարբեր լեզուների, տարբեր ցեղերի պատկանող այս յերեք բանվորների մեջ կար մի ամենքին հայտնի մտերմություն», ասում է Շիրվանզադեն։ Հրդեհի ժամանակ, վտանգի րոպեներին, նրանք միշտ աջակցում եյին միմյանց և գործում, վորպես հարազատ յեղբայրներ։

... «Ո՞վ է Զուպրովը, ո՞վ է Ռասուլը և Կարապետը»—հարցնում է Սմբատը շեշտելով նրանց ազգանունների վերջը և համակվելով նոր, արտասովոր հույզերով։

Ներկա պարագայում կարևոր չէ, իհարկե այն, թե յեղել են արդյոք կոնկրետ իրականության մեջ ճիշտ այնպիսի բանվորներ, վորոնց նկարել է Շիրվանզադեն։ Կարելի յե նույնիսկ համաձայնվել, վոր այդ յերեք բանվորներն իրականության մեջ չեն յեղել, այլ ստեղծվել են, վորպես վորոշ մտապատկերներ։ Բայց Շիրվանզադեյի նկարած հերոսները նշանակալից են նույնիսկ այդ պարագայում։ Այն էլ չափազանց բնորոշ է, վոր հայ լիբերալիզմի գեղագետը միջազգայնության սիմվոլներն ստեղծելիս դիմել է բանվորական իրականությանը։

Յեվ այդպես է նկարել նա բանվորին դեռ 1898 թվին, յերբ նոր եր միայն սկսվել բանվորական յերիտասարդ շարժումը, յերբ չկար տակավին ուժեղ և լայն պրոլետարական հոսանք, այնինչ 1912-ին Ավ. Ահարոնյանը չի կարողացել նկատել վոչ միայն բանվորի շեշտված ամենաեյական և բնորոշ հատկությունները, այլ և աղավաղել է գիտավորյալ կերպով նրա դասակարգային դեմքը։

Շիրվանզադեն այդպես չի վարվում և դա յե նրա նկարագրական ակնարկների ամենակարևոր նշանակությունը։ Գեղագետին հատուկ ինտուիցիայով նա դեռ 19-րդ դարի վերջին նկատել է բանվորի ուրույն դեմքի բնորոշ այն գծերը, վորոնք այժմ էլ աննկատելի յեն հայ մանր բուրժուական հեղինակների համար։

Այդ ժամանակավոր «անաչառությունը» բղխել է մեծագույն չափով Շիրվանզադեի աշխարհայեցողությունից։

Վորպես լիբերալիզմի գեղագետ՝ նա բացասաբար չի մոտեցել կապիտալիզմին, գործարանային կյանքին... նա չի ժխտել բանվորի գոյության անհրաժեշտությունը։ Դրա համար էլ Շիրվանզադեն կարողացել է բավականաչափ հարազատ կերպով նկարել պրոլետարական հոգեբանության հատուկ մի քանի եյակար գծերն և կողմերը...։ Բայց միաժամանակ այդ բոլորի հետ Շիրվանզադեն էս գունավորել է իր յերկասիրությունը վորոշ տոներով։ Դրա վրա մենք կանգ ենք առել արդեն առանձին։

Հասարակական յերկու խոշոր խմբակցությունների դրության տարբերությունը նա կարողացել է նկատել, բայց այդտեղից յեզրակացնել դասակարգերի շահերի և ձգտումների ներհակությունը, նա վորպես «յերրորդ դասի» գեղագետ, դյուրին չի համարել։

Շիրվանզադեն գերադասել է նույնիսկ հակառակը շեշտել։ Բանվորները նրա մոտ լուռ և խոնարհ են, իսկ տերերը վոչ այնքան կոպիտ։ Կապիտալիստ Սմբատը նույնիսկ ինքը, առանց բանվորների նախաձեռնության, մտածում և հոգում է բանվորների դրության բարվոքման մասին։ Նավթաշխարհի գործավորներից վոչ վոք չի բողոքում յերբեք, վոչ վոք նույնիսկ հասարակ անբավականության մի խոսք չի արտահայտում։ Բոլոր բանվորները լուռ և սարկական համբերությամբ հպատակվում են բուրժուազիային։

6.

Այն, ինչ վոր չեյին ցանկանում նկատել ռուսահայ քաղքենի մտավորականները, այն ինչ վոր անգիտանում եյին նրանք, չեր կարող աննշմարելի մնալ պրոլետարական գեղագետի համար։ Վերջինը անհրաժեշտորեն պետք է ավելի անաղարտ կերպով նկարագծեր կովկասահայ իրականության մեջ գործող «չորրորդ դասի» դեմքը։

Հայ բանվորներին յերգել են Շուշանիկ Կուրղինյանը և Հակոբ Հակոբյանը։ Այդ բանաստեղծներից առաջինի յերգերը մինչև վերջ գունավորված են յեղել եթիքական վորոշ հայեցողությամբ։ Բանվորը յերգվել է վորպես ճնշված, շահագործվող սոցիալական մի տարր։

Բարձիր ուսերիս քո բեռը-կսկիծ
Վողբերն ու ճիչերն անհուն տանջանքիդ,
Վհատ կասկածդ և սրտիդ անբիծ
Բոլոր ցավերը և խաչը կյանքիդ։

Թող կաթիլներով ճնշման կապանքից
Կաթեն սրտիս մեջ տենչերդ մարած,
Տգետ խավարում, գլխից անձկալի
Ըմբոստ խլրտման ճիչերը խամրած։

Յես քո սար բեռան հլու բեռնակիր
Կըսուզիմ վշտի անհատակ ծովում
Իսկ դու աշխարհում նորից արծարծիր
Սուրբ ազատության իդեալի յերգում*)։

Շ. Կուրղինյանը ձգտում է ծառայել նոր հասարակական տարրին, նա ցանկանում է, վոր հայ մտավորականությունը նվիրեր իրեն «նոր ուժի» ազատագրական գործին։ Դա յե Կուրղինյանի բոլոր յերգերի իմաստը։ Նույնպիսի աշխարհայեցողություն ունեցել է և Հակոբ Հակոբյանը։ Իր գրական գործունեյության նախնական շրջանում վերջինը համակված է յեղել վորոշ քաղքենիական-եթիքական հույզերով։ Հայ «չորրորդ դասի» կազմակերպման սկզբնական շրջանում այդ վերաբերմունքն ընդհանուր յերևույթ եր։

Բանվորը հայ իրականության մեջ շահագործվող և անզոր տարր եր։ Պայքարողները նրա շարքերում քիչ եյին։ Յեվ դրա համար ինքը պրոլետարական կյանքը, վորպես այդպիսին, չեր կարող ստեղծել իր ուրույն, միանգամայն անաղարտ և հետևողական պրոլետարական գեղագետներին։ Նա չեր տալիս անհրաժեշտ նյութ արվեստագետներին։

Վերջինները մոտենում եյին բանվորական իրականության՝ վառված վորոշ, հասարակական-հրապարակախոսական տենչերով։ Յեվ նկարում եյին կյանքը միշտ յելնելով ինտելլիգենտական բարոյական հայեցողությունից, միշտ մոտենալով Ադա-Նեգրիի ու համազոր պոյետների նման։

Հետագայում, յերբ հասարակական-տնտեսական պայմանները փոխվում են, յերբ ստեղծվում են առույգ, «Նոր մարդկանց» —նոր պրոլետարների խիզախ շարքեր, աստիճանաբար անհետանում է հիշյալ յերևույթը։ Յեվ ահա, Հակոբ Հակոբյանի ստեղծագործության մեջ մենք դիտում ենք բավականաչափ կորուկ կերպով շեշտված նոր գիծը։

Աստիճանաբար, տարիների ընթացքում պրոլետարական այդ բանաստեղծն ազատում է իր միտքը բոլոր ոտար հովերից, կռվում և հաստատում է մի նոր կենսահայեցողություն։ Նա դառնում է քաղաքի ըմբոստ բնակիչների մունետիկը։

...Մեծ քաղաքը իր միշտ կենդանի փողոցներով, տենդոտ կյանքով և տագնապալից մոմենտներով լինում է այն նվիրական աշխարհը, վոր համակում է պոյետի հոգին կենսատենչ հույզերով։

*) Կուրղինյան — Արշալույսի ղողանջները, եջ 47.

Մեծ քաղաքում դիտում է նա և մարդկային մտքի հզորությունը, անհագ ձգտումները և սոցիալական բարդ կոնտրաստները։

Ահա փողոցը... մեծ յերկար ու լայն գետի յե նման,
Ուր վոլորտներով ծփում է յեռում հոսանքը շարժման.
Յեվ ուր վիթխարի շենքերը քարե յերկնահուպ շարքով
Կապույտ մի ճամփա յեզրել են վերից անհուն լազուրով։
. . . .
Յեվ գոհ է այստեղ մարդը այսօրվան ուժի ու փառքի,
Վոր այս ժխորում ծծում է առողջ հյութերը կյանքի,
Ծծում է, քամում բույր ու հրապույր, հարբում, արբենում,
—Ու չի հագենում... ու չի հագենում։

Հակոբյանը գիտե այն, վոր քաղաքը յերանավետ և դրախտային մի վայր չե։ Նա տեսնում է միշտ հեռվում գծվող գործարանային ստվերները, լսում է մեքենաների առույգ աղմուկը։

Բանաստեղծը գիտե, վոր քաղաքի հեռավոր կվարտալներում ապրում են շահագործվող տարրերը։ Հասարակական սուր ներհակությունների, ունևորների յերջանիկ կյանքը և աշխատավորների «անծայր տանջանքները» նա միշտ տեսնում է և համակվում խոր զայրույթով։

Քաղքենի գեղագետների համար քաղաքը, վորպես մենք ասացինք, միշտ դժոխային մի վայր է։

Հակոբյանի յերգերում բացակայում են հուսահատ հույզերը։ Նրա հոգին լեցուն է զվարթ, կենսատենչ մոտիվներով։ Նրա համար ժամանակակից հսկայական կենտրոնները—քաղաքները—միշտ հմայիչ են և գեղեցիկ։

Հակոբյանը նկատում է և քաղաքի յուրորինակ պոեզիան։ Ահագին այն գործարանները, վորոնք սարսափեցնում են քաղաքների գեղագետին՝ «չորրորդ դասի» բանաստեղծին վոգևորում են և տոգորում մարտական հույզերով։

«Ժխորի» մեջ լսում է, ինչպես որեր շարունակ «շռինդ աղմուկն է խոսում»։

Արդեն այն յերգը, վոր նվիրում է պոյետը ժամանակակից գործարանին, ցուցադրում է նրա առանձին վերաբերմունքը դեպի նոր իրականությունը։ Առանց աղարտելու այդ իրականության եյական գծերը և միաժամանակ դրա հետ՝ առանց վարագուրելու գործարանային միջավայրի ինքնորինակ ուժը՝ Հակոբյանը ստեղծում է զվարթ շեշտերով պարուրված իր յերգերը։

Հրդեհ է կարծես այնտեղ դարբնոցում,
Ուր արագ ու վարժ հաղթ բազուկների
Սիլուետներն են աջ ու ձախ վազում—
Ու մուրը լիզում մռայլ պատերի.
Կայծեր են ցայտում գնդակների պես
Ու խանձում դարբնի մազեր ու յերես.
Սալն է տնքում կռանի զարկից,
Յերկաթը ճչում հասցրած վերքից։
Սայլերը փոշոտ այնտեղ լայն բակում
Յերկաթ են կրում—ծանրաքաշ թերթեր,
Հազար կոկորդ է ճչում աղմկում,
Վոր պատրաստ լինեն յերկաթը նետել.
Ուռչում են դեմքի յերակների ցանց—
Մինչ սայլից մի թերթ գլորում են ցած...
Ու մի բութ զնգոց... և սուր, անկյունում
Հսկան է արդեն գետնի մեջ ցցված։

...«Յերգ է թե բողոք, շանթ է թե վորոտ, վոր այդպես խրոխտ շեշտեր է հյուսում»—նորից ու նորից հարցնում է ինքն իրեն Հակոբյանը, կախարդված գործարանի տենդոտ կյանքի պատկերից։

Այդ ֆոնի վրա Հակոբյանը գծում է և «Նոր մարդու» դեմքը։

Այլևս չենք տեսնում այն, ինչ վոր դիտում եյին քաղքենի նկարիչները—չենք նկատում գյուղացիական դիմագծեր, չենք տեսնում միշտ հուսաբեկ ու լացող դեմքեր։

Նույնիսկ բանվորների տխուր կյանքի մռայլ դրվագները քանդակելու ժամանակ պոետը լցված է ուժեղ և կենսուրախ հայեցողությամբ—վորովհետև հավատում է, համոզված է և գիտե, վոր այնտեղ, հեռու—«բանակ դրած քաղաքածայրում, ձուլվում է գործարաններում սերունդը գալիք», ձուլվում է այն բանակը, վոր ունի «իր խոհերը, իր հույզերը, իր գեր-նպատակը...»։

Հակոբյանի յերգերում, տաղերի մեջ, անուղղակի ակնարկներում գծվում է ընդհանուր կոնտուրներով «մտածող ըմբոստը»։

... Ահա մի մթին գիշեր բանաստեղծը դիտում է քուրայում աշխատող բանվորի դեմքը։ Նա իսկույն համակվում է խոր համակրական զգացմունքով և անհրաժեշտ էլ չի համարում ծածկել իր «հրապարակախոսական» հույզերը...։ Նրա համար դարբնատունն արդեն զվարթ մի վայր է, աղմկալի մի անկյուն... Կարմիր կրակի առաջ կանգնած է դարբինը «ալ բոցի գույնից թափ, յեռանդ առած» վոր... «պողպատ մեջքով կռում է, կռում»...։

Յեվ մինչ մի նոր ձև, մի կյանք չէր տալիս
Անկուշտ մետաղին—չէր հանգստանում,
Յեվ խորհում եյի... ահա թե ուր է
Ձգվում բանվորի ստեղծող հոգին...։

Այդ տողերում դարձյալ կա վորոշ հրապարակախոսություն։

Նորագույն գեղագետներից շատերի մոտ մենք կտեսնենք նմանորինակ «հրապարակախոսական» մոտիվներ։ Մանավանդ շատ են լինում այդպիսի մոտիվները հասարակական-տագնապալից շրջաններում։ Պետք չե մոռանալ այն,—վոր հեղափոխական ամեն մի դասակարգի գեղագետները մեծագույն չափով տոգորված են լինում «հրապարակախոսական» տենչերով։

Հնարավոր է մի այլ առարկություն ևս անել Հակոբյանի յերգերի առթիվ—և թվում է, վոր այդպիսի առարկություններ կանվեն տրադիցիոն հայ քննադատների կողմից։ Կարող են ասել, վոր Հակոբյանն իդեալականացնում է վերջինի միմիայն «դրական» գծերը յեվ հատկությունները։

Այդ նկատողությունները վորոշ չափով ճշմարիտ են։

Հակոբ Հակոբյանը—«չորրորդ դասի» յերգիչ է։

Վորպես այդպիսին, նա դիտում և արձանագրում է բանվորական նկարագրի այն կողմերը, վորոնց մասին հայ քաղքենի գեղագետները գերադասում եյին լռել...։

Հակոբյանը նկատում է, ինչպես ասացի, վոչ միայն «լքված» «հուսահատ» բանվորին—այլ և «լայն հեռուների» մասին խորհող ուժեղ պրոլետարիատին։

Վերջինը նրա մոտ նկարվում է «ջլուտ» բազուկների «պողպատ» մեջքով—վորովհետև պայքարող բանվորների հոգեկան կորովը ցայտուն կերպով նկարվում է այդ սիմվոլիքական բնորոշումների ոգնությամբ։

Ժամանակակից խոշորագույն քանդակագործներին յեվս վոգեվորվել է բանվորը։ Յեվ ահա դրանց մոտ, ամենից շատ գըծվում է բանվորը «պողպատ մեջքով», ուժեղ մկանունքներով։ Անշուշտ այդ գեղագետները մի փոքր «ազարտելով» բանվորի արտաքին դիմագծերը, ձգտում են այդպիսով տալ նրա հոգեկան հատկությունների, իսկական դեմքի հարազատ և գեղարվեստական նկարագրությունը։

Մոտենալով այդպես Հակոբյանի ստեղծած նկարներին՝ մենք, իհարկե, իրավունք չունենք առանձնապես բծախնդիր լինել նրա ուրույն վոգևորության նկատմամբ։

Վորքան էլ անհարթություններ ունենա Հ. Հակոբյանը, վորքան էլ թերի լինեն նրա մի քանի տողերը, մի յերկու կտորները—այնուամենայնիվ անաչառությունը պահանջում է արձանագրել, վոր ռուսահայ հեղինակների մեջ հայ արթնացող «չորրորդ դասի» առաջին յերգիչը Հ. Հակոբյանն է։

Նա յե միայն, առաջինը հայ գրողների շարքերում, վոր կարողացել է ըմբռնել «Նոր ուժի» բնորոշ դեմքը։

Այժմ յեվս, մեր տագնապալից որերում Հ. Հակոբյանը միակն է հայ գեղագետների մեջ, վոր խոր ուշադրությամբ դիտում է գործարանային միջավայրի ըմբոստ բնակիչների ուրույն կյանքը։

Այն, ինչ վոր նա ստեղծել է, այն, ինչ վոր նա վարանումներով անցյալում և վճռականորեն այսօր մեր որերում—տվել է, իհարկե, տակավին շատ քիչ է։ Մի քանի յերգեր, մի յերկու դրվագներ, մի քանի բնորոշ շեշտեր։

Բայց Հակոբյանի ստեղծագործությունն այն անհրաժեշտ և հիմնական ետապն է, վորից սկսում է ռուսահայ անկաշկանդ պրոլետարական գրականությունը։ Հակոբյանի յերգերը դեռ պետք է ունենան իրենց բեղուն և արգասավոր շարունակությունը։ Նրան դեռ կարող են և պետք է միանան նոր յերգիչներ։

«Չորրորդ դասի» դեմքը ռուսահայ գեղարվեստական գրականության մեջ տակավին քննված և վերլուծված չէ։ Կան հետաքրքրական եջեր, կան բնորոշ գծեր—վորոնք կարող են և պետք է նյութ ներկայացնեն ապագա գեղագետներին և լրացնեն այն մեծ բացը, վոր նկատելի յե մեր նորագույն գրականության մեջ—յեվ ինձ թվում է, վոր ակնարկած ուղղությամբ կտրական խոսքը պետք է ասեն հենց «չորրորդ դասի» գիտակից և առաջավոր ներկայացուցիչները։

1910—1912 թ.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

I. Տերյան պոետը

Մենք չենք սխալվի, յեթե ասենք, վոր թե ռուսական և թե արեմտայեվրոպական բոլոր այսպես կոչված «յերիտասարդ» «մոդերնիստ» բանաստեղծները բնորոշվում են ամենից առաջ իրենց քաղաքային հոգեբանությամբ։ Նույն իսկ այն պոետները, վորոնք անմիջապես քաղաքի վրա շատ քիչ են կանգնում, այն բանաստեղծները, վորոնք յերգում են կանաչազարդ հովիտները և սլանում «կախարդական հեռուները», նույնիսկ «Վոսկյա Ցընորքների» և «Վոսկյա Հեքյաթների» յերգիչները—իրենց տրամադրություններով և կենսազգացումով հանդիսանում են քաղաքի զավակներ։ Յեվ Վերլենի և Բոդլերի—ամենանշանավոր և ուժեղ այդ «դեկադենտների» մոտ մենք տեսնում ենք վորոշակի արտահայտված քաղաքային հոգեբանությունը։

Նրանց յերգերի ընդհանուր կոլորիտը, առանձնահատուկ տոներն և ներկերը շնչում են քաղաքի ատմոսֆերայով։ Նրանց տխուր, աշնանային յերգերի մեջ նշմարվում է քաղաքի ընկճված քաղքենի բնակիչը իր հուսահատ կենսահայեցողությամբ։ Ընթերցողն զգում է, տեսնում է պարզ՝ հասարակությունից կտրված և ծանր մտախոհությունների մեջ սուզված, քաղաքի ջղայնացած, հոգնած ինտելլիգենտին իր մենակյաց հոգով։

Բայց ամենաբնորոշը և ավելի եյականն այն է, վոր նկատելի յե այդ պոետների սերտ հոգեբանական կապը քաղաքի հետ։ Քաղաքի ազդեցությունից միանգամայն ազատվել նրանք չեն կարողանում, այնքան ուժեղ կապվել են իրենց առօրյա կյանքով և հոգեկան ապրումներով քաղաքների ներվային ատմոսֆերայի հետ։ Քաղաքի միջավայրը կարծես դառել է նրանց համար մշտական մի բնակավայր, վորն այնքան մոտ է և սիրելի է վորպես հայրենական տունը...։ Մեզ համար պարզ է, վոր թե Բոդլերը և թե Վերլենը, վորքան էլ նրանք չեն յերազում «քրիզանթեմների և հիացինտների» դյութական յերկիրը, վորքան էլ անհագ չեն սլանում հեռավոր հեքյաթային Ցեյլոն—դարձյալ, յերբեք չեն կարող վերջնականապես և վճռականորեն

կտրվել մեծ կապիտալիստական քաղաքից, չեն կարող ապրել հեռու իրենց «տաղտկալի» բնակավայրերից: Յեվ, իհարկե, դրա համար էլ նրանք հաճախ յերգում են, քաղաքների յուրօրինակ պոեզիան՝ մառախլապատ փողոցները, արվեստային նիհար բնությունը և ընդհանրապես քաղաքային ինքնահատուկ տները և ներկերը: Այդ բարդ «սարսափելի» և խորհրդավոր քաղաքը, յեթե հաճախ նրանց համար «տաղտկալի» մի վայր է, ավելի ևս հաճախ քարշում է նրանց, կախարդում, հմայում՝

Стальной кирпичный и стеклянный,
Сетями проволок обвит.
Ты—чарователь неустанный
Ты неслабеющий магнит.

В. Брюсов

Քաղաքն այդպիսով միաժամանակ նորագույն պոետների համար խորհրդավոր և գյութական մի աշխարհ է: Ահա ինչու և այդ պոետները, հաճախ նույնիսկ համակված քաղքենիական հովերով և հուշերով, այնուամենայնիվ քաղաքի կտրուկ և վճռական հակառակորդները չեն: Նրանք քննադատում են քաղաքների իրականությունը յուրօրինակ կերպ՝ մեղմակի և թույլ, նկարում են առանց մորալիզողական շեշտերի... Յեվ հաճախ նույնիսկ սկսում են յերգել քաղաքը, նրա յուրօրինակ գեղեցկությունը, նրա բնորոշ և ուրույն կյանքը, նրա «նոր» բնակիչներին...:

Բոլոր այդ գծերը բավականաչափ վորոշ արտահայտված գտնում ենք մենք և Վահան Տերյանի մոտ, վորի յերգերի 2 րդ հրատարակությունը լույս տեսավ այս օրերս: Այժմ, թվում է, մեզ, ավելի ևս պարզ պիտի լինի այն, վոր Տերյանը ամենևին հայ միջավայրի և իրականության յերգիչ չէ: Նրա քնարը ռուսական մեծ քաղաքների քնար է, նրա յերգերը հյուսված են մեծ քաղաքի բնորոշ մոտիվներից: Վահան Տերյանի ստեղծագործության քննությունը ցույց է տալիս, վոր իր հոգեկան ապրումներով նա ավելի սերտ կապված է Անդրեյ Բելլի, Ֆեոդոր Սոլլոգուբի, քան Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի հետ...: «Հայրենական տուն» նա չունի և չի յել ցանկանում ունենալ. Նրա համար օտար են հայրենիքի բարձրաբերձ լեռները և լայնատարած դաշտերը, օտար են և հայ շինականների պարզ, անշուք յերգերը...:

Տերյանի մոտ վորոշակի գծվում է մեծ քաղաքը և պարզ նշմարվում է այդ քաղաքի ֆոնի վրա զարգացած, հյուսված հոգեբանությունը: Նա ինքը հաճախ նկարում է իր յերգերի աղմկալի վայրը—այն մեծ քաղաքը ուր ամբոխային ժխորի մեջ

միշտ միայնակ է զգում իրեն անհատը...: Յեվ այդ նկարագրության մեջ միշտ յերևում է բանաստեղծի հոգնած, ջղայնացած հոգին,—ներկերը մթնշաղային են, պատկերները կիսագունատ և հաճախ անորոշ: Նկարվում է արդյոք քաղաքը գարնան օրերին թե ձմրանը—միշտ յերևում է միևնույն տխուր բանաստեղծն իր հուսահատ յերգերով: Առանց խիստ խոսքերի, առանց հրապարակախոսական բացականչությունների տալիս է նա իր զգացումների, հոգեկան ապրումների պատկերը մեծ քաղաքի յուրօրինակ ֆոնի վրա՝

Ձմրան գիշերն է մեղմորեն ընկնում
յեվ մեծ քաղաքի դեմքը մշուշում.—
յես դուրս եմ գալիս փողոց եմ գնում.
յեվ յերկար, յերկար մայթերն եմ մաշում.
Բարձր տների պատուհաններում
պայծառ լույսերը հանգչում են մեկ-մեկ.
յես արդեն վոչինչ չեմ մտաբերում—
ինձ համար չկա այսոր ու յերեկ:
Կես գիշերն անցավ. յես տուն չեմ գնում
յերկար, անդադար մայթերն եմ մաշում.
շրջում եմ անվերջ, յերբեք չեմ հոգնում՝
վոչինչ չեմ հիշում, վոչինչ չեմ հիշում...
Լապտերը միգում մաղում է պարզ բոց,
յես աննպատակ շրջում եմ անվերջ.
յես լուռ անցնում եմ փողոցից փողոց
ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ:

...«Յես լուռ անցնում եմ փողոցից փողոց ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ» այդ խոսքերով բնորոշում է Տերյանն իր ամբողջ դրությունը այն մեծ քաղաքում, ուր նա իրեն միայնակ է զգում, ուր բոլորը նրա համար անծանոթ են, ուր «տաղտկալի» և միօրինակ են մարդկանց դեմքերը, նրանց առօրյա կյանքը և ձգտումները.. Տերյանին չի վոգևորում վոչ մի հասարակական տարր—նրա համար օտարներ և «անծանոթ»-ներ են բոլոր մարդիկ, բոլոր այն «անցորդները», վորոնք շրջում են մեծ քաղաքի փողոցներում... Նա չի տեսնում հրապարակներում պտտող այդ «անցորդի» հոգին և չի յել ցանկանում տեսնել: Շրջապատի յուրօրինակ կյանքը, մարդկային անընդհատ ընդհարումները, հարատև մրցումը և ամբոխային հոսանքը նրան թվում է հաճախ

ծանր և տաղտկալի: Նա սկսում է առանձին ուշադրությամբ դիտել կյանքը և նկատում է, զգում է, որ մարդիկ «պաղ» են, օտար միմյանց վերաբերմամբ,—զգում է որ մեծ քաղաքի իրականությունը անողոք մրցումների և բախումների մի կրկես է... **Նրա մեջ այդ զգացումը զարգանում յեվ մեծանում է շնորհիվ այն հանգամանքի, վոր նա ինքն ապրում է այն հասարակական շրջանում--միջավայրում, ուր բոլոր անհատները առանձնացած են միմյանցից, պայքարում են միմյանց հետ: Նա տեսնում է շարունակ տիրող հասարակական տարրերի միմյանցից ծածկված, գաղտնապահ, մրցող դեմքերը,—ապրում է մի իրականության մեջ, ուր բոլորը իհարկե «պաղ» դեմքերով հանդիպում են այսօր—վաղը կռվելու յեվ ընդհարվելու համար:** Յեվ, ապրելով ամբողջ ժամանակ այդ յուրօրինակ իրականության մեջ, բանաստեղծն զգում է ավելի ևս վորոշ իր մենակությունը քաղաքի մեջ՝

Բյուր մարդոց մեջ,
պաղ մարդոց մեջ,
վորպես տրտում
անապատում—
մենակություն
մենակություն...

Նրա համար այժմ արդեն ամբողջ քաղաքը դառնում է միայնակների, օտար, «անծանոթ» դեմքերի մի բնակավայր: Նրան թվում է, վոր բոլոր մարդիկ նման են իր շրջապատում ապրողներին: Նա չգիտե և չի յել ցանկանում գիտենալ, վոր մեծ քաղաքում բոլոր մարդիկ այդպես միակերպ, միօրինակ չեն, վոր կան քաղաքի հեռավոր փողոցներում, քաղաքի ծայրերին ուրիշ մարդիկ ևս, վորոնք մոտ են միմյանց հետ, և կապված ընդհանուր հույզերի և ընդհանուր ձգտումների ամուր թելերով... **Նա չգիտե, վոր ինքը կյանքը ստեղծում է քաղաքներում «նոր» մարդկանց՝ նոր մտահայեցողությամբ յեվ ձգտումներով:** Վահան Տերյանն ապրում է այլ միջավայրում և, յենթակա այդ միջավայրի ազդեցությանը՝ նա յուրօրինակ կերպ է ըմբռնում և ամբողջ հասարակական իրականությունը.. Ամենուրեք նա տեսնում է միայն «պաղ» դեմքեր, վորոնց մեջ զգում է իրեն վորպես «տրտում անապատում»: Այդ տխրությունը, հուսահատությունը համակում է ինտելլիգենտ-պոետի հոգին: Իր մենակյաց հոգեբանությամբ նա զգում է ավելի ևս վորոշ կյանքի ձանձրույթը:

Նրա համար անհասկանալի և օտար է շրջապատի կյանքը: Նրա համար «տաղտկահնչյուն ու միաձայն օրերն իրենց յերգն են յերգում»: Անբավական քաղաքների իրականությունից Տերյանը շեշտում է քաղաքի ստվերային բնահատուկ կողմերը՝ «բյուր» մարդկանց «պաղ» դեմքերը, անհատի միայնությունն այդ բյուր մարդկանց մեջ--բայց միաժամանակ նա այնքան համակերպվել է իր շրջապատին, վոր այլևս չի գտնում քննադատության համար բողոքի խիստ շեշտեր: Նա չի բողոքում քաղաքների դեմ, վորպես կբողոքեր և կպայքարեր հեռավոր գյուղերից քաղաքի «պաղ» մարդկանց մեջ ընկած գյուղացին: Տերյանը չի յել ցանկանում բողոքել... Նա միայն անտրտունջ հեկեկում է և տրտում շրջում քաղաքի մշուշոտ փողոցներում: Վորպես և Բոդլերը, Վերլենը—Վահան Տերյանը չափազանց արդեն քաղաքի վորդի յեր, վորպեսզի կարողանար ուժգնորեն վրդովվել քաղաքների իրականությունից: Ահա ինչու և իր անբավականությունը նա արտահայտում է մեղմ շեշտերով, մթնշաղային տոներով պարուրված տխուր յերգերում: Նա ձգտում է հեռանալ աղմկալի քաղաքներից և միայնանալ. Նրան հոգնեցնում, ջղայնացնում է «օտար» «անծանոթ» մարդկանց աղմուկը քաղաքներում, հոգնեցնում է նրանց առօրյա հանդիպումը, խոսակցությունները: Նա, վոր առաջ տխրությամբ եր շեշտում իր մենակությունը «բյուր մարդոց մեջ», այժմ տենչում է միայնանալ, սուզվել իր ապրումների և զգացումների աշխարհը: Յեվ Տերյանը կտրվում է միանգամայն հասարակությունից—«արտաքին աշխարհից»:

Նա այժմ ճանաչում է և գիտե միայն իր ցավերը, իր հոգսերը: Նա ուշադրությամբ լսում է իր հոգու ձայնը և նրբին տողերով յերգում իր մենակյաց հուսահատ կյանքը: Նա բնությունն ել այժմ ներկում է իր հույզերին համապատասխան գույներով: Դուք չեք գտնի Վահան Տերյանի մոտ գարնան ճոխ, գեղազարդված պատկերներ—մանավանդ նրա առաջին յերգերում, չեք գտնի զվարթ դաշտանկարներ կամ լուսառատ արևի ճաճանչներ: Ամենուրեք նրա յերգերում հնչում են աշնանային մեղեդիներ, ամենուրեք տիրում են մթնշաղային ներկեր: Նա սիրում է կիսամութը և գալկացած ծաղիկները, նրա համար յուրօրինակ գեղեցկություն ունին «մթնում կորչող լեռն ու արտը», նրա հոգին խաղաղ նիրհում է միայն, յերբ մարում է «Կարմիր Վերջալույսը»... Հուսաբեկ բանաստեղծը բնության մեջ ել չի գտնում այն հանգրվանը, վորը հաճախ փնտռում է հեռանալով աղմկալի

փողոցներից։ Նա չի կարողանում մոռանալ յերբեք իր միայնությունը, իր ծանր և տխուր հուշերը, իր միօրինակ և տաղտկալի կյանքը... ։

Բայց կա այնուամենայնիվ մի դեմք քաղաքում, վոր գրավում է բանաստեղծին, լցնում է նրա հոգին առանձին ավյունով, վոգևորությամբ։ Այդ դեմքը—կինն է։ Վահան Տերյանի ստեղծագործության մեջ և կինը և սերը բռնում է գույն առաջին տեղը։ Յեվ նրա մի քանի «սիրային» յերգերն այնքան յերաժշտական և անկեղծ են, վոր հիշեցնում են տաղանդավոր մոդեռնիստ—սիմվոլիստների յերգերի ամենահայտնի էջերը...

Սերը Վահան Տերյանի ստեղծագործության մեջ պիտի անհրաժեշտաբեն բռներ խոշորագույն տեղ։ Քաղաքի մթնոլորտում խեղդվող մենակյաց, հասարակությունից կտրված և իր մեջ խորասուզված՝ ինտելիգենտին պիտի գրավեր այն յուրօրինակ յերևույթը, վոր սերը համակրական ձգտումներով կապում է յերկու սեռերի ներկայացուցիչներին։

Մեծ քաղաքում, ուր բոլորը հարատև մրցում են միմյանց հետ, ուր փողոցներում և հրապարակներում շրջում են միմյանց համար օտար անցորդները—պատահում են միմյանց յերիտասարդը և կույսը, պատանին և կինը և մտերմաբեն մոտենում միմյանց, ուժգնորեն կապվում համակրական «խորհրդավոր» թելերով. Գեթ առժամանակ, գեթ մի վայրկյան մղվում են նրանք միմյանց գիրկը, դառնում միմյանց համար մոտիկ և սիրելի։ Յեվ չտեսնել քաղաքի ֆոնի վրա յուրօրինակ կերպ նշմարվող այդ հանդիպումը և մերձեցումը նորագույն բանաստեղծները չեյին կարող։ Տեսնում է և Տերյանը, վորը և յերգում է այդ հաճախ րոպեյական հանդիպումը։ Նրա հոգնած, հուսահատ հոգու համար այդ սերը կարծես դառնում է մի գեղեցիկ ասուպ, նվիրական մի հանգրվան։ Բայց հասարակությունից կտրված և իր զգացմունքների ներքին աշխարհը սուզված անհատը չի կարող ըմբռնել լիովին, կատարելապես կանացիական հոգին... Նա, վոր չեզոքացած է, նա վոր չի հասկանում մարդկանց, վորի համար «անցորդներ» են քաղաքի բոլոր բնակիչները, չի կարող հասկանալ և կնոջը։ Կա մի «գաղտնիք», վոր նրա համար անըմբռնելի յե, կա մի անկյուն վոր նրա համար մնում է միշտ կախարդական։ Մի րոպե, մի վայրկյան կապվելով կնոջ հետ, միանալով, մտերմանալով նրա հետ սեռային-սիրային հանդիպման ժամանակ—քիչ հետո նա տեսնում է, վոր դարձյալ կինը նրա համար մի

«հանելուկ» է, մի «անծանոթ», խորհրդավոր քողով շղարշած միայնպիսի «անցորդ», վորպիսիներին նա հաճախ պատահում է մեծ քաղաքի լայն պողոտաներում և նեղ փողոցներում...։ Ահա ինչու և մոդեռնիստների մոտ կինն այնքան հաճախ նկարվում է, վորպես խորհրդավոր մի անծանոթ. ահա ինչու և Տերյանի մոտ հաճախ նկարվում է անորոշ, կիսագունատ և մշուշապատ ներկերով.

Քո աչքերի դեմ՝ իմ աչքերը կույր,
կա քո հոգու մեջ անթափանց մի մութ՝
քո մութ հայացքում կա մի քնքուշ սուտ,
քեզ միշտ թագցնող մի նուրբ վարագույր...
Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ,
հավետ քեզ կապված՝ քեզ օտար եմ յես,
յերբ խենթ խնդությամբ փայփայում եմ քեզ՝
և՛ սիրում եմ քեզ և՛ քեզ չգիտեմ։

Սերն անհաղթելի մի հրապույր է, բայց միաժամանակ և «քաղցր սուտ», կնոջ հայացքը հաճախ «մեղմ է» և «քնքուշ», բայց ավելի ևս հաճախ կախարդական «մոգական»...։ Տերյանը սիրում է այդ կնոջ, բայց միաժամանակ և ձգտում է հեռանալ նրանից։ Ի վերջո միակ իդեալական կինը, վորը լինում է և պոետի նվիրական դիցուհին—«Ցնորք Աղջիկն» է, «Հրաշքների դիցուհին»—այն «տխուր քույրը», վորն ասում է նրան «մեղմ» խոսքեր, վորը յերազում է նրա հետ միասին և սպասում «հեքյաթային հեռուները»...։ Կանացիական «սուտի» հետ Տերյանը հաշտվում է ստեղծելով իր համար «Ցնորք Աղջկա» խորհրդավոր պատկերը։ Բայց ճիշտ այդպես հաշտվում է նա և «կյանքի սուտի» հետ։ Նա ստեղծում է ցնորքների մի աշխարհ, վոսկի հեքյաթ։ Նրա գրքի 3-րդ մասը այդպես էլ անվանվում է... Յեթե առաջ նա հուսահատորեն և տրտմորեն հեռանում էր կյանքից և միայնանում, այժմ նա անում է հակառակը։ Նա հաճախ զվարթ սրտով շրջում է մարդկանց մեջ միշտ խորասուզված իր նոր հեքյաթային հուշերի և խոհերի մեջ։ Նա ունի այժմ Վոսկյա Աշխարհ, վորի կախարդական և դյութական պատկերը նրա համար լուսավոր մի ասուպ է... Մարդկանց, ամբոխի մեջ նա այժմ այլևս հուսահատ չի զգում իրեն, վորպես առաջ. նա ունի մի «առանձնարան» իր հոգում, նա ապրում է վոսկե ցնորքներով. այդ պատրանքներն արդեն նրան յուրօրինակ ուժ և վոգևորություն են ներշնչում։ Նա ներկում է իր նվիրական Վոսկե Բե-

նարնջի գույներով և շրջապատը՝ փողոցները, քաղաքը, մարդկանց դեմքերը․․ Յեվ ամեն բան այժմ վառվում և և փայլում լուսավոր ճաճանչներով, ամեն բան այժմ այլակերպ և նկարվում. «առավոտը ժպտերես» է, յերևում է հաճախ կանաչ դաշտը, փըչում է գարնան զովաշունչ հովը—իսկ մարդիկ, այն մարդիկ, վոր առաջ անծանոթ և օտար եյին թվում, տաղտկալի և անգույն՝ այժմ դառնում են ավելի հետաքրքիր և ավելի մոտիկ… Պոետն ուշադրությամբ դիտում է և քաղաքի նոր բողոքող բնակիչներին և նրան թվում է, կարծես, վոր նրանք էլ սպասում են կախարդական հեքյաթային հեռուները՝ համակված վոսկե ցնորքներով, յերազներով։ Նա գոնե ցանկանում է այդպես յերևակայել նրանց․․․ Այդպես է արդեն Տերյանի հոգեբանությունը։ Կյանքը, իրականությունը նրա համար իրապես միշտ «աղոտ» է և այն ժամանակ է միայն դառնում «ընդունելի», յերբ շղարշվում է նրբահույս վոսկեթել վարագույրով, յերբ պարուրվում է նրբին պատրանքներով։ Նա ունի գույնզգույն գեղեցիկ մի ակնոց, վորի ֆանտաստիքական ապակիները լուսավորում են դյութական ճաճանչներով աշխարհը, մարդկանց… Իրապես նրա հոգեբանությունը մնում է և հետագա յերգերում միևնույնը, ինչ վոր «Մըթնաշաղի անուրջներում»։ Դա միևնույն մենակյաց ինտելլիգենտն է կտրված հասարակությունից և համայնական կյանքից։ «Այս աշխարհում» նա միշտ զգում է իրեն միայնակ և տխուր։ Նրա համար աշխարհը միշտ «աղոտ» է և առօրյա կյանքը պիտի դառնա հեքյաթային վորպեսզի բանաստեղծը կարողանա մոտենալ նրան։ Յեվ հենց դրա համար էլ, յերբ Վահան Տերյանը սպասում է հեքյաթային հեռուները, յերբ յերազում է «Ցնորք Աշխա» կամ «Վոսկե Աշխարհի» մասին—իրապես ամենևին չի հակասում իրեն, իր առաջվա յերգերին, վորովհետև հոգեբանորեն նա միշտ մնում է միևնույնը. նա դարձյալ հեռանում է մարդկանցից, փախչում անհայտ հեռուները։ Նրա յուրորինակ հաշտությունը կյանքի հետ առժամանակյա մի համակերպում է լոկ։ Ահա ինչու և նրա «Վոսկի Հեքյաթի» յերգերը միանգամայն հաշտ կերպով կենակցում են տխուր, նույնիսկ հուսահատ յերգերի հետ, ահա ինչու և ուրախ, զվարթ կոչերից հետո անմիջապես նա սկսում է անտըրտունջ, բայց հոռետեսի հայացքով դիտել իր շրջապատը։ Դարձյալ հիշում է նա իր տխուր հուշերը՝

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
—բարդիներն են բաց պատուհանիս տակ,—

դու չես, վոր դարձյալ թախիծով հիշում,
կանչում ես նորից կարոտով հստակ։
Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում
և շշնջում ես և անուշ շրշում,
պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում
ու գաղտնի սիրով սիրում ու հիշում։
Ջրերն են անվերջ միգում հեկեկում,
—իմ սիրտն է լալիս կարոտով անհուն,—
թվում է, վոր դու տխրությամբ անքուն
ինձ ես վորոնում աղոտ աշխարհում։

Այդ տողերի մեջ դարձյալ նշմարվում է պոետի մթնշաղային հոգին—հնչում են աշնանային տերևաթափի մոտիվները… Յեվ միևնույնը, պիտի ասել, յերևում է նույնիսկ Տերյանի քաղաքացիական յերգերում։ Յուրօրինակ տխրությամբ համակված են նույնիսկ նրա այն յերգերը, վորոնք կոչում են, քարոզում… Հաճախ թվում, է վոր պոետը վոչ այնքան դիմում է մեզ, վորքան ինքն իրեն, հաճախ թվում է, վոր նա համոզում է հենց ինքն իրեն զարթնել և արթնացած հոգով յերգել նոր և ուժեղ խոսքեր։ Յուրօրինակ յերկվություն նկատելի չէ նրա այդ յերգերում։ Այդ կարելի չէ պարզ տեսնել քննելով նրա բոլոր այն յերգերը, վորոնք համակված են նոր հովերով—նույնիսկ վերջին բաժնում («Վերադարձ») զետեղված մարտական տողերը…։

Բայց և այնպես, ի հարկե, շատ և շատ նշանակալից է այն, վոր այժմ պոետը վերադառնում է քաղաք։ Այժմ այլևս նա մի րոպե մոռանում է իր հին հուշերը և վառվում նոր հույզերով։ Այժմ նա ուղևորվում է քաղաքի հեռավոր փողոցները և ուշադիր դիտում, լսում շրջապատի աղմուկը և կյանքը…

Միշտ նույն խոհերի շշուկին հլու,
միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝
յես դուրս եմ գալիս նորից շրջելու
նեղ փողոցներն ու կրկեսները բաց։
Շփոթ նվագով աղմուկ ու սուլոց
շարժում են առաջ որը ժրաջան—
բոցոտ խնջույքով, ձուլված խինդ ու կոծ,
հյուսել են կյանքի կախարդված շրջան։
Հապճեպ հոսանքում և՛ մարդ և՛ անիվ
ալեկոծությամբ մի խայտանկար

խենթ փողոցների բավիղներն անթիվ
ջրերի նման խառնում են իրար։
Ամեհի ձայնով յերկաթն է խոսում,
պողպատն է ճչում շաչյունով դողդոջ
և բազմաղաղակ որերի լեզուն
հնչում է այստեղ վորպես մարտակոչ։

Դա մի քայլ է դեպի քաղաքի գործարանային բնակիչների մարտական շարքերը։ Հոգեբանորեն Վ. Տերյանը չի կտրվել իր անցյալ հույզերից—նա միայն մի ակնթարթ նետվելով աղմկալի փողոցները վարակվում է ալեկոծ հույզերով, վառվում է «նոր» մարդկանց մարտական տենչերով... Նա «իջնում է բարձրից» և վողջունում իր յեղբայրներին, վորոնք «հեռավոր յերկրային ուղիներում»—«հեռուներում և բանտում» պայքարում են ազատության համար։ Անշուշտ Տերյանն ապրում է այժմ հոգեբանական մի ճգնաժամ—կանգնած է յերկու աշխարհների սահմանագծի վրա. նա պիտի կամ ավելի ևս սուզվի իր ներքին աշխարհը, ավելի ևս համակվի մեռնող հասարակական տարրերի աշխարհատյաց մտահայեցողությամբ և պատրանքներով—կամ պիտի վերադառնա վերջնականապես քաղաք, փոխվի **հոգեբանորեն**... Թե վոր ուղիով կգնա նա, այդ չգիտենք։ Մենք կշեշտենք միայն, վոր քննադատի կամ հրապարակախոսի տված պատվերներով կամ հանձնարարություններով չէ, վոր պիտի կատարվի պոետի հոգեբանության եվոլյուցիան։ Պատվերները կարող են միայն ստեղծել ցամաք և տարտամ հրապարակախոսություն—այնինչ կարևորն է, վոր պոետն ինքը **հոգեբանորեն փոխե, իրապես վառվե նոր հույզերով յեվ տենչերով**։ Իսկ այդ հոգեբանական հեղափոխությունը կարող է կատարվել միայն բարեհաջող միջավայրում և նպաստավոր պայմաններում։

Բագու 1910

ՉԱՐԵՆՑԸ

I.

Հակառակորդներ և թշնամիներ շատ ունի Չարենցը։

Նրան քննադատում են և՛ «աջ»-ից և «ձախ»-ից։

Արտասահմանյան հայ եմիգրանտները խարազանում են Չարենցին «ձախության», իսկ մեր պրոլետարական պոետները կամ ավելի ճիշտ «դիրքականները» - «մանր-բուրժուական» թեքումների համար։ Յեվ յերկու կողմերն էլ մոլեգին կատաղությամբ ժխտում են Չարենցի տաղանդը—չնայած նույնիսկ նրան, վոր յերկու կողմերն էլ ամենամեծ ուշադրությունն են հատկացնում Չարենցին, և գրեթե ամեն անգամ ու ամեն առիթով խոսում են նրա մասին։

Դաշնակցական «տեսաբաններ»-ից, օրինակ, Չիլինկարյանը, Վ. Ահարոնյանը և Ոշականը մանրամասն ուսումնասիրություններ են նվիրել պոետի ստեղծագործության քննությանը։

Պրոլետարական պոետների ներկայացուցիչներից միևնույնն արել է Գ. Վանանդեցին «Մարտակոչ»-ում զետեղված իր հոդվածների մեջ։ Իսկ Գ. Հայկունին և Ազատ Վշտունին վոչ մի առիթ բաց չեն թողնում Չարենցին վորևե կերպ քննադատելու կամ անվանարկելու համար։

Յերկու անհաշտ և ներհակ այդ հոսանքների կողքին ստեղծվել է նաև քննադատների մի ուրիշ հոսանք, վորը, հակառակ հայ նացիոնալ-դեմոկրատներին և հայ «դիրքականներին», լիովին ընդունում է Չարենցին, և, յելնելով դրանից, մեծ գրական նշանակություն է տալիս պոետի ստեղծագործության։ Բավական է միայն հիշել այստեղ Պ. Մակինցյանի, Սուրխաթյանի, Սուրեն Յերզնկյանի, Սիմ. Հակոբյանի և Ար. Չոպանյանի հոդվածներն ու ուսումնասիրությունները։

Կարծես այնքան էլ քիչ չէ այդ բոլորը մեկ պոետի համար—և այն էլ ընդամենը յերեք կամ չորս տարիների ժամանակամիջոցին։ Թերևս Չարենցը միակն է մեր նորագույն հեղինակ—

ների շրջանում, վոր կարողացել է կարճ ժամանակվա ընթացքում գրավել հասարակական ուշադրությունը։

Փաստն ինքնին արդեն խոսում է Չարենցի օգտին։

Այնպես թե այնպես՝ մեզ մոտ կա լայնագույն մի լսարան, վորը մեծ ուշադրությամբ, սիրով և հետաքրքրությամբ հետևում է այդ կիսավայրենի, սկյութացու բիրտ բնավորությամբ օժտված տաղանդավոր պոետին և սպասում է նրանից նոր և նոր խոսքեր, նոր, ավելի սուր տողեր և յերգեր։

Ա. ՊՐՈԶԱՆ

Չարենցը պետք է հանդես գար։

Դեռ այն ժամանակ, յերբ բանվորական շարժումը Կովկասում նոր էր միայն ծավալվում և յերբ վողջ հայ գրականությունը տարվում էր ազգայնացման ռոմանտիզմի և հոռետեսական ինդիվիդուալիզմի հույզերով, մեզ մոտ շեշտվում էր նոր պոեզիայի կազմակերպման անհրաժեշտությունը։

«Նոր ուժի» —«չորրորդ դաս»-ի գալիք պոետը պետք է կարողանար արդիցլոն հին մոտիվներին հակադրել իր **նոր** խոսքը, հակադրել վոչ միայն դատարկահնչյուն վոտանավորներով, այլև ավելի կոնկրետ պատկերներով, ավելի ակտիվ և հայ իրականության պայմաններին մոտ մեթոդներով։

Նա — այդ «նոր» պոետը պիտի կարողանար շաղկապել հասարակական նոր ուժի միջազգայնությունը ասիական Արևելքի կոլորիտով — և հենց այդ կոնկրետ ֆոնի վրա էլ հյուսել իր հեղափոխական յերգերն ու պատկերները։ Յեվ այդ բոլորը կատարել առանց հայ մեշչան հասարակության հատուկ լալկանության կամ սանտիմենտալիզմի — գուցե մի փոքր անտաշ, մի փոքր կոպիտ, սակայն առաջ շարժվող և անդադար պայքարող, ժողովրդական մասսաներին հարազատ՝ կտրուկ լեզվով և վոճով։

Չարենցը — ահա հենց այդ պոետն է։

Մեր եպոխայի և մեր եպոխայի առաջամարտ ուժի — «չորրորդ դաս»-ի **պոետն ու նկարիչը**։ Հենց այն պոետը, վորի գալուստը վաղուց ի վեր նախատեսել են մարքսիզմի առաջին ուսուցիչները կովկասահայ իրականության մեջ։ Այն պոետը, վորի պոեզիան և ստեղծագործությունը պետք է հիմնավորեր արվեստին հատուկ պրիզմաներով մարքսիզմի հաղթանակը հայ կյանքում։

Չարենցը պիտի համարվի այդ պոետը նաև նրա համար, վոր նա է միայն կարողացել կիրառել պրոլետարական շարժման սկզբունքները հայ միջավայրի առանձին պայմանների մեջ և լսեցնել իր յերկերն իրական կյանքից, հողից և ռեալական միջավայրից հանված կենդանի պատկերներով։

Այդ կողմից նրա դերը հավասարազոր է Րաֆֆիի կատարած գործին — այն տարբերությամբ միայն, վոր **Րաֆֆին հիմնավորել է հայ նացիոնալիզմի յեվ ազգայնական մեսսիանիզմի շարժումը, իսկ Չարենցը այդ նացիոնալիզմի դեմ է ուղղել իր գրիչը յեվ խոսքը**։ Դրա համար էլ նրա «Յերկիր Նայիրին» կարող է ամենայն իրավամբ հակադրվել Րաֆֆիի «Խենթ»-ին։

Այն, ինչ վոր յերգում և փառաբանում է «Սամվելի» հեղինակը, վորպես բարձրագույն հասարակական իդեալ — «բաքի, հին անցյալը», ռոմանտիքական գույներով լուսազարդված հին ավատական Հայաստանը, Նայիրյան «հզոր» և «մեծ» Հայաստանը Չարենցի մոտ փլչում է, քանդվում է անհետանում սապոնե բշտիկների նման և ցցվում իր իսկական եյությամբ, վորպես հասարակական մի խիմերա «**ուղեղային մորմոք**»։

Իզուր չէ պոետը խոշորագույն իր գործը մկրտել «Յերկիր Նայիրի» անունով։

Դա — այն անունն է, վորով հայտնի էր հին ուրերին վաղեմի Վասպուրականը, Վանա լճի շուրջն ընկած «մեծ» և «հզոր» նախահայկական ուրարդական այն պետությունը, վորի ֆանտաստիքական տեսիլներն այսօր էլ լեցնում են հայ բարեմիտ քաղաքացու սիրտը առանձին հրճվանքով։

«Յերկիր Նայիրին» յերգել է և Վահան Տերյանը։

Տերյանի համար «Նայիրյան աշխարհը» յեղել է «Վոսկե հեքիաթ», «Ավետյաց յերկիր», ապագա և «հոգևոր» Հայաստանի սիմվոլիքական մեկ խտացումը։

... «Յերկիր Նայիրի» իմաստն է յերազել և վողջ հայ քաղքենիությունը, և մտավորականությունը գրեթե կես դարից ավելի և վառված այդ յերազով էլ նա մոտեցել է առօրյա բոլոր խնդիրներին։ Ամեն տեղ և ամեն վայրկյան, գործի ժամանակ և արհեստանոցում, ակումբներում և սրճարաններում նա, այդ միջին սովորական հայ մտավորականը, առաջադրել է իր ազգային մեսիանիստական քարոզը և կոչ է արել խմբվել հենց այդ իդեալի շուրջը։

Բայց ահա գալիս է անողոք ժողովուրդը, գալիս են վարի

ձիավերը և մեսսիանիզմի առաջվա զոհերը և, քանդելով պոետիքական ցնորքների կախարդական ցանցը, դեն են նետում այդ ցանցը հյուսողներին ու մերկացնում են Նայիրյան աշխարհի ներքին դատարկությունը...

Յեվ դրա հետ միասին գալիս է և պոետը, վորը մերկացնում է արվեստագետի նուրբ ստիլետով Նայիրյան աշխարհի թշվառ առօրյան և, ծիծաղելով ու **ռամկորեն** ծաղրելով անցյալի մանեկեններին, կոչ է անում կառչել ավելի ամուր կերպով «կոշտ ու կոպիտ կյանքին»:

Ընթերցողը, վոր համբերություն կունենա մինչև վերջը կարդալ Չարենցի գործը, անհրաժեշտաբար պիտի հանգի ռեալիստական այդ յեզրակացությանը:

... Ի՞նչ էլ լիներ դոխտուր Արշակի կարծիքը, ասում է իր վեպի վերջում ինքը Չարենցը, մի բան պարզ է մեզ համար և այդ պարզ բանն այն է, վոր վաղուց արդեն պատմությունը,— այդ, կարծում ենք, ավելի հանճարեղ բժիշկը, քան դոխտուր Արշակը,— պրակտիկայում կիրառել է վերոհիշյալ միջոցը և չենք կարծում, վոր պատմության այդ փորձերն ապարդյուն են անցել, արյուն, ճիշտ է, շատ է հոսել, սակայն **կենդանի** մնացածներն արդեն ազատ են վերոհիշյալ **ուղեղային մորմոքից ու սրտի հիվանդությունից յեվ այսոր իրենց յերկիրն են շինում— մի յերկիր սակայն, վորի գոյական լինելը նշելու համար կարիք չկա դիմելու Մանուկ Աբեղյանին, վորովհետեվ այդ պարզապես տեսնում են բոլոր նրանք, ովքեր գործ ունեն հողի ու աշխատանքի հետ**... («Յերկիր Նայիրի» 3 րդ մաս. «Նորք» 1925 թ. գիրք 5, էջ 65—66):

Այսպես է վերջացնում Չարենցն իր «Յերկիր Նայիրին»: Յեվ պետք է ասել, այդ վերջաբանը բղխում է անմիջապես «վեպ»-ի ընդհանուր բովանդակությունից — յեթե միայն կարելի յե «վեպ» անունը տալ այդ տարօրինակ արտադրությանը:

«Յերկիր Նայիրին» իրապես չի կարելի անվանել վոչ «պատմվածք» սովորական իմաստով, վոչ «նորավեպ» և վոչ էլ «վիպական» գործ: «Յերկիր Նայիրին» չունի վորևէ վորոշ ֆաբուլա: Դա ավելի շուտ «պատմություն» է, մի պատմություն, վոր գրված է եպիքական գործի պարզությամբ և վորի իրոնիական տողերի մեջ հաճախ յերևում է ամեն ինչ ջախջախող հեղինակը... Յեվ չնայած դրան, Չարենցի վեպը տալիս է հին Հայաստանի— յերեկվա Նայիրյան Հայաստանի պատկերը: Նրա բոլոր հերոսները և այդ հերոսների խոհերն ու արկածները կարծես անցնում են մեր աչքերի առաջ, այնքան արտահայտիչ ներկերով են նկարված նրանք: Իզուր չէ դաշնակցական «Հայրենիք»-ի մատենագիրը զայրացել...

Այդ տխմար միջավայրում խեղդվող հերոսների մեջ նա նշմարել է իրեն և իր ընկերակիցներին: Յեվ դրա համար էլ չափազանց զայրացել է անդուրեկան ճշմարտությունների արձանագրող հեղինակի լուսանկարների դեմ:

* * *

Ամենից, բնորոշը սատիրական այդ պոեմայի մեջ այն է, վոր այդտեղ կա և լրջություն և իրոնիա: Պատմողն ինքը նայիրեցին է, Նայիրյան աշխարհի շատ սովորական քաղաքացին: Յեվ պատմում է նա իր **սեփական** լեզվով, իր տերմիններով, իր վոճով: Բայց միաժամանակ դրա հետ այդ պատմողի կողքին ընթերցողը նշմարում է անկյունում կանգնած հեղինակին, վորը կարծես մեֆիստոֆելյան ժպիտը դեմքին հետևում է իր հերոսի պատմությանը և Նայիրյան աշխարհի անցուդարձին:

Դրանումն է Չարենցի պրոզայի յուրօրինակ ուժը: Սկզբից մինչև վերջ դա «հրապարակախոսություն» է և վորպես այդպիսին, սկզբից մինչև վերջը լի յե քննական սուր տրամադրությամբ: Սակայն, այդ բոլորը չի վնասում ամենևին գործի գեղարվեստական կառուցվածքին և ամբողջությանը:

Նկարները և պատկերները մնում են կենդանի և հյութեղ: Առանց իմանալու նույնիսկ, թե վոր քաղաքումն են կատարվում հեղինակի նկարագրած դեպքերը, մենք ճանաչում ենք այդ քաղաքը, ուր ամեն ինչ ընթանում է դանդաղ տեմպով, դարերի ընթացքում հաստատված կանոնների հիման վրա, մի անգամ ընդմիշտ ընտրած քարե հունով — և առանց վորևէ պայքարի...

Վեպի մեջ գործող բոլոր հերոսներն էլ մեզ հայտնի է, կարծես, վաղուց ի վեր ծանոթ դեմքեր են: Գիտենք դրանց: Դեռ մի յերեք, հինգ տարի առաջ դրանք բոլորը յերևում էին մեզ «լուրջ» և բնականոն մարդիկ: Այժմ դրանք զավեշտական և «տարօրինակ» են բոլորն էլ: Յեվ մենք հասկանում ենք հեղինակին, վորը կանգնած իր հերոսների կողքին ծիծաղում է և ընդգծում է դրանց «նայիրականությունն» ու շեշտակի կերպով մերկացնում անցած օրերի թշվառագույն տիրակալների կյանքի

տափակությունը։ Մերթ ընդ մերթ, յերբ հետևում ենք Նայիրյան աշխարհի հերոսների այդ քայլերին ու խոսքերին, թվում է նույնիսկ, թե դրանք կենդանի մարդիկ չեն, այլ ինչ վոր մեռած քաղաքի ստվերներ, ինչ վոր դիմակներ և մանեկեններ...

Բայց և այնպես, յեղել են նրանք, իրապես ապրել և խորհել են այդ մարդիկ, նայիրցիներ, Նայիրյան հասարակայնության ներկայացուցիչներ և պաշտպաններ։

Լավ ենք տեսնում մենք և պատմա-աշխարհագրական ֆոնը—այն քաղաքը, վորը թատերաբեմ է հանդիսացել անցյալի այդ ներկայացուցիչների համար։ Չարենցի ուժն իմիջիայլոց կայանում է նրանում, վոր նա արտասովոր թափով կարողանում է ստեղծել միքանի ընդհանուր գծերի և շեշտերի միջոցով չափազանց սուր և խիստ պատկերներ, դեպքեր ու դեմքեր։ Յեվ դրա համար չի դիմում վորևե առանձին բարդ պրիոմների... «**Նայիրյան այդ հնամյա քաղաքը**, այդպես է սկսում իր պատմությունը Չարենցը, **ամեն ինչով նման էր նայիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին, փոքր էր, վոչ բազմամարդ, խառնուրդ ու փոշոտ—ժամանակակից լեզվով այդպիսի քաղաքներին** ասում **են գավառական հետամնաց քաղաք**»։ Կարճ. այդ խոսքերով արդեն գծվում է ընդհանուր ֆոնը։ Յեվ ապա ճիշտ այդ ձևով էլ նկարվում են «Նայիրյան քաղաքի» բնորոշ անկյունները—«**ցածլիկ, մի հարկանի, տափակ կտուրներով**» **տները** և այդ տների «միօրինակ տափակության» մեջ աչքի զարնող միքանի նոր տներ, վորոնք ունեն արդեն «թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ». բերդը, Վարդանի կամուրջը։ Առաքելոց յեկեղեցին... Նայիրյան այդ տների և հիմնարկությունների մեջ ցրված են խանութները և «հասարակության» հավաքատեղիները—«**Մազութի Համոյի**» գրասենյակը, «վորսորդական ապրանքներ» վաճառող **Նշան Մառանկոզյանի** խանութը և այլ նման անկյուններ։ «Մազութի Համոյի» գրասենյակը «Նայիրյան գործերի կենտրոնն է»։ «**Մազութի Համոն**»—ամենախելացի և գործունյա անձնավորությունն է ամբողջ քաղաքում, դիրքի տեր է, ռոճիկավոր պաշտոնյա չէ թեկուզ՝ բայց սեփական տուն ունի և միջից էլ հող,—մի խոսքով, հարուստ է, խելացի, հասարակական լայն կապեր ունի, և վոր ամենագլխավորն է, **Մազութի Համոն** անդամ է .. «Ընկերության»—և այն էլ ազդեցիկ անդամ... «Նա արտասահմանից» «Դրոշակ» է ստանում և գաղտնի կերպով տարածում ժողովրդի **ստորին** խավերում։ Գավառապետը գիտե այդ և «Համո-

Համբարձումովիչի հեղափոխական գործունեության վրա մատների արանքից է նայում և—համարում է այդ «**միամիտ չարաճճիություն**»։

Յես դիտավորությամբ բերում եմ հենց Չարենցի խոսքերը, վորովհետև նրանք լավ են ուրվագծում մեր իրականության մեջ մի ժամանակ իշխող ամենաժողովրդական տիպերի բնույթը։ Կարդացեք «Հայրենիք»-ում գետեղված Աբրամ Գյուլխանդանյանի հոդվածաշարքը Բաքվա դաշնակցականների մասին և դուք կըտեսնեք, վոր «**Մազութի Համոն**» իրական և վոչ մտացածին մի տիպ է։

Նայիրյան քաղաքում «Մազութի Համոյի» հետ մրցում է **Նշան Մառանկոզյանը**։ Շատ սուր է նկարում Չարենցը այդ նայիրցու խանութը, «վորի ցուցանակի վրա նկարված կային յերկու հրացան, յերկու փախչող նապաստակ, մի ձիու պայտ և մի հատ էլ չգիտես—ձիու թե շան գլուխ՝ պայտի մեջ մտցրած։ Այսպիսի մի նշանավոր ցուցանակ ուներ այդ խանութը և ցուցանակի վրա, վերոհիշյալ նկարների միջտեղը, գրված էր ռուսերեն՝ Магазин «Охота» Нишян Маранкозян։ Այս նշանավոր ցուցանակը կպցրած էր խանութի ճակատին, սակայն խանութի լայն վիտրինի աջ և ձախ կողմը կպցրած կային յերկու ուրիշ ցուցանակներ, վորոնց վրա՝ թեկուզ նկարներ չկային, բայց գրությունը հայերեն էր. «**Ծախում եմ վորսորդական զանազան**»—գրված էր մեկի,—և «ապրանքներ Նշան Մառանկոզյան»—մյուսի վրա։ Յեվ ահա այդտեղ էլ էին հավաքվում նայիրցիները։ Հետագայում «Նշան Մառանկոզյանը» գնում է Բուլղարիա՝ **ամբողջովին հեղափոխական գործին նվիրվելու**, իսկ նրա պատմական անցյալ ունեցող հեղափոխական խանութում **բիթլիսցի Օրսակի յեղբայրը՝ Ամերիկայից վերադարձած բիթլիսցի Մանուկը հիմնում է «Տիր» կոչված հիմնարկությունը**։

Այդ բոլորը կատարվում է «գավառական քաղաքում», վորի բնակիչները «յելնում են, յելնում են տներից ու քայլում են դանդաղ, անշտապ»։

...Ու բացվում են խանութներն իրար յետևից. հացագործ, մանրավաճառ, կոշկակար, կողքին՝ մրգեղենի խանութ, կողքին՝ կտորեղեն, խալիներ, բրինձ։

Մուգ ներկերով է նկարված խանութների այդ շարանը և նրանց ընդհանուր պատկերը վեպի առաջին մասում։ Պատկերը հիշեցնում է Գոգոլի և Լեսկովի մանրակրկիտ նկարները։ Նա

տալիս է Նայիրյան աշխարհի ընդհանուր վոգու բնորոշումը— նրա առօրյա կյանքի զանազան մոմենտների, նրա բարքերի, սովորությունների, ձգտումների և տենչերի նկարագրությունը։

Վոչ մի դետալ հեղինակը բաց չի թողնում։ Նա մանրամասնորեն նկարում է և փողոցը, և խանութները և գավառական քաղաքի «ամբոխի կյանքը»։ «Առավոտվա կանուխ պահերին, ասում է նա, յերբ գյուղերից յեկած հոսանքը դեպի մեյդան է շտապում, փողոցի յերկու կողմը շարված խանութները շատ չնչին ուշադրության են արժանանում դեպի մեյդան շտապող գյուղացիների կողմից, վերջը, կեսորից հետո, յերբ իր բարիքը ծախած գյուղացին յետ՝ դեպի գյուղ է շտապում նույն Լորիս-Մելիքյան փողոցով—**այս անգամ վոչ թե փողոցով**—այս անգամ վոչ թե մեջտեղով, ինչպես այդ վայել է սայլերին ու նախիրներին, այլ մայթերի վրայով»։

Յերկար շարքերով անցնում են այդ ֆոնի վրա մարդիկ՝ «Հաջի Ոնիկ Մանուկօֆ Եֆենդին», «մանրավաճառ Պողոս Կոլոպոտյան», «Կաթոլիկ Սիմոնը», «գինեվաճառ Նիկոլ Արզումանովը», «վարսավիր Վասիլը»...

Յեվ ահա զանգաղաշարժ, պրիմիտիվ և նեղ այդ միջավայրում էլ ծլում է «**ուղեղային մորմոքը**»—յերազը «Նայիրյան աշխարհի» մասին, այն օրերի մասին, յերբ «կենդանան **սոխերը**» և նորից կհաստատվի «հայկական թագավորությունը»։

Եվ միևնույն այդ միջավայրում էլ Նայիրյան այդ հեղափոխականությունը շաղկապվում է սերտորեն Նայիրյան պրիմիտիվ առօրյա բամբասանքների, մանր հանցանքների և անիրավությունների, մանր ստորությունների և ամենազազրելի արարքների հետ։

Յեվ այդպես էլ ընթանում է կյանքը։

Մարդիկ առավոտը յելնում են, դանդաղ կերպով, «**հոգսերով**» ծանրաբեռնված գնում են խանութ կամ տուն, հանդիպում են միմյանց, բամբասում են, «Նարդի»-ի շուրջը հավաքվում և խաղում միմյանց մինչև յերեկո... և հետևյալ օրը նորից կրկնում են այդ բոլորը...

«Յերկիր Նայիրի»-ի յերրորդ մասը նվիրված է հենց դրան— Նայիրյան աշխարհի կախարդական այլափոխության։

Անցնում են «Նայիրյան անդորրության և խաղաղության» «օրերը»։

Բռնկվում է հեռավոր հյուսիսում հեղափոխությունը։

Նայիրյան քաղաքը մնում է, իհարկե, անդորր, թեև Նայիրցիները գիտեյին, լսել եյին, վոր ինչ—վոր բան պատահել է **ներսերում**, բայց այդ մասին վախենում եյին խոսել.—**իրենց գործը չէ**։ Յերեք օր եր արդեն, վոր պատվում եյին շշուկները...

Յեվ ահա մի օր քաղաքում գտնվող զորքերն սկսում են շարժվել։ Նայիրցիները խանութները փակում են։ Յեվ աշխատում են իրենց զանդաղաշարժ ուղեղների միջոցով բացատրել նոր յերևույթը։ Տաղանդավոր կերպով է նկարագրել Չարենցը պրիմիտիվ Նայիրյան այդ տարակուսանքը նոր դեպքերի հանդեպ։

— **Հը, բան մը կհասկընա՞ք սա ղալաբալըղեն**,—հեգնախառն հարցրեց Հաջի Ոնիկ եֆենդին սրճարան մտնելով, -«Ընչի՞ չենք հասկընա վոր»—կտրուկ պատասխանեց տելեֆոն Սեթոն։ «**Ջարքին պրիկազ է եկե որ ռեվոլյուց ընեն**»։—Վերջացրեց Սեթոն, ու **տիրեց լռություն**։ Հեռվից, գավառապետի բնակարանի կողմից, լսվեց մի հազար բերան «ուռռա». գրոհի գնացող զինվորների ցնծալից ու ահավոր աղաղակ եր դա... («Նորք» V, եջ 21)։ Այլ կերպ չի կարող լուսաբանել հայկական այդ Միրգորոդի բնակիչը կատարվող բարդ յերևույթը։ Նա զգում է միայն, վոր ինչ-վոր կետ նրա վոտքերի տակ ցնցվում է, սարսափով հետևում է «հեռավոր աղմուկին» և աշխատում է յուրաձև կերպով բացատրել յերևույթները—«**կըսեն բերդեն թոփ յեն կապե նաչալնիկի տունը**»—արտահայտեց ընդհանուրի միտքը պ. Արտ-մարշը, վոր նույնպես գտնվում եր սրճարանում, բայց հավանություն չգտավ։— «**Ջեվզեկ զեվզեկ չխոսես նե, հայվան, քո ինչ խառնվելու գործդ է**», բարկացավ Հաջի Ոնիկ եֆենդին ու ավելացրեց, մի փոքր լռելուց հետո, չոր ու խրատական—«**Աս սինֆլ որներ ու զուռնան յեսքը կիմանանք, յավրում**»—ու դուրս գնաց ձեռնափայտը գետին խփելով—չոր ու խրատական» («Նորք», եջ 21)։

Յես չեմ կանգնում այլևս փառահեղ տաղանդավոր, ռեալիստ նկարիչներին հատուկ, ներկերով գծված մյուս եջերի վրա, վորոնք արտասովոր շեշտով տալիս են յերեկվա Հայաստանի տիրակալների խիստ սուր պատկերը։ Չարենցը նկարագրական իր այդ ձևով և «վեպի» ընդհանուր կառուցվածքով, հիրավի, նոր եջ է բաց անում մեր գրականության համար։

Յուրաձև այդ մոտեցումով նա կարողանում է նկարել յերկու աշխարհի—հնի ու նորի—այնքան բնորոշ բաղխումը Նայիրյան խաղաղ անդաստանում։ Յեվ միաժամանակ այդ բոլորի հետ—օբյեկտիվ նկարագրական տողերի հետ միասին կարողա-

նում է տալ հին այդ աշխարհի քայքայման, տարրալուծման և մահացման պատկերը։

Դրանումն է գուցե «Երկիր Նայիրի»-ի տարբերությունը Ակ. Իսահակյանի **«Ուստա Կարո»-յից**։ Ես Իսահակյանի այդ գործի բոլոր կտորները չեմ կարդացել։ Իմ ձեռքն են անցել միմիայն «Արեգ»-ի և «Հայրենիք»-ի մեջ զետեղված մի քանի գլուխները։ Այդտեղ կան տաղանդավոր էջեր։ «Գյումրին», ավելի ճիշտ «Հին Գյումրին» և «հին գյումրեցիները» պատել են իրենց հարազատ նկարչին հանձին Իսահակյանի։

Բայց Իսահակյանը—նկարիչ չե միայն, այլ նաև հրապարակախոս և այդ հրապարակախոսն էլ գունավորել է ուրույն ռոմանտիկական կոլորիտով «Ուստա Կարոների» կյանքը։ Նա չի նկատել կամ, ավելի ճիշտ, չի ցանկացել տեսնել հայրենի քաղաքի **տիղմը**։

Չարենցը—այդպես չէ։

Նա տեսնում է այդ **տիղմը**։ Գծում է հենց այս տղմոտ միջավայրն ամենից առաջ, ծաղրում է, նշավակում և խարազանում.

Դրանում է կայանում նրա վեպի հասարակական հեղափոխական մեծ արժեքը։

Նայիրյան աշխարհը Ակ. Իսահակյանի մոտ լուսաբանվում է իդեալիստական տեսակետից։

Չարենցի մոտ այդ աշխարհը գծվում է այնպես, ինչպես նա կա—իր կոշտ և իսկական էությամբ։ Եվ հենց դրանով էլ նրա նկարը դառնում է հին աշխարհի դեմ ուղղված ամենասուր քննադատությունը։

2. Պ Ո Ե Տ Ը.

Եղիշե Չարենցի բանաստեղծությունների մասին քիչ չէ գրվել մեզ մոտ։ Բայց և այնպես, այժմ էլ նրա պոեզիան համարվում է վոչ այնքան «անաղարտ» և «մաքուր»։ Հենվելով պոետի **Նախնական** գործերի վրա, «դիրքականները» գտնում են, վոր իր հոգեբանությամբ Չարենցն ավելի մոտ է «մանր-բուրժուական» բանաստեղծներին և չի կարող յերբեք արտահայտել Հոկտեմբերյան հեղափոխության մոտիվները։

Առաջին նվագ վճռական այդ պնդումը թողնում է վորոշ տպավորություն։ Անցյալում Չարենցը, հիրավի, ապրել է գաղափարական վորոնումների մի շրջան։ Ունեցել է նաև թեքումներ։

Վորքան էլ անցողակի և պատահական բնույթ են կրել այդ յերերումներն, այնուամենայնիվ նրանք մի վորոշ տեղ են գրավել բանաստեղծի հասարակական-գրական գործունեյության ընթացքում։ Ահա ինչու Չարենցի ստեղծագործության լուսաբանության և բնորոշման համար անհրաժեշտ է սկսել հենց այդ անցյալից։

*
* *

Իմ ձեռքիս են Չարենցի յերկերի առաջին ժողովածուներից յերկուսը — «Ծիածանը» և «Տանթեական առասպելը»։

Այնտեղ—յերիտասարդ Չարենցն է, այն Չարենցը, վոր կապված է տակավին ազգայնական ռոմանտիկական և անհատական սիմվոլիստական ուրույն հայեցողության հետ։ «Տանթեական առասպել»-ի մեջ Չարենցը գտնվում է կոտորածների ազդեցության ներքո ու չի կարողանում սառն սրտով անցնել իր աչքերի հանդեպ կատարվող ավերի և կոտորածի կողքից...

...Իսկ մենք ապրում ենք ու շնչում ենք դեռ
Այս խայտանկար, ավերակ գյուղում,
Ուր ամեն տան մեջ մահ է ու ավեր,
Ուր ամեն վայրկյան արյուն է ցողում։

Պրիմիտիվ է բավական նաև մյուս ժողովածուն—«Ծիածանը», վորը բնորոշում է ավելի քնարերգու Չարենցին։ «Ծիածան»-ի յերգերը մտել են նրա բանաստեղծությունների ժողովածուի առաջին հատորի մեջ (**Եղիշե Չարենց**՝ Յերկերի ժողովածու, հատոր առաջին. Մոսկվա, 1922 թ. եջ 83 114)։

Այդտեղ տեսնում ենք առաջին շրջանի Չարենցին։ Հեղինակն իր գլխավոր ուշադրությունը դարձնում է բանաստեղծության զուտ արտաքին, ձևական կառուցվածքի վրա։ Ենթարկվելով մեծագույն չափով սիմվոլիստ պոետների ազդեցությանը, Չարենցը մերթ ընդ մերթ ջանքեր է անում թոթափելու սիմվոլիստական պոեզիայի այդ լուծը, բայց այդ նրան շատ քիչ է հաջողվում։

«...Ու տրտում եյին քո աչքերը թաց,
ու մթնում եյին գույներն իմ հոգում,
յերբ վերջին անգամ տրտմորեն ժպտաց
դեմքդ մշուշում մանուշակագույն...
Եվ քո թաց, վճիտ, ցողոտ աչքերում,

լույսի ճաճանչներ ճախրելով անցան—
ու բացվեց հանկարծ միգամած հեռուն՝
քո չինջ աչքերում—պայծառ ծիածան...

Այժմ յերևի Զարենցն ինքը կզարմանա յերեկվա միամիտ Զարենցի վրա։ Այսօր ինքը Զարենցը բողոքում է և պայքարում Վահան Տերյանի դեմ։ Սակայն և այնպես, Տերյանի ուղիով է ընթացել նա ինքն իր գործունեյության նախնական շրջանում։

Բանաստեղծությունների վերնագրերն արդեն ցուցադրում են Տերյանի զորավոր ազդեցությունը։ Զարենցի յերգերի մեկ հավաքածուն, օրինակ, կոչվում է «Եմալե պրոֆիլը ձեր», և դրա մեջ մանում են՝ «Սոնետ», «Գալանտ յերգեր», «Տրիոլետներ»։ Իսկ հետո գալիս են՝ «Գիտեմ, վոր մի օր կմեռնեմ», «Տաղ անձնական», «Վոսկեփրփուր-վոսկեպուրպուր», «Աշնանային», «Աշունը դեղնաթուխ» և այդպես անվերջ։ Անհատական հույզերի և ապրումների տարբեր ձևի և գույնի յերգեր են դրանք։ Նկատելի չե, վոր Զարենցը շարունակ վորոնում է, մշակում և քննում տարբեր ձևերն և ընտրությունից ընտրության անցնում։ Կան կտորներ, վորոնք գրված են խոր զգացումով և կառուցված հմուտ ձեռքով։ Յեվ այդ, չնայած նույնիսկ նրանց ուրույն իդեոլոգիական բովանդակությանը։

Առանձնապես հետաքրքրական է առաջին շրջանի բանաստեղծությունների մեջ Վահան Տերյանի հիշատակին նվիրված բանաստեղծությունը։

«Վահան Տերյան, ինչպես յերգեմ հիշատակը քո,
Թող լուռ փայլի հիմա իմ դեմ անլույս յերեկո։
Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,
քամին բերե և թող մահվան բոթ ու անձրևը լա։
Յեվ թող թափվեն շուրջս աշնան տերևները դեղին,
և զարդարեն, Վահան Տերյան, քո անցած ուղին։
Ու մշուշում տխուր յերգով բյուրավոր զանգեր
Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր...»

Այդպես է Զարենցն իր գրական-գեղարվեստական գործունեյության նախնական շրջանում։

Նա—սիմվոլիստ պոետ է, Տերյանին կապակցող և Տերյանին հետևող... Ծաղրածանել դրա համար այժմ—և այսօրվա արգումենտներով ու տվյալներով, կլիներ միամտություն։ Դա նույնպիսի մի միամտություն է, յեթե վերցնենք «պրոլետարական» հեղինակներին և հանդիմանենք նրանց իրենց անցյալի համար։

Զարենցը, վորպես ամեն մի կենդանի անհատ, ունեցել է զարգացման վորոշ ուղի և անցել է նախնական կազմակերպման մի էտապ։ Անհրաժեշտաբար նա յենթարկվել է տիրող գրական գեղարվեստական հոսանքների ազդեցությանը։ Յեթե այսօր և այժմ էլ նա կրկներ այդ ուղիները, դա կլիներ, իհարկե, անախրոնիզմ—բայց անցյալում և անցյալի ինքնահատուկ պայմաններում դա բնական և հասկանալի մի «թեքում» եր։

Այստեղ տեղին կլիներ շեշտել այն, վոր առհասարակ Զարենցը չափազանց դյուրազգաց է և շատ հեշտ է յենթարկվում «մոդա»-յին։

Զարենցի բնավորության և խառնվածքի մեջ անկշռականությունն արտահայտված է բավական վորոշ։

Ահա օրինակ—«Ասպետական»-ը։ Չենք կարող հասկանալ՝ ում համար և ինչու յե նա գրել այդ «բալլադ»-ը։ Յերևի ապացուցելու համար, վոր ինքն ընդունակ է և կարող է այդպիսի գործեր ևս արտադրել։ Բայց միթե դրա համար հարկավոր եր անպատճառ տպագրել այդ «բալլադ»-ը «Նորք»-ում, վորն այսպես թե այնպես արտահայտիչն է համարվում «նոր իդեոլոգիայի» և «հեղափոխական մարքսիզմի»։ Յեվ միթե «Ասպետական»-ը հակահասարակական իր էրոտիզմով և շատ սովորական «սալոնական» տրամադրությամբ կարող է հաշտ կերպով կենակցել պոետի ընդհանուր հեղափոխական հայեցողության հետ։ Վոչ, իհարկե։

Մնում է, հետևաբար, անել միայն մի յեզրակացություն։ Ըստ յերևույթին պոետը չի կարողացել համբերել, տարվել է արվեստագետներին հատուկ էստետիկական ինքնախնդրությամբ և վորոշել է փորձել իր ուժերը հին ձևի մշակման մեջ ևս։

Բայց այդ պարագայում անհասկանալի յե դառնում հեղինակի հետագա սայթաքումը—այս անգամ արդեն դեպի ֆուտուրիզմը։ Իմ խոսքը Զարենցի «Ռոմանս անսեր»-ի մասին է, վորն ըստ եյության նույնպիսի մի «խաղ» է, ինչպես և «Ասպետական»-ը։

Գրեթե միաժամանակ հրատարակված այդ յերկու գործերը գտնվում են հակադիր բևեռների վրա։ Յեվ պոետն ինքը քայքայում է իր վոտքերի տակ հաստատված ամուր հեղափոխական պատվանդանը, յերբ բոհեմական քմահաճույքի համար լույս աշխարհ է հանում նմանօրինակ գրվածքներ։

Դժբախտությունը նրանումն է, վոր այդ տեսակ ժամանա-

կավոր «սայթաքումներն» էլ անհետևանք չեն մնում: Նրանք ստեղծում են մի կողմից չափազանց միամիտ և տգետ հետևորդների վորոշ կոնտինգենտ, իսկ մյուս կողմից էլ ուժեղացնում են հակառակորդների և տգետ թշնամիների բանակը: Յերկու պարագաներում էլ ստեղծվում է թյուր և միանգամայն սխալ տեսակետ պոետի աշխարհայեցողության, իդեոլոգիայի և ստեղծագործության մասին:

Կասկածից դուրս է այն, վոր այդ բոլորն զգում է ինքը Չարենցը: Նրա **վերջին** գործերն ավելի քան վորոշ կերպով ապացուցում են, վոր պոետն **ընտրել է արդեն իր ուղին** և վերջնականորեն հարել է այն առողջ ռեալիզմին, վորի ամենաուժեղ արտահայտություններից մեկն է «Յերկիր Նայիրին»:

* * *

Գուցե հենց նրա համար, վոր Չարենցն անցել է նախորդ այս շրջանը—այնքան ուժեղ և ամուր է նրա այսօրվա քաղաքացիական պոեզիան:

«Տանթեական առասպել»-ից դեպի «Մթնշաղի անուրջներ», դեպի «Գալանտ յերգեր»-ը—մի՞թե այդ չի յեղել նախապատերազմյան շրջանի հայ մտավորականի սովորական ուղին: Յեվ ապա այդ ուղիից կամ դեպի միստիցիզմ, կամ էլ դեպի մռայլ հոռետեսությունը:

Ի՞նչն է փրկում Չարենցին յերկու ներհակ այդ ուղիների հակասություններից: Յեվ ինչու՞ յե նա դուրս գալիս այդ շրջանից ավելի սթափված, ամուր և ուժեղ: Միայն մի հանգամանք:

Սերտ կապը հողի հետ, ժողովրդի, բանվոր ժողովրդի հետ: Նա կարողանում է ժամանակին գտնել իր հենարանը:

Հենց այդ է նրան ուժ և վոգևորություն ներշնչում:

Յեվ յերբ ժողովուրդը վոտքի յե յելնում, յերբ սկսվում է մեծ գրո՜հը հին խարխուլ կարգերի դեմ, Հոկտեմբերյան հզոր մրրիկը—Չարենցը ևս տարվում է այդ հոսանքով և հեղափոխական հորձանքին կռթնած էլ բարձրանում է իր հին, տատասկոտ ուղիներից դեպի ստեղծագործության նոր բարձունքները:

Դրա համար էլ նրա յերգն ստանում է պողպատի արի հնչյուն և սրություն:

Յեվ գուցե վատ էլ չէ այն, վոր իր նոր յերգերի համար նա օգտագործում է մի վորոշ չափով ֆուտուրիզմը: Վորքան էլ գռեհիկ և անտաշ է բուրժուական արվեստի «վերջին այդ խոս-

քը», այնուամենայնիվ նա ունի կարևոր մի հատկություն. Նա հնարավորություն է տալիս ճշգրիտ կերպով արտանկարել մեծ քաղաքների միջավայրի սրարշավ տեմպը և այդ տեմպին ու դինամիկային հատուկ սուր տրամադրությունները: Ուրբանիստական պոեզիան իր գերազանց զարգացման է հասնում ֆուտուրիզմի տիրապետության օրերին: Այդ ճիշտ է, իհարկե: Բայց հենց այդ հանգամանքը թելադրում է Արևելքում գործող պոետին լինել չափազանց զգույշ և նրբանկատ ու կիրառել ֆուտուրիզմի «սկզբունքները» վոչ աբսոլյուտ ճշտությամբ և վոչ ամեն անգամ:

Ըստ յերևույթին Չարենցն ինքն էլ մի վորոշ չափով ըմբռնել է այդ, վորովհետև նա հաճախ տեղին համեմատ միանգամայն ինքնուրույն կերպով կիրառում է այս կամ այն ձևը:

Չարենցի պրակտիկան այդ կողմից բավական ուսանելի յե:

Քիչ առաջ մենք շոշափեցինք արդեն սիմվոլիզմի ազդեցությունը:

«Յերկիր Նայիրի»-ի մեջ նկատում ենք ռեալիզմի հաղթանակը—և մի ռեալիզմի, վորն իրենից ներկայացնում է արվեստի տարբեր ձևերի չափազանց օրիգինալ և մեր գրականության մեջ աննախընթաց կիրառումը:

Բանաստեղծությունների յերկրորդ հատորի մեջ կարելի յե նշմարել և՛ ֆուտուրիզմ, և՛ միաժամանակ շատ սովորական, հին եպիկական յերգերին հատուկ՝ կառուցվածք: Իսկ վերջին գործերի, քաղաքացիական նոր յերգերի մեջ—ֆուտուրիզմի շաղկապումը «հին» պրիոմների հետ:

Բացատրվում է այդ բոլորը նրանով, վոր բանաստեղծն իր սեփական խոսքը և յերգն ամեն անգամ ասում է յուրահատուկ ձևով—և ընտրում է այն վոճը և լեզուն, վորն ավելի ճիշտ կերպով է արտահայտում հեղինակի ապրումները: Այլ խոսքով՝ «ձևն» ինքնին չի դառնում ինքնանպատակ մի կետ, այլ համակերպվում է նյութի կոնկրետ բովանդակությանը:

Դրանում է թերևս կայանում և՛ Չարենցի տաղանդի առանձին նշանակությունը:

Ահա, օրինակ, ինչպես ծանր և հանդիսավոր տոնով—ռուս բըլինաներին և եպիկական պատմվածքներին հատուկ ձևով է սկսում Չարենցն իր «Յերգը ժողովրդի մասին».

...Յերկիրը մեծ եր ու լայն:—Տափաստաններ ընդարձակ,
անծայրածիր հովիտներ ու սարեր հեռանիստ:

Հորիզոնից—հորիզոն ձյունե դաշտեր սպիտակ,
լայն յերկնքի տակ փռված գյուղեր անդորր ու հանգիստ։
Մեծ եր յերկիրն՝ հյուսիսի վերի ծովից մինչ հարավ,
ու արևի մի ծագից մինչ մյուս ծագն արևի»։

Նույն այդ հանգիստավոր կերպով էլ ընթանում ե վողջ պատմությունը «Ժողովրդի մասին»։ Յեվ միևնույն կերպ էլ ավարտվում ե՝

. .Ու կռվում են հիմա յել, վոր յետ չտան էլ յերբեք
իրավունքը բանվորի, վոր անսասան ե արդեն։
Բարձրացել են նրանց դեմ ունևորներն անհաբեկ,
բայց կռվում են նրանք դեռ—ու կհաղթեն, կհաղթեն։
Չեն տա նրանք էլ իրենց ձեռքից զենքերը իրենց,
չեն տա թշվառ մուժիկի հողը նորից ավարի.
ինքն իրեն տեր կմնա եդ ժողովուրդը եդպես—
մինչև յերկիրը սառի, մինչև արևը մարի»։

Սակայն դրա վրա Չարենցը չի կանգնում։ «Ամենապոեմի» մեջ նա դիմում ե ուրիշ պրիոմների։ Այս անգամ նա ոգտվում ե ֆուտուրիստներից և տալիս ե առաջինը մեզ մոտ այդ ձևի յուրորինակ կիրառումը հայ կյանքի յերևույթների նկատմամբ։ Յեվ չի դիմում ավելորդ խոսքերի կամ բռնազբոսիկ ժեստերի, այլ շատ պարզ կերպով տալիս ե տիպերի և պատկերների յերկար շարաններ։

Ահա որինակ, Յերևանը.

Յերևան։
Աստաֆյան փողոց։
— Բնթաթախ։ Աչքերին—
փոշի։
Խաղաղ—խաղաղ—քաղաք։

Ահա գանգառաշարժ և փոշոտ՝ այդ Յերևանի բնակիչն իր հույզերով.

Իսկ
իրա
խանութի առաջ
նստած՝ խանութպան Համոն
գանգատվում եր.
— Ինչու չկա —

մի անուշ, գարնան քամի
թվում եր նրան,
Համոյին,
վոր աշխարհը—
փոշոտ մի փողոց,—
ու ապրում են
վողջ աշխարհում—
Համոն,
մի Կարո,
մի Պողոս։

Պատկերը լրիվ ե։ Յեվ միևնույն այդ տեմպով էլ պատմըվում ե հետագա անցուդարձի, պատերազմի, կռվողների, փախչողների և հեղափոխության մասին.

...Այսպես եր։
Խանութի առաջ
Նստած՝ խանութպան Համոն
մտածում եր՝ ինչու չկա
մի փոքրիկ-փոքրիկ քամի...

Յեվ մերթ ընդ մերթ, դրա հետ միասին, խորհում ե ավելի մեծ պրոբլեմների՝ «ռուսի անսահման զորքի» արշավի մասին դեպի Բաղդադ, ռուս այդ նույն զորքի փախուստի մասին Բիթլիսից, Բասենից.

Յեվ ես մեծ մտքերից հոգնած՝
գնաց տուն, վոր...
փասատոն խաղա—
իսկ
նրա
խանութի առաջ—
մեռնում եր մի հիվանդ աղա...
Այսպեսեր։

Մոնոտոն, տաղտուկ նայիրյան աշխարհի մի անկյունն ե դա, վորի միալար ֆոնի վրա խիստ բնորոշ կերպով ուրվագծվում են և «խանութպան Համոն», և «ակնոցը նայիրյան քթին կանգնած վարժապետ Սողոն»...

Հեռանում ե ռուս զորքը ֆրոնտից, և խանգարվում ե նայիրյան այդ քաղաքացիների հոգեկան անդորրությունը,

...Վողբալով Նայիրին հարազատ,
աշխարհի
ճամպեքի
միջում—

վարժապետ
Սողոն
հուսահատ՝
հարցնում էր. «Ինչո՞ւ, ինչո՞ւ...»:

Պոզոսը այդ հարցին տալիս է և իր պրիմիտիվ պատասխանը՝ «Ռուսը ուզեց վոր՝ յերկրի յերեսին «խայու անուն չմնա»..

Լավ է նկարում Չարենցը իր պոեմի մեջ և հեղափոխության առաջին շրջանը—պատերազմի օրերին.

...Արնահոս կոխ՛ն այդ անեղ
վերջ պիտի
չունենար
գույն—
բայց Իվանը
հանկարծ
բղավեց
—Կանգնեցե՛ք,
—Կանգնեցեք
—կանգնեցեք...
Առավ—ու գարձավ իրա
սոեպները անծայր ու լեն...

Այսպես է Չարենցը իր «նոր» յերգերի մեջ: Հայ գրականության մեջ նա միակն է: Յես չեմ կանգնում մնացյալ գործերի վրա: Չեմ հիշում այստեղ «Կապկապ-Թամաշա»-ն, «Սոմբուլ»-ը... Իր յերկերում Չարենցը կարողանում է համեմատաբար հասարակ և պարզ գծերով բնորոշել ժամանակակից բարդ եպոխայի պատկերը: Նա տալիս է հեղափոխական մեծ շարժման պատկերը—և ժողովրդական լայնագույն այդ հորձանքի հեռավոր արձագանքի նկարը Արևելքի սահմանագծի վրա ընկած Նայիրյան աշխարհի մայրաքաղաքում:

Յեվ, չբավականանալով կյանքի ռեալիստական դրվագներով, կովի յե կանչում Թմրածներին և առույգ ձայնով հեղափոխության ներբողն է յերգում... Դա յե նոր Չարենցի, այժմյան Չարենցի ստեղծագործության հիմնական ներվը.

Յեվ վորքան պոետը կանգնած կլինի հին աշխարհի դեմ պայքարող ժողովրդական պրոլետ. կանգվածների ամուր պատվանդանի վրա—այնքան Թարմ և ամուր կլինի և նրա ստեղծագործությունը:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՍԱՅԹԱՔՈՒՄ

(«Ռոմանս Անսեր» Յեղիշե Չարենցի. Մոսկվա 1922)

...«Մենք պետք է կազմակերպված պայքար մղենք հին արվեստի տրադիցիաների դեմ, հասկացնենք մեզ հարազատ սկսնակներին հին արվեստի անընդունելի լինելը, վորովհետև ներկայումս, յերբ մեր տնտեսական և կուլտուրական կենցաղում դեռ ևս վորոշ չափով մնում են նախկին մանր բուրժուական ձևերը, ուժեղ է հին արվեստի ազդեցությունը սկսնակների վրա: Այս ամենը գլուխ բերելու համար հարկավոր է կազմակերպել կուսակցական ագիտացիային հավասար գեղարվեստական յերեկոներ, միտինգներ, ցույցեր և այլն»:

Այդ մեծ ցիտատը դիտավորությամբ ենք բերում, վորովհետև նա պատկանում է բանաստեղծ Չարենցի գրչին: Այդ տողերը Չարենցը գրել է Ղրիմում հրատարակվող ժեծամասնական «Կոմմունայի Զանգ» Թերթում: (Տես՝ «**Ինչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը**». հոդված Յե. Չարենցի. «Կոմ. Զանգ» 1922, № 36. Սիմֆերոպոլ):

Բերված նախադասությունից տեղեկանում ենք, վոր բանաստեղծը վոչ միայն ցանկանում է խարազանել «նախկին մանր բուրժուական ձևերը», այլև հանդես է գալիս, վորպես պրոլետարական և կոմմունիստական կուսակցության համոզված ասպետ: Չարենցը, ինչպես տեսնում ենք, նպատակ է դնում «կազմակերպել կուսակցական ագիտացիային հավասար գեղարվեստական ագիտացիա»: Դրա դեմ հազիվ Թե կարողանա վորևե մեկն առարկել: Կասկածից դուրս է այն, վոր կուսակցական-քաղաքական ագիտացիայի հետ միաժամանակ պետք է կազմակերպվի նաև իդեոլոգիական գեղարվեստական պայքար հին արժեքների և տրադիցիաների դեմ: Ինքը Չարենցն այդ ուղղությամբ հայ իրականության մեջ քիչ բան չի արել:

Դրա մասին արդեն շատ է խոսվել, և ավելի ևս շատ գրվել մեզ մոտ: Անվերջ գովասանքների և կոմպլիմենտների տարափը շլացրել է նրան այնքան, վոր նա իրավունք է համարել հանդես գալ մարգարեյի քղամիդով և Տերյանի վրա «Թքողի» դերում:

Բաղքենի, ամենապրիմիտիվ ինդիվիդուալիստ պոետներին հատուկ մի հոգեբանություն է դա, վոր այնքան վորոշ կերպով դրսևորվել է Չարենցի վերջին «պոեմի» մեջ:

Երևան քաղաքից պատահմամբ Մոսկվա չե ընկել մեր պոետը և պրովինցիալ բանաստեղծներից շատերի նման կորցրել է իր գլուխը։ «Ամենահախ» և «ծայրահեղ» իմաժինիստ-պոետները շշմեցրել են նրան վերջնականապես։

Ծանոթացել է Յերևանի բանաստեղծը Մոսկվայի քաղքենիության վերջին պոետների՝ Մարիենգոֆի և Շերշենևիչի հետ, նեոֆիտի միամտությամբ կուլ է տվել դրանց ինտելլիգենտական անարխիզմը և խայտաբղետ գոռում-գոչումը, խառնել է այդ բոլորը մի յուրօրինակ կերպ ըմբռնված «կոմմունիզմի» հետ և ապա ստեղծել է խառնիճաղանճ վոտանավորների այն ժողովածուն, վոր կրում է «Ռոմանս Անսեր» անունը։

Ամեն ինչ հայհոյաբանում է այդտեղ։ Ամեն ինչ քանդում։ Նա ցանկանում է լինել անպատճառ «ծայրահեղ», «որիգինալ», և «հեղափոխական»։

Հաճելի չե, չե՞
Ելի Ձեզ
Տերյանի յերգը թքալ։

Այդպիսի կլոունադայով է սկսում իր «պոեմը» Չարենցը։ Ինչու՞ է նա այդպես խոսում—մենք չգիտենք։ Յեթե նա ցանկանում է իր հայտարարությամբ ցուցադրել «հակատերյանական» իր վոգին—սխալվում է։ **Իվերջո, Չարենցի ամենալավ յերգերի մեջ իսկ, կա «տերյանական վոգի»**։ Իսկ նրանք, վորոնք ճանաչում են վողջ Տերյանին, գիտեն, վոր այսօրվա, տակավին գռեհիկ է, վոր ավելի վատ է, տգետ և մեծամիտ Չարենցը, շատ բան ունի սովորելու «**Կոմմունիստ Տերյանից**»...

Կապկորեն կրկնելով Տերյանի հասցեյին այն խոսքերը, վոր ասում են ռուս ֆուտուրիստները Պուշկինի հասցեյին, Չարենցն ապացուցում է միայն իր միամիտ պրովինցիալիզմը։

Բավական է - չե՞
Չարենց։
Շլացած Հանճարիդ Փառքով
Ել յելիր,
Հրդեհե,
Վառե,
Վերցրու, ցրիր **բառ-բոմբ**։

Ռեկլամային այդ ճիչերից հետո Չարենցն սկսում է ցրել իր բառ-բոմբ-ը։

Բավական է հոգին ձեր ծեր
ցրտահար՝ **հուզումներ միգե**։

Գոչում է նա կատաղորեն։ Յեվ ապա ճիշտ այդ միևնույն «մաուզերիստական» ստիլով սկսում է յերգել իր սիրասուն Ժենյայի «մարմինը կակուղ», «կոնքերի կոնքը» և այլ բարեմասնությունները։ Անճաշակ կոչերի այդ տարափն առաջին պահուն շշմեցնում է ընթերցողին և մշուշապատ ցանցով ծածկում է «ռոմանսի» ներքին տափակությունը։ Բայց անդադար կրկնվող «կիրք», «խանդ», «աղջկա մահճակալ» խոսքերը և «պոեմի» եպիլոգը կտրուկ կերպով ընդգծում են պոետի հիմնական մոտիվը...

Ի՞նչ է դա։ Նոր խո՞սք։ Վոչ, ինարկե։ Այն, ինչ վոր Չարենցն է ասում—ասել են, նրանից առաջ, **ռուս մեռնող քաղքենիության յերգիչները, Մարիենգոֆը յեվ ընկերակիցները**։

Չարենցը կարող է, ինարկե, զարմացնել և շլացնել իր միամիտ յերկրպագուներին և սեմինարիստ պոետներին։ Բայց հո դրանց համար չի գրել նա «ռոմանսը» կամ «ռոմանը»։

Դրանց զարմացնելու համար Չարենցը կարող էր դեղին կոֆտա հագնել և մի պտույտ անել Աբովյան փողոցում։ Այդպես է սկսել մի ժամանակ իր կարիերան ռուսական ֆուտուրիստական բոմերից մեկը։ Այդպիսի անմեղ «ավանտյուրը» վորոշ չափով գուցե և հանդուրժելի է։

Բայց Չարենցն ավելի հեռու է գնացել։ Յերևանյական իր մարզանքներին նա «հեղափոխական» բնույթ է տալիս։ «Կակուղ մարմնին» և «կոնք»-ին նվիրված տողերից հետո Չարենցը գրեթե միևնույն տեմպով և վոգևորությամբ խոսում է «Հոկտեմբերի» և «չեկայի» մասին։ Յեվ ահա դրա դեմ է, վոր ստիպված ենք բողոքել։ Յեթե Չարենցին հաճույք է պատճառում վոտաշորով յերևան գալ փողոցներում,—դա նրա գործն է։

Բայց յերբ նա հայտարարում է, վոր այդ ամենը անում է հանուն «Հոկտեմբեր»-ի, մենք ստիպված ենք հրաժարվել այդպիսի յեռանդուն և եքսպանսիվ մունետիկներից։ Ահա դրանում է ամբողջ խնդիրը։

Պրոլետարիատի շարժումը հեղափոխական պայքար է։ Յեվ վորպես այդպիսին նա ունի իդեալիստական ամենաբարձր գունավորում և սոցիալական խոր իմաստ։ Նա լեցուն է պատանեկան **առողջ, կենսուրախ յեվ մարդկային** զգացումով։ Իսկ այն պառավական բարբաջանքը, հիվանդոտ և դողդոջուն պարակոփ-

մը, վորով համակված ե Զարենցի վերջին «ռոմանս»-ը, հատկանշական ե անբարոյական և մեռնող բուրժուազիայի համար։

Պետք չե խուսափել մարդկային բնազդների և կրքերի ռեալիստական նկարագրությունից։ Փարիսեցիական կանոնները չպիտի կաշկանդեն արվեստագետին։ Բայց սխալ ե նաև չընդունել, վոր փարիսեցիության դեմ կռվողը պիտի անպատճառ դառնա աղբակույտի երկրպագու։

Նատուրալիստական նկարներ ստեղծել են և Բոդլերը, և Գոյան, և Բոպսը։ Մարդկային հույզերի ամենասոսկալի անկյունները քրքրել ե իր անողոք գրչով ռուս ժողովրդի մեծ վիպագիր Դոստոյևսկին։ Դրանց նատուրալիզմը սարսափ ե ազդել քաղքենիներին։ Բայց նա չի կորցրել յերբեք իր հասարակական-սոցիալական արժեքը... Ամեն մեկն այդ հեղինակներից խոր տառապանքով ե նկարել «հատակ»-ի մարդկանց կյանքը և մարդկային հոգու զարտուղի ներհակությունները։

Ցավ ահա հենց այդ տրագիկական շեշտն առանձին տոն և գույն ե տալիս հիշված արվեստագետների գործերին։ Այդպես չե Զարենցի «նատուրալիզմը»։

Դա ստեղծագործություն չե, այլ «կաֆե-դոմինոների» յերգիչների չափազանց միջակ կրկնությունը։ Ընթերցողը տաղտկալիությամբ?

Ընթերցողը տաղտկությամբ ե կարդում այդ ռոմանսը։ Մի ակնթարթ նրան թվում ե, թե դա մի մեծ թյուրիմացություն ե, խոշոր, բայց պատահական մի «սայթաքում» Զարենցի կյանքում։ Գուցե և դա այդպես ե։ Բայց այդպես էլ լինելով՝ այդ «սայթաքում»-ը սիմպտոմատիկական մի յերևույթ ե։

Ի վերջո, պատահական բան չե ամենևին այն, վոր Զարենցն իմի յե խառնել «իմաժինիզմը» և «կոմմունիզմը», «կակուղ մարմին»-ը և «Հոկտեմբերը»...

Իր ռոմանսով մեր պոետն արտահայտում ե նոր այն մարդու կենսազգացումը, վոր հանդես ե յեկել նեպյան նորագույն եպոխայում։ «Նեպը» փաստ ե։ Նեպն ստեղծել ե նեպմեններ, նեպյան քաղաքացիների սովորագույն մի կոնտինգենտ։ Դրանք «հակահեղափոխականներ» չեն սովորական իմաստով։ Դրանք «ընդունելով» խորհրդային իշխանությունը՝ ցանկանում են ամեն կերպ հաշտեցնել իրենց «յես»-ական շահերը «Հոկտեմբերի» հեղափոխական պատգամների հետ։

Բայց «վողջունելով» Հոկտեմբերը՝ քաղքենիության «սովետականացած» այդ ներկայացուցիչները չեն կարողանում և չեն

ցանկանում համակերպվել պրոլետարական իդեոլոգիայի հրահանգներին։

Ահա ինչու մեր որերում այդ «բարեկամները» իրենց ազդեցությունը մասսաների վրա տարածելու համար «նեպյան իդեոլոգիային» տալիս են ուլտրա-հեղափոխական և «հոկտեմբերյան» գունավորում։

Ի՞նչ խոսք, վոր հասկացողությունների անորինակ այդ խառնուրդի և հեղափոխության խայտառակ պրոֆանացիայի դեմ հարկավոր ե մղել կորուկ և անողոք պայքար։

«Պայքար»

ԱՐԱԶԻ

Ահա մի հեղինակ, վոր տարօրինակ անփութությամբ անուշադրության է մատնվել։

Յեվ այդ չնայած նույնիսկ նրան, վոր Արազին իր գրական գործունեությունն սկսել է դեռ շատ առաջ հեղափոխությունից և պատերազմից, չնայած նրան—վոր իր արծարծած թեմաներով նա այժմ էլ առանձին տեղ է գրավում մեր նորագույն գրականության մեջ։

Արազին ռուսահայ պրոլետարական գրականության առաջին գործիչներից մեկն է։

Վորքան հիշում եմ, դեռ 1914 թվին Արազին մասնակցել է Հակոբ Հակոբյանի կողմից ձեռնարկած հրատարակչության մեջ։ Այդ հայ պրոլետարական հեղինակների առաջին յելույթն եր մեր իրականության պայմաններում։ Յեվ վորպես այդպիսին նա զերծ չեր, իհարկե, վորոշ թերություններից։ Բայց և այնպես, ինքնուրույն այդ յելույթն—այն օրերին, միապետական բանակալ ռեժիմի և հայ վայրագ նացիոնալիզմի տիրակալության մռայլ տարիներին,—ուներ խոշոր հասարակական նշանակություն։

«Նոր գրադարան»ի համեստ և փոքր տետրակները հակադրվում եյին նացիոնալիստական գրականությանը։ Այդ փոքրիկ բրոշյուրները խմբել եյին իրենց շուրջը յերիտասարդ հեղինակներին և ընթերցանության թարմ և նոր նյութ եյին մատակարարում Բալախանու, Զաբրատի և Բիբի Եյբաթի բանվորներին, շարժում եյին յերիտասարդ բանվորներին և կապում նրանց սոցիալիստական շարժման հետ։

Յեվ ահա ակամայից այդ հիշեցի յես այժմ, յերբ ձեռքըս ընկավ Արազիի պատմվածքների նոր հրատարակությունը։

Կա առանձին մի միաժամություն այդ բոլոր պատմվածքների մեջ, գրավիչ և ինտիմ մի գիծ թռուցիկ այդ ակնարկների ձևի և բովանդակության մեջ։

Այդպես է յեղել մեր տակավին թույլ պրոլետարական առա-

ջին հեղինակների մոտեցումը հասարակական յերևույթներին անցյալում։

Այդպես է յեղել, վորովհետև բանվորական շարժումն ինքը յեղել է թույլ և անփորձ։ Պրոլետարիատն ինքն այդ օրերին կապված է յեղել գյուղական իր հայրենիքի հետ և դրա համեմատ շարժվել է հաճախ անորոշ և վարանող քայլերով։

Այդպես լինելով, նա ձգտել է իր շուրջը խմբել բոլոր աշխատավորներին, չքավոր գյուղացուց սկսած մինչև մազանդարանի համալին։ Յեվ ամեն մի գիտակից պրոլետար, պայքարելով կապիտալիստական բուրժուազիայի դեմ, յեղբայրական վողջույնի իր խոսքն է ուղղել կապիտալիզմի բոլոր զոհերին – մեծ քաղաքի հեռավոր արվարձաններում թափված «հասարակ մարդկանց» մշակներին, արհեստավորներին և համալներին․․․

Յեվ ահա դրա արձագանքն էլ տեսնում ենք մենք Արազիի առաջին ժողովածուի մեջ։

Գուցե դրա համար էլ այդտեղ բացակայում են տրադիցիոն «հերոսները» ու «հերոսուհիները»։ Հեղինակը նկարագրում է պարզ մարդկանց և թռուցիկ ներկերով բնութագծում իրական կյանքի տարբեր էջերը։ Նա չի ծածկում իր խոհերը ևս, և հաճախ հրապարակախոսական ուրույն շեշտ է մտցնում նկարագրական իր ակնարկների մեջ։

Տեսնում ենք մենք նրան և մեծ քաղաքի փողոցներում, և գյուղում, և գործարանային բանվորների շրջանում և նույնիսկ բանտում։

Առաջին ակնարկներից մեկը, վոր գրված է 1913 թվին, առնված է հենց «բանտային» հուշերից։ Այդ թույլ և կարծես անավարտ մի գործ է։ Թերևս ավելի լավ կլիներ, յեթե Արազին չզետեղեր այդ ակնարկն իր ժողովածուի մեջ։ Սակայն և այնպես, նույնիսկ անմշակ այդ նյութը զուրկ չի վորոշ արժեքից։ Նա այս կամ այն չափով պարզում է հեղինակի ստեղծագործության նախնական ուղին։

Յեվ այսպես մոտենալով ու քայլ առ քայլ հետևելով զանազան ժամանակ գրված նյութերին, մենք տեսնում ենք, ինչպես աստիճանաբար հեղինակի վոճը դառնում է ավելի ուժեղ, խոսքը կտրուկ և ներկերն ավելի խիտ։

Նախնական շրջանի գործերից է և «Փոքրիկ պահակ» վերնագրով պատմվածքը։

Այդ մի նաքիզ է, թռուցիկ մի ակնարկ։ «Այն ժամանակ,—

այդպես է սկսվում Արազիի պատմությունը,—«մեր գործարանը մեծ տագնապի մեջ էր» մի շաբաթից հետո էլինք գործադուլ հայտարարելու, իսկ գաղտնի վոստիկանությունը, հոտն առած լինելով, հետապնդում էր բանվորների ամեն մի քայլին...»:

«Բանվորը», վորի անունից խոսում է հեղինակը, պարտավոր եր կատարելու վորոշ հանձնարարություն: Սակայն նա պատահում է գյուղում մի «փոքրիկ տղայի»... «Տարորինակ եր տղան. նա վոտքից գլուխ հագնված եր մեծերի նման. կարծես վերցրել եյին մի գյուղացու իր սովորական չուխայով, փափախով... Նա մոտեցավ ինձ և կանգ առավ կոթնելով իր փայտին. Նա նայում եր կասկածոտ, նույնիսկ փոքր ինչ սպառնացող հայացքով...

Նրա մեջ գրավիչն էլ էդ եր, վոր կապտավուն աչքերում մանկական անմեղություն եր փայլում, մինչդեռ ինքն աշխատում եր մեծի նման ցույց տալ իրեն»...

Տղան պիտի պաշտպաներ իր մոր այգին: Յեվ «քաղաքից» յեկած բանվորն իսկույն հասկանում է այդ փոքրիկ պահակի կատարյալ միայնությունը գյուղական աշխարհում: Յեվ յերբ նա ոգնում է նրան՝ դեն քշել գոմեշներին, յերբ հասկանում է հուսահատ «փոքրիկ պահակ»-ի հասարակ «տանջանքը», միմիայն այն ժամանակ է համակվում փոքրիկ տղայի «դարդով» և զգում, վոր «նա էլ մեր բանվորական ընտանիքից է»:

Միևնույն գյուղի պատկերներից է և «Սև ցավը»: Հեղինակը ցանկացել է այստեղ դուրս բերել գյուղի «ուժեղներին» և նկարագրել ապստամբ գյուղացիության դիրքը վաշխառուների նկատմամբ:

Ինձ թվում է, վոր Արազին չնայած իր բարի ցանկությանը, չի կարողացել տալ գյուղի ճիշտ նկարագրությունը: Նրա տիպերը գործում են մանեկենների նման: Գյուղի «Նորակազմ հեղափոխական կոմիտեն, պատմում է Արազին, հենց սկզբից վորոշեց ցորեն հավաքել ունևորներից գյուղի սովյալների համար»: Սակայն «հանաքչի» Ոսիփի առաջարկով, և ավելի ուշ, վորոշում է հանվում հետաձգել վաշխառու Օհանեսի մոտ ուղարկելը՝ «Տղերք ջան, թե ախպեր եք, ամենից յետ Օհանեսի մոտ ուղարկեցեք: Թողեք մի ենպես ըլնի, վոր ահը շատ ըլի, քան մահը: Թողեք՝ մի վախից երվի, խորովվի, վոնց վոր մեզ երել ա: Մեկ ա, կորած չի թագցնել մեզանից պլոկած ցորենը, հազար ու մի աչք կա նրա վրա»:

«Այդպես էլ յեղավ», - նկատում է իր կողմից Արազին: Յեթե այդպես լիներ էլ,—այլ կերպ եր անհրաժեշտ նկարագրել այդ բոլորը: Վողջ խնդիրն այն է, վոր Արազու մոտ այդ բոլորը կրում է արվեստական կառուցվածք և ամենևին չի համոզում, թե կարող եր «այդպես լինել»:

Անհամեմատ ավելի հաջող է այդ տեսակետից նրա «Ընկեր Մուկուչը»: ...«Մուկուչը», մի կաշեգործարանի պահապան է... Պետական կարգերը յերկու անգամ հեղաշրջվել եյին, գործարանի գլուխը հինգ կառավարիչ եր անցել, բայց դժվար թե մեկն ու մեկը նկատեր Մուկուչի վրա վորևե փոփոխություն:

«Մուկուչը շատ բան է տեսնում ու լսում, ինչքան է փոխվել ես աշխարհը, բարձրինը ցած է ընկել, ցածրինը՝ բարձրացել, բայց պետք է լավ իմանանք, վոր ամեն բանի վրա Մուկուչն իր «դայդի»՝ մուկուչավարի չե նայում: Ինչ խոսք, մտածում է նա, լավ ա, վոր հիմի ամենքն իրար «հընգեր» են ասում: Մուկուչը շատ է սիրում այդ խոսքը, բայց ինչիցն է, վոր բոլորն իրան «տանավարի» մենակ «Մուկուչ» են ասում: Ամենքը մոտենալիս հենց ասում են «Մուկուչ, քեֆդ վոնց ա»:

Այստեղ արդեն Արազին գտել է ճիշտ տոնը: Նա տալիս է իսկական մի մարդու անաղարտ նկարագիրը: Յեվ արդեն առօրյա փաստերից Մուկուչը հյուսում է իր սեփական իմաստասիրությունը..: «Աշխարհումս, խորհում է նա, բան չի փոխվել: Չե, են աղատությունը, են լավ-լավ բաները, վոր քարոզում են, մթամ ասում են, թե հարուստը աղքատ կըլի, ու աղքատը՝ հարուստ, էդ էլ ուրիշ բան ա չերևում»...

Սակայն փոխվում է և Մուկուչը: Գործարանում կատարվում է մի գողություն: Կառավարիչը հալածում է Մուկուչին: Վերջինը չի համարձակվում բողոքել մինչև այն մոմենտը, յերբ բանվորներն իրենք էլ սկսում են քննադատել իրենց կառավարչին:

Յեվ բանվորների այդ յելույթը, բանվորական ժողովի տեսարանը խրախուսում է և Մուկուչին: Նա էլ դուրս է գալիս իր «հընգերների» առաջ,—«Հընգերներ, դե յես մի խեղճ մարդ եմ, ամա իմ նամուսը չեմ ծախել... յես էդ գողությանը խաբար չեմ... ամա թե վոր միս մարդու ճանկ եմ ընկել, դուք գիտեք ու ձեր խիղճը»:—Ասում է ծանր շնչով: Նախագահն էլ միքանի խոսք է ասում, մի յերկու մարդ էլ կարճ խոսում են, ու ժողովը վերջանում է: Բանվորները շրջապատում են Մուկուչին, ամեն

կողմից սիրտ տալիս.—«Հընդեր Մուկուչ, քեֆդ քյոք պահիր, հեսեդ սարի պես կաղնած ենք»։

Այդ արդէն լավ է ասված։ Ցեվ խոսքեր են, վոր բնորոշում են նոր կյանքի իսկական ջիղն ու վոգին։

Ինձ թվում է, վոր Արազին հետադայում պիտի ընթանա առողջ ռեալիստներին հատուկ այդ ուղիով... Նա պիտի դեն նետի ավելորդ ռիտորիկան և պարզ խոսքերով պատմի այն բոլորը, ինչ վոր տեսել է։

Կասկածից դուրս է, վոր նա կարող է գնալ այդ ուղիով։ Յերբ համեմատում ենք նրա նախնական թույլ գործերը վերջին շրջանի, մանավանդ 1925 թվից հետո պատրաստված գործերի հետ, ավելի ևս պարզորոշ կերպով է գծվում Արազի այդ եվոլյուցիան։

Այդ շրջանին է վերաբերում մասնավորապես նրա մի փոքրիկ եսյուդը, վոր տպվել է իր ժամանակ «Խորհրդային Հայաստանի» եջերում, և վորը թե իր ընդհանուր կառուցվածքով և բովանդակությամբ և թե ձևական հատկություններով առողջ ռեալիզմի ամենաառողջ նմուշներից մեկն է։

Այդտեղ Արազին նկարագրում է շատ սովորական և հասարակ ձևով կենսուրախ և տիպիկ մեծ «գյումրեցու» կյանքը, նրա հին սիրո պատմությունը և յուրահատուկ կյանքը... Վողջ այդ պատմվածքը, և գյումրեցու կոլորիտ դիմագիծը, և հին Գյումրիի կենցաղային ֆոնը, և մանավանդ այդ ֆոնի վրա գծված հոգեկան կոլլիզիան այնքան ինտիմ գծերով է նկարագրված, վոր հիշեցնում է ռուս ամենահայտնի ռեալիստ հեղինակների՝ Կարալենկոյի և Չեխովի գործերը։

Լավ է գծված ամենից առաջ հենց ինքը—այդ կենսուրախ հայկական պրովանսալցի—գյումրեցին։

— «Հիմի—պատմում է այդ գյումրեցին ինքն իր մասին,—մի պստիկ խանութ ունեմ, տղուս հետ առուտուր կենեմ։ Ի՞նչ արած, յոլա կերթանք, առաջ կոմմունիստներն ինձ հարուստ տեղ կդնեյին, կնեղացնեյին, հիմի լավ է. հերս կասեր, իշխանավորի ձեռը պաչե, ճակատիդ գիր. դյուզ խոսք է, պատվավոր քաղաքացին եդպես պետք է եղնի»... «Այսպես,—լրացնում է Արազին,—իր արևելյան անդորրությունը չորս կողմը սփռելուց հետո, գյումրեցին հանեց իր յերկու շիշ գինին, ու սկսեց իր շուրջը կազմակերպել մեր ամբողջ բաժանմունքը»...

«Պատվավոր» գյումրեցին կամաց-կամաց, գինու ազդեցության ներքո բացվում է և սկսում իր հատուկ «սախլով» պատմել ինչպես յերիտասարդ ժամանակ կապվել է մի ռուս աղջկա հետ։ Դրա դեմ բողոքում են գյումրեցու մոտիկները։

«Ճաշից հետո էլ, պատմում է նա,—թամամ ժողով արին սաղ մեր տնով-տեղով, ու ամենն ինձ խրատ կուտային, մի-մի փթանոց խոսքեր կըսեյին»։

— Ճիշտ է, դու պատվավոր ընտանիքի զավակ ես, կըսեյին, անվանի մարդու տղա, լավ գործի, լավ գյալումի տեր, քեզի ինչ կսազա, վոր եդ փախստական աղջկա, աննշան աղջկա հետ ոյնաս (ենել ռուսի հավատի) քեզի, կըսեյին, կսազա մի ենպես պատվավոր ընտանիքի աղջիկ, վոր հետը կարգվես ժամով, խաչով, վոր մեր անունն առակ չանես, մի հիմնավոր ընտանիք դնես, վոնց վոր կարգն է մեր քաղաքում։ Ժամանակ չէ՞, վոր քո պատիվդ իմանաս, քո գլխի մասին մտածես։

Եսպես կխոսեյին ամենքը, փատարան՝ ախպերս էլ իր կողմեն տասը փթանոց խոսքեր կըսեր։ Ինչ յերկարացնեմ, եդ իրիկուն ինձ թամամ աղցան արին իրենց խոսելով։ Վերջն էլ մերս ու ախպերս ականջս մտան, սոյբաթ արին, թե մի լավ աղջիկ ենք ճարել, պիտի վոր անպատճառ ուզես։ Են, յես էլ փափուկ մարդ, մի կողմից էլ լավ խմած՝ խոսք տվի»...

Միևնույն այդ պարզ և բնորոշ վոճով շարունակում է գյումրեցին մինչև վերջ իր պատմությունը։ Ինձ թվում է, վոր հենց իր այդ հատկությամբ «Մուկուչի» պատմությունից հետո Արազու «պատվավոր քաղաքացին» լավագույնն է նրա նորագույն գործերի մեջ։

Կարիք չկա ամենևին ծածկելու, վոր Արազի առաջին ժողովածուի պատմվածքների մեծ մասն այդ կողմից հենց չի կարող այնքան էլ աջող և կատարյալ համարվել։ Նախնական շրջանի այդ գրվածքների արժեքը միմիայն այն է, վոր նրանք կարծես ավելի վորոշ կերպով են գծում հեղինակի անցած ուղին։

Այսօր նրա գրիչն ավելի վստահ է և ամուր։

Նրա նորագույն ակնարկներն ու եսքիզները մի բան, համենայն դեպս, հաստատում են ավելի քան վորոշ կերպով։

Արազին լավ դիտող է և քննադատող։ Նա կարող է, յերբ ցանկանում է այդ, խուսափել ավելորդ խոսքերից և անտեղի շեշտերից, Այդ հանգամանքն ինքնին իրավունք է տալիս մեզ հաստատելու, վոր իր վերջնական խոսքը Արազին տակավին չի ասել, և վոր այդ խոսքը կարող է իր առանձին տեղը գրավել մեր նորագույն գրականության մեջ։

ՑԻԼԻՆԴՐԱՎՈՐ ԱՇՈՒՂԸ

(Տիգրան Հախումյան. Ցերեան 1923 թ. եջ 62)

Տարօրինակ տիպ է հայ ինտելլիգենտը: Մեր գյուղական և աշխատավորական յերկրում ապրող այդ մտավորականն այժմ էլ չի թողել իր քաղքենիական սովորությունները: Նա միշտ խոսում է խաչտարդետ և վերամբարձ վոճով: Ցեվ ավելի ես հաճախ սիրում է ճառել, ուսուցանել, քարոզել: Այդ կողմից առանձնապես հետաքրքրական են հայ պոետները—մեր մտավորականության ամենատիպիկ այդ մունետիկները:

Գուցե վոչ մի յերկրում այնքան շատ «հանճարներ» և մարգարե-պոետներ չկան, վորքան մեզ մոտ: Բավական է միայն ասել, վոր այսօրվա Ցերեանում ապրող բանաստեղծների թիվը հասնում է յերկու տասնյակի:

Այդ պոետները բոլորն էլ խիստ նմանում են միմյանց: Բոլորն էլ «մելամաղձոտ» են, «տխուր» և «աշխարհից անբավական»: Բայց այդ չի խանգարում նրանց լինել չափազանց ինքնահավան և ամբարտավան: Այդ կողմից մեր պոետները հիշեցնում են մեծ քաղաքից ամառանոց ընկած առաջին կուրսի ուսանողներին...

Նայիրյան աշխարհում ապրող Տիգրան Հախումյանը լավագույնն է դրանցից: Ցերեանյան բարիշնյաների և ոպերետային Ալֆոնսաների շրջանում նա արդեն հայտնի յէ, վորպես «մտածող», «յերաժիշտ», «բանաստեղծ», «թարգմանիչ», «փաստաբան», «հրապարակախոս», «քննադատ», «սովետական կադետ», «չարենցիստ» և այլն, և այլն...

Ըստ յերևույթին քնքուշ սեռի հույժ-համակրական այդ վերաբերմունքը խրախուսել է Նայիրցի մեր էնցիկլոպեդիստին և թելադրել է նրան յերջանկացնել Հայաստանի միամիտ բնակիչներին նոր հրատարակությամբ: Դժբախտաբար առայժմ նա լույս աշխարհ է հանել բանաստեղծությունների առաջին հատորը: Սակայն այդ տեորակն էլ բավական է Հախումյանի ստեղծագործության բնորոշման համար:

Առաջին էջից արդեն մենք տեղեկանում ենք, վոր նա նըպատակ ունի ուղևորվել դեպի «անհայտ մշուշներ»: Միաժամանակ պոետը հայտարարում է, վոր ինքը «շաղ է տալիս» **վոսկին— արժանական իր** (այսինքն Հախումյանի) **հոգին**: Ապա հետագա էջերում պարզվում է, վոր այդ «շաղ տված վոսկին» պոետի **«գարդն»** է, **«սէրը» «սիրտը»**—մի խոսքով՝ հայ քաղքենի բանաստեղծի ամենասիրելի ակսեսուարները: Մերթ ընդ մերթ այդ «վոսկի շաղ տալու» պրոցեսսում Հախումյանի հետ պատահում են փոքրիկ թյուրիմացություններ... Այսպես, օրինակ, իր անհայտ բարեկամին (կամ ավելի ճիշտ՝ բարեկամուհուն) խրախուսելու համար մեր հեղինակը գոչում է՝

Վախում ես սիրտդ մաշվի՞.
Դե հուրն էլ ըսպես կըլի—
Կխոցի, կէրի, կէրա՝
Իզուրն էլ ըսպես կըլի...

Այստեղ «իզուր»-ը, իհարկե, այնքան էլ տեղին չի: Թյուրիմացությունը պարզվում է, յերբ մենք նկատի յենք առնում «ուր»-ով վերջացած «հուր» խոսքը...

Առհասարակ պիտի ասել, վոր Հախումյանը չափազանց տարված է մի հոգսով՝ զարմացնել և շշմեցնել ընթերցողին իր օրիգինալ բացականչություններով: Ծաղիկները, օրինակ, նրա համար «արնահամ» (!!) են, «գիշերը գերաչար» է, «կամքը խանդահար» և այդպես անվերջ: Այդ ամենը Հախումյանն անում է նրա համար, վոր մի որ նրան էս «Մենթ շալիր Տիգրան» անունը տան: Դրանումն է ամբողջ խնդիրը:

Արտասովոր ինքնահավանությունը և միաժամանակ միշտ կրկնվող կոկետային ցավկոտումը առանձին տոն են տալիս մեր բանաստեղծի գործին: Կարծես զգում ես, վոր մեկը ծուռ ու մուռ շարժումներ է անում, անդադար ակնոցներն ուղղում է միևնույն ժամանակ վերամբարձ վոճով հիշեցնում իր «տխրությունը», «հոգու վեհությունը» և այլ բարեմասնությունները:

Սակայն ամենից նողկալին այն է, վոր գավեշտական այդ մաներաներով հանդերձ մեր պոետը ցանկանում է ժողովրդական այնքան պարզ և անաղարտ պոեզիան ես շահագործել:

Մերթ ընդ մերթ իր դեկադենտական բացականչություններից կողքին մեր «Շայիր Տիգրանը» դնում է աշուղների ռեպեր-

թուրքից վերցրած խոսքեր՝ **յար, քյաձուր կյանք, շախ որ գարբեգար...**

Ճաշակի խնդիր է, իհարկե։ Կարող են լինել մարդիկ, վորոնց դուր կգա սալոնական «ախ»-երի կողքին դրված ժողովրդական պարզ խոսքերի շարանը։ Սակայն մեզ այդ հիշեցնում է միայն քաղաքից յեկած այն ինտելիգենտին, վոր ցիլինդրը գլխին և սպիտակ ձեռնոցները հագած վորեւե Բռնակոթում կամ Այնաձորում կեղծում է գյուղացու լեզուն և զարաբաղցու կամ ուրիշ գավառացու բարբառով ճառ է արտասանում։

Հախումյանն ամբողջովին այդպես է։

Գուցե հենց դրանով էլ նա արժեքավոր է։ Լավ թե վատ՝ այդպես է և մեր քաղքենի, կիսակիրթ ինտելիգենտը։

Ժողովրդից հեռացած այդ մտավորականը անդադար դեգերում է հակասությունների մեջ։ Նա չի վստահանում իջնել ցած, մտնել ժողովրդի մեջ, գործել նրա հետ և նրա շարքերում։

Նա տակավին տարված է պրիմիտիվ նիցշեյականության և մեշչանականության այն խառնուրդով, վոր այնքան տիպիկորեն գծված է Հախումյանի մոտ։

Բայց մեկ-մեկ այդ միամիտ ինտելիգենտն էլ հասկանում է, ըստ յերևույթին, իր խեղճությունը և փորձում է գեն նետել մեր լեռների համար այնքան արտասովոր ցիլինդրը։ Սակայն այդ էլ նա անում է այնքան մաներային կոկետությամբ, վոր ստացվում է ավելի ևս արգահատելի տեսարան։ Ի վերջո Հախումյանի գիրքը նորից ստիպում է հիշել, վոր ամենամեծ արվեստը «պարզ խոսելու» արվեստն է..

«Պայքար»

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I

Հայ մարքսիստ-հրապարակախոսների միքանի շրջաններում չափազանց տարածված է այն կարծիքը, թե Հայաստանը՝ վորպես «գյուղացիական» յերկիր՝ չի կարող նպաստավոր միջավայր ստեղծել «պրոլետարական» գրականության համար։ Ճիշտ այդպես էին հիմնավորել իրանց բացասական վերաբերմունքը «պրոլետարական» գրականության նկատմամբ նաև նրա ռուս հակառակորդները։ Բայց Ռուսիայում բանվոր հեղինակների և պրոլետարական գրողների գործունեությունը ցույց տվեց, վոր ինտելիգենտական այդ թերահավատությունը անտեղի յեր։

Այսոր Խորհրդային Ռուսաստանն ունի արդեն իսկական պրոլետարական հեղինակներ, ունի բանվոր գրողների մի վորոշ հոսանք, վորն և աշխատում է, և սովորում և ստեղծագործում։

Իսկական գրական փրոնտ ստեղծում են հենց այդ գրողները։ Իրենց անմշակ և հաճախ չափազանց գռեհիկ յերգերով նրանք հող են պատրաստում ապագա ավելի հարուստ և բարդ գրականության համար։

Նույն դերը, թվում է մեզ, պիտի կատարեն մեզ մոտ հայ պրոլետարական գրողները։ Նրանք ևս պիտի ստեղծեն իրենց առանձին արհեստանոցը և դպրոցը։ Նրանք պիտի ասեն առանձին խոսք և գծեն նոր ուղիներ հայ գրականության համար։

Հայ պրոլետարական գրողները կարող են յեվ պիտի կատարեն այդ աշխատանքը, վորովհետև «գյուղացիական» Հայաստանն էլ ունի պրոլետարիատի վորոշ կոնտինգենտ յեվ պրոլետարացած գյուղացիության ստվար խմբեր։ Հասարակական նոր այդ ուժը պիտի տոն տա մեր հետագա վողջ գրականությանը։ Սակայն ինչպես։ Այստեղ է հիմնական խնդիրը։

Յեթե «պրոլետարական» գրականության հիմնական հատկությունը համարենք նրա գործարանային-ֆաբրիկային վոգին, յեթե մենք պահանջ դնենք պրոլետարական գրողներին գրել միշտ և բացառապես շոգեկաթսաների և մաշինաների մասին — այդ միսսիան, իհարկե, չի կատարվի Հայաստանում այնպես, ինչպես

նա արվում է Արևմուտքում կամ Ռուսիայում։ Բայց մենք կարող ենք ուրիշ կողմից էլ մոտենալ հարցին։ Յեթե մենք «պրոլետարական» գրականության բնույթը բնորոշենք ավելի լայն տեսակետից, յեթե մենք նկատի առնենք նրա **հեղափոխական ինտերնացիոնալիզմը, նրա դասակարգային ոճերը յեվ հասարակական ուրույն իմաստասիրությունը**՝ այդ պարագային հայ պրոլետարական հեղինակներն, իհարկե, կարող են իրենց խոսքն ասել։ Ամբողջ խնդիրը հենց նրանումն է, վոր պրոլետարական գրականությունը «չորրորդ դասի» իդեոլոգիան լինելով հանդերձ՝ չի կարող և չպիտի սահմանափակվի բացառապես «ֆաբրիկային-զավոդային» մոտիվներով։ Պրոլետարական հեղինակը կարող է գրել և գյուղի և զանազան արևելյան յերկրների, և սիրո, և պատերազմի մասին։ Այլ խոսքով, նա պիտի շոշափե այսօրվա կյանքի բոլոր յերևույթներն ու ներհակությունները։ Նա պիտի յերգե կյանքի բոլոր կողմերը ճիշտ այնպես, ինչպես այդ արել են մինչև այժմ արվեստի մեծագույն վարպետները։ Տարբերությունը պիտի կայանա միայն նրանում, վոր պրոլետարական հեղինակների մոտ այդ բոլորը կգունավորվի առանձնահատուկ գույներով և «չորրորդ դասին» հատուկ հեղափոխական-պրոլետարական կենսահայեցողությամբ։ Պրոլետարիատի «սուբյեկտիվ» դեմքը պիտի իր ինքնահատուկ դրոշմը դնե այդ արվեստի վրա ճիշտ այնպես, ինչպես բուրժուական ռեֆորմացիայի «Նոր եպոխայի» քաղաքացու հոգին յերևում է մի վորևէ Մեմլինգի կամ Վան Եյկի նկարների մեջ։

Ահա ինչու մենք կարծում ենք, վոր կապիտալիստական մեծ գործարանների, խոշոր ինդուստրիայի և ինդուստրիալ պրոլետարիատի բացակայությունը մեր յերկրում ամենևին չպիտի խափանարար պատնեշ հանդիսանա «պրոլետարական» գրականության համար։

Հայ պատմության հնավոր անցյալում յեղել են մոմենտներ, յերբ վողջ գրականությունն ընկել է մի փոքրիկ կաստայի, սոցիալական սահմանափակ և փոքրաթիվ խմբակի ձեռքը։ Հայ հին գրականությունը և արվեստը յերկար տարիներ կրել են իր վրա ավատական հոգևորականության ազդեցության կնիքը չնայած նրան, վոր այդ հոգևորականությունը նույնիսկ ավատական Հայաստանում կազմել է ժողովրդի չափազանց աննշան մասը։

Այսօրվա Հայաստանի պրոլետարիատը և քանակով և իր

իդեոլոգիական կազմակերպությամբ անհամեմատ ավելի ուժեղ է։ Այսօրվա պրոլետարիատի թիվը հասնում է տասնյակ հազարի, իսկ պրոլետարացած գյուղացիության քանակն ավելի ևս բարձր է։ Նոր այդ ուժը ունի արդեն իր պետությունը, յերկամյա պետական գործունեյության փորձառությունը և հասարակական-քաղաքական պողպատե մի այնպիսի կառուցվածք, վորպիսին է հեղափոխական մարքսիզմի-լենինիզմի զենքը։

Այդ տվյալներով օժտված «Նոր ուժը» կարող է և պիտի լուսավորե իր դասակարգային հայեցողության լապտերով այստեղի, այս մութ, պրիմիտիվ, գավառական և գերազանցորեն արևելյան Հայաստանի առօրյան։ Նա պիտի վորոնե ու քննե կյանքի բոլոր խորշերը և անկյունները, նա պիտի մոտենա տակավին «Նայիրյան աշխարհի» հնավոր անկյուններին և նկարագծե այդ բոլորն իր նոր, առույգ, խիստ պարզ և անողոք աչքերով։ Այդքան լայն պիտի լինի քննության օբյեկտը պրոլետարական գրականության համար։ Յեվ այսպիսի լայն պատվանդանը հնարավորություն կտա հայ պրոլետարական հեղինակներին իրենց սեփական գիծը մտցնել վոչ միայն մեր գրականության, այլև միջազգային պրոլետարական գրականության մեջ։ Պրոլետարական գրականությունն այն ժամանակ միայն կհաղթահարե իր ավատական-կալվածատիրական և բուրժուական նախորդներին, յերբ դասակարգային ստիլետով կմերկացնե մեր օրերի կյանքի բոլոր կողմերն ու յերևույթները։ Այդ ուղին է ընտրել և ռուս պրոլետարական գրականությունը։ Զարտուղի շավիղներով, պրիմիտիվ ֆաբրիկային մոտիվների արծարծումից նա հետզհետե անցել է ավելի բարդ պրոբլեմների և կյանքի ավելի մանրակրկիտ խնդիրների քննությանը։ Ճիշտ միևնույն ուղիները պիտի անցնի և հայ պրոլետարական գրականությունը, վորը նոր է միայն կազմակերպվում և ամփոփվում, և ապրում է այսօր տակավին իր մանկական նախնական շրջանը։

* * *

Պրոլետարական գրականության ապագա ուղիների պարզաբանման համար շատ կարևոր է վորոշել, թե ինչպես ենք վերաբերվում մենք դեպի այսպես կոչված անցյալի «ժառանգությունը»։ Ժամանակակից պրոլետարական գրողների մեջ կան մարդիկ, վորոնք կտրականապես հրաժարվում են այդ «ժառանգությունից» և կոչ են անում կազմակերպել միանգամայն նոր և

կատարելապես «աղատ ու անաղարտ պրոլետարական արվեստ» Պետք է ասել, որ պրոլետարական այդ գրողների հայեցողությունը հիմնված է բացառապես այն դրույթյունների վրա, որ առաջադրվել են իր ժամանակ Ռուսիայում գործող միքանի ֆուտուրիստների կողմից։ 1919 թվին Պետերբուրգում հանդես եր չեկել այսպես կոչված «կոմմունիստ-ֆուտուրիստների» մի խըմբակ բանաստեղծ Մայակովսկու ակտիվ մասնակցությամբ։ Այդ խմբակը հանդես է չեկել առանձին հասարակական գրական մանիֆեստով մյուզեյական կոնֆերանսի ժամանակ։ Եվ ահա այդ ժամանակ էլ «կոմ ֆուտ» խմբակի կողմից շեշտվել է, որ անցյալի վողջ արվեստը պետք է ժխտվի և վճռական կերպով դեն նետվի։ «Պրոլետարիատը չի կարող և չպիտի ընդունի հին արվեստի վոչ ներքին էյությունը և վոչ էլ նրա ձևերը, տեխնիկան, ֆորման»։ Պրոլետարիատը պիտի ինտրի ստեղծագործության ամենանոր և կատարելագործված ֆորման։ Եվ վորովհետև արվեստի վերջին խոսքը ֆուտուրիզմն է, ապա ուրեմն և ֆուտուրիզմին պիտի փարի պրոլետարիատի գեղարվեստական իդեոլոգիան։ Ես ընդհանուր կերպով եմ բնորոշում այստեղ «կոմ-ֆուտ» խմբակի «ծրագիրը» և հենվում եմ բացառապես նըրանց տեսաբանների հոդվածների վրա («Գեղարվեստ և կյանք», և «Նկարչական արվեստ» հանդեսներում)։

Առաջին պահուն այդ մանիֆեստը թողնում է վորոշ տպավորություն, այնքան նա պարզ և տրամաբանական է։ Ո՞վ կարող է հերքել այն, որ պրոլետարական ապագա արվեստը պիտի լինի անկախ միանգամայն և կատարելապես անաղարտ։ Ո՞վ կարող է բացասել այն, որ պրոլետարիատի գեղարվեստական տեսաբանները պիտի ձգտեն մշակել ու կազմակերպել գեղարվեստական նոր ֆորմա, որն, ինարկե, պիտի համապատասխանի նոր արվեստի բովանդակությանը։

Իրապես խնդիրը դրանում չէ, ինարկե, այլ նրանում, թե ինչպես պիտի կատարվի այդ անհրաժեշտ և պատասխանատու գործը։

Այն ուղին, որ առաջարկում են կոմմունիստ-ֆուտուրիստները, ամենահասարակ և դյուրըմբռնելի ուղին է, բայց և միաժամանակ չափազանց կասկածելի և միակողմանի։ Վողջ խնդիրը նրանումն է, որ նույնիսկ ֆուտուրիզմի մեջ կան հին արվեստի վորոշ մնացորդներ և բեկորներ։ Այստեղ տեղը չէ քննելու ֆուտուրիզմի այդ կապը անցյալի արվեստի վորոշ ձևերի հետ...

Միայն մի բան կարելի և անհրաժեշտ է շեշտել։ Այդ այն է, որ ինքը ֆուտուրիզմը—ժամանակակից արվեստի այդ գրեթե «ձախակողմյան» թևը, դարձյալ միենույն բուրժուա-կապիտալիստական քաղաքակրթության բնորոշ արտահայտություններից մեկն է։ Ռուսական պրոլետարական գրականության հայտնի տեսաբան քննադատներից մեկը, ընկ. Կալինինը իր ժամանակ շատ ճիշտ կերպով նկատել է, որ ֆուտուրիզմը և առանձնապես իտալական ֆուտուրիզմը - ժամանակակից իմպերիալիստական բուրժուազիայի մտայնության հարազատ արտացոլումն է։ Հայտնի չէ, որ Իտալիայում նա ունի նույնիսկ վորոշ ազգային-հասարակական արմատներ։ Բողոքելով հին արվեստի դեմ և մանավանդ այդ արվեստի մուզեյական նմուշների դեմ—իտալական բուրժուան ճիգ է անում ազատագրել Իտալիան տուրիստներից և ոտելներից, պորտաբույծներից և ոտարականներից ու ստեղծել իրական - «նոր» և այսօրվա Իտալիան։ Միաժամանակ նա կոչ է անում ստեղծել ավելի ակտիվ, ինիցիատիվ քաղաքականություն և կռիվ, քաղքենիության և գյուղական պրիմիտիվիզմի դեմ։ Ֆուտուրիզմը դրվատում է իմպերիալիզմի վողջ քաղաքականությունը և այդ տեսակետից կարող է նույնիսկ ժամանակակից ֆաշիզմի «գեղարվեստական» աստառը համարվել։

Հայտնի չէ, որ Մարինետտին, իտալական ֆուտուրիզմի առաջին տեսաբանը մեկն էր Տրիպոլիտանիայի պատերազմը դրվատողներից։

Այդպես լինելով հանդերձ՝ ֆուտուրիզմը փոխադրվելով Ռուսաստան,—այլ խոսքով՝ արտասահմանից դեպի պատմա-հասարակական նոր միջավայր՝ տարորինակ կերպով փոփոխության է չենթարկում իր հիմնական պոստուլատները։ Ամենից առաջ նա փոխում է այդտեղ նույնիսկ իր սոցիալական բնույթը։ Ռուսական ֆուտուրիզմը դառնում է, վորքան էլ այդ տարորինակ չէ, նեո-նարոդնիկական գյուղացիական իդեոլոգիա։ Գյուղական պեյզաժի քննադատությունից հետո այդ ֆուտուրիստները նույնքան հեշտ կերպով անցնում են քաղաքի քննադատության և նախակապիտալիստական Ռուսիայի դրվատմանը և փառաբանմանը։ Արդեն ռուս քննադատության մեջ արձանագրվել է ռուսական ֆուտուրիզմի ինքնատիպ գյուղական այդ կոլորիտը։ Հայտնի չէ, որ ռուսական ամենատաղանդավոր ֆուտուրիստներից մեկը—Վասիլի Կամենսկին իր հայտնի «Ստենկա Ռազին» պոեմը նվիրել է ռուս տարերային գյուղացիական շարժման

ականավոր հերոսին։ Մի ուրիշ հերոսին, Պուգաչովին գրեթե միևնույն վոգևորությամբ յերգել է ռուս իմաժինիստ (իրապես իմաժինիզմն էլ ֆուտուրիզմի բազմաթիվ նորագույն թևերից մեկն է) բանաստեղծ Սերգեյ Յեսենինը։ Խլեբնիկովի յերգերի «գյուղական» շեշտերի մասին գրել է արդեն քննադատ Լերսը*)։

Ահա հենց դրա համար էլ, մեր համոզումով, սխալվում են նրանք, վորոնք շլացած ֆուտուրիզմի աղմկալից հեղափոխական արտաքինից, կուրացած նրա շռինդալի հայտարարություններից—«պրոլետարական» անուն են տալիս արվեստի այդ նորագույն ձևին։ Դա հիմնովին սխալ տեսակետ է։ Յեվ հենց դրա համար էլ արդեն հիշված կոմունիստ-ֆուտուրիստները շատ շուտ վտարվել են Պետերբուրգի խորհրդի գեղարվեստական բաժնի վարչությունից, և ավելի քան կտրական կերպով խարազանման են յենթարկվել պրոլետարական գրականության հետևողական տեսաբանների կողմից։

Քանի դեռ խորհրդային իշխանությունը թույլ էր, քանի նա՝ շրջապատված թշնամիներով՝ ստիպված էր մտածել միմիայն քաղաքացիական պատերազմի մասին, ֆուտուրիստները կարող էին խճողել պրոլետարիատի իդեոլոգիան իրենց հակասական և խայտաբղետ առաջարկներով։

Բայց այսօր, յերբ մենք խաղաղ շինարարության շրջանն ենք մտել, մենք կարող ենք և պետք է հոգանք վոչ թե բուրժուական քաղաքակրթության թափթփուկների ընդօրինակման, այլ իսկական պրոլետարական արվեստի մշակման մասին։

Այդ ժամը հասել է արդեն։

Մի տաս տարի առաջ կարելի էր ժխտել հայ պրոլետարական գրականության կազմակերպման և զարգացման հնարավորությունը։ Դեռ 1910-ին հայ պրոլետարական պոետների նախահայրը՝ Հակոբ Հակոբյանը միայնակ էր։ 1914-ին, վորքան հիշում եմ, նրա ձեռնարկությամբ հրատարակվում էր «**Նոր գրադարան**»-ը, վորի յերկու պրակների մեջ զետեղված էյին յերիտասարդ պրոլետարական հեղինակների գործերը։ Այդ բոլոր աշխատանքն անցնում է գրեթե աննկատելի։ Միմիայն «Պրավդան»

---

*) Տես՝ Лерс. «Русский футуризм», Москва 1922 թ.։ Ամենաբնորոշն այն է, վոր նեո-նարոդնիկական այդ ֆուտուրիզմի թևերից մեկը վերջերս շատ սերտ կերպով կապվել է սմենովեխովյան հոսանքի հետ։ Յեվ լինելով այդպես՝ նա հենց դրանով դառել է միաժամանակ նորագույն նեպյան եպոխայի սոցիալական վորոշ խմբակի «գեղարվեստական տեսություններից» մեկը։

և միքանի մարքսիստական թերթերն են արձանագրում նոր յերևույթը։ Իսկ բուրժուական քննադատները և նույնիսկ այսպես կոչված լեգալ մարքսիստները (այն տարիներին դրանց քանակը շատ-շատ էր) միանգամայն լռում են։ Այդպես շարունակվում է գրեթե մինչև մեր օրերը։

Այսօր Հակոբյանը միայնակ չէ։

Նա ունի և ընկերներ, և հետևողների լայնագույն շարքեր։ Յեվ առհասարակ այժմ արդեն դժվար է, գրեթե անհնարին, անցնել հայ պրոլետարական գրականության կողքից։ Դա արդեն խոշոր հասարակական հոսանք է, վոր ունի իր տարբեր դունավորումները և շերտերը։ Ընդհանուր ջիղը, բովանդակությունը այդ հոսանքի՝ մի է, բայց կան և վորոշ անհատական զանազանություններ։ Մենք ունենք արդեն միքանի «ստուդիաներ», յեթե միայն կարելի է ներկա պարագայում գործածել այդ խոսքը։ Հիմնական և առաջին դպրոցը գտնվում է Թիֆլիսում։ Դա **Հակոբ Հակոբյանի ստեղծած «Դարբնոցն»** է։ Ապա գալիս է **Յերևանի պրոլետարական ասոցիացիան**, վորն ստեղծել են Ալազանի, Գուրգեն Մահարու և Նայիրի Զարյանի պես ուժերը։ Յերիտասարդ են դրանք տակավին։ Շատ բան պիտի սովորեն այդ պոետները և շատ աշխատանք պիտի թափեն։ Բայց այնքան յերիտասարդ են դրանք և այնքան յեռանդ ունեն, վոր կարող կլինեն իրենց ամուր բազուկներով հաղթահարել «ֆորմալ պոեզիայի» բոլոր դժվարությունները, յեթե միայն չծուլանան։ Կան յերկու խմբակներ էլ։ Մեկը Մոսկվայինն է, վոր կապված է ռուսական «Դարբնոց»-ի հետ և կազմակերպվել է Գուրգ. Հայկունու ջանքերով, իսկ մյուսը Ալեքպոլում։

Ինչպես տեսնում ենք, հայ պրոլետգրողների հոսանքը, վորն, ի միջի այլոց, գրեթե միշտ գործում է առանց պետական օժանդակության, անհամեմատ ավելի ուժեղ է և **ավելի սերտ է կապված ժողովրդից յելած յերիտասարդության** հետ, քան մեր ինտելլիգենտական նման խմբակցությունները կամ պետական հիմնարկություններին կից գործող զանազան «ապպարատները»։

Ահա ինչու հնարավոր ենք համարում պնդել, վոր մեր **նոր գրականության** կազմակերպման մեջ այդ հոսանքն ունենալու է, պետք է ունենա խոշորագույն դեր։ Դեռ ավելին ևս։ Այդ հոսանքի միջից պետք է յելնեն այն նոր ուժերը, վորոնք, յեթե մոտենալու լինեն անաչառ աչքերով նոր կյանքին և նոր Հայաս-

տանին, կարող կլինեն նկարել մեր յերկրի բարդ և միանգամայն այլափոխված կենցաղը։

Բայց այդ միսսիան կատարելու համար մեր պրոլետարական խմբակները պիտի պարզեն նախ և առաջ միքանի կարևոր խնդիրներ, խնդիրներ, վորոնք գուցե նույնիսկ դիսկուսիայի առարկա կարող են դառնալ։

Առաջին խնդիրն այն է, թե ո՞վ պիտի համարվի **պրոլետարական գրող**։ Արդյոք նա՞, վոր իսկական պրոլետարական ծագում ունի, թե՞ նաև այն մտավորականները, վորոնք յուրացրել են լիովին պրոլետարական մարքսիստական աշխարհայեցողությունը և արծարծում են իրենց յերգերում անաղարտորեն պրոլետարիատին հատուկ հոգեբանությունը և իդեոլոգիան։ Առաջին տեսակետի վրա յեթե կանգնելու լինենք, մենք ստիպված պիտի լինենք արձանագրել, վոր մեր պրոլետարական ասոցիացիաներում շատ քիչ իսկական «պրոլետարներ» կան։ Այդ տեսակետի հետ չի կարելի համաձայնել նաև այն պատճառով, վոր մեզ հայտնի յեն ինտելլիգենտական ծագում ունեցող պոետներ, վորոնք այնքան հստակ և վորոշ են արտահայտել պրոլետարական իդեոլոգիան, ինչպես չի կարողացել անել մինչև այժմ վոչ մի իսկական «բանվոր-պոետ»։ Մյուս կողմից՝ հայտնի յեն ուրիշ օրինակներ ևս. ռուսական զանազան պրոլետարական պոետների գործերը քրքրելիս մենք պատահում ենք հաճախ այնպիսի կտորների և էջերի, վորոնք հատուկ են միմիայն գյուղական յերգիչներին։ Մենք նկատի ունենք վոչ թե այն, վոր նրանք նկարում են գյուղը։ Խոսքը դրա մասին չէ։ Պրոլետարական գրողը կարող է նկարել և գյուղը։ **Անհրաժեշտ է միայն, վոր նա լուսաբանե այդ օբյեկտը պրոլետարական իդեոլոգիայի տեսակետից**։ Վերոհիշյալ բանվոր պոետների համար ահա հենց այդ էլ բացակայում եր։

Ահա ինչու մենք պիտի հետևցնենք, վոր «պրոլետարական պոետ» և գրող կարող են լինել վոչ միայն բանվորները, այլև գյուղական և ինտելլիգենտական ծագում ունեցող անհատները։ Կարևորը միայն հետևողական մարքսիստական դասակարգային հայեցողության յուրացումն է։

Մեր հայ պրոլետարական պոետների դավանած մի ուրիշ սխալ կետն էլ կայանում է նրանում, վոր նրանք կարծում են, թե պրոլետարական պոետն անպատճառ և միշտ պիտի յերգե և նկարե գործարանը կամ գործարանի ծխնելույզները, պրոլետա-

րիատին, Նյու-Յորկը կամ Ամստերդամը, մեծ քաղաքը, և այլն, և այլն։ Յեվ ահա միմյանց յետևից Յերևանում և Ալեքսանդրոպոլում յերևում են յերիտասարդ ընդունակ գրողներ, վորոնք իրենց յեռանդն սպառում են այդ անօգուտ գործի վրա։ Իր ժամանակ ընկեր Մյասնիկյանն էլ արել եր այդ դիտողությունը «Մուրճ» ամսագրի շուրջը խմբված պրոլետարական պոետներին։ Կարծեմ յերկու տարի չե անցել այդ օրվանից։ Բայց վոչինչ չի փոխվել։ Դարձյալ ամեն տեղ և շարունակ միևնույն տողերը, միևնույն մոտիվները։ Իհարկե, այդպիսի տաղտկալի և արվեստական պոեզիան չի կարող յերկար ապրել և իվերջո կամ պիտի դառնա մի փոքրիկ խմբակի մենաշնորհ, կամ պիտի մեռնի։

Ամեն մի պոետ վոգևորվելու և յերգելու համար պիտի տեսնի այն օբյեկտը, վորը յերգում է։ Ինչու՞ չեն այնքան ուժեղ Ուիտմենի տողերը Մանհաթանի կամ Բրոդվեյի մասին, մեծ կամուրջների, նավահանգիստների կամ բյուրավոր ելեկտրական լամպաների մասին։ Վորովհետև ինքը Ուիտմենն ամեն օր անցել է այդ բոլորի կողքից, ինքը տեսել է և դրա համար էլ կարողացել է կենդանի ու խիտ գույներով տալ իր նկարները…

Նույնը կարող ենք ասել և մեծ քաղաքի մառախլապատ փողոցներին նվիրված ֆրանսիական իմպրեսիոնիստների նկարների մասին և այլն և այլն։

Իսկ մեզ մոտ, մեր խեղճ և քարքարոտ հայրենիքում—ինչ է տեսնում պոետը։ Յեվ մանավանդ Յերևանում—Աբովյան փողոցում կամ Գյումրիում։ Զավեշտական է հնչում, յերբ լսում ես այդ վայրերում ապրող և գործող պոետից «գործարանային» կամ «զավոդային» յերգեր։ Կարելի յե դեռ հասկանալ, յերբ պոետը յերգում է իր ձգտումը դեպի «զավոդներ»-ի աշխարհը։ Բայց յերբ նա **նկարագրում** է այդ բոլորը և յերբ խոսում է լուրջ Ամստերդամի մասին—դա արդեն թուլացնում է միանգամայն պրոլետարական պոեզիայի արժեքը։

Ի՞նչ է անհրաժեշտ ուրեմն անել։

* * *

Ավելի մոտենալ Հայաստանին, **իսկական**, ռեալական, գյուղական Հայաստանին։ Դրանով յես չեմ կամենում ասել, վոր բոլոր **հայ պրոլետարական** պոետներն էլ պարտավոր են գալ Հայաստան և միմիայն յերգել ու նկարել այն, ինչ վոր կա այստեղ. —քավ լիցի։ Նա, ով ապրում է Բաքվում, իհարկե կերգի

Բաքվի միջավայրը, հանքերն ու գործարանները և այդտեղի միջազգային պրոլետարիատի կյանքը: Նույնը կարող են և պիտի անեն նաև համապատասխան ուրիշ վայրերի պոետները: Իմ խոսքը նրանց մասին է, վորոնք արդեն ապրում են Խորհրդային Հայաստանում, գործում և յերգում են այստեղ: Անա դրանք, իմ կարծիքով, պիտի դիտեն իրենց շրջապատն ավելի **ուշադիր** աչքերով: Նրանք կարող են և պետք է յերգեն քաղաքներն ու ինդուստրիան—առանց սահմանափակվելու այդ յերգերով: Բայց «գավառներ»-ից շատ բան կա յերգելու և նկարելու այստեղ: Յեվ անա հենց այդ էլ անհրաժեշտ է հաշվի առնել:

Մեր գյուղական միջավայրում այսօր էլ կան ունևորներ և չունևորներ, այսօր էլ կան սոցիալական սուր բախումներ: Մեր նոր գյուղն ունի իր **նոր կենցաղը**: Նա փոխվել է և դարձել ավելի բարդ, ավելի պատկերավոր և հետաքրքրական: Միթե այդ բոլորը չի կարող նյութ մատակարարել պրոլետարական նոր գրողներին: Միթե այդ բոլորը չի կարելի թեկուզ արձանագրել և նկարել այնպես, ինչպես իրենք **նոր գյուղացիներն** են պատմում իրենց անպաճույճ լեզվով, և ապա այդ **նույն նյութը լուսավորել պրոլետարական իդեոլոգիայի լույսերով**: Այսօրվա Հայաստանում կատարվում է հսկայական շինարարական աշխատանք: Շինվում են ուղիներ, ջրանցքներ, գյուղական ժողովրդի միջից դուրս են գալիս նոր մարդիկ... Ամեն ինչ արմատորեն փոխվում է, հեղաշրջվում: Հայ շինականների գլուխների մեջ կատարվում է մի մեծ մետամորֆոզ: Արդեն ստեղծվել են տարերային կերպով նոր յերգեր «Սովետներ»-ի մասին: Հին յերգը մեռնում է, անհետանում—այնպես, ինչպես անհետանում է հին կենցաղը: Յերբ Յերևանում Խորհրդային Հայաստանի կառավարությունը ավարտում է Շահումյանի անվան (այսպես կոչված Մամրիի) ջրանցքը, այն ջրանցքը, վոր վոռոգում է այսօր նախկին ամայի դաշտերը, Յերևանի աշուղներն ինքնաբերաբար, իրենց ձեռներեցությամբ նոր յերգեր են ստեղծում այդ ջրանցքի մասին: Յեվ այսօր Հայաստանի շատ վայրերում, առորյա կյանքում, խնջույքներում յերգվում է «Շահումյանի ջրանցքի» մասին հորինված այդ անպաճույճ յերգը: Անա դարձյալ նոր կյանքի մի բնորոշ յերևույթ: Յես կանգ չեմ առնում ուրիշ որինակների վրա: Այսօրվա Հայաստանի և կյանքը, և կենցաղն անհամեմատ ավելի բարդ է և հարուստ, քան յերեկվա Նայիրյան յերկրի կենցաղը: Նկարչի և յերգչի համար շատ նյութ կա: Միայն հարկավոր է դիտել և արձանագրել: Թող այդ գործն անեն պրոլետարական գրողները:

«Պայքար» 1924.
«Մարտակոչ» 1925.

ՄԵՐ ՈՐԵՐԻ ԱՐՎԵՍՏՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գուցե յերբեք հին հասարակական կուռքերի սնանկությունը այնքան բացորոշ կերպով չի արձանագրվել, ինչպես այդ արվում է այսօր—մեր որերի գրականության մեջ...

Անցյալի գրականությունը նվիրված եր իշխաններին և տիրողներին: Սեփականատիրական տարրերի իդեալներն ու ապրումներն են յերգել 19 րդ դարի լավագույն նկարիչները, պոետները և վիպագիրները:

Այսօր այլևս գեղագետները չեն վստահանում այդ անել: Մեր դարաշրջանում բուրժուազիան չի կարող ներշնչել պոետին այն վոգևորությունը և «սրբազան եքստազ»-ը, վորը գեղարվեստական ստեղծագործության առաջին և հիմնական նախապայմաններից մեկն է: Այն, ինչ վոր ասել և յերգել է Սիմուրդենի մեծ նկարիչը՝ Վիկտոր Հյուգոն, այսօրվա գրականության մեջ յենթարկվում է անողոք և կտրուկ քննադատության...

20-րդ դարի գրականության լավագույն ներկայացուցիչներն ընդգծում են հենց այդ նոր ուղին: Նրանք խարազանում և քարկոծում են սեփականատիրական վողջ հասարակությունը և այդ հասարակության կյանքն ու մորալը:

Նույնիսկ պրոլետարական շարքերից հեռու կանգնած գեղագետներից շատերը չեն վստահանում հաշտվել հասարակական հին կարգերի և տիրողների փարիսեցիական բարոյականության հետ: Յեվ հեղափոխական-քննադատական այդ հոսանքն արվեստի և գրականության մեջ նոր չէ, վոր սկսվել է: Նա ստեղծվել է դեռ անցյալ դարաշրջանի վերջում, վորպես բողոք և ըմբոստացում ընդդեմ քարացած «սոցիալական արժեքների»...

Անատոլ Ֆրանսը Ֆրանսիայում, Արտուր Շնիցլերը Ավստրիայում, Կամիլ Լեմոնյեն Բելգիայում և Ըպտոն Սինկլերն Ամերիկայում, առորյա քաղաքական հրապարակախոսության հետ առնչություն չունեցող այդ վիպագիրները, չնայած իրենց սկեպտիցիզմին և յերբեմն հայեցողության, հաճախ ամենախիստ խարազանման են յենթարկել իշխողների և բռնակալների կեղծ իմաստասիրությունը և տափակ մտայնությունը:

Տարօրինակ չպիտի համարել և այն, վոր հենց միևնույն այդ հեղինակները քաղքենիական կադրերի քննադատության հետ միաժամանակ համակրական առանձին շեշտով են խոսել այն դասակարգի մասին, վորը մեծ քաղաքների հեռավոր փողոցներում և մթին նկուղներում պայքարում է նոր կյանքի և նոր հասարակության համար։

Հիշված հեղինակներից բացի, հանդես են յեկել ուրիշ յերգիչներ ևս, ավելի խիզախ և կտրուկ։

Դրանք ավելի ցայտուն գծերով են վորոշել իրենց վերաբերմունքը։

Այդ գեղագետները յերգել են «նոր մարդ»-ուն, և նկարել են «պայքարող և մտածող» դարբինների կյանքն ու ապրումները։ Դրանք քանդակել են «մեծ ուղիների» մոտ կանգնած և «լայն հեռուներ»-ը դիտող բանվորի նկարագիրը...

Աշխատանքը, աշխատանքի տարբեր ձևերը և տիպարները, սոցիալական պայքարի բազմերանգ մոտիվները,— այդ է կազմել նոր «պոետներ»-ի ստեղծագործության հիմնական բովանդակությունը։

Նորագույն նկարչական արվեստի այնպիսի տաղանդավոր ներկայացուցիչներ, ինչպես են **Բռանգվինը յեվ Մեոնյեն**, յերգել են միշտ աշխատանքի յերգը...

Բռանգվինի և Մեոնյեի նկարների մեջ գծվել է «մեծ քաղաք»-ը և միշտ գործող ու պայքարող բանվորը...

Աշխատանքին նվիրված այդ գեղարվեստական գործերի մեջ առանձին տեղ է գրավում 20-րդ դարի ամենախոշոր քանդակագործ՝ Ոգյուստ Ռոդենի այն արձանը, վոր կոչվում է «Մտածողը»։

Ո՞վ է այդ «Մտածողը»... Ունևո՞ր, դրամատե՞ր, պրոֆեսո՞ր, թե՞ գիտնական... Թվում է, թե վոչ-ընկերվարական Ռոդենը առաջին նվագ դրանցից մեկի դեմքը պիտի քանդակեր։

Սակայն կատարվել է հակառակը։

Պրոլետարական շարժումից հեռու կանգնած այդ գեղագետը քանդակել է «բանվոր»-ի, «գործավոր»-ի, «նոր մարդ»-ու դեմքը։

Կռթնած իր ուժեղ բազուկների վրա, դիտում է այդ բանվորը խորհրդավոր հայացքով «լայն հեռուները»։

Նա յէ — Մտածողը։ Բանվորն է այն մարդը, վորը կարող է և պետք է ասե մարտնչող աշխատավորությանը նոր, ավելի սուր և ավելի թարմ խոսքեր։ Գործավորն է այն «Մտածող»-ը և

«ստեղծագործող»-ը, վորն իր աշխատանքով և պայքարի յերգերով վառել է քանդակագործ պոետի վոգևորությունը։

Այ՛ն, ինչ վոր Ռոդենը ասել է թռուցիկ կերպով, հետագայում շեշտել են ավելի խիտ ներկերով ուրիշ մտավորականներ։

Մենք չենք սխալվի, յեթե ասենք, վոր ժամանակակից գրականության լավագույն ներկայացուցիչներն իրենց բոլոր վարանումներով և հակասություններով հանդերձ կապված են «չորրորդ դաս»-ի հետ... Անրի Բարբյուսը Ֆրանսիայում, Մաքսիմ Գորկին Ռուսիայում, Ստեֆան Ցվայգը—Ավստրիայում, Պանայիտ Իստրատի և ուրիշները ուրիշ յերկրներում—«նոր» այդ հոսանքի ներկայացուցիչներն են։ Տարբեր գույներով և տարբեր կերպով գծել են այդ վիպագիրները հասարակական նոր հոսանքի հաղթողության կոնտուրները...

Պրոլետարական շարժումից և պրոլետարական կուսակցությունից հեռու լինելով հանդերձ, դրանք վորպես **մտածող բանաստեղծներ յեվ երազգաց** մտածողներ նկատել են վոչ միայն 20-րդ դարի հիմնական խոցերը, այլև այդ խոցերի դեմ պայքարող «չորրորդ դաս»-ի հոսանքը։

Յերկու ուղի կար այդ մտավորականների առաջ։ Դրանք կամ պիտի փառաբանեյին պատերազմները, ազգայնական կոտորածները և դասակարգային բռնակալության միշտ կուշտ, ինքնաբավական, փարիսեցի և ստախոս հեղինակներին, կամ պիտի յերգեյին «սուրի և անիրավության» դեմ պայքարող հոսանքի համամարդկային մեծ իդեալները։

Առաջին պարագային գեղագետները պիտի յերգեյին՝ ժողովուրդներին վոչնչացնող թնդանոթը և դինամիտը, ու դրանց ամենազոր ղեկավար՝ շահագործողների և բռնակալների դիմագծերը։

Յերկրորդ պարագային պոետը պիտի քանդակեր մուրճն ու խոփը, ազմկահույզ արհեստանոցներն ու խաղաղ գյուղական դաշտերը ու այդ ֆոնի վրա՝ ստեղծագործող ու խոհուն աշխատավորի դեմքը։

Ի՞նչ խոսք, վոր այդ վերջինն ավելի հարուստ, բարդ և բնորոշ մի յերևույթ եր գեղարվեստական ստեղծագործության համար։

Դրանով և միմիայն դրանով պիտի բացատրել այն, վոր ժամանակակից գրականության և արվեստի զարգացմանը հիմնական տոն և ուժ տվողը պրոլետարիատն է։ Նա յէ շարժում կյանքը, նա յէ նոր խնդիրներ հարուցանում և նոր յերանգներով գունավորում արվեստը։

*
* *

Յերբ անցնում ենք մեր գրականությանը, նկատում ենք գրեթե միևնույնը, միայն փոքր տարբերությամբ։ Մեզ մոտ ևս անցյալի գրականությունը նվիրված է յեղել «չորրորդ դասին», իսկ աշխատանքի պրոցեսին դրավել է ավելի մեծ տեղ ժողովրդական բանահյուսության, քան թե գրականության մեջ։

Մեր հայ ժողովրդական յերգերից շատերը նվիրված են աշխատանքի զանազան մոմենտներին և տարբեր կողմերի նկարագրությանը։ Այդ մասին, վորքան հիշում ենք, բավական մանրամասն մի տեսություն է կազմել Խ. Սամվելյանը։ Նրա հոդվածի մեջ բերվում են բավական բնորոշ կետեր և եջեր, վորոնք բոլորն էլ ավելի քան համոզիչ կերպով ցուցադրում են աշխատանքային պրոցեսի խոշոր ազդեցությունը ժողովրդական պոեզիայի վրա։ Սակայն Սամվելյանի հետաքրքրական տեսությունը լրիվ չէ։ Նրա հոդվածում քննվում է ավելի ժողովրդական պոեզիայի ռիթմը և անհամեմատ ավելի քիչ՝ սոցիալական բովանդակությունը։

Կանգ չի առել Սամվելյանը նաև նոր գրականության վրա անմիջապես։ Այնինչ հայ նոր գրականությունը նույնքան կարևոր է նյութի լուսաբանության համար, վորքան և անգիր ժողովրդական բանահյուսությունը։

Աշխատանքի պրոցեսն այս կամ այն չափով արտացոլել է հայ նոր այնպիսի հեղինակների գործերում, ինչպես են Հովհաննես Թումանյանը և Ա. Իսահակյանը։

Հայ գյուղացու առօրյան, նրա կյանքը և գործունեությունը, նրա տենչերն ու տխուր հուշերը—այդ բոլորն ամենախիտ գույներով արտանկարվել է հիշյալ պոետների մոտ։

Այդպիսով հայ գեղարվեստական գրականությունը կրկնել է միջին տարբեր կոլորիտով այն ամենը, ինչ վոր ասվել յեվ յերգվել է ժողովրդական բանահյուսության մեջ։

Այդպես է յեղել մոտիկ անցյալում, այն անցյալում, վորն արդեն չքացել, անհետացել և կորել է։

Այդ անցյալից անցել է արդեն տաս տարի, և տաս մրրկալից տարիներ։

Ցնցվել է վողջ աշխարհը, ցնցվել են ժողովուրդները, տապալվել են դարավոր անցյալ ունեցող հսկայական պետությունները, գլորվել են կայսերական յերկրագնդի յերկու ամենախոշոր պետերը, և հին, ժեռնոտ Արևմուտքի հանդեպ հաստատվել է բա-

բոտ բանվորների և գյուղացիների լայնածավալ և անպարտ Հանրապետությունը։

Ցնցվել է և մեր յերկիրը, գյուղական այն Հայաստանը, վոր դեռ մի տաս տարի առաջ յերգում եր «մանկալի» յերգը յեվ որհնում «վարան» գնացող հայդուկներին։

Փոխվել է ամեն ինչ։

Պատերազմ, գաղթականություն, նորից պատերազմ և նորից գաղթականություն, հուր և կրակ չորս կողմ, հեղափոխություն և քաղաքացիական կռիվ—այդ բոլորը մրրկի նման անցել է և այրել անցյալի բոլոր հուշերն ու յերգերը։

Ու ստեղծվել է նոր հասարակություն, նոր մարդ, նոր աշխատավոր։

Այդպես է իրողությունը, չափազանց պարզ և ակներև փաստը։

Ստեղծվել է ռեալիստ, չորս կողմն ուշադիր աչքերով դիտող «ռանչպար»-ը, վորն այլևս չի կարողանում և չի ցանկանում բավականանալ իր «Յեղսոյի կարմիր թշերով» կամ «Մանթաշի» հովաշունչ յերգերով...

Սառ և սկեպտիկ է նա և հին այն յերգերի նկատմամբ, վորոնք յերգում են յեզների դանդաղ աշխատանքը, յերգում են նահապետական արորի դանդաղ ռիթմը և դանդաղ լեզվով պատմում են անցած օրերի դարդերի մասին։ Փոխարենն ստեղծվել ու ստեղծվում է նորը։

Հանդես է յեկել, կարծես տարերային կերպով, պատմության և «ճակատագրի» հրահանգով «չար» և «խելոք», սուր և կենդանի Չարենցը։ Հանդես են յեկել յերիտասարդ գրողներ, բանաստեղծներ և հեղինակներ, վորոնք անդադար վազում են առաջ և միշտ ու ամեն տեղ գործում են միացած շարքերով, ընկերական գնդերով և խմբերով։

Փոխվել է կարծես ժողովուրդն էլ։

Նա ևս իր աշուղներին ստիպում է ուրիշ յերգեր յերգել...

«Շահումյանի ջրանցքը», Շիրակի ջրանցքը», «գործարան», տրակտոր, ելեկտրակայան,—նոր խոսքեր են դրանք, վոր արդեն մտել են աշուղական լեքսիկոնի մեջ։

Ու ամեն տեղ աշխատանք յեվ աշխատանքի յերգ—գուցե նույնիսկ միքիչ ավելի շատ, քան պետք եր։

Սակայն այդպես է արդեն ժամանակի վոգին։

Այդպես լինելով էլ նա չի դառնում ցամաք և միջնադարին հատուկ աշխարհատյացություն։

Աշխատանքի նոր պոեզիան հակառակ անցյալի բանաստեղծության, լեցուն և կենսուրախ տրամադրությամբ, զվարթ շեշտերով և առույգ բովանդակությամբ։

Յեվ դրանով արդեն նա տարբերվում ե 90-ական թվականների մեր պոեզիայից։ Մի ուրիշ տարբերություն ևս ունի նա։

Հակառակ անցյալին, **նոր պոեզիան** հասարակական ե իր եյությամբ, միջազգայնական և կոլլեկտիվիստական իր բովանդակությամբ։

Ահա ինչու **աշխատանքն ել մեր նոր յերիտասարդ գրողների մոտ յերեվում ե, վորպես հասարակական միության մի սիմվոլ, աշխատավորական շարքերի յեղբայրական համագործակցության մի արտահայտություն։**

Յես դիտավորությամբ կանգ չեմ առնում նոր պոեզիայի գեղարվեստական հատկությունների վրա։

Թող այդ գործով պարապեն մաքուր եսթետները, յեթե միայն կան մեր դարում այդպիսիները։

Յես շեշտում եմ սոցիալական այն գիծը և հիմնական այն տոնը, վորը կարմիր գծով անցնում ե մեր որերի գրականության մեջ, վոր ստեղծվել ե Խորհրդային Միության բոլոր վայրերում և այստեղ՝ **Խորհրդային Հայաստանում։**

Դրանով ե նա բնորոշվում ամենից առաջ և դրանով ել տարբերվում ե անցյալի գրականությունից։

ՑԱՆԿ

	Եջ
Հառաջաբան	3
Ռուսահայ գրականությունը և ռուսահայ հասարակական մտքի եվոլյուցիան	5
Նոր գրականության նախամուտին	21
Խաչատուր Աբովյան	35
Միքայել Նալբանդյան	53
Շիրվանզադեյի մասին	138
Գյուղացին և բանվորը ռուսահայ գրականության մեջ	175
Վահան Տերյան	209
Չարենցը	219
Արազի	242
Ցիլինդրավոր աշուղը	248
Պրոլետարական գրականության մասին	251
Մեր որերի արվեստն ու գրականությունը	261

ՀՀ Ազգային գրադարան
NL0370771

63.965